

891. ԹԳսկ
Բագրև

4-5-6/94



...Լեզուի կորուստը կ'ենթադրէ նաեւ, որոշ չափով,
ազգային բարքերու եւ ազգային կենցաղի կորուստ:

Թրքախօս հայր շատ անելի տրամադիր եւ ընդու-
նակ է անբարոյականութիւններու՝ քան իր առաքինի
պապերուն լեզուն խօսող Հայր:

Պէտք է ժամ առաջ մաքրուիլ թրքական ախտէն՝
չեղծանելու համար հին Հայրենիքի հնամենի սրբու-
թիւնները:

Պէտք է նոր թափով ու նոր ոգիով վերադառնալ
հայկական հին, անարատ, առոյգ կենցաղին:

9 Յուլիս 1919

ՄԱՏԹԷՈՍ ՉԱՐԻՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

1.-Ժ. ԱԹԱՐԻԱՆ	Ամերիքանա
6.-ԱՐՄԱՆՏ	Տրիդեսներ
9.-Գ. ԱԲԷԼԵԱՆ	Պէյրուք
20.-Շ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ	Բանաստեղծութիւններ
25.-Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆ	Տեմդեր
45.-Դ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Անքուժիկ
45.- » »	Հիւլէական
46.-Բ. ՂՈՒԼԵԱՆ	Գիւլիստամի արծիւը
60.-Մ. ԶԱՐԻՖԵԱՆ	Բանաստեղծութիւններ
61.- * * *	Նաեւ այս պապակը...
66.-Մ. Ռ. ԱՊՈՒՍԷՖԵԱՆ	Հոգու եւ բնութեան մուրր հրգիչը
76.-Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Կեանունակ ամսագիր մը
88.- * * *	Հեմրիկ Բախչիցեան
89.-Հ. ԲԱՆԶԻՆԵԱՆ	Բողոքը հայ գրականութեան մէջ
106.-Պ. ՄՆԱՊԵԱՆ	Եւ Աստուած հեռու պահի...
143.-Գ. ՅԱԿՈԲԵԱՆ	Շ. Տասնապետեանի «Նոր քերթուածներ» ժողովածու
145.-Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Լեռնիկ Յակոբեանի «21 տարեկան»ը
147.- » »	Յովիկ Մուսայելեանի «Վայրկեանների միջեւ»ը
149.- * * *	Կոնստանտին Կոնստանտինովիչի այս տեսան
154.- * * *	Մշակութային լուրեր



142 2002

Բագին

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԳ. ՏԱՐԻ 4-5-6 ԱՊՐ.-ՄԱՅ.-ՑՈՒՆ. 1994 ՊԵՏՐՈՒԹ

Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

Ա Մ Ե Ր Ի Բ Ա Ն Ա

Նքե՛ երբեք պատահմունքներում մեկ չարագոյն բնայնով իրիկ-
նային գործե՛ արձակման ժամերում Նիւ Եորքի *սապուէյ*ներում մէջ
իմկա՛ք, մանաւանդ Մամհաթըմի Թայմզ-Սթուէր կոչուող կեդրոնական
կայարանին մկուղներէն մէկում մէջ, մղձաւանջային երագի մը ըն-
դերքներէն ընդոստ դուրս ինկողի՛ պէս, կը շուարի՛ք, կը շփոթի՛ք,
կը սահմուկի՛ք-կը մնա՛ք: Պահ մը այնպէս կը թուի՛ ձեզի, որ սեւար-
կու աղէտի մը համոզիպած է մեր երկրագունդը, ծովեր, ցամաքներ
իրար անցած են, գիրար կու տուած, որպէսզի յամկարծ մեր մա-
լորակին բնակիչներում բոլորը, սեւամորթով, կարմրամորթով, դե-
ղինով գամ այս մկուղը լեցուին: Անիմ, թուխիմ, դեղիմն ու գոյ-
ններում դեռ ամէնէն ժամգոտածներով, կեղտոտածներով, նախամար-
դէն սկսեալ մինչեւ մեր այս օրերը մարդկային ցեղին արձանագրած

դիմագծային ու կերպարամային բոլոր, բոլոր այլանդակութիւններով եկած-թափած են այստեղ: Կը սարսափի՞ք, կը սահմոկի՞ք, սխալ տեղեր ինկած ըլլալու, այս տեղերէն փախուստ տալու խուճապահար վիճակներու մէջ կ'իյնա՞ք, սքափելու, ամղրադառնալու համար սակայն շուտով, որ... իրողութիւնը նոյնքան անլի դառն է, նոյնքան անլի դաժան եւ որ... աւա՛ղ, Ամերիկա կը գտնուի՞ք, Ամերիկայի... քազմիցս աւա՛ղ, Նիւ Եորք չաղաքը:

Սի այլեւս աղմուկ, ժխոր, իրարանցում իրար կը խաչածեմ կեղորոնակամ կայարանի այս մզոտած ցկուղներում մէջ: Հարաւային Ամերիկայի մարդկային մրջնանոցներէն մէկուն խորերէն, գաճաճութեմէ հագիւ մատ մը վեր մարդկային արարածներու խումբ մը, փողով, թմրուկով ու տակաւին անուն չունեցող, քայց դժոխային աղմուկ արտադրել գիտցող զարմանազամ այլ գործիքներով աշխարհի վերջաւորութեամ սեպագանգը կարծէ՛ք կը հնչեցնէ: Քիչ անդին, շարան մը դատարկ *փլասթիք*է զոյներու հոսն նստած երկու սեւամորթ, չես գիտեր Ափրիկէի ո՞ր ցեղախումբին խաղացիչ ո՞ր մէկ *Թամ-Թամ*էն իրենց կարօտը կարծէ՛ք առնելու համար, նպոտի կատարի հարուածներ կը մոլեցնին տեղացեայ այդ կարծեցեայ թմրուկներու շարանին: Ուրիշ անկիւն մը, պիտով, մօրու՛ով, սակայն մինչեւ ուսերէն վար ինկող երկար մագերով եւ ակնզններում զանգակածե օդեր կրող, էրիկ մարդու, կնիկ մարդու շփոթ ստեղծող պիղծ ու խարդախ եպերելի մը, իրեն պէս կեղծ ու խարդախ, աղմուկ միայն հանել գիտցող կիթաւի մը թելերը կը մանկուտ տեսարար: Այս ամէնուն հետ, երկրագունդի լեզուններուն բոլորը, չիմարէնով, նափոններէնով, հայերէնն ալ ամէնուն վրայ իրրեւ աղ-պղպեղ, քարեղնակա՛ն վայնասունով մը լեցուցած են միջոց ու տարածութիւն: Կառայութեամբ կը հասնին, կառայութեամբ կը մեկնին՝ իրենց վակոններուն մէջ երկրագունդ մը այդպէս մարդկութիւն, մէկակամ այդպէս շարժուն, շրջուն, մանրակալ, մանրակերտ երկրագունդ շալկած: Իւրաքանչիւր մէկ վակոնի մէջ փրիկեացած, սսիականացած, ժամգաւորուած, ժամտաւորուած եւ դեռ ինչքա՛ն, ինչքա՛ն այդպէս այլափոխուած, այլանդակուած... Ամերիկա մը բեռուցած:

Հիմա հարց կը ծագի արդէն ձեր մտքին մէջ, թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս, ի՞նչ կարճատեւ ցկատումներով կամ թէ ո՞ր տեսութեամ, ո՞ր իմաստութեամ թելադրանքով ու պարտադրանքով երկրագունդի ամէնէն ինչնաբար, ամէնէն ինչնիշխան, յառաջադէմ ու հզօր պետութիւններէն մէկը, եթէ ոչ ամէնէն հզօրը, յանձն կ'առնէ իր երկիրը վերածել տեսակ մը այդպէս խուփ ու փակամբ չունեցող... ընդունարանի, ուր անարգել մուտք կրնան գործել բոլոր հովերուն, բոլոր ծովերուն ու ցամաքներուն չհանդուրժած, մարսել չկրցած ու դուրս շարտած դիրտն ու տակամէք անգամ: Այո՛, ինչո՞ւ, ի՞նչ պարտադրանքով, երբ մեր մոլորակի երկայնութեան ու լայնութեան բոլոր գօտիներուն մէջ ազդակող փաստեր կան, որ... տարրեր ակէ ջուր խմած երկու տարրեր մարդ, մարդկային երկու տարրեր գանգուած նոյն երդիքի տակ իրարու հետ հաւասարէ հաւասար

կենակցիլ չեն կրնար եւ ուշ կամ կանուխ իրարմէ ձերբագատուիլ... մաքրագտուիլ կը ջաման: Հիմա մանամադ, երբ տասնամեակներ շարունակ ժողովուրդներու միջեւ եղբայրակցութեան, հանդուրժողութեան, խաղաղ համակեցութեան կարգախօսներով սնած ու միջագայնականութեան քնարեր կարգախօսներով յղիացած ժողովուրդներ մէկ օրէն միւսը ազգային միատարրութեան, տոհմիկ առանձնայատկութիւններուն եւ ըմբռնողութեանց պաշտպանութեան ու արեւակցական մաքրագործման անգապելի տենդով մը վարակուեցան եւ իրենց դարաւոր, հին աստուածներուն անհարազատ տարրերը իրենց ծոցէն, սահմաններէն դուրս նետելու պայքարներու մէջ ինկան, անմիջապէս որ արուեստական ու սնտախ այդ եղբայրակցութիւնները հըրասայլերու սպառնալիքով իրենց պարտադրող վարչակարգը փուլ եկաւ:

Այս աղաղակող իրականութեանց դիմաց հարց է հիմա, թէ ինչո՞ւ այս հզօր, յառաջդէմ երկիրը կը յամառի այդպէս բազմազան այլազանութիւններով իր հողերը խնդել: Հիմէն գործուած պատմական ահաւոր սխալ մը ուրիշ անլի ահաւոր սխալով մը դարմանելու միտումով արդեօք, թէ՛ ապագայի պատմաբաններուն ուշադրութեան յանձնելու համար, որ յառաջդիմութեան բարձրագոյն չափանիշներ նուաճած երկրամասի մը մէջ, որ Ամերիկա կը կոչւէր, բարեխոնան աշտարակաշինութեան փորձ մը եւս կատարուած է քսաներորդ դարու վերջերուն եւ որ...

Եւ կամ՝ տակաւին այն ենթադրական կարելիութեան համար, որ իրար չհանդուրժող, իրարու հետ ապրիլ չկրցող երկու հակադիր, իրարմէ տարբեր տեսակներ եթէ քսան, երեսուն կամ յիսուն տեսակներու այլազանութեան վերածուիլ, պիտի կարելի ըլլայ տեսակաւոր բարեխոնանութիւն մը ստեղծել ու այդ ձեւով տարբերութիւններու հակադրութիւնը չէզոքացնել...

Փակագիծ մը բանալու է հաւանաբար այստեղ, ըսելու համար, որ մեմֆ՝ հայերս, մեմֆ՝ նորընծայ ամերիկեան *սիթիզըն*ներս — ամերիկեան արմիներն անուամբ վերամկրտուածներս պիտի ըսէի — նախքան այդ պատուին արժանանալնիս, մեր նահապետ Հայկէն ըսկըսած միւսեր վերջին այս օրերը, չափազանց սուղ վճարած ենք, ու մարդկային տարբեր տեսակներու հետ մեր տեսակին տարբերութիւնը անվթար կարեւոր վճարելու ենք դեռ...: Այդ նամբուն մէջ նաշակած ենք ցմրուր մեր ինքնութեան տարբերութիւնը պաշտպանելու ի խնդիր մեզի պարտադրուած բոլոր դառնութիւնները: Սորված ենք այդ նամբուն մէջ, թէ ինչքան կրնայ անասնամայ, վայրագանայ, վատանայ մարդ կոչեցեալը: Եւ ճիշդ ու ճիշդ այդ անասնային վայրագութիւններէն հալածուելով եւ կամ անոնցմէ խոյս տալու, հողդարելու խուճապով, արեւելքներուն, արեւմուտքներուն, հիւսիսներուն, հարաւներուն ու տակաւին կողմնացոյցներուն ճշդի չկրցած անկարելի կողմներուն բոլորին վրայ ցանուած, սփռուած, սփիւռեացած ենք: Մեմֆ սորված ենք, որ կենդանական աշխարհի գլխաւոր այս պատճառող այլազանութեան ու բազմազանութեան մէջ Ան-

տառի օրէնքն է, գորաւորին տիրապետութեան անվիճելի օրէնքն է, անոր կողմէն նոյնքան աւելի անժխտելի այն միւսը մասն, որուն տնօրինութեամբ կենդանական տեսակ մը չկայ, որ կամենայ հաշտ ապրիլ իրմէ տարբեր տեսակի մը հետ, որ կարենայ համոզուրժել անոր գոյութիւնն անգամ... Արհաւարացից փորձերու ու փորձութիւններու գնով սորված ենք մենք, որ մարդ արարածը՝ ընդհանրապէս, եւ մարդ անունը կրող ամասնական կարգ մը տեսակներ՝ մասնաւորապէս, ոչինչով կը տարբերին այդ միւս անտառներուն գազանային տեսակներէն: Հոս ալ տիրողը հզօրներուն անվիճելի օրէնքն է, այն միակ տարբերութեամբ, որ բազմակրթութեան շարքին տակ ու յառաջդիմութեան ձեռք բերած միջոցներով... մոլորագրեր կ'ըլլաք:

Փակագիծը գոցելէ ետք հարցը կը մնայ դարձեալ այն՝ թէ րոյտը հովերէն է՞րուստ, րոյտը ծովերէն է՞րուստ մետուստ այսօր անտակ արարած ինչպէ՞ս պիտի մոյն երկիմէին տակ իրարու հետ կենակցիլ կարենան: Ինչպէ՞ս պիտի կարենան զիրար հանդուրժել Արարչութեան տնօրինութեամբ իսկ զիշերուստն ու ցերեկուստն պէս իրարու ամհաշտօրէն հակադրուած երկու հակոսմեայ... տարբերութիւններ:

—Ամերիկայի Աստիանադրութեան անրոնարարի *ամէնամէնթ-*ները:— պիտի անկասկած առարկեն ուսմէք:

—Մարդկային Իրաւանց Պաշտպանութեան Հռչակագիրը:— պիտի անպայման աւելցնեն ուրիշներ, այն յուսատու համոզումով, որ անոնց շնորհիւ կարելի կ'ըլլայ մարդկային այս բազմապիսի տեսակներուն թէ՛ ինքնուրոյն իսկութիւնը պաշտպանել եւ թէ միեւնոյն անուն իրարու հետ խաղաղ, անխռով գոյակցութիւնը ապահովել:

Իսկ թէ ինչպէ՞ս կը յարգուին ամերիկեան առօրեային մէջ օրէնք, կանոն, սահմանադրութիւն եւ մարդկային իրաւունք, եկե՛ք դարձեալ տանիմ ձեզ նիւ Եորթի սապուլէներէն մէկուն մէջ, որպէսզի կարենաք անձամբ ստուգել:

Խնդումի, իրարանցման ժամեր են դարձեալ Մանհաթընի ստորերկրեայ կառաւարի նկուղներուն ամբողջ երկայնքին: Բազմատեսակ, բազմերանգ մոյն խնդումն է կառախումբերու վակոններէն մերս թէ դուրս, եւ վակոնի մը մտարանին տեղ մը գտնելը՝ ողջ երկիր մը գրասելու համագոր ճարտարութիւն ու բաշտութիւն ենթադրող իրագործում:

Ուսի, արմուկի խաղերով յաջողած եմ սպրդիլ վակոններէն մէկուն մէջ: Հագի կառախումբը ճամբայ ելած, պոռչտուք մը, վայմասուն մը փրթաւ յանկարծ մեր վակոնին մէջ: Մտած առեմն ընկատած էի արդէն, որ բացութիւն մը, պարապ մը կար մտարաններէն մէկուն ամբողջ երկայնքին ու կոսհած ամիջապէս, որ «պատկող» մը կայ անպայման: Ընթացիկ, շատ ընթացիկ եւ օրէ օր աւելի ընդհանրացող երեսոյք է, որ մեծամասնութեամբ սեւամորթ տարրէն բաղկացեալ ու *պամ* կաշուած ցնցոտիապատ, կեղտոտ, գարշահոտ դատարկապարտներէն մէկը պառկած ըլլայ հոն ու խորունկ բունի մէջ մտած: Այդպիսի պարագաներու, ճամբորդները,

Եթէ չկրցան ամփոջապէս ուրիշ վակոնի մը մէջ անցնիլ, ո՛չ միայն այդ նստարանը ամբողջութեամբ պարապ կը թողուն (գարշահատութեան, աղտի, կեղտի եւ... ոչիլի վախով), այլեւ ամբողջովին պարապ ձգելով նաեւ նստարանին չորս բոլորտիէն, զգուշանորութեան, առողջապահական ապահովութեան հեռաւորութիւն մը, գօտի մը կարծե՛ք պահելու համար: Զուշացայ տեսնելու, որ կողքի նստարանին վրայ այդպէս սեւամորթ «պամ» մը կար պտակած: Ստուգեցի միեւնոյն ատեն պոռչտուիմ, վլվլուկիմ պատճառը: Ծերմակ մագերով, գաւազանի մը վրայ կոթնած տարեց մարդ մը վէճի, հակահանութեան մէջ էր՝ պտակող դատարկապորտին դիմացի նստարանին վրայ լայնօրէն ու... անհոգօրէն բազմած երկու թէ երեք ուրիշ սեւամորթ կիներու հետ: Հարցը այն էր, որ մարդը ուզած էր նստիլ, պտակող «պամ»էն խնդրած, յետոյ պահանջած էր, որ ելլէ նստի, տեղ բանայ իրեն, միւսը ոչ միայն լսել իսկ չէր ձեւացուցած, այլեւ դիմացի շարքին նստող երեք սեւամորթները «ի՞նչ կ'ուզես խեղճ մարդէն, հանգիստ ձգէ զիմք», պոռացած էին: Խեղճ ծերուկը առարկելու վրայ էր, որ այսքան խնդումի մէջ, երբ ռմակ ոտի մնալ չեն կրնար, մէկը պէտք չէր իրաւունք տայ ինքզինքին նստարան մը մահճակալի տեղ գործածելու, մինչդեռ դիմացի երեք սեւամորթ կիները իրենց ցեղային արժանապատուութեան դէմ նախատիմք մը կարծե՛ք տեսնելով խեղճ ծերուկին առարկութեանց մէջ, մէկ ձայնի կը պոռային.

— Ծու տիրթի ուայթ փիկ, եու կէթ աութ օֆ հիր — (Դուն կեղտոտ ներմակ խոզ, կորուսէ՛ ասկէ):

Սեւերէն մէկը չգոհացաւ պոռայով, ոտքի կանգնեցաւ ու կոպտօրէն մէկդի հրեց ծեր մարդը, որ անպայման ամբողջ մարմնով գետնին կը փռուէր, եթէ երբեք վակոնի մէջ ոտքի կանգնած Ցամբորդներուն մարմինները պատի դեր մը խաղացած չըլլային: Այս ամէնուն մէջ, ամէնէն գարմանային եւ կրթութեան, քաղաքակրթութեան, քաղաքացիական դաստիարակութեան նուազագոյն ըմբռումի, գիտակցութեան տէր մէկու մը կսկիծ, ընդվզում պատճառող իրողութիւնը այն է, թէ մինչ քաղաքացիական անառարկելի իրաւունք մը, պարտաւորութիւն մը պաշտպանել ուզող, պաշտպանել փորձող ծերունի մը յարձակման կ'ենթարկուի ու կը խոշտամբուի, անդին, դէպքին վկայ, ականատես քաղաքացիներու խումբ մը, նուազագոյն հակազդեցութիւն մը նոյնիսկ չի ցուցաբերեր, կոյր ըլլար կարծե՛ք, խուլ ու անզգայ...

Ծերունիի Գողգոթան ատով չվերջացաւ դեռ, յաջորդ կայարանին իսկ, երբ կացութենէն պրծելու համար կը պատրաստուէր կառայութեան դուրս ելլել, սեւամորթ աղջիկ մը, հրել-հրմշտկելով վակոնի միւս ծայրէն դրան առջեւ հասնելով՝ բռունցքի հարուած մը իջեցուց ծերուկին գլխուն: Եւ այս ամէնը, ընդհանուր անտարբերութեան, անասնական անբանութեան մթնոլորտի մը մէջ: Այդ ալ տակաւին չբաւեր կարծե՛ք: Պատահեցաւ նաեւ, որ ծերուկին դուրս ելլելէն ետք, տեսնես յանկարծ խարտիշահեր օրհորդ մը, վակոնի

մէկ հեռաւոր ծայրէն, իր տեղէն ելաւ ու ամենայն երկիւղածութեամբ ու ցուցական խանդաղատամբով, ներմակ ցեղիմ ազնուութեան ու վեհանձնութեան կարծե՛ք իբրեւ երաշխիք, իր վրայի *փիւղովերջ* հանելով գետեղեց գայմ պառկած սեւամորթ դատարկապորտին կոնակիւմ...

Ձեր մէջէն ո՞վ պիտի կրնայ ըսել հիմա, թէ ո՞ր սահմանադրութեան ո՞ր մէկ առաջադրութեամբ, կամ մարդկային իրաւանց պաշտպանութեան ո՞ր մէկ օրէնքին տրամադրութեամբ, յառաջդիմութեան աննախընթաց հանգրուաններ նուաճած ճաղափակիւրք երկրի մը ճաղափակիւրք ըլլալու պարտաւորուած հանրութեան մը հանրային մէկ բնմիւն վրայ, գարշատեսիլ, գարշահատ, ճարայրներու շրջանը յիշեցնող կերպարանքով դատարկապորտ մը, իր հասակին ամբողջ աղտով ու կեղտով երկննայ, պառկի՛ առանց որ մէկը անօրէնը կարգի հրաւիրող նուագագոյն փարձ մը կատարէ: Թոյլ տայ, որ բարբարոսութիւնը յաղթէ: Ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի կրնայ քացատրել, թէ կարգի, կանոնի ու օրէնքին պաշտպան կանգնող ծերունի մը խոշտանգուի, առանց որ մէկը ձայն մը, շշուկ մը քարձրացնէ խոշտանգողին դէմ: Ո՞վ ձեր մէջէն պիտի կրնայ ըսել, քացատրել, թէ այդ խարտեաշ աղչիկը ո՞ր մէկ վատութեան, ստորնաճարշ դասալէութեան ու դաւաճանութեան ապացոյցը փորձեց տալ իր այդ ստորին արարով...

Ի՞նչ՝ հիմա: Պիտի ըսել արդեօք, որ ազնուութիւն, կրթութիւն միշտ ալ պարտութեա՞ն դատապարտուած են: Պիտի ըսել, հաստատել արդեօք, որ ճաղափակիւրքութիւն ըսուածը եթէ իրաւ է, որ կը յղկէ, կը տաշէ, կ'ազնուացնէ մարդ արարածը, իրաւ է մահ, որ տաշուած, յղկուած, ազնուացած ու նրբացած մոյմ մարդը յաւետ կը կորսնցնէ՞ պայճարելու, կռուելու բնագոյական ամէն ընդունակութիւն: Կը կորսնցնէ՞ բարբարոսութեան յաղթահարելու ամէն մարտունակութիւն:

Նիւ Եորքի սապուէին մէջ ցուցադրուած այս տեսարանը կուսինքն տալու համա՞ր էր արդեօք, որ Ամերիկային վերապահուած... փառապանծ ապագան:

ԱՐՄԱՆՏ

ՏՐԻՈՂԵՏՆԵՐ

1

Օ՛ աշուն իմ բերքանուշ, կրծքերդ լիքն են հիմա,
 Ու աչքերդ թաց են միշտ, իմ մօր աչքերի նման.
 Յիշի՛ր, յիշի՛ր անտունին, խաշամդ արա՛ բարձ նրան—
 Օ՛ աշուն իմ բերքանուշ, կրծքերդ լիքն են հիմա:
 Քաղցածներին յիշիր դու, թող ծծեն քո ափշը,
 Քաղեն մրգերը կրծքիդ, ու թող մի քիչ լիանան,—
 Օ՛ աշուն իմ բերքանուշ, կրծքերդ լիքն են հիմա,
 Ու աչքերդ թաց են միշտ, իմ մօր աչքերի նման:

2

—2ե՛մ մոռանայ քեզ երբեք, իմ տանջանքի երեկոյ,
 Տառապանքը քո անուշ, ասա՛, ինչպե՛ս մոռանամ.
 Քայլում էի երբ նրա պատուհանի ես ներքոյ—
 2ե՛մ մոռանայ քեզ երբեք, իմ տանջանքի երեկոյ:
 Մէն մի ալիք ու շարժում վարագոյրի թափանցիկ՝
 Դող էր գցում իմ հոգին, թունդ էր հանում սիրտն իմ—
 2ե՛մ մոռանայ քեզ երբեք, իմ տանջանքի երեկոյ,
 Տառապանքը քո անուշ, ասա՛, ինչպե՛ս մոռանամ...

3

Տխրութիւնից թէ չխօսեմ, բա ի՞նչ անեմ,
 Բա ի՞նչ անեմ տխուր, մախմուր քո աչքերը:
 Տխու՛ր է շատ տխրութիւնը, դա լաւ գիտեմ—
 Տխրութիւնից թէ չխօսեմ, բա ի՞նչ անեմ:
 Գիտեմ գիտեա՛ յիմարներն են լոկ միշտ ուրախ,
 Տխու՛ր է շատ տխրութիւնը եւ իմաստուն—
 Տխրութիւնից թէ չխօսեմ, բա ի՞նչ անեմ,
 Բա ի՞նչ անեմ տխուր, մախմուր քո աչքերը:

4

Մի՛րտ իմ, ե՞րբ պիտ' խելքի գաս, ե՞րբ պիտ' լսես
 ինձ խելօք,
 Տե՛ս, հետո՛ւ ես ու մաշում, սի՛րտ իմ, ե՞րբ
 պիտ' խելքի գաս:
 Մի քիչ լսել սովորիր, Լոուիսինճ է լոկ անմահ—
 Մի՛րտ իմ, ե՞րբ պիտ' խելքի գաս, ե՞րբ պիտ' լսես
 ինձ խելօք:
 Ոտից գլուխ ինձ յանձնել քո քմայքին ու խաղին,
 Ականջս կախ եմ պահել քո զարկերին ու տաղին,
 —Մի՛րտ իմ, ե՞րբ պիտ' խելքի գաս, ե՞րբ պիտ' լսես
 ինձ խելօք,
 Տե՛ս, հետո՛ւ ես ու մաշում, սի՛րտ իմ, ե՞րբ
 պիտ' խելքի գաս:

5

Աղօթում եմ, սի՛րտ, մե՛նակ չը մնաս,
 Անողոր է շատ կեանքը, հաւատա՛ւ,
 Մե՛նակութեանը ո՛վ կը դիմանայ,
 Աղօթում եմ, սի՛րտ, մե՛նակ չը մնաս,
 Բաց անես սիրտդ բոլորի՛ դիմաց,
 Ունենաս ընկեր, սէր անես, սէր տաս,—
 Աղօթում եմ, սի՛րտ, մե՛նակ չը մնաս,
 Անողոր է շատ կեանքը, հաւատա՛ւ...

6

Գարուն կայ մէն մի ձմեռից յետոյ,
 Բայց ձմեռը մեր վերջանալ չունի:
 Սրտում չը հալոող սեւ սառոյց ունի:
 Գարուն կայ մէն մի ձմեռից յետոյ,
 Բայց գարունը մեր մի անգամ գալիս,
 Գնում է անդարձ, էլ յետ գալ չունի:
 Գարուն կայ մէն մի ձմեռից յետոյ,
 Բայց ձմեռը մեր վերջանալ չունի...

7

Օրը որքա՛ն շուտ է անցնում,
 Երևե՛կ լինէր բոնել-պահել,
 Լինես ջաճել, լինես աճել,
 Օրը որքա՛ն շուտ է անցնում:
 Կեանքն է, առա՛ղ, յորձանք տալիս,
 Հոսում գետի պէս անարգել—
 Օրը որքա՛ն շուտ է անցնում,
 Երևե՛կ լինէր բոնել-պահել...


8

Եթէ ա՛յս է Վշխարհը Նորս,
 Վա՛յ ինձ, վա՛յ քեզ, Սէր իմ աղբոր,
 Սէր իմ մանուկ, ափսո՛ս ես դու,
 Եթէ ա՛յս է Վշխարհը Նորս...
 Ինչպէ՛ս պահեմ անապական
 Քե՛զ, իմ ճերմակ, մաքուր զտունուկ,
 Եթէ ա՛յս է Վշխարհը Նորս,
 Վա՛յ ինձ, վա՛յ քեզ, Սէր իմ աղբոր...

9

Ա՛հ, գայլեր կան մտած դարան,
 Մէկ էլ տեսար՝ առա՛ն-տարա՛ն,
 Յօշոտեցին քեզ, անմեղ զտուն—
 Ա՛հ, գայլեր կան մտած դարան...
 «Նոր Աշխարհը՞ էր ցառի գայ,
 Երազների փշրե՛ց, իմ Սէր,—
 Ա՛հ, գայլեր կան մտած դարան,
 Մէկ էլ տեսար՝ առա՛ն-տարա՛ն...

Գ. ԱՅԷԼԵԱՆ



Պ Է Յ Ի Ո Ւ Թ

Յաջորդ առաւօտ կանուխ արթնցայ: Տակաւին կէս-քուն կէս-արթուն վիճակիս մէջ, կը վերլուծէի մէկ օր առաջ տեսածներս: Հանրակառքը, «գոճապաշար», լալազին ձայնով մածուն ծախողը, պանանի բեռնակիրները, Օթէլ Լիւքսին խոշոր զամբիւղը, Տարօնեանը, որ կը ջանար անխելք բանի վերածել դիս: Տակաւին զայրացած եւ նաեւ սարսափած էի խոշոր զամբիւղով լաճէն, որ գողցած էր սուլիչս: Անպիտանը գոնէ՛ դիմացի մայթին վրայէն չսուլէր եւ չծաղրէր մեզ... Չէ՛, շատ բան տեսած էի. այդքան նորութիւն կարենալ տեսնելու համար, մեր փոքր գիւղին մէջ մէկ դար պէտք էր ապրիլ, սպասել: Անշուշտ, կը սպասէի մեր աքաղաղին կանչին, մեր մշակին Պորչա եզին բառային, բայց հոս այնքան լաւ էր հիմա: Երանի՛ թէ հող մնայինք այլեւս:

Այդ օր եւս շատ հետաքրքրական բաներ կային տեսնելիք: Պէտք էր առիթը օգտագործել եւ կարելի եղածին չափ շատ պլուրտիլ:

Այդ առաւօտ նաեւ տանիքը ելանք: Միայնակ տուն մըն էր, Երկաթէ կամուրջին կից, Հաճըն թաղին մէջ: Հազիւ տանիք ելած՝ ահագին աղմուկ լսուեցաւ երկինքէն: Վախս, բնականօրէն, անբացատրելի էր:

—Ինչեղեցաւ տղեկը,— ինդաց Գարուն տատս: —Մի վախնար, տղա՛ս, սա օդանաւ է, օդանա՛ւ:

—Օդանա՛ւ:

Ես օդանաւ տեսած էի, քանի մը անգամ, մեր գիւղին վրայէն անցած միջոցին, բայց այնքան բարձրէն թռիչք կը կատարէին ասոնք, որ դժուար կ'ըլլար լսել անոնց ձայնը: Իսկ երբ օդանաւ մը անցնէր, իբր գերազոյն նորութիւն, բոլոր գիւղացիները իրարու ձայն կու տային, որպէսզի բոլորն ալ տեսնէին զայն: Մէկ-երկու վայրկեան ետք օդանաւն ու անոր աղմուկը կ'անհետանային, սակայն գիւղացիք, մեծ թէ փոքր, քանի մը օր կը խօսէին անոր մասին: Իսկ հո՛ս, Պէյրութի մէջ, օրական քանի մը անգամ պիտի տեսնէի այդ չնաշխարհիկ բանը: Այնքան ցածէն

կ'անցնէր օդանաւ ըսուածը, որ աղմուկը կը խլացնէր զիս: Թեւեւ-
 ըուն տակի գիրքերն ալ կը տեսնէի, բայց բնականաբար չէի կրը-
 նար կարդալ: Զիս զարմացնողը այն էր սակայն, որ մարդիկ
 գրեթէ չէին իսկ նայեր անոր կամ խօսեր անոր մասին: Ինչ
 տարօրինակ մարդիկ էին սա պէյրուֆցիք:

Տանիքէն կ'երեւէր դիմացի փողոցը: Մասնաւոր նորութիւն
 մը չկար հոն: Երթեւեկը խիտ էր սակայն: Այնքան ինքնաշարժ
 ուրիշ՝ բերած էին: Ժամանակին, Պէյրուֆ այցելած գիւղացիք,
 երբ վերադառնային, կ'ըսէին, որ Պէյրուֆի ինքնաշարժները համ-
 րիշի հատիկներու պէս ետեւ ետեւի շարուած կ'ըլլային: Ես բան
 չէի կրնար պատկերացնել այդ օրերուն: Հիմա կը տեսնէի, ետեւ
 ետեւի շարուած ինքնաշարժները. կը հաստատէի նախկին այցելու-
 ներուն ըսածները, քիչ մըն ալ աւելիով:

Այդ օր, նորանոր վաճառողներ անցան մեր փողոցէն, որ
 համեմատաբար բաւական նեղիկ էր: Ամէն անգամ, որ վաճա-
 ռորդ մը անցնէր, կիները դուրս կու գային իրենց դուռներէն եւ
 բաներ մը կը գնէին: Պէյրուֆի կիները կը բաղդատէի մեր գիւղի
 կիներուն հետ: Մեր գիւղի կիներն ալ դուրս կը թափէին ամէն
 անգամ, որ փերեզակ մը գիւղ գար: Ուրեմն, կինը կ'ին էր:

Երեկոյեան մեզի բարի եկաքի եկան քանի մը ընտանիք:
 Բնականորէն բոլոր եկողներն ալ քննապցիւններ էին: Հարցումները
 կը դառնային ծխախոտի բերքին, անձրեւին, ցորենին, մետաքսին
 մասին: Ամէն այցելու, իր հարազատներուն մասին տեղեկութիւն
 առնելէ ետք, կը հետաքրքրուէր հանապազօրեայ վերոյիշեալ հար-
 ցերով: Հայրս ու մայրս նոյն պատմութիւնը կը պատմէին: Այ-
 լիւս ձանձրանալ սկսած էի նոյն բաները լսելէ, ինչ որ ջուռն կը
 բերէր: Կար նաեւ հրատապ այլ նիւթ մը, որ ամէն այցելութիւն
 կը վերածէր վէճ-վիճարանութեան: Մա ներգաղթի հարցն էր: Ա-
 մէն ընտանիքի մէջ այս հարցը կը ծեծուէր: Վէճ, կռիւ, այպա-
 նումներ, համոզելու ճիգեր: Ոմանք կ'ուզէին եւ կ'երազէին օր
 առաջ ներգաղթել: Ուրիշներ ղէմ էին: Ոմանք կը տարակուսէին,
 շատեր կորսուած վիճակ մը ունէին, իսկ ոմանք ալ իրենք զի-
 րենք վերածած էին քարոզիչներու եւ կը գովերգէին Ստալին
 պապուկին առաքինութիւնները, կը նկարագրէին պիտերէն սկսեալ
 մինչեւ բարեգութ ժպիտը: Կը յորդորէին անպայմանօրէն երթալ
 ու հաստատուիլ հայրենիք, ուր ստալինեան բարիքները կը հոսէին
 իբրեւ գետ:

Երբեմն ընտանիքները կը պառակտուէին. հայրեր կը մեր-
 ժէին խօսիլ իրենց գաւակներուն հետ. եղբայրներ կը գժտուէին:
 Բոլոր ներգաղթողները կը նկատուէին բոլշեւիկ, իսկ ներգաղթելու
 կողմնակից չեղողները՝ դաշնակցական: Մանուկներն ալ անմասն
 չէին մնար այդ մթնոլորտին ստեղծած օդը շնչելէ: Փոքր լաճեր
 երբեմն իրարու հետ կը գժտուէին, կը քէննային: Մէկը ինքզինք
 կը հռչակէր դաշնակցական, միւսը՝ բոլշեւիկ: Երբեմն կռիւն ալ
 անպակաս կ'ըլլար:

Պէջուրով մէջ եւ դժուարին կացութեան մատնուած էի: Գարուն տատիս երկու տղաքը տարբեր դիրքերու վրայ կը գտնուէին. ատոր համար, մերթ ինքզինքս բուշետիկ կը հռչակէի, մերթ՝ դաշնակցական: Ամէն անգամ արժանանալով մէկ կողմին գնահատանքին եւ միւս կողմին խոժոռ նայուածքներուն: Պէտք է ըսել, որ նաեւ երբեմն կ'օգտուէի այդ կացութենէն:

Այդ գիշեր, երբ քանի մը ընտանիքներ եկած էին այցի, սովորական հարց-պատասխաններէն ետք, նիւթը դարձեալ գնաց-հասաւ ներգաղթին: Անմիջապէս ներկաները բաժնուեցան երկու բանակներու, ներգաղթողները՝ Ստալին պապուկին օրհնութիւններուն ակնկալութեամբ ապրող մարդիկ եւ գաղթին դէմ արտայայտուողներ: Աստուած իմ, իրարմէ ոչ շատ հեռու մարդիկ, նոյնիսկ հարազատներ, ինչպէ՛ս կը վիճէին, հազար ու մէկ աղբիւրէ ջուր կը բերէին, սա կամ նա թեզը պաշտպանելու համար: Երկար տեւեց վէճը: Հայրս քանաց վերջ մը դնել ատոր, ըսելով, գացողին հետ ըլլայ Աստուած, իսկ մնացողներուն ալ օգնէ: Պահ մը պաղեցաւ միջնորդը, բայց շուտով դարձեալ բռնկեցաւ: Վերջապէս, երբ մեկնելու պահը հասաւ, ոմանք առանց գիշեր բարի իսկ մաղթելու մեկնեցան իրենց տուները: Իմ ալ ջուռնս փախած էր: Վերջապահութեան սկսայ երգել այդ օրերուն շատ տարածուած քայլերգը.

«Սովետական ազատ աշխարհ Հայաստան...»

Առաջին տողը կըցայ երգել. երկրորդին չկրցայ անցնիլ, ատոր համար, որ ալ ականջս տաքցաւ, երկնցաւ եւ շատ ցաւեցաւ: Միւս կողմէ՛ Գարուն տատիս մեծ զաւակը՝ Անդրանիկ, կը ջանար քաջալերել զիս, բայց ալ ականջս կը ճզմուէր Յովհաննէսին մատներուն մէջ: Ատկէ ետք այլեւս բնաւ չփորձեցի գովել ստալինեան հանճարով երջանկացած Հայաստանը...

Մեր կարգին, շատ մը ազգականներու այցելեցինք: Ամէն տեղ կը գովէին զիս: Մէկի տեղ երկու կամ երեք շաբաթ կու տային: Երբեմն կը հիւրասիրէին պանանով կամ նարինջով:

Օր մը մայրս առաջարկեց, որ մեզ Մասլախ տանին:

—Մէր կ'ուզես երթալ,— հարց տուաւ Գարուն տատը:

—Մասլախ. ամէն ամառ, երբ կարապետենց Սաթենիկը գիւղ գար, մեր Մասլախը ըսելով թէ՛ իր եւ թէ՛ մեր բերնին ջուրերը կը հոսեցնէ, երթանք տեսնեք սա Սաթենիկենց Մասլախը:

—Հոն բան-գործ չունիս. ի՞նչ պիտի ընէք հոն, մեղա՛յ, Տէր:

—Ինչո՞ւ, ի՞նչ կայ որ հոն:

—Այդ Մասլախ ըսուածը ապրուելիք տեղ չէ, աղջի՛կս: Հոն երթալուդ համար շատ պիտի գղջաս:

—Անաս չունի, երթանք: Սաթենիկը կը գովէ, կը գովէ, երկինք կը թռցնէ սա Մասլախը, երթանք տեսնեք, ի՞նչ բան է:

Մօրս անկտորում պնդումներուն վրայ, Գարուն տատս վերջապէս յօժարեցաւ տանիլ մեզ Մասլախ: Գացինք. խերով-բարով չերթալինք: Փոքր հիւղակներ, իրարու փակած, կազմած էին խեղ-

ճուրհան շղթայ մը, իսկ աղբանոցներէն բարձրացող հոտը զըզ-
լանք կը պատճառէր բոլորիս:

Վերջապէս գտանք Սաթենիկենց տունը, որ տախտակաշէն եւ
թիթեղածածկ խեղճութիւն մըն էր: Հակառակ ատոր, բաղկացած
էր երկու յարկէ: Պէտք էր վեր բարձրանալ, հիւրանոց կարհնալ
հասնելու համար: Բնականաբար, ես ալ պիտի բարձրանայի վերը:
Աստիճանները վախցուցին զիս. ամէն վայրկեան կը վախնայի, որ
ն'ւր որ էր պիտի ինչային սանդխամատերը: Մեր գիւղին մէջ, ես
վարժ էի աստիճաններէն բարձրանալ, բայց ատոնք քարաշէն էին.
բնաւ չէի վախնար: Հոս, Մասլախի մէջ, ուղղակի կը սարսափէի
սա աստիճաններէն: Մինչեւ կէսը, քիչ մըն ալ աւելի բարձրացայ-
տեսայ, թէ ինչպէ՞ս տախտակամածին տախտակները կը ծռէին
ամէն անգամ, որ մէկը կոխէր ատնց վրայ: Ո՛չ միայն աստի-
ճանները, այլեւ ամբողջ հիւղը կը տատանէր: Ձէ՛, սա կը սար-
սափեցնէր զիս: Մերժեցի վեր ելլել: Վար իջայ: Ո՛չ մօրս խրատ-
ները, ոչ ալ Սաթենիկենց տնեցիներուն քաջայրանքները կրցան
վեր մղել զիս: Վստահ էի, որ պիտի փլէր այդ հիւղը, անմիջա-
պէս որ տախտակամածին վրայ ոտքս դնէի: Նախընտրեցի աստի-
ճաններուն ամենավարի սանդխամատին վրայ նստած մնալ, ինծի
հրամցուած շաքարները մերժելու գնով: Ես ալ մեծ ակնկալու-
թեամբ սպասած էի սա Մասլախ ըսուածը տեսնելու, սակայն,
տեսնելէ ետք, որքան յուսախաբ եղած էի: Ձէ՛, Պէյրութ ըսու-
ածէն առաջին յուսախաբութիւնս կրած էի:

—Տեսա՞ր աղջիկս:

—Աստուած իմ, ա՛ս է եղբ ասոնց «Մեր Մասլախ»ը: Գիւղը
ձգելէ ետք մարդ ասանկ տեղ կը նստի: Ասոնց գիւղի տունը
չատ աւելի տոկուն եւ լաւ է: Գոնէ քիթդ չ'իջնար աղբերու հո-
տերէն:

Մօրս կրած յուսախաբութիւնը իմ կրած յուսախաբութենէս
չատ աւելի մեծ էր...

Երկրորդ յուսախաբութիւն մըն ալ կը սպասէր մեզի: Հայա-
չէնի մէջ կային ընտանիքներ, որոնց պէտք էր այցելել: Հոն ալ
քիչ մը զժկամութեամբ տարաւ մեզ Գարուն տատս: Հոն ալ
խեղճ ու կրակ տնակներ, ձորակի մը մէջ շարուած, որոնք գրե-
թէ լլիւ բնակուած էին մեր համագիւղացիներով:

—Մօ Պետօ, ա՛ս է քու այնքան գոված Հայաչէնդ,— հարց
տուաւ հայրս հող բնակող համագիւղացի երիտասարդի մը, որ
ամէն ամառ գիւղ կու գար՝ երկու շաբթուայ արձակուրդի հա-
մար: Երբ գիւղ գար, իր ձեռնաղաշնակովը կը դառնար գիւղին
աստղը: Եւ առիթ չէր փախցնէր գովելու, երկինք հասցնելու ի-
րենց Հայաչէնը, կամ Գրմըզը գազըզը:

—Ի՞նչ ունի որ մեր Հայաչէնը, ասօ ձէ՛մս:

—Տղաս, Քօրքիւնէի ձեր տնակները այստեղէն լաւ չե՛ն: Սա
ի՞նչ տեղ է բնակելու համար:

—Այդպէս մի ըսեր, ամօ ձէմս, շատ լաւ է: Յետոյ, ի՞նչ ընենք, գործերնիս հոս է:

—Տղաս, գնա՛ Հօրդ Հողերը շէնցուր, այստեղէն աւելի լաւ կ'ըլլաս:

—Ո՛չ, ես շարուար չեմ հագնիր: Այս տեղը շատ լաւ է:

Վիճիլը աւելորդ էր արդէն: Երկու կողմերն ալ ամուր կը մնային իրենց դիրքերուն վրայ:

—Ափսո՛ս,— ըսաւ Հայրս, երբ կը դառնայինք Հայաշէնէն, որ այդ օրերուն առաւելաբար կը կոչուէր Գրմըղը գաղղ... —Աս տղուն Հողերը մէկի տեղ երեք ընտանիք կ'ապրեցնեն, եթէ Պետոն եւ եղբայրը ձեռք ձեռքի տան հոն...

Օր մըն ալ Գարուն տատս աւետեց, որ Անթիլիաս պիտի երթանք: Ձէի ուզեր նոր յուսախարութիւն մը եւս ապրիլ: Սակայն Գարուն տատին տրամադրութենէն կարելի էր ըմբռնել, որ յուսախարութեան տեղ չկար: Դեղին ինքնաշարժի մը մէջ տեղաւորուեցանք եւ գացինք: Հեռուէն երեւցաւ հայկական դմբէջք:

—Ահաւասիկ հասանք,— սկսաւ Գարուն տատը,— քիչ մնաց:

Իսկապէս շուտով հասանք ընդարձակ բակ մը: Հոն էր եկեղեցին: Ի՞նչ ընելու եկած էինք հոն, չէի կրնար ըմբռնել: Հագլու բակէն ներս մտած, փաթթուեցայ մօրս փէշերուն: Ես վախ կը զգայի ամէն անգամ, որ Գեասպի քահանան տեսնէի: Ան յաճախ կ'այցելէր մեծ Հօրս (մօրս հայրը), որ նոյնիսկ «երէց» ծածկանունը կը կրէր: Հիմա հոս քանի՛-քանի՛ սեւ սքեմ հագած մարդիկ կը ճեմէին: Մայրս քաջալերեց զիս: Վախով ու դողով, եւ այս անգամ ես իր ձեռքը պինդ բռնած, յառաջացայ: Կրնամ ըսել, որ բան չպատահեցաւ: Ինծի Փոխանակ եկեղեցին մտնելու, Գարուն տատս մեզ առաջնորդեց դէպի փոքր մատուռը: Ներսէն ստացած սպաւորութիւնս այնքան խոր եղաւ: Շարք-չարք գանկեր, ոսկորներ: Առաջին անգամն էր, որ գանկ կը տեսնէի: Երիտասարդ մը բացատրութիւններ կու տար, բայց շատ բան չէի կրնար ըմբռնել: Տէր-Չօր բարձր սակայն գամուեցաւ-մնաց գիտակցութեանս մէջ:

Երիտասարդը առաջնորդեց մեզ դպրեմանքէն ներս: Մօրս համար երկար տարիներով անջնջելի մնաց ներսը տիրող կարգկանոնն ու մաքրութիւնը: Միշտ կը յիշէր իր կրած սպաւորութիւնը:

Պահը իրիկնանալ սկսած էր: Քիչ անդին, տղաք գնդակ կը խաղային: Երիտասարդ մը, որ ներքնաչապիկով էր եւ լաւ ալ քրտնած՝ զատուեցաւ խումբէն եւ մօտեցաւ մեզի:

—Ահաւասիկ մեր Նշանը,— ըսաւ Հայրս: «Մեր Նշան»ը Հօրս մօրաքրոջ թոռն էր: Այդ անունը յաճախ լսած էի, բայց չէի յիշեր զայն: «Մեր Նշան»ը Մեզ տարաւ տեղ մը եւ հեռուէն ցոյց տուաւ այնչեր եւ փառաւոր մօրուքով մարդ մը:

—Տէ՛ս, տղաս, սա կ'աթողիկոս պապուկն է...

Խոստովանիմ, որ շատ բան չհասկցայ «կ'աթողիկոս պապուկ»ն: Սակայն, տարիներ ետք, պրոթէլով վոլիպոլ խաղցող «Մեր

Նշանը ինք պիտի գրաւէր այդ կաթողիկոս պապուկին գահը: Ո՛չ միայն այդ, այլև պիտի ժառանգէր այդ «պապուկի» անունը եւս:

Ուրեմն, Նահատակաց մատուռ տեսնելէս ետք եկայ այն համոզումին, որ Անթիլիասի մէջ միայն «Անթիլիաս» մայրը չէր ցանուեր:

*
**

Մինչ այդ, հաւանաբար որոշ յիշատակներ ունէի երկու Նոր տարիներէ: Գիւղական շատ համեստ պայմաններուն մէջ, ուր Երկրորդ Համաշխարհային պատերազմին ազդեցութիւնը այնքան զգալի էր, բնականաբար մեր կաղանդ պապան եւս ըլլար համեստ: Ինչ որ կը յիշէի անկէ, սուր ու երկար դիտարկն էր: Ատկէ զատ՝ նուէրներով — առաւելաբար նարինջ եւ շաքարի քանի մը կտոր — լեցուն գուլպան էր:

Հոս, Պէյրութի մէջ, որքան ճոխութիւն կար: Զիս շատ զարմացնող բանը այն էր, որ մէկէ աւելի կաղանդ պապաներ կային: Կարգ մը խանութներու առջեւ կեցած, օր-ցերեկով, զանգակ ի ձեռին, կաղանդ պապաներ կային: Զէ, այդ փոքրիկ ուղեղիս համար բնաւ ըմբռնելի չէր: Ո՛չ Գարուն տատին, ո՛չ մօրս եւ ո՛չ ալ Զուարթ ֆոյրիկին բացատրութիւնները կը լուսաբանէին զիս:

Նոր տարուան գիշերը, մինչ այդ իմ տեսած ամենաճոխ սեղանին առջեւ ես ալ տեղ գրաւեցի: Կենացներ, բարեմաղթութիւններ: Քանի մը նուէրներ: Ինծի չափ եւ ինձմէ նոյնիսկ աւելի ուրախ էր քեռիս: Որքան կը զուրգուրար վրաս: Զէ, շատ ուրախ էր այդ գիշեր: Փոքրիկ ամպ մը անցաւ սեղանին վրայէն, երբ առաջարկուեցաւ նաեւ իմել Ստալին պապուկին կենացը...

— Հիմա իր պիտերուն մի՛ հայտնեցներ զիս, — փոփոխեցաւ Յովհաննէս ամմիս...

Գարուն տատս միջամտեց եւ ամպը փարատեցաւ...

Շուտով քունս տարաւ: Մայրս կ'ուզէր, որ արթուն մնայի: Անկարելի էր սակայն: Ուշ գիշերին, ընդոստ տեղէս ցատկեցի: Այդ ի՞նչ սարսափելի բան էր: Մարդիկ սկսած էին հրացանաձգութեան: Ես գիտէի, որ Նոր տարին կը դիմաւորեն նաեւ կրակոցով: Մեր գիւղին մէջ գտնուող մէկ քանի խեղճուկ ատրճանակները կը փորձուէին Նոր տարուան գիշերով: Սակայն սա ի՞նչ զէնքեր էին: Աստուած իմ: Արթնցած էի դողով: Մօրս գիրկին մէջ շատ ապահով կը զգայի, հակառակ անոր, որ դողս կը շարունակուէր տակաւին:

— Լսէ՛, տղաս...

— Ի՞նչ լսեմ, մայրիկ...

Նաւերը...

Իսկապէս, ես առաջին անգամ Օթէլ Լիւքսի տանիքէն, քե-
ռիս գիրկին մէջ, յաճ էի նաւերուն ճակները: Հիմա, սակայն,
փոխան հատուկներու ճակներու, հարիւրաւոր ճակներ կը լեցնէին
երկինքը, իրենց ուրախ աղմուկներով... Սակայն հակառակ ուրա-
խութեան, ատոնց մէջ տխուր ու մելամաղձոտ բան մը կար...
Իրենց տուներէն եւ հարազատներէն հեռու մարդիկ ծովուն վրայ
նոր տարին կը սօսէին: Այդ օրերուն չէի կրնար ըմբռնել նա-
ւաստիներուն կեանքը, սակայն ուրախ գիշերով, նաւերուն ճակ-
ները նաեւ տխուր բաներ կ'ըսէին ինծի...

Յաջորդ առաւօտ, բարձիս քով գտայ Կաղանդ պապային
բարերարութեան տարողութիւնը: Ի՞նչ լաւ օր: Ձէ՛, Պէյրութի Կա-
ղանդ պապան էր բուն Կաղանդ պապան: Մեր գիւղի խեղճուկ
Կաղանդ պապային հետ բաղդատած՝ ան անբացատրելի եւ ան-
նկարագրելի հակայ մըն էր:

*
**

Հրաւերներ, այցելութիւններ եւ փոխայցելութիւններ: Ամէն
սոնջ հասարակաց նիւթ մը կար.

—Դո՞ւք ալ պիտի ներգաղթէք:

Կամ նոյն նիւթը շրջուած ձեռով կը դրուէր.

—Դուք չէ՞ք ներգաղթեր...

Տունէ տուն միջնորդաբ կը փոխուէր: Ոմանք երթալու
խանդավառութեամբ տողորուած, ուրիշներ անորոշութեամբ լեցուն,
իսկ ուրիշներ ալ դէմ ներգաղթին: Այս կացութեանց դիմաց,
յաճախ կը ստեղծուէին անհանոյ երեւոյթներ, վէճեր, նոյնիսկ
վիրաւորանքներ:

Հիմա սկսած էի կարօտնալ նաեւ մեր գիւղը: Առաւելարար՝
մեր բուխերիկը, որ տարբեր բան մըն էր: Անկէ բխող ջերմու-
թիւնը կարելի չէր գտնել հոս: Պէյրութիք իրենք գիրենք մխի-
թարելու համար կը պնդէին, որ պաղ չկար Պէյրութի մէջ: Կը
բաւարարուէին կազօճախին վրայ թիթեղի կտորիկ մը դնելով եւ
շուրջը հաւաքուելով՝ ջերմանալու համար: Որքան խեղճ բան էր
այդ: Մինչ հոն՝ գիւղը, բուխերիկին մէջ նետուած կաղնիի, ձիթե-
նիի, մայրիի կամ դափնիի փայտերէն բաշխուած ջերմութիւնը որ-
քան ազուր էր: Անկէ ելած ճարճատիւնը աշխարհ մը կ'արժէր:
Օճախին շուրջ նստոտած, ընտանիքը երբ վայելէր գիւղական հա-
մեստ բարիքները՝ քիչ մը չէր, թուզ, չամիչ եւ ընկոյզ, որքան
քաղցը կ'ըլլար ամէն բան: Հոս շատ ճոխութիւն կար, բայց չկար
բուխերիկին ստեղծած ջերմութիւնը...

Տակաւին Մէրճան շունը եւ Պորչա կովը: Ատոնք իմ գիւղի
ընկերներն էին: Մէրճան շունը խորքին մէջ գիւղի բոլոր մանր
տղոց ընկերն էր: Բնաւ չէր հաջեր մեր վրայ: Կու գար, կը քըս-

ւէր մեզի, մեր ոտքերուն տակ կը դնէր գլուխը, նոյնիսկ բարեւել սորված էր: Երբ մէկը ձեռքը երկարէր, համակրելի շունը իր աջ թաթը կը դնէր վրան: Մարգ չէր գիտեր, թէ ո՞վ սորվեցուցած էր իրեն բարեւելը: Ասոր տէրը մեր աչքին հօգը մէկն էր. իր շունին պատճառաւ կը վայելէր մեր բոլորին համակրանքն ու սէրը:

Պորչա եզն ալ տարբեր էր: Սպիտակ՝ ճակտին սեւ պիծիկով եզ մըն էր: Անիկա բոլոր եզներուն արտօնանն էր: Ամէն երեկոյ կը սպասէինք անոր վերադարձին: Տակաւին գիւղ չհասած, գերեզմանոցին պատին տակ կը սկսէր բառաչել, իմաց տալու համար, որ ինք կու գար: Եւ մենք կ'ուրախանայինք: Մեծերն իսկ կ'ուրախանային: Ասոր տէրը եւս հերոս մըն էր. մեծ, շատ մեծ մարդ էր: Ինչպիսի հպարտութեամբ կը խօսէր իր եզան մասին, երբ այս վերջինը փախուստի մատնէր այլ եզ մը: Մանուկներու միջեւ խօսակցութիւնը յաճախ կը դառնար Մէրճան շան կամ Պորչա եզան մասին: Մեծերն ալ շատ կը խօսէին այս երկուքին շուրջ:

Հիմա, հեռաւոր Պէյրութի մէջ, առաւելարար կարօտցած էի այս երկուքին: Կային ընկերներ, մեծ հայր, եւայլն, բայց ես կարօտցած էի բուռնիւրով, Պորչա եզը եւ Մէրճան շունը: Է՛հ, եթէ շուտով տուն երթայինք, լաւ կ'ըլլար, բայց Պէյրութէն զատուելն ալ դժուար բան էր:

Պէյրութի խանութները, «գոճապաշ», շագանակ, «Անթիլիասի մարը», «Բաթթը փորթուգալ» եւ լալկան երգով մածուն ծախողները եւս համակրելի էին. ասոնցմէ ինչպէ՞ս բաժնուէինք: Հոն, գիւղին մէջ հարսնիք ընող շոգեկառք չկար, հանրակառք չկար եւ տեսակ-տեսակ օթօ չկար: Քեռիս, Գարուն տառս, Յովհաննէս էմմա, Զուարթ քոյրիկն ալ Պէյրութ պիտի մնային: Երբ նժարի մէջ դնէի մեր գիւղ ու Պէյրութը, ընտրութիւն մը ընելը շատ դժուար կ'ըլլար...

Տակաւին կը մնար տեսնել «Մեծ Թուրիկը»: Չինք չէի տեսած: Քանի մը անգամ զացած էի Օթէլ Լիւքս: Քեռիս քանի՞ քանի՞ անգամ վերելակով վեր հանած եւ ետ վար իջեցուցած էր գիտ կը մնար տեսնել «Մեծ մարգ» Թուրիկը:

Երեկոյ մը ծնողներուս հետ բախար ունեցայ տեսնելու Թուրիկը: Պանդոկին վերնայարկը իրեն յատկացուած էր: Իսկապէս որ մեծ մարդ մըն էր. գէր էր, գէր, մեր Յովհաննէս փեսայէն ալ գէր, բայց այնքան ալ «մեծ» չէր: Ձէի կրնար ըմբռնել, թէ ինչո՞ւ մարդիկ այնքան կը խօսէին այս մարդուն «մեծութեան» մասին: Պայապան խոճան, որ ամէն ամառ գիւղ կու գար օդափոխութեան, Թուրիկէն աւելի խոշոր էր: Ծուպալ հագած միականի Պալապան խոճան, որ կը սիրէր մսավաճառին քովէն ամենախիղոտ միսի կտորները գնել, թերեւս ալ աւելի մեծ էր, քան Թուրիկը:

Բնականաբար, սպասումը դժուար էր ինձի համար: Հոն, Մեծ Թուրիկին առջեւ իսկ, մօրս հարցաւոր, թէ ո՞ւր է Մեծ

Թուրիկը Երբ ցոյց տուաւ ինծի դիմացի թուխ մարդը, որ կը խօսէր բարձր ձայնով եւ շատ կը խնդար, իմ թերահաւատութիւնս չկրցայ ծածկել:

— Ի՞նչ կ'ըսէ այդ մանչուկը, տիկին:

Մայրս չուզեց բան ըսել. ամօթ չէ՞ր:

— Կարծեմ թէ հետաքրքրական բան մը կը հարցնէ մանչուկը. ի՞նչ կ'ըսէ:

Որքան որ մեծ ըլլար Թուրիկը, բնականաբար չէր կրնար հասկնալ իմ քետապերէն խօսածս: Մայրս չկրցաւ ծածկել սակայն. բացատրեց, որ «մանչուկ»ը կ'ակնկալէր հսկայ Թուրիկ մը տեսնել. յուսախաբ եղած էր:

Բարձր, շատ բարձր ձայնով խնդաց Թուրիկը Գոնէ այդ խնդուքը կը յիշեցնէր հսկայի խնդուք:

— Այսքան մեծութիւն չե՞ս հաւնիր, չլի՞ք: Այսքանն ալ շարժելու համար ուժ պէտք է, տղաս:

Հայրս բացատրեց, որ Թուրիկ մեծ էր, անոր համար, որ ժամանակին Ֆետայի եղած էր. նաեւ անոր համար, որ ինք զիրք գրող էր, նշանաւոր մարդ. ատոր համար ամէն տեղէ մեծ մարդիկ իր պանդուկը կու գային:

Թերեւս հօրս բացատրութիւնը լաւ էր, բայց ինծի համար շատ ալ ըմբռնելի չէր: Ի՞նչ որ էր. գոնէ ընկերներու շատ պատմելիքներուն վրայ նիւթ մըն ալ ունէի պատմելիք. տեսած էի «Մեծ Թուրիկը»:

Մուռնդն ալ անցաւ: Մեղայ՛, քանի՛-քանի՛ խումբեր, խմբան գիշերով, «Աւետիս» կ'երգէին: Մինչեւ որ խումբ մը երթար, ուրիշ խումբ մը կու գար: Մեր գիւղին մէջ միայն մէկ անգամ կ'աւետուէր Յիսուսի ծնունդը, այն ալ հազիւ քանի մը հողինոց խմբակի մը կողմէ: Հոս նոյնիսկ նուագարաններ չալկած՝ կ'երգէին «Ընդհանրող մեծ եւ սքանչելի»...

Չէ, տարբեր էր սա Պէյրութ ըսուածը: Եթէ կարելի ըլլար մեր տան բուխերիկը հոս փոխադրել, նաեւ խոշոր քամիւնով մը Պորչա եզն ու Մէրճան շունն ալ հոս բերել, թերեւս բնաւ չուզէի գիւղ վերադառնալ: Բայց ամէն բան իմ ուզածիս պէս չէր կրնար ըլլալ, որքան ալ որպէս մէկ հատիկ, շփացած ըլլայի եւ ծնողներս պահանջներս չկարենային մերժել, այսպիսի բան մը չէին կրնար ընել: Ես ալ տրամաբանական չէի գտներ երազս. ատոր համար ալ այդ առաջարկը չպարզեցի ծնողներուս:

*

**

Վերջապէս հասաւ մեկնումի ժամը: Թէ՛ ուրախ էի եւ թէ տխուր, կ'ուզէի գիւղ դառնալ. սակայն որո՞ւ պիտի ձգէի շագանակ ծախողները, անկիւնի «գոճապաշ» ծախող խոշոր մարմնով եւ

խոչոր պեխերով, բայց մեղմ ձայնով մարդը, լայկան ձայնով մածուն ծախողը ի՞նչ պիտի ըլլար: Անթիլիաս մալ՝ը եւ քաղցր նարինջ ծախող հայր ու տղան ի՞նչ պիտի ըլլային: Կարծես ինծի երթաս բարով մաղթելու համար, զրեթէ մեր գլխուն վրայէն անցաւ հարսնուոր շոգեկառքը: Սեփ-սեւ էր, բայց հարսնիքի «լու-լու-լու» կ'ընէր: Ի՞նչ կար որ, ալաւի հարսներն ալ սեւ կը հագնէին: Աս ալ սեւ թող ըլլար: Որքա՛ն կը սիրէր զիս այդ թը-րեւը:

Վերջին պահուն, կարելի եղածին չափ շուրջս կը դիտէի, առաւելագոյն թիւով ինքնաշարժներ, ձիաքարշ կառքեր, հեծիկներ եւ «փաթիփաթան» մոթորսայլը տեսնելու համար:

Մինչ Գարրիէլի պատին վրայ կը բեռցուէին շուրջ տասնեակ մը սակառուներ, մեր հարազատները կը համբուրէին մեզ: Առաւելաբար զիս շատ կը համբուրէին: Քեռիս, վերջին վայրկեանին, բերած էր ինծի երկու տոպրակ գնդիկ: Ի՞նչ գնդիկներ էին աւտնք. «կազոզ» կոչուած տեսակէն էին: Որքա՛ն շատ էին. կրնայի բոլոր ընկերներուս դիմաց պարծենալ իմ պէյրուսեան «կազոզ» գնդիկներովս: «Օ՛իս, ի՞նչ լաւ է իմ քեռիս: Գրկած՝ կը համբուրէր զիս ու դարձեալ կը համբուրէր: Որքան որ սիրէի հարազատներս, կը ջանայի միշտ շուրջս դիտել: Է՛հ, ո՞վ գիտէր, թէ այլեւս երբ պիտի տեսնէի պանան կրող եւ «ուս» պոռացողը, կամ սա ստահակ բեռնակիր լակտները, որոնք իրենց հսկայ զամբիւղներով այնքան ճարտարորէն ասդին-անդին կը վազվզէին: Քէն ունէի ատոնց հանդէպ, որովհետեւ անոնցմէ մէկը գողցած էր սուլիչս, բայց գոնէ ուրախ էի, որ մէկն ու մէկը իր զամբիւղին մէջ չէր նետած զիս:

Պաս ելանք: Գարուն տառս կու լար: Մայրս աբ Քեռիս՝ ոչ: Ան քաջ մարդ էր եւ ալ չէի լար, բայց ուրախ ալ չէի: Երբ Գարրիէլին պատը կամաց-կամաց շարժիլ սկսաւ, գլուխս ետ դարձուցի, անգամ մը եւս տեսնելու համար հոն, Երկաթէ կամուրջին տակ իրենց թաշկինակները ճօճող մեր հարազատները: Ա՛խ, երանի սա պատը աւրուէր, անիւր պայթէր եւ ես քիչ մըն ալ մնայի հող: Երբ մեր հարազատները աներեւութացան, ես սկսայ լալ...

Մեկնելու ճամբան նոյնքան տաղտկայի էր, որքան գալու ճամբան: Հիմա շատ մը սիրելի բաներ ձգած էի ետիս: Մայրս «սոսուն» հացի պատառներով, պանանով եւ այլ արուոր բաներով կը ջանար մխիթարել զիս:

Անցանք Անթիլիասէն, անցանք թիւնէլէն, Շեքքայի հսկայ ծխնելոյզներով սիմենթի գործարաններուն քովէն, Թրիփոլիէն...: Անցանք նաեւ սահմանէն: Երեկոյեան դէմ հասանք Լաթաքիս: Կը մօտենայինք մեր գիւղին: Է՛հ, որքան պատմելիքներ կային ընկերներուս, որքա՛ն պարծենալիք բաներ կային: Բայց որքա՛ն կարօտնալիք բաներ թողուցած էի ետիս...

Ե. ՏԱՆԱԳԵՏԵԱՆ

ՉԱՌԱՆՅԱՆՔ

ուրուականս իր ձիգ մագերը խօսարար թօթափեց,
 մաճուան մօտիկ սպասելով ակնկոր
 սուտ ճեքիաթի ցնորքից
 օրերուդ ստուերները ճոգեմաշ
 ծիծաղելով խոյս կու տան դարձդարձիկ
 երազական արաճետներ ունճացող
 դէպի աշխարհը մութի
 ուրուականս ա՛լ Եիրճեց,
 սեւամաղձ դուռը յաւետ ճոց կը բացուի

ՊէՆՐՈՒԹ, 24 Փետրուար 1994

ԿՇՏԱՅՈՒՄ

դեղին յափրանք՝ մինչեւ ուր
 կեանքի ծովէն յարալէզներ
 խորունկ վերքերդ լիզող
 բայց մինչեւ ուր՝ ծայր ու եզր
 տառապական ու՛ սաճմանդ անրջող
 (վայրապար վերիվայրում վայրկեանի)
 դեղին վարդերն յագուրդի՛ կեանքի ծովուն մատուցուած
 արեգ ամսուն ա՛յս տարի
 մինչեւ ծայր լեցուած ճասկերը քու սրտի՛դ կուշտուկուտ

ՊէՆՐՈՒԹ, 6 Մարտ 1994

ՄԻՍՏԻԿ

սենեակիս սեմին,
 երբ աստուած մտնէ,
 կը լուսափայլիմ
 (ով խոկում խորին)
 գիշերը՝ լուշիկ ու զուարթ թայլքով
 հոն կը թափանցէ
 (ապրումներ լոին)
 աստուած ա՛լ կու գայ՝ սիրտս օրրելու
 (կիրակնուտքի պճնուած օ Գախօրէ)
 տօներու երազ, միջոց հոգիի,
 ի՛ր միստիկ տաղը սէրս ակօսող,
 քնարիդ լարեր հազարաշքանի՝
 արիւնն աստուծոյ ու արիւններս հէք

Պէյրուս, 12 Մարտ 1994

ՎԷՐՔ

քերթողութեան թովիչ ջուրերուն մէջ լողալով
 խորասոյգ վերքեր բուծելու
 մարմինս որ իր սկզբունքը կը խոկայ
 հոգիս որ ցիւթին կը դառնայ
 գիշերը մէջս լուս խաղցող
 ուր գեղեցիկ լոյսեր կան
 մեղկութիւնս շատ հինէն վերք մըն էր
 խոցոտող
 գիշերուան մէջ արեւներ կան ո՛չ քէներ
 վերքերը եղան վայելքիս համար
 հոգիս՝ վերացական մարմին մը
 մութերուն մէջ կանթեղներ ամբարձիգ
 ծիածաններ ամոքիչ
 ու սէրեր ցո՛ր ու սիրուն,
 որպէսզի ծնիմ աստուածեան սիրոյ մարմաշ,

digitised by A.R.A.R.@

մահը՝ ովկիան յախտենութիւն

Պէտրուժ, 20 Մարտ 1904

ՄԵՌԵԼՈՅ

գարնանային մեռելոց
 Ռեզիկ շունչով մը լեցուն
 ու քաղցրացող ու թարմացող տիեզերք
 արեւ-աստուծոյ տարփոջ կը տեղայ
 Լիբանանի եղեմական սա խողտող պարտեզին
 կիրքերս ապշած կը խաղաղին Քանդարտիկ

 բայց կեանքի պաշտումը կու գայ սիրոս յորդաճոս
 Քեղեղանման ու ճոխ՝ զիս պարուրող
 այս գարնան, մեռելոցի օրուան ընդմէջէն,
 զերթ աստուածային սիրատոմս
 տարասովոր լոյսը կը սփռուի Ռոմանի
 սիրոս Ռպարտ եղեմ մը, Ռի՛՞՞՞՞ բուրաստան
 ուր կայծեր կան լիւաներու բերանին
 շուշաններ՝ զօրաւոր, Ռոտեւան

 անմեղութիւն մը Ռոն կ'իջնէ վերի կամարէն
 որ Ռոլանի ազատ է ի սպառ

Պէտրուժ, 4 Ապրիլ 1904

ԾՈՎԵՉԵՐՔ

կիսամութիւն ծովեզրը՝ փալփիւնն նաւերով
 գեղեցիկ Լիբանանի ափին կ'ապրիս
 զուարթունքներ ծովուն վրայ նախաստեղծ
 ուտիճէ կապարէ միաճամուռ ծով
 ու գարնան մէջ մատախտոլ

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ խորհրդատր է ապրիլեանց սա երեկոն
 (օդերունց մեղկութիւնը հաշմող)
 կը տարասեռիս՝
 անցնող աւարտող աղուորութեանդ մէջ,
 ո՞վ ծովեզերեայ քաղաքը ուր ծնայ
 պիտի սորվիմ քեզ սիրել կրկին՝

Պէյրուս, 8 Ապրիլ 1994

ԳԻՇԵՐ

Վարդագոյն կանաչ երիզացած գիշեր մը,
 կեանքից վայրի գիշերը վիպել՝
 անուրջներու հարսնացեալ
 ձուկ ու թռչուն ու աղջիկ
 տուն սէր դիւթութիւն
 անուշացած լիարիւն գիշերներս լոյսին հետ
 ստեղծելով հող ապրիլ, խիստ սուգիլ,
 մայիսեան վարդեր անցողիկ բացուող
 աշխարհիկ հոգեր էքսթազից ընդմէջ
 կորուսեալ կեանքը՝ կախարդ գիրերու միջով
 ամէնէն անելի գրութեան անձկալի գիշեր

Պէյրուս, 8 Ապրիլ 1994

ԽԼԶ

յանկարծական հիւանդութենէդ յետոյ,
 օ՞ր գրութեան միստիկ տարի
 բանաստեղծօրէն հոծ հրայրք
 (մաղմաղ կրակ արնաշաղախ տառերու)
 տանջանքի լուսամուտէն կեանքիդ արե՛րը շատցող
 հանդիպումի մը սեղմ վայելքը հիմա
 (մէգին մէջ վարագուրած քաղաքս կայ ու չկայ)

digitised by A.R.A.R.@

մինչ կը գրես

մահերու մառ մուսլիհն դէմ դիմաց

Պէյրուիթ, 21 Ապրիլ 1994

ՏԵՍԱԿԷՏ

Քեղծուցիչ խեղդուկ տապալեղց,
ապրիլեան կալանատը՝

կենաց գետնափոր նկուղիդ,
խոնջ աղջամուղջ ու խաւար անորոշ
եղկ տաղտապուն սրտնեղ մեռել՝
անախորժ դժպիսի ծուլատ ժամ
բզիկ-բզիկ, կտոր-կտոր,
օ՛ր յայրատ ամազոն
ծարաւ անկուշտ ցանկալի

Պէյրուիթ, 22 Ապրիլ 1994

ՔԵՐԹՈՒԹԻՒՆ

աշխարհածին այլ աստուածաստեղծ քերթուածք
բանաստեղծօրէն իզական խուլ երկունք
օր մը բերկրանքի, օր մը անդոբի,
քերթողաբար ախորժ՝ ի վերուստ տրուած
աթոմալից պայթուցիկ արդիական ուժ
անիրական ու իսկատիպ տառ
յարերգութեան յաւէտ յափշտակութիւն
ր՛ք քանդիչ քերթուած, մահու վարագոյր
իղձ, լուսից՝ ձայն տիեզերասփիտ

Պէյրուիթ, 26 Ապրիլ 1994

ՇՈՒԾԻԿ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

ՏԵՆԴԵՐ

Ձիւնը կը շարունակէր տեղալ՝ ծածկելով սալայատակն ու կարծես թէ ուրախացնելով երկիրը: Լոյսի աղբատ կտուց մը կը սրսփար: Մէկը պատուհանը բացաւ ու ձիւնի քրդոտ փաթիլներուն հետ ներս ինկաւ քաղաքին խուլ աղմուկը: Խօսակցութիւնը սպառելու վրայ էր, երբ ինք յանկարծ խզեց լուսիւնը, եկաւ սենեակին մէջտեղը ու կրճով ըսաւ.

— Կարեւորը այն է, որ ամէն մարդ իր ժամանակին հետ ֆալէ: Ջգացական փաստերով կարելի չէ բոլոր կիներուն դէմ մեղադրական արտասանել: Այսպէս կամ այնպէս, մենք ու իրենք պիտի ապրինք միասին: Մեր հպարտութեան ու անոնց իգութեան միջեւ չէ կոխը: Ու ո՞վ ըսաւ, որ մենք միշտ հպարտ ենք ու անոնք՝ միշտ էգ: Այլ հաւասարութեան խնդիր մըն է եղածը: Միմչեւ հիմա կիներ ապրած է մարդուն մակամին տակ ու փոխարէնը անուղղակիօրէն աշխատած է նուաստացնել գայն: Հիմա ժամը հնչած է ա՛յ անցեալի վերջնական հաշուեյարդարին: Հաւասար էակներ ենք բոլորս՝ նոյնիրաւ ու համագօր: Ի՛նչ որ տղամարդոց պէտք է սորվեցնել՝ հետեւեալն է — կիներ սեփականութիւն չի կրընար դառնալ, կիներ իր չէ, այլ ունի իր անհատականութիւնն ու ներքին կեանքը: Իսկ կիներուն պէտք է միանգամընդմիշտ բացատրել՝ որ տղու մը մարմինը նոյնքան գեղեցիկ է իր գօրութեամբը՝ որքան կնոջ մը քրթոնն իրանը: Պէտք է հըրածարին կարծելէ, թէ մասնաւոր շնորհ մը կ'ընեն, իրենց մարմնին ընծայումովը: Դժբախտաբար ամէնէն արձակ ու ազատագրուած կնոջ մօտ իսկ կարելի է հանդիպիլ այդ սըխալ կարծիքին, որ հիմն է բոլոր թիւրիմացութեանց: Պէտք է կիները ըմբռնեն այլեւս, որ շնորհի, երախտիքի եւ այլնի մասին կարելի չէ խօսիլ այս դարուն...

Նայուածքը յանդգնութեամբ պտտցուց, նստաւ ցած աթոռակի մը վրայ ու շարունակեց.

—...Յետոյ հարկ եղածէն աւելի ժամանակ կը յատկացընեն մեր կեանքին մէջ սիրային եւ սեռային խնդիրներու: Պզտիկ կիներ կան, որոնց ամբողջ գրադումը ատիկա է, ու տղաք՝ որ իրենց ժամանակին մեծ մասը կ'անցընեն կնոջ շրջագգեստներուն շուրջը: Այս բոլորը պէտք է վերածել իրենց պարզագոյն ձեւին: Ահա թէ ես ինչպէս կը տեսնեմ, յիսուն տարի յետոյ կնոջ եւ տղամարդուն միջեւ եղած յարաբերութիւնները...

Ակնարկը ինկաւ հրէուհիին աչքերուն մէջ: Մթնները թեթեօրէն կը դողային:

—Տղայ մը կը հանդիպի աղջկան մը: Ու ենթադրեցէ՛ք, որ բնագոյարար կանգ կ'առնէ, որովհետեւ աղջիկը գեղեցիկ է ու կը համապատասխանէ իր հոգեկան ու մարմնական պահանջներուն: Կը մտնայ ու կ'ըսէ.— Գեղեցիկ աղջիկ մըն է՛ք ու մեծապէս հաճելի է՛ք ինձ, շատ երջանիկ պիտի ըլլամ, եթէ հետս գա՛ք. եւ եթէ աղջիկը համաձայն է, ահա ամէն բան կը վերջանայ: Յետոյ՝ մնա՛ք բարով կամ ցտեսութիւն...—

—Իսկ սէ՞րը,— ըսաւ մեքենագրուհին պզտիկ ձայնով մը,— սէ՞րը...

—Սէրը՝ պարապ մարդոց գրադում է միայն ու տեսակ մը անբնական վիճակ: Անշուշտ այս խօսքերը գայթակղեցուցիչ են այսօր, որովհետեւ ամբողջ դարեր մեզ դիտեցուցած են սիրային գրքերու թունաւոր սնունդով: Մանկութենէ՛ մեր արեան մէջ կաթեցուցած են այդ թոյնը: Բայց օր մը պիտի գայ՝ երբ ազատ տղամարդն ու ազատ աղջիկը պիտի առողջ ժիծադով մը խնդան այդ մեծ պղպջակին ու խոշոր սուտիմ վրայ, որ սէր կը կոչուի...:— Այդ բանը չի կրնար պատահիլ,— ըսաւ հրէուհին կէս ժպիտ մը շրթներուն վրայ,— ու ցանկալի ալ չէ, որ պատահի...

—Ի՞նչ որ կ'ըսէ՛ք,— աւելցուց մեքենագրուհին՝ բնիւշ դէմքը բարձրացուցած իրեն, աւելի բարբարոս ու աւելի գէշ է՛ քան այն ամբողջ մեղադրականը, գոր լսեցինք: Ու լաւ չէ, հաւատացէ՛ք, նման սրբապիղծ խօսքեր լսել...

—Եթէ ձեզ վշտացուցի՛ անկեղծօրէն ներողութիւն,— պատասխանեց ակնարկովը գրկելով գայն,— բայց հարազատ մտածումս է ատիկա: Սէրը՝ աղբիւր է տառապանքի, զանազան բարդութեանց ու բազմաթիւ վատութիւններու: Եթէ աղ-

ջիկ մը կը սիրէ՛ք, իսկ ան ձեզ չսիրէ, կը տառապի՛ք ձեր յետին մկաններովն ու արեան վերջին կաթիլովը: Եթէ ան ձեզ սիրէ ու դուք չսիրէ՛ք զայն, կրկին կը տառապի՛ք, եթէ մա՛նաւանդ զգա՛ք, որ ան ամբողջովին արժանի է ձեր սիրոյն: Իսկ եթէ երկուք ալ սիրէ՛ք իրար՝ շատ անելի գորաւոր ու շատ անելի թունալից տառապանքի պատճառներ կը ծնին, որովհետեւ երբեք լրիւ պատկանում կարելի չէ ու մէկը միշտ ինքզինքը նուաստ կը զգայ: Յետոյ՝ կեանքն ու մարդիկը ձեզ հանգիստ չեն ձգեր, երկրորդ եւ երրորդ անձնաւորութիւններ կը մտնեն ձեր միջեւ ու անա փոխադարձ կասկածի, նախանձի ու անվստահութեան պղտոր մթնոլորտի մը մէջ՝ սէրը կ'ոգեվարի եւ կամ կը դառնայ անարժան, ստոր ու չնչին բան մը...

-Յանրժ գեղեցիկ ու մնայուն բաներ չկան կեանքի մէջ,- ընդմիջեց հրէուհին,- կարելորը ժամանակի գորշ բեկորէ մը անջատուող լի ու պայծառ պահերն են: Պահեր կան, որ կ'արժեն ամբողջ կեանքը: Անշուշտ բազմաթիւ անգամներ կրկնուած է այս խօսքը, քայց ճիշդ ատոր համար մարդոց մեծ մասը կ'ուրանայ զայն...

-Մէկ քանի խելագար պահերու համար՝ ամբողջ կեանք մը ամուլութեան պէտք չէ մատնել: Ու ի վերջոյ շատ անելի հրատապ, մեծ ու կարելոր գրադումներ կան կեանքի մէջ՝ քան սէրը...

-Ո՛չ,- պատասխանեց մեքենագրուհին գրեթէ գունատելով,- չկա՛ն...

Կա՞ն, թէ չկան...

Ո՞վ է այն մահկանացուն, որ գէթ անգամ մը, իր արեան ամբողջ տենդովը սիրելէ յետոյ կրնայ պնդել, թէ կան: Ո՞վ որ է՝ թող համարձակի պնդել, բարձրանայ ու ըսէ, թէ՛

-Այո՛, սէրը պարապ մարդոց գրադում է ու տեսակ մը հիւանդութիւն...

Մէկը, ապակիին վրայ ջղայնութեամբ մատի հարուածներ կու տայ: Զինը կը շարունակէ տեղալ: Ո՞վ է, որ մելամաղձիկ սոյլով մը տրտում երգ մը կ'նղանակէ - հրէուհին: Խօսակցութիւնը կը մեռնի յանկարծ: Երիտասարդ նկարիչը ցած ու շատ համոզուած ձայնով մը՝ ականջն ի վար կ'ըսէ.

-Այս բոլորը պարապ խօսակցութիւններ են: Կարելորը այն է՝ որ մարդ քաջութեամբ կատարէ իր աշխատանքը: Իր կեանքը լրումին տանի ու յոյսին հանէ իր բոլոր թա՛նու

կարողութիւնները: Ինձ կը թուի, որ իրաւունք ունիս, տեսականօրէն ըսածներդ ճիշդ են, բայց գործնական կեանքի մէջ, լաւագոյն է իմ մամբաս ընդգրկել: Ու յետոյ, այսուհանդերձ, բոլոր ըսածներդ հարկ է մեծ հարցականի մը տակ առնել: Որովհետեւ ո՞վ կրնայ փաստել, որ կիճը տղամարդուն հաւասար էակ է: Ես համոզուած եմ հակառակին: Իսկ բարեփոխել գայն՝ անկարելի է, որովհետեւ խարդախութիւնն ու սուտը կը կրէ իր արեան մէջ:

-Մնաց որ, հաւասար ըլլալու ո՛չ փափաք ունի, ոչ ալ որեւէ լուրջ ճիգ կ'ընէ այդ ուղղութեամբ: Տղամարդն է, որ իրեն կը թելադրէ այդ բոլորը: Բազմաթիւ երկիրներու մէջ ստացած է քաղաքացիական իրաւունք, բայց մնացած է նոյնը - երիցս էգ:

-Հետեւաբա՞ր...

-Կը նշանակէ ու փաստօրէն այդպէս ալ է արդէն, որ կիճը պիտի ապրի տղամարդուն իշխանութեան տակ, ի՞նչ հարկ կայ փորձել անկարելին...

-Այսի՞նք...

-Այսիճէն, պէտք է հրաժարիլ կնոջ բնութիւնը փոխելու, հիմն ի վայր շրջելու մեր դարեւոր ու յամառ փափաքէն: Կիճը՝ կիճ է միշտ ու կիճ պիտի մնայ: Ձայն մեզ հաւասար ընծայել ուզելը կը մտնի անասունները ասուն դարձնելու եւ անոնց քաղաքացիութեան իրաւունք տալ... փորձելուն: Չէ՞ որ անասուններն ալ շնչաւոր էակներ են...

Կա՞ն, թէ չկան... կը մտածէր ինք: Ահա գլխաւոր հարցումը:

-Ո՛չ,- պատասխանած էր մեքենագրուհին՝ գրեթէ գունատելով,- չկան...

Երկու սեւ, աղուոր աչքեր կը նային իր աչքերուն: Մէկը մեկամաղձիկ սոյլով մը տրտում երգ մը կ'եղանակէ: Ո՞վ է - հրէուհին:

-Մտիկ ըրէ,- կ'ըսէ երիտասարդ նկարիչը, որ յայտնապէս դեռ իր ամբողջ փորձով չէ պարպած,- կարեւորը այն է, որ մարդ իր ազատութիւնը փրկէ կամացի ոտնձգութիւններէ: Ես՝ օրինակի համար, համեմատաբար երջանիկ եմ այն օրէն ի վեր, որ միանգամընդմիշտ ձեռք քաշեցի այդ բոլոր սիրային յիմար պատմութիւններէն: Ամէն Շարաք երեկոյ, երբէ տարիէ ի վեր, գրեթէ նոյն ժամուն նոյն տեղը կ'երթամ՝ մարմնական պահանջ մը յագեցնելու,- ինչպէս որ

մարդ բաղնիք կ'երթայ: Դուրս կու գամ առողջ, ուրախ, թեթեւ ու ամենագեղեցիկ կնոջ ֆովէն, կրնաս հաւատալ, կ'անցնիմ խաղաղութեամբ: Ու ամբողջ շաբթուան ընթացքին ազատ եմ ամէն ժամադրութենէ: Կ'ըմբռնես, թէ ի՞նչ ըսել է տերն ըլլալ իր ժամանակին, ամբողջովիմ ազատ ըլլալ...

-Կը չափազանցես,- կ'ըսէ ցած,- ատիկա կարելի չէ...

-Հաւատա՛ որ ոչ, սովորութեան խնդիր է: Ախորժակը ուտելով կը բացուի, կ'ըսէ առածը: Ու, դժբախտաբար, որքան որ գայն սանձես՝ այնքան սակաւապէտ կը դառնայ: Անշուշտ չեմ պնդեր, որ բնաւ հեռուոր ալիքներ չեն գարնը-վիր հոգիիս պատերուն, թեթեւ ակնոծութիւններ չեն պատահիր...: Ինչպէս ըսի, կարծես թէ երբեմն մէկը հոգւոյս մէջ կ'արտասուէ, կարծես թէ մէկը յուզիչ բառերով կը ցաւի զուր վատնուած երիտասարդութեանս վրայ: Այն ատեն կը թօթուեմ գլուխս ու ճամբաս կ'երթամ: Կամ կը սկսիմ աշխատանքի: Կը քաւէ, որ առաջին արգելքին յաղթես, դժուարը առաջին յաջողութիւնն է...

-Տխուր յաջողութիւն...

-Բնաւ ալ տխուր չէ: Պահեր կան, երբ զօրութեան մեծ գգացում մը կուրծքդ հպարտութեամբ կ'ուտեցնէ: Ինքզինքիդ քաւելու հօօր գոհունակութիւն մը: Յետոյ՝ այդ աղչիկները կարծուածին պէս գոեհիկ չեն: Վեց ամիսէ ի վեր, օրինակ՝ հատ մը կայ, որ ամէն անգամ զիս տեսնելուն, ուրախութենէն կը վազէ վրաս: Լոսկեաց, խելացի, գրեթէ գեղեցիկ աղջիկ մըն է: Երբեք իր մասին չի խօսիր, կը կծկուի ֆովս ու միշտ ալ կը յաջողի զիս խօսեցնել: Խոշոր, կապոյտ աչքերով կը նայի աչքերուս ու ցանկութիւնս նայուածքէս կը հասկնայ: Վերջին անգամ անկողնին եզերքը նստած կը ծիւլի, երբ սկսաւ մագերս շոյել ու մաքուր ձայնով մը ըսաւ, երկչոտութեամբ նայուածքը փախցնելով-- Եթէ հարցում մը ընեմ, չե՞ս վշտանար...: -Ո՛չ,- ըսի,- հարցուր...: Երկար ատեն է կը մտածեմ, թէ ինչո՞ւ ամէն Շարաթ կանոնաւորաբար հաս կու գաս: Գիտե՞ս, այս տան բոլոր յաճախորդներուն մէջ բացառութիւն կը կազմես: Տգեղ չես, խեղանդամ չես, ծեր չես, անատակ չես՝ որպէսզի ստիպուած հոս գաս գոհացում գտնելու: Դուրսը՝ շատ դիրքութեամբ կրնաս սիրուն քարեկամուհի մը գտնել, այդ մասին կասկած չունիմ...: - Անկեղծութեամբ բացատրեց, թէ ինչո՞ւ, երկարօրէն նայեցաւ աչքերուս, ըսաւ.- Կարծեմ իրաւունք ունիս...

-Ի՞նչ որ է,- շարունակեց գրեթէ խոնջ,- ամէն մարդ իր կեանքը կը սարքէ գիտցածին պէս ու կ'ընտրէ տառապելու իր ձեւը: Տեսութիւն, կարծեմ պիտի ուշանամ, լաւ տըղայ ես, Աշոտ ու կարծեմ թէ բաւական լաւ պաշտպանուած ես կեանքին դէմ: Եթէ առաւօտները, մինչեւ կէսօր ժամանակ ունիս, շարքու մէջ անգամ մը հանդիպէ...: Եզրպտական լաւ գլանիկներ ունիմ ու ցած բազմոցներ, կը նստիմք, կը շատախօսեմք քիչ մը...

-Կու գամ,- ըսաւ ուրախութեամբ,- անպայման կու գամ...

Զօրութեամբ ձեռքը թօթուեց ու այդ սեղմումին մէջ ինք զգաց արթնցող բարեկամութեան մը ամբողջ հրապոյրը: Կարծես թէ մէկէն երջանկացաւ ու ուզեց ընկերանալ անոր՝ երբ հրեւիտիւն ակնարկը քուցաւ դէմքին: Դանդաղութեամբ աչքերը բարձրացուց ու կարծես ուրախութեամբ ըմպեց այդ հեղուկ հրաւերը: Այսուհանդերձ, կեցաւ եղած տեղը ու գլանիկ մը վառեց: Ցանկարծ, ծխախոտին ծուխին մէջէն նկատեց, որ հրեւիտիւն թղթի կտոր մը ձգեց գետին ու գնաց պատուհանին առջեւ: Արագ շարժումով մը վերցուց ու գրդպանեց ու մտովի ըսաւ՝ -Լաւ է, որ յետոյ կարդամ, թող չկարծէ, թէ մեծ կարեւորութիւն կու տամ իրեն...: Այսուհանդերձ, թղթի կտորը ձեռքին մէջ գուրգուրանքով սեղմած էր ու մատները կ'այրէին կարծես: -Լաւ,- ըսաւ,- Աշոտ, մի սկարանար, քաջ եղիր, մեր տղան, անցիր...: Հապենպով գնաց սենեակին միւս կողմը ու կ'ուզէր երկվայրկեան մը միջանցք երթալ, երբ մեքենագրուէին դրան մէջ կեցուց գայն ու նոյն ազնիւ ու քաղցր ձայնովը ըսաւ՝

-Եթէ կ'ուզէ՛ք՝ մեր ժամադրութիւնը չեղեալ համարեմք...

Աչքերուն մէջ յուզիչ մանկութիւն մը կար: Խորապէս զգաց, որ այդ ձայնը անընդունակ է սուտ խօսելու: Հարցուց՝

-Ինչո՞ւ համար...

-Որովհետեւ կը տեսնեմ, որ հրեւիտիւն հետ ձեր քայտը կ'ուզէ՛ք փորձել: Չեմ գիտեր, որ երբեւիցէ մտածէք, թէ կը նախանձիմ իրմէն...

-Մտիկ ըրէ,- ըսաւ խեղճուկ, բռնելով ու գայն քաշելով դուրս,- եթէ կ'ուզես համակրութեան ապացոյց մը տալ, անմիջապէս եկուր հետս...

Ձայնը սպառեցաւ յուզումէն, այսուհանդերձ, երկարօրէն նայեցաւ աղջկան աչքերուն, ձեռքերը սեղմեց իր տաք ու դողդոջուն ձեռքերուն մէջ, ժպտեցաւ:

-Ի՞նչ կ'ըլլայ,- ըսաւ նոյն խուլ ձայնով,- եկուր: Կը գգամ, որ մեծապէս երջանիկ պիտի ըլլամ՝ քեզ բազուկներուս մէջ սեղմելով, մի մերժեր...: Ու մա՛նաւանդ փոխարէնը ո՛չ մէկ բան պահանջէ, լաւ աղջիկ մը եղիր...:

Նրկվայրկեան մը՝ լոռաքիւնը սպրդեցաւ երկուքին միջեւ: Կարծես թէ մէկը կը մօտեցայ: Ներսէն կը լսուէր հրեռնիկն մեկամաղձիկ սոյլը՝ նուրբ ու ծորուն:

-Մտիկ ըրէ՛ք,- ըսաւ աղջիկը հագիւ լսելի ձայնով,- իրապէս կը մտածե՞՞ք ինչ որ քիչ առաջ ըսիք սիրոյ մասին...:

-Այո՛,- ըսաւ տխուրեփամբ,- ինչո՛ւ կը հարցնես...:

-Որովհետեւ...:

Ձայնը փրթաւ սակայն: Յետոյ՝ մէկը մօտեցաւ: Ներսէն կանչեցին գինիք: Ջայրացած ու խոշոր քայքայով հեռացաւ: Վշտէն՝ պոկունքները կը խածներ ու մարմնին մէջ, ժամերէ ի վեր զարթուն ցանկութիւնը կարծես կը թունաւորէր արիւնը: Յուզումը պահելու համար սկսաւ փողոցի հին երգ մը մըմտալ: Գէշ ու շուայտ երգ մըն էր ատիկա, բայց հակառակ իր փողոցային բնոյթին՝ միշտ խաղաղութիւն կը պարգեւէր իր հոգիին:

*Տասնհինգ ոսկի տուի՝ մէկ գիշերուան համար,
Իր խենթ նազանքներուն չգիմացայ, եալէ՛յ,
Չգիմացայ, եալէ՛յ...*

Յետոյ՝ կրկին հրեռնիկն նայուածքը փոխեցաւ դժմոքին: Կարծես թէ արիւնը տեղով ու արագութեամբ սկսաւ շրջան ընել: Յետոյ՝ աւելի՛ ու աւելի՛ արագութեամբ: Իսկ երբ հրեռնիկն խօսք ուղղեց իրեն՝ կարծես թէ արիւնը խենթեցաւ ու քունքներուն վրայ սկսաւ պարել: Նայուածքը պղտորեցաւ ու յիշեց՝ որեւէ գաւառական թանգարանի մը մէջ պղնձեայ մանուկ այծամարդ մը, որ խենէշ ակնարկներ կը ձգէր յաւերժահարսի մը վրայ:

Այս յիշատակը շատ խոռվիչ ու շատ տխուր բան մըն էր միանգամայն: Կը գգար, որ օրը գէշ է: Նմած ամբողջ գիւնին կարծես նոր կը սկսէր տաքնել, պղտորել գլուխը: Կու-

զէր պառկիլի բազմոցին վրայ ու քնանալ: Իր նիւնը օրօրելու համար թող ունէ մէկը անուշ երգ մը երգէր: Ու թող աղը-կան մաքուր շրթունքները հպէին իր նակատին: Յանկարծ մայրը վերադառնա՛ր, գուրգուրա՛ր իր վարսերը ու հծծէր.- Ի՞նչ ունիս, տղա՛ս, գլու՞խդ կը ցաւի...

-Տուածս կարդացի՞ք,- ըսաւ հրէտուհին, խուզարկելով կարծես հոգին:

-Ո՛չ տակաւին, ի՞նչ կայ որ...

-Պզտիկ ու անփորձ տղայ մըն է՛ք ու ձեր հպարտութիւնը կը գուարնացնէ զիս...

-Յետո՞յ,- ըսաւ խուլ ձայնով մը,- յետո՞յ...

Ձայնին մէջ ակամայ թշնամութիւն մը կար ու ամէն կամուրջ այրելու, ամէն կապ խզելու, ամէն քան կործանելու անորոշ ցանկութիւն մը: Կարծես թէ ուրիշ ո՛չ մէկ քան աւելի կարելու էր այդ վայրկեանին՝ քան իր յանդգնութեան ու հպարտութեան բացարձակ յաղթանակը: Մէկը, գէշ ու գորաւոր մէկը, ահա կ'արթննար հոգւոյն խորէն ու ակոյս ցոյց կու տար:

Երկարօրէն նայեցան իրարու: Եւ ո՛չ մէկը եւ ոչ միւսը չխոնարհեցին իրենց թարթիչները:

Յետոյ նայեցան շուրջերնին, սենեակին մէջ իրենցմէ գտտ մարդ չկար:

Աղջկան իրանը աւելի քան խոռվիչ էր, ու յղի՝ թափուն կարելիութիւններով: Ու ինք կը ցանկար խարազանել զայն: Այնքան մեծ էր թշնամութիւնը՝ դէպի այդ յաղթական գեղեցկութիւնը: Բայց գաղտնի գորութիւն մը յաղթեց իրեն: Կըր-տով գրկեց զայն բազուկներուն մէջ ու նմեց անոր կարմիր ու թաց բերանը: Ու երկար վայրկեան մը մնացին այդպէս:

Յետոյ՝ ձիւնին մէջէն ու գիշերուան հովին, ջղային քայլերով հեռացան: Ու ո՛չ մէկը եւ ոչ միւսը քառ մը չարտասանեցին: Լուսեամբ կը նեղէին գիշերը եւ կարծես թէ կ'երթային բացառիկ գեղեցկութեամբ ու հերթական գործ մը ի կատար ածելու: Հապնեպով բարձրացան սանդուխներէն: Իրենց շարժումներուն մէջ կը զգացուէր ներքին յարաճուն տագնապ մը ու իրենց անապարանքին մէջ կար հիւանդագին ու խախուտ քան մը:

-Լոյսը փակէ,- ըսաւ սուլող ձայնով մը,- նաեւ գուար-ձակը, շատ տաք է...

Ու մինչ աղջիկը տենդով կը հանուէր, ինք լոյսին տակ քացաւ ծալուած թղթի կտորը ու կարդաց գայն: Ամբողջ մարմինը դողի մէջ էր ու ջերմը բռնած էր դէմքը:

«Երբեք չեմ հաւատացած գաղափարներու գեղեցկութեան: Կեանքը երբեք կարելի չէ քանի մը բնագանցական տարազներու մէջ սեղմել: Թաւալուն, յորդող, ընթացքի մէջ եղող բաներուն մէջն է գեղեցկութիւնը, մինչդեռ ամէն գաղափար դադարի կը նմանի: Ահա թէ ինչու չեմ հաւատար նաեւ ձեր բոլոր ըսածներուն: Կեանքի ամէնէն չնչին ու աղօտ արտայայտութիւնը անտարակոյս աւելի կ'արժէ՝ ինչ փիլիսոփայական ամբողջ դրութիւն մը:

«Տղայ մըն է՛ որ այսօր հանելի է ինձ, որուն աչքերը երիտասարդութեամբ կը շողան եւ որ բաւական զօրաւոր եղաւ՝ զիս հրապուրելու համար: Ահա թէ ինչպէս աղջիկ մը իր ժամանակէն կէս դար առաջ կ'անցնի ու կը կրկնէ ձեր խօսքերը – մեծապէս հանելի է՛ ինձ, եւայլն...»

«Վաղը առաւօտ կը մտածեմք, թէ ինչ պէտք է ըսել – ցտեսութի՞ւն, թէ մնաք-բարով...»:

Լռութեամբ մօտեցաւ աղջկան ու զօրութեամբ գրկեց անոր ամբողջովին մերկ մարմինը, որ թեթեւ սրսփու՛մով մը կը դողար: Յետոյ՝ գիշերը ծածկեց գիրենք: Ու ատիկա մեղսակից, տենդահար ու սպիտակ գիշեր մը եղաւ: Մեծապէս գեղեցիկ գիշեր մը:

Առաւօտեան երբ արթնցաւ, արեւի նուրբ ճառագայթ մը կը խաղար քարձին վրայ:

Ու նմլուած թղթի կտորին ետին՝ ձեռք մը գծած էր սիրտ մը, ու սիրտին մէջ՝ սլաք մը:

Սենեակին մէջ դեռ կը յապաղէր անոր մեղկ բոյրը:

Ուսերը թօթուեց ու նետուեցաւ անկողնէն դուրս: Մարմնին մէջ ուրախութիւն մը կար: Ու գիշերը ամբողջովին բուժած էր գայն իր երէկուան տենդէն:

Մէկը քախեց դուռը: Ըսաւ.– Մտէ՛ք, մտէ՛ք...

*

* *

Բան մը կայ, գոր իրագործելը վեր է իր ուժերէն: Ատիկա կը կոչուի – *ճրի արարը*:

digitised by A.R.A.R.@

Աւէն արարֆի դիմաց, իր մտքին մէջ, կը յայտնուի
անխուսափելի հարցական մը, այսպէս՝

?...

Ու հոն է եղբրականը, որ ինք խորապէս կը զգայ բոլոր
ձրի արարֆներուն անառարկելի գեղեցկութիւնը: Միայն թէ
չկան ձրի արարֆներ: Աւէն քան կը բացատրուի – ավէն ա-
րարֆ ունի իր ծագումն ու վախճանը:

Ալիք մը լզեց ռաֆերը: Մովին ադի բուրումը գայն վե-
րադարձուց իրականութեան:

Որեւէ նաւի հեռակարօս սոյլ մը սուզուեցաւ ջուրի մեծ
տարածութեան մէջ:

Տարօրինակ է, ինք մանկութենէն ի վեր՝ մեծապէս սի-
րած է անկարելի բաները: Ատոր համար է, որ պէտք է ըզ-
գուշանայ երազներու թունաւոր սերունդէն: Մինչդեռ մարդիկ
կան, որ կը սիրեն միայն կարելին, դիւրութեամբ հնարաւո-
րը, շուտով իրագործելին:

Օ՛, անկարելի բաներ, անբաղդատելիօրէն գեղեցիկ էֆ
դուֆ: Առասպելական սամոտիաներու պէս կը ձգուիք, աստի-
նան առ աստիճան, դէպի անյայտ տարածութիւնները:

Խոշորաբայլ կը քարձրանայ դէպի անգայտ կապոյտը:
Յետոյ՝ քաւալգոր կ'իյնայ վար:

Ահա յետմիջօրէ է քաղաքին վրայ: Ու բոլոր չնչին
մանրամասնութիւնները կը վերստանան իրենց առաջնակարգ
կարեւորութիւնը: Շոգեկառք կայ՝ երեկոյեան չորսէն հինգ
վայրկեան անց: Ասիկա պէտք է յիշել: Խորոված թարմ ձու-
կի հոտը կը փութի ռունգերուն: Կը հնչէ ծովեզերեայ շար-
ժանկարի մը զիլ զանգը: Աժան ու աղքատ երեւակայութիւն
մը ժողովուրդին կը ծախեն մետաղի ֆանի մը կտորներով:
Անկարելի բանե՛ր, մեծապէս վտանգաւոր էֆ ու երբեք լրիւ
պէտք չէ յանձնուիլ ձեզ:

Երեւակայեցէ՛ք հետեւեալը:

Մանկուհի մը մեռած է եօթը տարեկանին: Ու իր
պզտիկ մարմինը՝ վաղուց է, փտած է հողին տակ: Ատիկա
իւր քոյրն է ու ահա օր մը, ինք խոնջ կը վերադառնայ իր
սենեակը: Կապոյտ աչքերով աղուոր աղջիկ մը կը ժպտի ի-
րեն: Համակ սպիտակ հագած է, կարծես պիտի երթայ հար-
սանեկան առագաստի: –Ինչպէ՛ս գիտ չես յիշեր,– կ'ըսէ,– ես
քու քոյրիկդ եմ...

Յետոյ բոլոր մեռած մարդիկը կը վերադառնան, կ'ողջագուրեն զինքը: Կ'ըսեն՝

–Մեզ կանչեցիր ու ահա եկանք: Բայց մութը չի նկատ պետք է վերադառնանք...

Ծրեակայեցէ՛ք հետեւեալը:

Յեղակարծ կերպով մէկը կը վերադառնայ իր պատմութեան: Մարմին կ'առնէ ու կը սկսի քայլի, իր երիտասարդութեան կողքէն: Յետոյ կը գարթնու նաեւ մանկութիւնը, տարրեր տարիքէ մտնել անճանարութեան երեք տարրեր մասերը, երջանկութեամբ կը շրջագային, ժամանակէ դուրս փոքրոցի մը մէջ ու կը խօսին խաղաղօրէն՝ պատահած բազմաթիւ բաներու մասին: Ու մէկը կ'ըսէ միւսին՝

–Ի՛նչ ամուր ու զօրաւոր դէմք ունիս: Միայն թէ ակնարկըդ շատ մաքուր չէ: Շատ գեղեցիկ կը գտնեմ ինք...

–Իսկ է՛նչ անբերկայութիւնդ մեծապէս կը յուզէ զիս: Աչքերդ չի՛նչ են ու դեմքիդ բնուշ ազուամագերը կը յայտնեն փոքր տարիքդ: Ինչպէս կը ցանկայի, կրկին՝ այս ամբողջ տարիները ապրելէ յետոյ, վերագտնել է՛նչ դեռածիդ գեղեցկութիւնդ:

Ու մանուկը, ցաւելով որ ո՛չ ոք ուշադրութիւն կ'ընէ իրեն, իր պզտիկ ձայնովը՝

–Որքա՛ն կ'ուզէի ձեզ նմանիլ: Օ՛, ինչ լաւ է մեծ երիտասարդ մը ըլլալ...

Բան մը կայ, զոր իրագործելը վեր է իր ուժերէն: Ատիկա կը կոչուի – *ճրի արարք*:

Անգամ մը Հանիան նստած էր իր անկողնին եզերքը: Ատիկա լաւ կը յիշէր: Նաեւ այն՝ որ ան հագած էր մանչու գիշերազգեստ մը, որ շատ կը վայլէր դէմքին: Վարսերը ինկած էին նակտին վրայ: Գուրգուրանքով իր ձեռքերուն հետ կը խաղար: Յետոյ ինք՝ անոր ծունկերը առաւ ակնբերում մէջ ու գարկաւ իրարու: Քիչ յետոյ կրկին մխրճեցաւ բունի մէջ: Մեծ լինի մը մէջ կը լողար ու ձեռքի լայն շարժումներով կը հեռանար մէկ ակնէն, երթալու համար միւսին: Յանկարծ աչքերը բացաւ ու տեսաւ արեան շատ կարմիր երիզ մը, որ նրբութեամբ կ'իջնէր սրունքն ի վար: Անորոջ ցաւ մը զգաց ու բնագոյրար ձեռքը տարաւ դնողուցին: Հանիան ածելիի շեղք մը մատներուն մէջ՝ հեռաւոր ակնարկով մը կը նայէր իրեն: Դնողուցին վրայ բացած էր երկար վերք մը: Երբ ինք գարմանքով նայեցաւ ցայտող արեան կաթիլներուն, ան բա-

ցաւ նաեւ իր սրունքը ու ցոյց տուաւ նմանօրինակ շեղքի նեղք մը, որ կ'արիւնէր: Ու դէմքին վրայ յուզումի ո՛չ մէկ նշան կար:

-Ինչո՞ւ համար այս բանը ըրիր, Հանիա',- ըսաւ ինք գրեթէ երկիւղահար:

-Ձեմ գիտեր,- պատասխանեց ժպտուն, գուրգուրանքով սրբելով արիւնը:

-Բայց որեւէ միտք կա՞յ ըրածիդ մէջ թէ չէ, Հանիա'...

-Ձեմ գիտեր, տարօրինակ ես, կարծես թէ մարդ միշտ որեւէ նպատակ պէտք է ունենայ բան մը ընելու համար...

-Հանիա', կ'անդրադարձա՞ս, որ արտայայտածդ խիստ վտանգաւոր միտք մըն է...

-Կրնայ ըլլալ, պզտիկ Աշոտ,- ըսաւ երկդիմի ժպիտով,- հիմա քննարկուի...

-Ո՛չ,- քողոքեց ինք,- չեմ ուզեր քննուիլ...

-Վախկո՛տ,- ըսաւ քմահաճ, խառնելով մազերը,- ի՛նչ վախկոտ ես...

Ու ծոնցաւ եւ կրքով համբուրեց գայն՝ իր բացած վեր-
քին վրայ: Յետոյ արիւնոտ շրթներով նմեց իր բերանը՝
մեծ, տաք ու կրքոտ համբոյրի մը մէջ:

Երբ սակարանի առջեւէն կ'անցնէր՝ ժամը հնչեց երկուք
ու կէս: Կին մը զարնուեցաւ իրեն ու չզիջեցաւ ներողութիւն
խնդրել: Ատիկա բաց պարեգօտ հագած երիտասարդ կին
մըն էր, թեթեւ ծովային հովը կ'ուռեցնէր անոր շրջագրեստը
ու արեւին մէջ, կերպասին թոյլ ըլլալուն պատճառաւ կը ըզ-
գացուէր մարմնին կադապարումն ու երանքներուն բացուած-
քը: Հանրակառք մը երկաթէ գծերուն վրայ նոնչեց ու կանգ
առաւ: Ու յանկարծ զգաց, որ որովայնը պարապ է: Յետոյ
տեսաւ երիտասարդ աղջկան շատ շնորհալի ծոծրակ մը եւ
երկու քննուշ ականջներ՝ խոշոր գինդերով: Հայու կրակի
կտոր աչքերով լակոտ մը կը ծախէր յետմիջօրէի թերթեր:
Անոր վտիտ ձայնը կը փակուէր իլիկէն փակուող բրդի թելի
պէս: Թերթ մը գնեց ու մինչ մանուկը զբաղած էր դրամին
մնացորդը տալով, անփութութեամբ հարցուց՝

-Մտիկ ըրէ, ծօ՛, քոյր ունի՞ս...

-Այո՛,- ըսաւ մանուկը ապշահար, դրամի կտորները քրո-
նած ափին մէջ:

-Գեղեցի՞կ է...

Տղուն աչքերը խոշորցան զարմամբէն: Անապարանքով դրամը տուաւ ու մեծաբայլ հեռացաւ: Երկվայրկեան մը յետոյ սակայն՝ վախցած անասունի մը պէս, կեցաւ փողոցին մէջտեղը, գլուխը դարձուց ու նայեցաւ իրեն: Հայ մանուկի այդ ակնարկը դաշոյնի պէս խրեցաւ սրտին մէջ ու խորապէս ամչցաւ իր գործած տգեղ արարքին համար: Անցաւ սալայատակին միւս կողմը, նստաւ սրճարանի մը յառաջամասը ու սեւ սուրճ մը ուզեց: Յետոյ մեքենաբար բացաւ բերթը ու արագութեամբ սահեցաւ խորագիրներուն վրայէն: Յանկարծ ակնարկը փաթթուեցաւ նախադասութեան մը. խրճուռն եկաւ ու ծուլութեամբ մնաց հոն:

«Տասներկու տարեկան տղայ մը, ագարակի մը մէջ, ածելով կը ճեղքէ քնացած հօրը որովայնը»:

Ու տակը՝ *«Այս տարի իսկ վերջացուցած ըլլալով նախակրթարանը, պզտիկ ոճրագործը տէր է իր մտային բոլոր կարողութիւններուն ու անհաւասարակչուութեան ո՛չ մէկ հետք ջոյց չի տար: Ոստիկանական գործավարին այն հարցումին, թէ ինչո՞ւ ըրած է այդ բանը, պաղարիւնութեամբ ու բնական կերպով պատասխանած է.—Չեմ գիտեր...»*

Ու լրաբերը իր կողմէն որպէս եզրակացութիւն կ'անելցնէր.

«Կը թուի, թէ բացարձակապէս ճիշտ արարք մըն է»:

—Երբե՛ք, — ըսաւ մտովի, — երբե՛ք ձրի արարք մը չի կըրնար ըլլալ ատիկա: Որպէսզի ըլլար՝ հարկ էր որ տղան անդրադարձած ըլլար իր ըրածին ու ընկէն յետոյ ըմբռնէր իր արարքին նշանակութիւնը: Հաւանաբար առհաւական բնագոյ մըն է:

Ի՞նչ հիմնական տարբերութիւն կար սակայն իր քիչ առաջուան հայ մանուկին ուղղած խօսքերուն, Հանիայի հեռաւոր արարքին ու մանուկ հայրասպանին ռեիլին միջեւ: Մեկնելով անոնց բարոյական տարողութենէն՝ անտարակոյս ամէնէն թեթեւն ու արդարանալին այդ մանուկին ռեիլն էր: Իսկ ամէնէն ծանրը՝ անտարակոյս իրենը: Իսկ իրը ձրի արարք է՞ր, թէ չէր...

Հանիայինը է՞ր, թէ չէր...

Կոյր, թափառիկ մարդ մը, մուրիկ մարդ մը՝ իր աղփատ ու վիրաւոր ծայնը ձգած, սկսաւ երգ մը երգել: Ինք կը լսէր միայն յանկերգը: Յայտնապէս քիչ մը յանդուգն

երգ էր, քանի որ կիները կը խնային ու ծերուկին կոյր դեմ-
քը ծամածուռ ժպտով մը կը փոթորկէր՝

*Օ՛, հաղարջներն ու ելակները եւ գինին
որ խմեցինք,
եւ աղուոր գեղեցկուհիները, որ այլեւս
երբեք չպիտի տեսնենք...*

Ջրի արարք է՞ր, թէ չէր...

Իրապէս տարօրինակ աղբիկ մըն էր այդ Համիան՝ յե-
ղակարծ ուսումներու եւ յանդուգն բաներու բացառապէս
ընդունակ: Ուրիշ օր մը, ուշ երեկոյեան՝ ընկերներով նստած
էին սրճարան մը, երբ խօսակցութեան ճիշդ մէջտեղը, գեղե-
ցիկ գոյգ մը աղբիկներ եկան, տեղաւորուեցան իրենց դէմը:
Բարձրահասակ էին ու շատ բարեճել: Ու ինք մկատեց, որ
Համիային ակնարկը գամուեցաւ - մնաց անոնցմէ մէկուն
վրայ: Աչքերուն մէջ պղտոր բան մը կար: Մտնով վրան,
ցած ձայնով, կը յիշէր որ ինք հարցուց.

-Ինչո՞ւ այդպէս կը նայիս, Համիա՛...

-Որո՞ւ,- պատասխանեց խարդախութեամբ:

-Դեմի աղջկան, Համիա՛: Ինչո՞ւ կ'աշխատիս ծածկելի...

-Բացարձակապէս կը սխալիս,- ըսաւ քաղցրութեամբ
ժպտելով,- կատուին կը նայիմ...

Ու իրաւ աղջկան ոտքերուն առջեւ փոքր, սեւ կատու
մը կար:

Հագիւ վայրկեան մը յետոյ սակայն բարձրացաւ, մօտե-
ցաւ աղջկան, ծոնցաւ ու մեծ արագութեամբ շօշափեց այդ
աղջկան պիրկ ու մետաքսէ սեւ գուլպային մէջ գեղեցկօրէն
կաղապարուած սրունքը: Այս բոլորը կատարուեցան այնպէս
հապանկով, որ ամէն բան վերջացած էր, երբ ներկաները
ըմբռնեցին պատահածը ու մեծապէս ապշեցան անոր ամսո-
վոր արարքին վրայ: Աղբիկը անակնկալէն ու վախէն գունա-
տած էր, իսկ Համիան խաղաղութեամբ վերադարձած՝ կը
նայէր առաստաղին: Ինք բարձրացաւ ու գնաց ներողութիւն
խնդրեց: Երբ Համիային հարցուցին, թէ ինչո՞ւ ըրաւ ատիկա,
ցրտութեամբ պատասխանեց՝

-Որովհետեւ ըրի...

Ու ուրիշ բառ մը կարելի չեղաւ խլել շրթներէն:

Կայարանին սանդուխներէն քարձրացած ստեղծ՝ ժամը չորսը հնչեց: Ունկնդրելով ժամացոյցին ձայնին՝ միաժամանակ կը համրէր մարմարէ աստիճանները: Եթէ գոյգ են, կ'ըսէր մտովի, ուրեմն տունն է, եթէ անգոյգ են՝ ո՛չ: Բայց երբ հասաւ վերջինին, արդէն թիւը մոռցած էր: Խոշոր հայհոյանք մը զլտորեց ու արհամարհանքով թօթուեց ուսերը: Յետոյ մտովի ըսաւ.— Եթէ մասնաբաժնին մէջ եղողներուն թիւը, ինձմով միասին, գոյգ է, տունն է, այլապէս՝ ո՛չ...
Ո՞վ— Հելլա՛ն...

Կը մտածէր պզտիկ գուրգուրանքներու մասին, ինչպէս միշտ՝ սիրոյ ժամէն առաջ ու կը մտադրէր, որ բացառաբար սիրալիք տարփայեղց ու լաւ տղայ մը պիտի ըլլայ: —Թաթիկները պիտի սեղմեմ ձեռքերուս մէջ, կ'ըսէր մտովի եւ իր բնիւշ մատներուն ծայրերը պիտի համրուրեմ: Պիտի ըսեմ.— Ահա, Հելլա, մեծապէս ապերջանիկ եմ այսօր ու կ'ապաւինիմ քու գորովիդ: Մեծ քրոջ մը պէս եղիր ու շատ սիրէ գիս, Հելլա՛...

VIII

Ամէն մարդու կեանքին մէջ աւելորդ ու վրիպած օրեր կան, որ պէտք է չեղեալ համարել: Ենթադրել, որ այդ օրը չէ ծագած:

Գէշ տրուած որոշումներ կան. առաջին կիրարկումին իսկ խայտառակ կերպով սնանկ, որ պէտք է անմիջապէս բեկանել: Այսօր, օտարականը, որ իր մարմնին մէջ տարիներէ ի վեր կը բնակի, կրկին արթնցած էր իր նինջէն ու լրբութեամբ խնդացած էր երեսին:

Լեցուց ծխամորճը ջղայնութեամբ ու մրմուռաց.

—Համարել օրը չեղեալ...

Յետոյ՝

—Միծաղելի մէկը եղար այսօր, սիրելի՛ բարեկամ,— ըսաւ մտովի,— իմացիր, որ ո՛չ ոք կրնայ որեւէ օր չեղեալ համարել: Մարդ կը կրէ իր բոլոր չարաղէտ վրեպներուն հետեւանքները: Մարդը ան է, որ պատասխանատու է իր գործած բոլոր արարքներուն...

-Իսկ երբ այդ արարքները ձրի՞ք են...

-Ո՛չ, ձրի արարքներ չկան,- մրմուռաց կրճով...

Յոգնած իր կեանքին բոլոր հակասութիւններէն, որ մէկիկ-մէկիկ կը բարձրանային ու կը նեղէին գայն, գլուխը պատուհանէն դուրս հանեց ու շնչեց երեկոյեան գով օդը: Կապարագոյն ամպի պատանոներ լող կու գային կապոյտին խորը: Ծառերը խունապահար կը վազէին: Կառաշարը ուղիղ գծով կը սուրար կարմիր տանիքով տան մը վրայ: Պարտէզէ մը հովիւի մեծ շուն մը հաջեց ու յանկարծ մեծ ցունցով մը երկաթուղակառէրը կանգ առին: Յետոյ կրկին շրտկեցին իրենց մէջքը, շունչ առին ու կարգապահութեամբ շարունակեցին ճիգ նամբան:

Ամէն մարդ կը յոգնի, ամէն մարդ կ'ունենայ տկարութեան պահեր, ամէն մարդ կրնայ կանգ առնել վայրկեան մը, բայց յետոյ պէտք է քաջութեամբ մէջքը շտկել ու գորութեամբ յառաջանալ:

Յառաջանա՛լ: Ահա՛ թէ ինչ պէտք է ընել: Ու ապրիլ կարգապահութեամբ:

Գրպանէն հանեց յուշատետրը. կարդաց առաւօտեան գրածը ու մեծապէս դժգոհ մնաց: Ջգացական, անորոշ բաներ էին այդ որոշումները: Հարկ էր աւելի յստակ ըլլալ: Ու միանգամընդմիջտ կարն կապելու համար ներքին ամէն հակասութիւն, թօթափելու համար գէշ օրուան մը ծանր յիշատակը, պատոնց թերթը ու դիմացը խոշոր գրերով գրեց: Ձեռքը սակայն կը դողար ու գրերը դժուարութեամբ կը հպատակէին, կ'ընդլիմանային:

-Ձրի արարքներ չկան

-Փակել հաշիւը ծոյլ, ապաստեալ ու սատիկ քաղքենիներու

-այդ թշուառ գիւտին հետ

-արագութեամբ հաշուեյարդարի ենթարկել այս գէշ օտարականը (երկրորդ անձնաւորութիւն)

-այս օրը համարել չեղեալ

Յետոյ՝ ծարաւով կու տուաւ ծխամորմին ծուխը: Ծուլութեամբ գլուխը դրաւ կաշիէ բարձին ու զգաց, որ մեծապէս փնտռ է: Յօրանջեց ու պրկուեցաւ: Ու կրկին ինքզինքը ըզզաց ապերջանիկ, գէշ գիճուած կեանքին դէմ ու գրեթէ խոնջ՝ յաղթական երիտասարդութեան մը մէջտեղը: Գլուխը գայրոյթով թօթուեց ու արտասուելու բռնակալ, խուլ, պար-

տաղիր փափաք մը բարձրացաւ կոկորդին; Օ՛, մանկութիւն, անցելատոյժ օրեր, ի՛նչ գեղեցիկ էիք: Օ՛, մանկութիւն, երբ կարելի էր ապրիլ առանց պատասխանատուութեան զգացումի, օրը օրին, սրտառուչ անգիտութեամբ մը, երբ դեռ ամէն բան նոր կը սկսէր, երբ կարելի էր գիշերը անկողին մտնել՝ առանց որովայնիդ մէջ թունաւոր վիշտ մը կրելու, օ՛, քաղցր մանկութիւն...

Զգալով որ հոգին գառիթափի վրայ է կրկին ու կրկին կրնայ անձնատուր ըլլալ տկար յուզումներու, դէպի իր պզտիկ անձը թշուառ ու անօգուտ գորովի մը՝ բարձրացաւ, գնաց նրբանցքը ու սկսաւ ննմել: Յետոյ՝ իր հիւանդ մտածումը կրկին վերագարձաւ իր հին կայքերուն: Աչքէ անցուց գրածը ու նկատեց, որ կրկին ընդհանուր բաներ են ըսածները, ծփուն նշանակութեամբ ու պէտքը զգաց, խորապէս, իր ամէնօրեայ կեանքին մէջ նեղ կարգապահութիւն մը մտցնելու համար՝ սեղմ, ճշգրիտ, յստակ, երկու մեկնութեանց առիթ չտուող ու խիստ առաջադրութեանց: Արագութեամբ վերադարձաւ տեղը ու նոյն խոշոր ու տեղիէ բռնուած գրերով՝ հանդիպակաց էջ՝ մ վրայ գրեց հետեւեալը՝

Օրուան եծ մասը անցընել տուէր: Աշխատիլ յամուռութեամբ

Կրթով, հաւատարմութեամբ: Ո՛չ մէկ դասախօսութենէ բացակայիլ

Ժամանակ չվատնել ընկերներու հետ: Սրճարան երթալ երկու օրը

Միայն մէկ անգամ

Գրական գրքեր չկարդալ (դնել բոլորը սնտուկին մէջ ու կղպել)

Պարի, շարժանկարի չերթալ, թատրոն չերթալ: Ո՛չ ալ ուսանողական ճաշարան

Բոլոր ազատ ժամերս դնել կազմի տրամադրութեան տակ

Շատ խնայող ըլլա՛լ

Յետոյ՝ գոհունակութեան հառաչամբ մը արձակեց: Կարծես վերջնականօրէն ազատագրուած էր իր բոլոր կասկածներէն: Յառաջիկայ ամիսներու իր կեանքը տեսաւ ջինջ, գուրկ ամէն տեսակ տգեղութենէ, անբասիր: Ու մտովի ծաղրեց այս գէշ օրուան ամբողջ տագնապը, - ահա՛ թէ ինչ կը նշանակէ գիշերը չքնանալ, գրադիլ աւելորդ բաներով ու ամբողջ

օրը թափառիլ ծովեզերքը, որոնալով, ծամելով հիմնած, սը-
նամկ ու հիւանդ գաղափարներ:

Ջուարթ ու մեղմ սոյլ մը փակուեցաւ շրթներէն: Մանկա-
կան հիմ երգ մըն էր ասիկա, անուշ երգ մը: Կը յիշեցնէր
ցած առաստաղով մանկապարտէզը ու գրեթէ հասում գեղեց-
կութեամբ ու մտքի անուշ աչքերով ուսուցչուհին, որ իրենց
կը սորվեցնէր հիմգ մատներուն անունները: Այդ երագ օրե-
րէն ի վեր ի՞նչ պղտոր ջուրեր անցած էին կամուրջին տա-
կէն:

*Յուցամատը կը պարէ,
ցատկէ՛, պարէ՛, ո՛վ դուն ցուցամատ-
ցուցամատը կը պարէ...
ճկոյթիկը կը պարէ...
ցատկէ՛, պարէ՛, ո՛վ դուն ճկոյթիկ...*

Ու քազմաթիւ, հրաշալիօրէն նուրբ ու բնօրէն մանկական
ցուցամատերու ճկոյթներ կը բարձրանային: Եւ մանկանց ու
մանկուհիներու պզտիկ, անմեղ, մաքուր ձայնը կը լեցնէր
սրահը: Այս բոլորը սակայն կը պատկանէին հեռաւոր անց-
եալին: Օ՛, անցելատոյց մանկութիւն, դալարագեղ օրեր...

-Ո՛չ, ո՛չ եւ ո՛չ...

Բացագանչեց, գրեթէ բարձրաձայն: Կը բաւէ՛ որքան
սնանեցաւ յիշատակներու մեղկացուցիչ ու ածամ սնունդով:
Հայանկով իջաւ վար, գրեթէ հեղեց քազմութիւնը եւ մեծա-
քայլ գնաց դէպի ծառուղին: Յանկարծ մայուածքը յուսահա-
տութեամբ կանգ առաւ պատի ազդարարութեան մը վրայ:
Ու ամբողջ ուրախութիւնը մէկէն կորսուեցաւ անհետ: Ազդը
չէր, որ պղտորեց հոգին, այլ՝ մեծ տառ մը, որ գրգռիչ,
յարձակողական յստակութեամբ մը կը զարնուէր աչքերու ա-
պակիներուն, կը փշրէր զանոնք ու կը մտնէր ներս:

Ի...

Անտարակոյս տուած որոշումներուն մէջ մեծ պարապ
մը կար: Գլխաւոր խոչընդոտներէն մէկուն վրայէն անցած էր
սահելով, այս անարգ մարմինը ուներ իր պահանջները,
գրեթէ միշտ կը պարտադրէր զանոնք: Ի դէպ, քանի՞ հոգի
կար մասնաբաժնին մէջ: Վայրկեան մը կանգ առաւ, աշխա-
տեցաւ մտաբերել, քայց մտքերը խառն էին, յիշողութիւնը՝
դաւանան: Ահա կրկին զգայարանները կ'արթննային: Կորա-

կոր պարտուած գէշ օրուամ մը բոլոր տառապանքներէն՝ հարկ էր որ կառչէր ճիւղի մը...

Հելլա՛, Հելլա՛, Հելլա՛...

Շուն մը, իրիկուամ արեւին մէջ երկնցած՝ կը մրափէր, դուռնը գետեղած ծունկերուն մէջ: Սեւ շուն մըն էր ատիկա, նուրբ ու թաւշային մորթով: Մօտեցաւ ու ավը բաց անոր փայլուն կռնակին: -Ո՛վ շուն,- ըսաւ մտովի,- ինչքան թեւադրիչ է մարմնիդ այս քաղցր հանգիստը: Անշուշտ բոլոր ծարաւները յագեցած են ու գէթ այս ժամուն մեծապէս խաղաղ է կեանքդ: Դուռնդ՝ ծունկերուդ միջեւ, ննջէ՛, ննջէ՛, ո՛վ շուն...

Ներքնապէս փլած, պարտուած, վերջացած մարդու մը նման՝ ծոյլ ու աննպատակ քայլերով շարունակեց քամբան: Ալեկոծ ծովի մը վրայ տարութերուող ու անգօր մակոյկի մը պէս էր: Կը քարճրանար վեր ու կ'իջնէր վար եւ այս ամբողջ մակընթացութեան ու տեղատուութեան ընթացքին՝ հոգիին կը մնար կառչած սիրոյ տեսիլներու, անկողնի փոքր յիշատակներու, տարփանքի ժամերու ընթացքին ըսուած հրատուչոր ու անուշ քառերու:

-Ափերուս մէջ պիտի բռնեմ, մարմնէն անջատուած կանափի մը պէս, բու շատ գեղեցիկ գլուխդ ու պիտի համբուրեմ գայն՝ իր բոլոր զգայուն մասերուն վրայ: Ո՛չ մէկ ամօթ ու ոչ մէկ խղճի խայթ պիտի ունենամ ու պիտի կրկնեմ բոլոր գուրգուրանքները, որ ինձ սորվեցուցած ես, Հելլա՛: Կան՝ որ մարմնիդ կը մատնեն խախուտ ու քաղցր դողի մը ու ուրիշներ՝ որ կը խենթացնեն բեզ: Կան նաեւ՝ որ աչքերուդ մէջ կը դնեն խոնջ նուազում մը: Կը յիշե՛ս, Հելլա, օր մը ինձ ըսիր՝ որ ամէն աղջիկ իր մարմնին վրայ արտասովոր կերպով զգայուն ու սկար կէտեր ունի: Մարմնի մասեր՝ ուր գգուանքը կը ստանայ բացառիկ գօրութիւն մը: Ու այդ կէտերը բոլորին ինչ մոյնը չեն: Յետոյ՝ նայուածքդ պահեցիր ամօթդ ու ամբողջ ամիս մը՝ խելագար յամառութեամբ մը եւ փնտռեցի գանձնք: Ուրիշ օր մը դառնութեամբ ըսիր,- կոպիտ ու եսասէր տղայ մըն եւ սիրոյ մէջ ու երբեք չպիտի սորվիս գգուանքներուն արհեստը...

-Աւելի լաւ,- ըսի անգթութեամբ:

-Մի՛ կարծեր, այդ բոլորը ունին իրենց կարեւորութիւնը, սիրելի՛ս ու դուն գէշ տղայ մըն ես, Աշո՛տ...

Ինձ գիտէ, որ միշտ այդպէս տղայ մը եղած է, ամէն բան հապնեպով վերջացնող ու բնաւ կարեւոր մանրամասնութիւններու վրայ կանգ չառնող: Քանի՛ անգամներ իր սիրած աղջկան մօտենալէ առաջ, մտածած է անոր պատճառովի՞ անակնկալ հաճոյքներու վրայ, բայց յետոյ ամէն բան մոռցած: Որովհետեւ ինձ կ'ապրի ներքին, բացառապէս անձնական ու մասնաւոր կեանքով մը, գճուճ կեանքով մը: Եւ ասիկա շատ տխուր բան մըն է:

-Յետոյ ի՞նչ,- մտածեց ջղայնութեամբ,- կարծես թէ աշխարհի վրայ ուրիշ գրադումներ չկան...

Հարկ էր վերջացնել: Մարտինը կարօտ էր թէ՛ ֆունի, թէ՛ սիրոյ: Իսկ հոգին՝ թէ՛ խաղաղութեան եւ թէ՛ այնկծութեան: Երկմիտ ու շփոթ՝ կանգ առաւ ճամբուն մէջտեղը:

-Բո՛ւհ,- ըսաւ քարճարճայն,- ասեա թէ ինչպէ՛ս մարդ մը եղած եմ...

Այդ խորհրդածութիւնը որոշումի մը պէս փրկեց զայն անարգութենէ: Տետրակը հանեց ու սպիտակ էջի մը վրայ՝ նոյն մեծ ու տենդէ բռնուած գրեթով աւելցուց՝

-Հինտուել զայն (Հեյլան), չերթալ իրեն

-Եթէ ինքնարեւբար զայ, ցոյց տալ զաղջ վերաբերում...

Յետոյ՝ վերջապէս ազատագրուած այդ սպառնիչ կռիւէն ու թեթեւ սրտով առաւ կողմնակի փողոց մը:

-Հիմա, երթանք մեջեմէ...,- ըսաւ մտովի: Ու կրկին մեղմ ու զուարթ սոյլ մը ֆակուեցաւ շրթներէն: Ու նորէն հին երգ մըն էր ասիկա՝

*Նրբ ես կօշկակար էի, Հին կրպակի մը մէջ,
Կօշկակար էի ես...*

ԱՆԲՈՒԺԵԼԻ

Սաղաւարտների փայլը չի խամրում,
Ու չի գօսանում կաթիլը արեան,
Ախ, ամէն վայրկեան մի մոր անանուն
Կարմիր է խառնում հասկերին ցորեան:

Ջարհուրանքի մէջ՝ անմեղի ծպիտ,
Յոյսի ծարաւ ծիլ՝ ամէն դարամուտ,
Մինչ Աստուծոյ քայլը՝ թրջահոտ հոսպիտ
Բիր ժողովուածը յանձնում է կամուն:

Եւ բեքանիացի բորոտի մամն-
Անբուժելիմ է երկրիմ տիրացել,
Սաղաւարտներին /արիւն ընդ արեան/
Տիրոջ ստուերն է թեթել հպանցել...

ՀԻԻԼԷԱԿԱՆ

Հաշտից սեղանին հեսանցի
Հայրենապապակ նիչս վերջին,
Ես՝ հիւլէ չնչին, հլու խեցի-
Հող-հայրենեացի սրբականչին:

Հիւլեական իմ դողանջումով
Կենաց սերմերը փառաբանեմ,
Հաշտից սեղանին, տա՛ք արիւնով,
Հայրենադաւին ըմբերանեմ...

Երևան

ԴԱՌԻԹ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Բ. ՂՈՒԼԵԱՆ



Հետագայ Էջերուն տրուած ճեղագիրը Արցախի հերոս-նահատակներուն մոտիկուած «Բագին»-ի բացատրիկին տրամադրուած այն գրութիւնն է, որմէ երկու հատուած ներկայացնելէ ետք, իր ծաւալուն հանգամանցին պատճառով մեր ընթացիկ թիւերուն վերապահեցինք ամբողջութիւնը, որուն առաջին մասը յոյս տեսաւ մեր նախորդ համարին մէջ, իսկ վերջին բաժինը կը ներկայացնենք ստորեւ:

Ոչ մէկ տարակոյս այն մասին, որ Արցախեան զոյամարտի բացառիկ տիպարներէն Շահէն Մեղրեանի կեանքը պատկերացնող ու ներքին քարտեմաւնութիւնները բնութագրող Բենիկ Ղուլեանի այն գրութիւնը օրինակ պիտի հանդիսանայ մեր մտաւորականներուն, որոնք պիտի չուշանան ճոյն ծաւալով ու հաւաստի տուեալներով ներկայացնել նորօրեայ մեր նորահրաշք կապակաւորները...

**ՅՈՒՇԵՐ ՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝
ՆՈՒՒՐՈՒԱԾ
ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ԾԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆԻՆ**

ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ԱՐԾԻԻԸ

ԱՊՐԵԼՈՒ ԿԷՍՆ ԷԼ ՊԱՏՈՒՈՎ ՄԵՐՆՆԵՆ Է:

Պ. ՍԵՒԱԿ

Մեղրեանների փոքր ազգից (8 ընտանիք) բանակ են զօրակոչուել տասը հոգի՝ Նրանցից եօթը զոհուել են: Նրանք են՝ Իշխան, Մեխակ, Վերդի եղբայրները, Ֆրիդոնը (Շահէնի հօրեղբայրը), Գարեգինը (հօրեղբորդին), Սերգէն, Մայիլը, Գիւղ են վերադարձել՝ Բենիկը, Քաջատուրը եւ Վլադիմիրը (Շահէնի հետ նահատակուած պատանի դպրոցական Հայկի պապը): Քաջատուրը՝ Հայկի պապի մեծ եղբայրը, իսկ Վլադիմիրը՝ Հայկական 88րդ

digitised by A.R.A.R.©

Թամանեան դիվիզիայում եւ դիվիզիայի շարքերում մարտերով կովկասից Հասել է Բեռլին՝ Ռայխստակի հրապարակում հայկական ժողովրդի պարել, պատին էլ ինքնագիր թողել: Երբ հետագայում լոյս ընծայուեցին նկարները, որոնք պատկերում էին Ռայխստակի պատերին Պորչրգային գինուորների տարբեր թվուններով, այդ թվում եւ Հայերէն, կատարուած գրութիւններ, Պալատուր Մեղրեանը զարմացել էր, որ իր գրութիւնը Գիւլիստանից Բեռլին՝ չկայ: (Ղարաբաղցու միամտութեամբ ստում է. «Է՛, սրա ետև է, պա իմ կերածը հօր ա...»):

Պատերազմի հիւանդ ու ծեր վետերանը, որ մի քանի մարտական շքանշաններով ու մեդալներով պարգևատրուած էր, 92ի դաժան Յունիսին նոյն Պորչրգային բանակի տանկերի ու գրադներին մահաբեր արկերի տարափի տակ, բախտի ջահահայքին թողնելով ամէն ինչ, մի կերպ իրեն պցել էր Հալսենի փրկարար անտառները, յորդառաւ անձրեւի տակ, ահաւոր տանջանքներով, ոտքով, աննպաստի կանաններով, տասնեակ կիլոմետրներ կարել ու փրկուել, կրելով անտանի զրկանքներ:

Արցախեան շարժումը շատերի համար անակնկալ էր, բայց Եաւէնի համար այն վաղուց սպասուած եւ միանգամայն բնական իրադարձութիւն էր:

Եաւէնը դեռեւս դպրոցական էր, որ դիւլիստանցի բժիշկ Հենրիկ Սեփեանը (Արրահամ սպարապետի սերնդից) Ստեփանակերտում այդ Եարժման նախապարտատման ու գործուն կազմակերպիչներից մէկն էր: Նա, գրող-պատմորան Բագրատ Ուլուբարեանը, գրաքննադատ Ժան Անդրեանը եւ մի շարք այլ մտաւորականներ ու գործիչներ մեծ աշխատանք են տանում մարզում, դիմումներ են գրում, հանրահաւաքներ կազմակերպում եւ արդիւնքների մասին գրում Մոսկուա, որի պատճառով էլ մարզի իշխանութիւնների կողմից հետապնդման եւ Հալսեանքների են ենթարկւում, եւ ստիպուած հեռանում են Ստեփանակերտից եւ ապաստանում Երեւանում: Տեղափոխուելով Երեւան, նրանք չղաղարեցրին իրենց գործունէութիւնը, չկարեցին կապերը Հայրենի Արցախի հետ: Հարկադրեալ աքսորը առանձնապէս նպատակային է սպասագործում Բ. Ուլուբարեանը: Երեւանում նա, նախ՝ թեկնածուական, ապա եւ՝ դոկտորական թեզ է պաշտպանում: Հ. Առիեանը եւս պաշտպանում է թեկնածուական թեզ եւ դառնում բժշկական գիտութիւնների թեկնածու (նա բարձր կարգի վիրաբոյժ էր): Հանրայայտ է, որ Հայ ժողովրդի պատմութեան մասնագէտ պատմաբաններից ոչ մէկը մեր օրերում լուրջ գիտական ուսումնասիրութեան նիւթ չի գարձրել Հայ ժողովրդի պատմութեան անբակտեի բազկացուցիչ մասն հանդիսացող արցախահայութեան պատմութիւնը, գրանով իսկ ջուր ցնելով ադրբեջանական կեղծարար պատմաբանների ջրողացին: Բ. Ուլուբարեանի բեղմնաւոր գիտական գործունէութիւնը գալիս է մասամբ այդ բացը լրացնելու: Զարմանալի արգասաբեր

էր Ուլուքաբեանի գիտական հունձքը. մէկը միւսի յետեւից լոյս են տեսնում նրա պատմական ուսումնասիրութիւններն ու զըրքերը՝ «Ոսկէ շղթան», «Խաչնի իշխանութիւնը XII-XIVդ.», «Դըր-ւագներ Ռայոց Արեւելից կողմանց պատմութեան», «Գանձասար», «Զըրուցարան» (երկու գիրքով), «Աարդարապատ» պատմավէպը. Ուլուքաբեանը բացառիկ գիտական բարեհաճութեամբ, սկզբնաղբիւրների բծախնդիր քննութեամբ ու վերլուծութեամբ շարադրել է Արցախի, իրօք, գիտական պատմութիւնը. Բազմավաստակ գիտնականը Արցախի պատմութեան զանազան հարցերին անդրադարձել է եւ իր բազմաթիւ արժէքաւոր յօդուածներում, որոնք հրատարակուել են թէ՛ գիտական, թէ՛ այլ հանդէսներում ու ամսագրերում, տարբեր լրագրերում. Եահէնը այդ ժամանակներում համալսարանի ուսանող էր եւ հաղորդակից ծաւալուող իրադարձութիւններին:

Առանձնապէս սերտ էին Եահէնի եւ բժիշկ Հ. Սեփեանի մտերմական (յետոյ եւ հոգեկան) կապերը. Սեփեանը յաճախակի այցելելով գիւղ (ծնողները գիւղում էին ապրում), մշտապէս հանդիպում եւ երկարատեւ զրոյցներ էր ունենում Եահէնի հետ (իսկ այդ զրոյցների հիմնական թեման Ղարաբաղի հարցն էր, շրջանի ճակատագրի): Երբ մտերիմների հաւաքում (իսկ նրանք իսկոյն հաւաքում էին նրա գիւղ գալը իմանալով) եւ Սեփեանը այն ժամանակ դեռեւս փակի տակ գտնուող հայութեան խնդիրների մասին իր հերթական զրոյցն էր սկսում, ծեր ծնողները (հին կոմունիստներ էին) ախ ու վախ էին անում, զգուշացնում, որ որդին հեռու մնայ այդ վտանգաւոր ուղուց: Թիշում եմ մի անգամ այդ զրոյցներից մէկի ժամանակ (իսկ զրուցում էին, ի հարկէ, հայկական ճոխ սեղանի շուրջը, ուր անպակաս էր եւ զարաբաղեան կարմիր գինին) մի քիչ տաքացած բժիշկը դառնալով Եահէնին, իրեն յատուկ ծիծաղով ասաց. «Եահէն, ադա, ախր չգիտեմ ինչո՞ւ եմ այսքան շատ սիրում քեզ»: Եահէնի քաղաքական կողմնորոշման եւ գաղափարական համոզմունքների վրայ մեծապէս ազդել է հէնց նաեւ նրա մտերմութիւնը եւ գաղափարական համոզմունքների վրայ մեծապէս ազդել է հէնց նաեւ նրա մտերմութիւնը եւ գաղափարական համախոհութիւնը բժիշկ Հ. Սեփեանի հետ: Առհասարակ Արցախի պատմութեան վերաբերեալ հրատարակումները ո՛չ միայն յազեցնում են բազմահազար ընթերցողների իրական քաղցը Արցախի պատմութիւնից, այլեւ որոշակի ազդեցութիւն էին ունենում առաւել գիտական ընթերցողների հայեացքների ձեւաւորման վրայ, նրանց քաղաքական կողմնորոշման վրայ:

Արցախեան շարժման հէնց սկզբից Եահէնը, որ իր ամբողջ նախորդ գործունէութեամբ նախապատրաստուել էր եւ սպասում էր այդ օրուան, ակտիւ կազմակերպչական աշխատանք է ծաւալում շրջանում՝ այն Արցախին եւ ապա Արցախի հետ Հայաստանին վերամիաւորուելու համար: Երջանի բոլոր հայկական

գիւղերում (Շահումեան ական, Նախկին Ներքին շէն, Վերի շէն, Գիւլիստան, Ղարաչինար, Խարխափութ, Նոր շէն (Մանասի շէն, Մեւիթ Աբովի որդու անունով), Գաղթութ, Հայ Պարիս, Էրթեղ, Բուզլուխ եւ Մանաշիդ) բնակչութեան մէջ բացատրական աշխատանքների կատարումը, նրանցից ստորագրութիւնների հաւաքումը, դիմում-խնդրագրերի պատրաստման աշխատանքները կատարում էին Շահէնին համակիր եւ նրա ղեկավարութեան տակ գործող Արցախեան շարժման ակտիւիստները: Այդ ուղղութեամբ կատարուող բոլոր աշխատանքները համակարգողը անխոնջ եւ եռանդուն Շահէնն էր:

1988ի աշնանը, երբ չրջանի բնակչութեան ճնշման տակ չրջխորհուրդը դեռեւս որոշում չէր ընդունել Շահումեանի չրջանը Արցախին միանալու վերաբերեալ, եւ այդ ուղղութեամբ բուն նախապատրաստական աշխատանքներ էին տարւում, կապեր էին հաստատուել Մարգի ղեկավարութեան հետ: Այդ աշխատանքը եւս գլխաւորում էր Շահէնը: Նա մի պատուիրակութիւն ուղարկեց (ի հարկէ գաղտնի, դեռեւս բացարձակ գործելու օրերը չէին եկել) Ստեփանակերտ՝ հանդիպելու համար այն ժամանակ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պօղոսեանի հետ: Պատուիրակութիւնը (տողերիս հեղինակը, Բաքուի «Վոմու-Արստ» հայերէն թերթի չրջանից սեփական թղթակից Վ. Բադեանը, հողաչինարար Վ. Շելլունցը, Ղուրուշէնատի գիւղխորհրդի գործկոմի նախագահ՝ Գ. Յակոբեանը, բժիշկ Գ. Մարտիրոսեանը) մանրամասը Հ. Պօղոսեանին տեղեկութիւններ տուեց չրջանի կեանքի բոլոր բնակավայրերի վերաբերեալ: Նախատեսուած էր հանդիպում մտակուալի ներկայացուցիչ Արկադի Վոյսկու հետ, բայց վերջին պահին չկայացաւ, Ստեփանակերտ-Հայաստանի եւ Ադրբեջանի կոմկուսների առաջին քարտուղարներ Ս. Յարութիւնեանի եւ Ա. Վեգիրովի այցի կապակցութեամբ: Շահէնը նման չէր չրջանի մնացած ղեկավարներին, ովքեր սեփական պաշտօնական աթոռները չկորցնելու վախից կամ սպասողական դիրք էին գրաւել կամ էլ այս կամ այն կերպ խանգարում էին համաժողովրդական դարձած Շարժմանը: Շահէնը գիտէր, որ գիւղում ում պէտք է այս կամ այն գործը յանձնարարել, ովքեր են հոգով ու սրտով նուիրուած համազգային ազատագրական շարժմանը: Շրջանի ազգաբնակչութեան մեծ մասը անտեղեակ եւ անծանօթ էր հայ ժողովրդի պատմութեանը, յատկապէս Արցախի պատմութեանը, չրջանը Արցախի տարածքից դուրս գտնուելու քաղաքական հանգամանքներին, նրա պատմութեան հերոսական էջերին, հայրերի ու պապերի ականդներին:

Այդ բացը վերացնելու համար Շահէնի եւ Սամսոն Ոսկանեանի (Շարժման ակտիւիստներից էր) խորհրդով չրջանային «Նոր ուղի» թերթում տողերիս հեղինակը հանդէս եկաւ յօդուածաշարով՝ «Արցախը մեր հնօրեայ բնօրրանն է» ընդհանուր խորագրով: Այդ յօդուածներում համառօտակի, բայց հարուստ պատ-

մական փաստերով տրուել էր Արցախի պատմութիւնը հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը, յատկապէս ծանրանալով եւ հանգամանօրէն շարադրելով այն ժամանակաշրջանների պատմական իրադարձութիւնները, այնպիսի փաստերը, որոնց ընթերցողների մեծ մասը անծանօթ էր: Յօդուածաշարը այնպիսի ընդունելութիւն գտաւ, որ, երբ աւարտուեց, խմբագրութեանը եւ հեղինակին դիմեցին բազմաթիւ ընթերցողներ՝ խնդրելով շարունակել այն՝ եւ աւելի մանրամասը եւ լայն ծաւալով ներկայացնել շրջանի անցեալն ու ներկան: Ընդառաջելով ընթերցող լայն հասարակութեանը ամբողջ մի տարի, ընդհուպ մինչեւ շրջանային թերթի նիւթական ծանր պայմանների հետեւանքով 1881 թուականի Յունուարի փակուելը, նրա էջերում պարբերաբար (շաբաթական մէկ, երկու, երեք) շարունակուեց շրջանի պատմական անցեալը, աւանդութիւնները, կենցաղը եւ կեանքի այլ կողմերը լուսարանող յօդուածների հրատարակումը: Թերթը լոյս էր տեսնում շաբաթական 3 անգամ: Երբեմն հատուածները զբրաւում էին մէկ եւ կէս էջ ծաւալ, բայց դա ընթերցողին չէր ձանձրացնում, ընդհակառակը, շատեր բաժանորդագրուում էին կամ թերթը կարգում էին միայն այդ յօդուածների համար: Թերթի կոլեկտիւրը եւս (խմբագիրներ՝ Բահատուր Պետրոսեան, Լէոնիդ Մեծլումեան, պատասխանատու քարտուղար՝ Վարդերես Գանիէլեան) ամէն ինչով նպաստում էր այդ շնորհակալ աշխատանքին:

Հարագատ շրջանի պատմութեան ուսումնասիրման բնագաւառում շնորհակալ աշխատանք է կատարել ծննդով շահուածեանցի, Օրեւանի Խ. Արտօեանի անուան մանկավարժական ինստիտուտի դասախօս, պատմական գիտութիւնների թեկնածու Կիմ Ղահրամանեանը: Նա գտնում եւ Արցախեան շարժման բուռն օրերին, ինստիտուտի տպարանում հրատարակում է «Հիւսիսային Արցախը» վերնագրով պրոշիւր (ափսոս, որ տպագրանակը քիչ էր, ընդամէնը 1000): Կ. Ղահրամանեանը հանրամատչելի եւ պարզ ոճով շարադրել է հայրենի բնաշխարհի պատմութիւնը, օգտագործելով այնպիսի աղբիւրներ, փաստաթղթեր, որոնք հասկանալի էին դարձնում արդիական շատ անցքեր եւ իրողութիւններ (օրինակ, թուրքական զիւղերի գոյութիւնը շրջանի տարածքին): Երջանի 4 թուրքական գիւղերը (Մուլլափալաղիա, Զէյվա, Գեուրգալուր, Թողան) շրջանի տարածքում յայտնուել են միայն անցեալ դարի սկզբներին, Շուշուայ խաների ջանքերով: Նրանք, ցանկանալով զուտ հայկական տարածք հանդիսացող եւ հայ բնիկ բնակչութիւն ունեցող տարածքաշրջանում յենարան ունենալ, ասրերը վայրերից բերման ենթարկուած քոչուոր թուրքերին մշտական բնակութեան վայր են տալիս Գիւլիստանի մելիքական տարածքում, օգտուելով այն հանգամանքից, որ մելիքներն ու բնակչութիւնը զաղթել են Վրաստան եւ բոլորը չէ, որ վերադարձել են կամ կը վերադառնան:



**«ԱՆՊԱՐՏՆԵՒ Է ԱՅՆ ԺՈՂՈՒԹՈՒԹՅԱՆ,
ՈՐ ՂԵՎԱՎԱՐԻՈՒՄ Է ՈՐՈՒ ՁԵՌՔՆԵՐ»**

Գաբրիել Նժդեհ

Այն օրերին, երբ ոգի էր առել Արցախեան ազատագրական պայքարը եւ ծաւալուելով վերածուել բացարձակ հակափոքրական հուճկու համաժողովրդական շարժման, ազգայնական իշխանութիւնը, որպէս պատիժ՝ Շահումեանի չքանք ենթարկեց դատան շրջափակման:

Ազգային զարթօնք ազրող մեր ժողովուրդը, թէ՛ Արցախում եւ թէ՛ Հայաստանում, սկսեց հասկանալ, որ կարեւորագոյնն էր զազգային քաղաքականութեանը պէտք է հակադրել համազգային միասնութեան միջոցով ստեղծած գիւղաբնակչութեան: Ի զուր չէ, որ ազգային ազգամտաբանական այնպիսի քաջահոգ գիտակ, ինչպիսին Գարեգին Նժդեհն է, առել է՝ «Աճնառ թէ ժողովուրդ՝ սրանք միշտ էլ անլի ուժեղ են, քան կաթիլը, քան փոսակը, քան թշնամին, — սրանք միշտ էլ կազող են զկառաւորեցի իրենց, քարծրանալ իրենցից, եթէ չի պակասում սեփական ուժով ստորի կանգնելու կամքը»:

Արցախահայութիւնը արդէն հասկացել էր, որ հարցականի տակ է դրուած Հայերի հայրենիքի ամենակարեւոր հաստատենքից մէկի՝ Արցախի եւ արցախահայութեան քան գոյութիւնը: Այդ հասկացել էին նաեւ հայաստանաբնակ արցախցիները, որոնք համախմբուում են սոստաբ կանգնելու արցախահայութեան ազգային-ազատագրական պայքարին: Գիւլիստանի հայաստանաբնակները եւս, ձգտելով իրենց ներգրտման աւնենալ համազգային այդ Շարժման մէջ, նպաստել հարենի գիւղի (նաեւ շրջանի) գոյատեւմանը եւ նիւթական օգնութիւն կազմակերպելու միջոցով մեղմել նրանց անասական ծանր պայմանները, Արսիկան քաղաքում ստեղծում են «Նապաս» (գիւղի Ս. Ամենափրկիչ վանքի տեղական անուանումն է) հայրենակցական միութիւնը: Այն ունէր ծրագիր ու կանոնադրութիւն, որի շրջանակներում էլ պէտք է գործէր: Հայրենակցական միութեան կազմակերպիչն ու ղեկավարն էր վալերի Խաչատրեանը (Շահէնի ժողովական պաղի եղբոր թոռը): Միութեան հանգանակած միջոցներով ձեռք էր բերւում զգալի քանակութեամբ սննդամթերք (ալիւր, շաքար, կարագ) եւ ուղղաթիւներով տեղափոխւում Գիւլիստան: Նոյն կերպ են սկսում վարել նաեւ շրջանի միւս գիւղերի հայաստանաբնակ շահումեանցիները, հետեւելով գիւլիստանցիների օրինակին, դրանով իսկ մեղմելով բնակչութեան օոցիւղական կարիքը:

Միութիւնը եւ միւս կազմակերպութիւնները մշտական կապ էին պահպանում Շահէնի հետ եւ գործում էին նրա անմիջական ղեկավարութեամբ:

Հայթայթում եւ շրջան էր հասցւում դպրոցներին այնքան անհրաժեշտ դասագրքեր, գրեական պիտուքներ, աշակերտական հագուստ, ոտնաման, պայուսակներ, եւայլն, եւ այդ ամէնը շարունակաբար: Ես արդէն գրել եմ Շահէնի ու բժիշկ Հ. Սեփեանի փոխյարաբերութիւնների մասին: Նրանց փոխյարաբերութիւնները Արցախեան շարժման այս փուլում աւելի են սերտանում եւ ստանում կայուն համագործակցութեան ձեւ: Հ. Սեփեանը (նա հանրապետական հիւանդանոցի գլխաւոր բժիշկի տեղակալն էր) կազմակերպում եւ ղեկավարում էր Արցախին բժշկական օգնութիւն ցոյց տալու աշխատանքները: Նա մասնագէտ բժիշկների խմբերի հետ յաճախակի լինում էր Շահումեանում, օգնում դեղորայքով: Ամիսներով բժիշկները հերթապահում էին թէ՛ շրջկենտրոնի հիւանդանոցում եւ թէ՛ առանձին գիւղերում: Սեփեանը հանրապետական հիւանդանոցի բժիշկների եւ աշխատողների հանգանակած միջոցներով ձեռք է բերում մեծ քանակութեամբ դեղորայք, կարագ, շաքար, ալիւր եւ այդ ամէնը հասցնում շրջան, տալիս հիւանդանոցին, մի մասն էլ հայրենի գիւղին:

Հետագայում, երբ սկսուեցին զինուած ընդհարումները եւ զէնքի խիստ կարիք էր զգացւում, բժիշկը Հայաստանում ձեռք է բերում որսորդական հրացաններ, փամփուշտ, վառօդ, տեղափոխում շրջան, Շահէնի հետ միասին անձամբ լինում դիրքերում եւ զէնքը յանձնում նրանց, ովքեր պահակակէտերում էին, բայց զէնք չունէին:

Քանի որ խօսք եղաւ զէնքի մասին, ասեմ, որ այն օրերին, երբ շրջանում օրըստօրէ թէ՛ժացաւ պայթարը, զէնքի պակասը առանձնապէս զգալի էր եւ ծայրայեղօրէն անհրաժեշտ էր այն ձեռք բերել եւ լրացնել պակասը: Շահէնի անխոնջ ջանքերի եւ հայաստանաբնակ շահումեանցիների չափազանց ակտիւ օժանդակութեամբ եւ միջոցով, ձեռք բերուեցին եւ Շահումեանի գիւղերը հասցուեցին, ժամանակին շատ կարեւորութիւն ունեցող որսորդական հրացաններ, փամփուշտ, վառօդ, տարրական պաշտպանական այլ միջոցներ, կապի միջոցներ, տաք հագուստ, ոտնաման, որոնց կարիքը, յատկապէս շրջանի գաժան ձմրան պայմաններում, շատ էր զգացւում: Շահէնի անմիջական ղեկավարութեամբ ու ցուցումով շրջանում կազմակերպւում է ձեռքի ուղմբերի, նունակների ինքնաշէն արտադրութիւն (այդպիսիք բերւում էին եւ Հայաստանից): Մեծ դժուարութիւններով ձեռք բերւած եւ շրջան հասցրած այդ պաշտպանական միջոցները, տեղերում աննկատ չէր կարող մնալ:

Շրջանում տեղակայուած էր խորհրդային բանակի մի զօրամիւլերում: Շրջանի զինուորական կոմիտեանտը, ազրբեջանա-

կան իշխանութիւնների պահանջով, սկսեց յանկարծակի ստուգայցերի միջոցով յայտնաբերել զէնքը եւ առգրաւել: Ետէնը, որը գլխաւորում էր շրջանի գիւղերի ինքնապաշտպանական ուժերը, ամէն ինչ անում էր բռնագրաւումներ թոյլ շտաբու համար: Նա, միայն իրեն յատուկ ընդունակութեամբ ու հմտութեամբ, միշտ կարողանում էր մտերմական ու բարի կամեցողական յարաբերութիւններ ստեղծել գինուորականների հետ, եւ ժամանակին տեղեակ էր լինում սպասուող ստուգայցերին: Երբ գինուորական որեւէ ջոկատ գիւղերն էին ճանապարհւում, իրագեկ մարդիկ, Ետէնի յանձնարարութեամբ, հեռախօսով իսկոյն յայտնում էին այդ մասին: Գիւղում սկսւում էր մի շտեմբուած, գաղտնի եռուզեռ: Զէնք ունեցողները իսկոյն տներին գէշքը տանում էին թաքցնելու, որը՝ անտառում, որը՝ քարայրներում, որը՝ այլ յարմար եւ մօտ թաքստոցներում: Դպրոցականները եւս, իմանալով գինուորականների գալու մասին, թողնում էին դասերը, գնում տները օգնելու ծնողներին, թաքցնելու տանը եղած զէնքը: Նոյնիսկ դաշտում աշխատող կոլտնտեսականները այդպիսի դէպքերում թողնում էին աշխատանքները եւ շտապում գիւղ՝ թաքցնելու իրենց մօտ եղած զէնքը: Այնպէս որ, չի պատահել դէպք, որ գինուորականները կարողանային զէնք յայտնաբերել եւ առգրաւել:

Պատահել է եւ այսպիսի դէպք: Ետէնը անասելի դժուարութիւններով զէնք էր հայթայթում ո՛չ միայն շրջանի, այլեւ՝ հարեւան Մարտակերտի ինքնապաշտպանութեան որոշ ջոկատների համար: Այդ մասին յայտնի էր դարձել Մարտակերտի գինուորական կոմենդանտին, որը եւ որոշում է յանկարծակի ստուգայց կատարել Ետէնի մասին եւ, առաջին հերթին՝ Գիւլիստան: Զինուորների ջոկատը խիստ ձմրանը, անտառային կածաններով ու դժուարանցանելի ճանապարհներով, մի կերպ, մրսած, սոված ու ջարդուած հասնում է Գիւլիստան: Երկարատեւ երթից յոգնած, գիւղ հասնելով, նրանք մտածում էին միայն հանգստանալու եւ քաղցը յագեցնելու մասին: Պատահած առաջին մարդուն, իսկ նա պահակային ծառայութեան գնացող կիմ Քաչատրեանն է լինում, խնդրում են տանել որեւէ տուն եւ կերակրել ու տաքացնել իրենց: Քաչատրեանը հեռուից տեսնելով գինուորականներին, հրացանը նետում է մօտիկ այգին, իսկ ինքը ներկայանում, որպէս կորած անասուն փնտռելու գնացող: Նա գինուորներին տանում է հէնց գիւղի ծայրամասում գտնուող իրենց տունը, ուր նրանք տաքանում են թէ՛ վառարանի մօտ, ապա հիւրասիրւում գիւղական բարիքներով, խմիչքով: Մինչ ցրտահար գինուորները տաքանում են, իսկ տանտէրերն էլ ուտելիքի պատրաստութիւն են տեսնում, այդ ընթացքում կիմը կարողանում է հեռախօսով (գիւղում հարիւր տեղանոց կոմունալտոր կայր) կապուել ու անհրաժեշտ էր: Այս անգամ էլ են գինուորականները դատարկաձեռն հեռանում Ետէնի մասին չըջանից:

Արցախեան շարժման հէնց սկզբից Շահէնը շրջանում առաջինն էր, որ իր ղեկավարած պաշտօնների գործարանը դարձրեց Հայրենասէր մարտիկների դարբնոց, որն իր ուժը ցոյց տուեց 1988 թ. Սեպտեմբերի 16ին, երբ Բաքուի ու Մոսկուայի էմիսարներին քշեց շրջանի սահմաններից: Ազրբեջանական ազգայնամոլները ցանկացան «փախստական» թուրքեր բնակեցնել Շահումեանի շրջանում, որպէսզի դրանով իսկ կարողանան փոխել բնակչութեան ազգային կողմի հաշուեկշիւը՝ յօգուտ թուրքերի: Շահէնը առաջինն էր տարածքաշրջանում, որ Մուսաբախիճի եղեռնից յետոյ շրջանում ստեղծեց գինուած ջոկատներ՝ բնակչութեան անվտանգութիւնը ապահովելու համար եւ որոնք փառքով կատարեցին իրենց պարտքը՝ լկտի թշնամու դէմ մղած հետագայ հերոսամարտերում:

1990 թուականի Յունուարին Բաքուում Հայերի ջարդին զուգընթաց, թուրք-ազերիների ելուզակային ջոկատները Յունուարի 12ին յարձակուեցին շրջանի Մանաշիզ գիւղի վրայ եւ ջախջախուեցին նրա մատոյցներում: Հետագայում եւս թշնամին մի քանի անգամ փորձեց շրջանի տարածքը մտնել նրա Հիւսիսային կողմից, բայց Բուզլուխ, էրթել եւ Մանաշիզ գիւղերի մատոյցներում 1991 թուականի Յունիսի 6ին կրկին ջախջախիչ հարուած ստացաւ Շահէնի գլխաւորած ինքնապաշտպանական ջոկատներից: Պարտուած թշնամին դիմեց Քորհրդային բանակի օգնութեանը: Բայց Շահէնի ջոկատները կարողացան դիմակայել եւ Եազովի տանկերին ու զրահամեքենաներին 1991 թ. Յունիսի 21ին եւ նրանց կանգնեցրին Վերի Եէնի մատոյցներում եւ դրանով իսկ փրկուեց շրջանը: Երջանի ինքնապաշտպանական ջոկատները Շահէնի զեկավարութեամբ ո՛չ միայն կանգնեցրին թշնամու առաջխաղացումը, այլեւ 1991 թ. Սեպտեմբերին յարձակման անցնելով, կարողացան թշնամուց ազատագրել նախկինում գրաւուած դիւղերը: Թուրք-ազերիներին բացայտորէն օգնում էր Քորհրդային բանակը: Այդ նրանց ուղղաթիռների, տանկերի ու հրետանու հրետակոծութեան հետեւանքով էր, որ անբուել էին բազմաթիւ խաղաղ բնակավայրեր, սպանուել ու վիրաւորուել տասնեակ խաղաղ հայ բնակիչներ: Այդ մասին են խօսում բուլղարուհի Յվետանայի Փիլմերը (ինքը անձամբ մասնակցել է հայկական ինքնապաշտպանական ջոկատների մարտերին), գնդապետ Ամիրնովի, ժողովրդական համագումարի պատգամաւորներ Ծարուչի, Տիտովի, Ալեքսեւսկու եւ այլոց վկայութիւնները: Շահումեանի շրջանի եւ նրա պաշտպանների համար ամենադաժան փորձութեան շրջան դարձաւ 1992 թուականի աւմարը: Ազրբեջանական կանոնաւոր բանակի զօրամասերը «յարակից» զօրքերի զրահատեխնիկայի օժանդակութեամբ ու ակտիւ գործողութեամբ զրաւեցին Շահումեանի շրջանը: Երջանի ողջ բնակչութիւնը, մեծ թէ փոքր, հաւաքուել էր Գիւլիստանում, որի անառիկութեան մասին ոչ ոք չէր կասկածում: Բայց... ոչ

ոք էլ չէր մտածել նախօրոք պաշտպանութիւն կազմակերպելու մասին: Ստեղծուած իրադրութիւնը սթափ գնահատելու, թշնամու առաջխաղացումը կասեցնող գործողութիւնների գիմելու փոխարէն, շատերը այդ ամէնի պատասխանատու, մեղաւոր, քաւութեան նոխազ էին փնտռում: Եահուժանի անկումը ժամանակի սխալ ռազմավարութեան հետեւանք էր: Ինքը՝ Եահէն Մեղրեանը, այն քչերից էր, ովքեր զգացել էին, որ պատերազմի արդի փուլում ինքնապաշտպանութեան փոքրաթիւ ուժերով, ցած ու ցրիւ ջոկատներով անհնար է պայքարել կանոնաւոր եւ այն էլ զրահատեխնիկայով գինուած բանակի դէմ: Ու ժողովուրդը խուճապի մատուցեց, մի վիճակ, որն ամենավտանգաւորն էր, քանի որ այն համակել էր ո՛չ միայն խաղաղ բնակչութեանը, այլեւ՝ կռուողների մեծ մասին: Այսպիսի իրավիճակում շատ ղեկավարներ, երեւի թէ՛ կորցնէին գլուխները, գնային հոսանքին համընթաց: Բայց Եահէն Մեղրեանը այլ թրծուածքի ղեկավար էր: Նա չի կորցնում հաւատարիմ մնալու զգացումը: Նա անտառներում ու ձորերում ցրուած փախտականներին համախմբում եւ ուղարկում է Հաթերք, երեխաներին, ծերերին, հիւանդներին մի մասին (քանի հնարաւոր էր) ուղղաթիւներով տեղափոխում Ստեփանակերտ: Եահէնը ինքնապաշտպանական ջոկատների մնացորդները համախմբում, ուղարկում է Մարտակերտի ճակատ կռուելու: Եահէնը ինքը չի լքում մարտական դիրքերը, այլ աներեր հաստատակամութեամբ շարունակում է պայքարը: Եւ հայրենի անտառներում էլ ժողովրդի առաջ նա երդուեց՝ չհեռանալ հարազատ բնօրրանից, երդուեց պարտիզանական կռիւ սկսել թշնամու դէմ, կռուել մինչեւ վերջ, մինչեւ անարգ թշնամուն հայրենի հողից քշելը: Եւ նա հաւատարիմ մնաց իր երդմանը: Եահէն Մեղրեանի հայդուկային պարտիզանական ջոկատը, որը կազմաւորուել էր Եահուժանի եւ Մարտակերտի անկումից յետոյ, գործում էր հէնց հայրենի լեռնաշխարհում: Զոկատը տարուայ եղանակին համապատասխան, տեղաւորում էր հայրենի անտառների ու ձորերի այնպիսի տեղերում, որտեղից առաւել հնարաւոր էր հետեւել թշնամու տեղաշարժերին, կատարել հետազոտութիւն եւ, ըստ այդմ էլ՝ պլանաւորել թշնամուն անակնկալ հարուածներ հասցնելու գործողութիւնները:

Այդպիսի յարմար վայրերից մէկն էլ Գիւլիստան գիւղից ոչ այնքան հեռու գտնուող Յղակեր գիւղատեղին էր: Յղակերը գտնուում է Գիւլիստանից Թայիշ տանող անտառային ճանապարհի աջակողմը, խոր ձորի մէջ, չրջապատուած անանցանելի անտառներով: Գիւղի բնակչութիւնը այստեղ էր գաղթել 18րդ հարիւրամեակի վերջերին, Վարանդայի գաւառից, խուսափելով Եուշուայ խաների հալածանքներից: Խորհրդային կարգերի հաստատումից յետոյ, գիւղը, որ մինչ այդ նոյնիսկ քահանայ չուներ եւ ոչ էլ դպրոց (երեխաները Գիւլիստանի դպրոցն էին յա-

ճախում), տեղափոխում է թալիշից ոչ հեռու՝ Ղահեյլար վայրը, բայց այստեղից էլ Երկրորդ աշխարհամարտից յետոյ վերջնականապէս տեղափոխում են թարթառ գետի ափին փռուած Զայլու (կամ Վերին եւ Ներքին Զայլու, որոնք խառնուում են նորեկների գալով) գիւղը: Յղակերից հեռու չէր եւ Եղիշառաքել կամ Զրվշտիկ վանքը, ուր մի անգամ չէ, որ աշակերտ ժամանակ էքսկուրսիա է եկել Շահէնը: Վանքը Եղիշառաքել է կոչւել չորրորդ դարում, Արցախում քրիստոնէութեան քարոզչիներից՝ Եղիշէ առաքելի անունով, որը նահատակուել է թարթառ գետի մօտերը, պահ տրուել հողին, յետոյ թաղուել Գլխոյ (Հոռեկայ) վանքում, հետագայում տեղափոխուել անմատչելի ժայռերի ու անտառների մէջ կորած Զրվշտիկ վանքը, որը եւ սրբի անունով սկսել է կոչուել Եղիշառաքել (տեղի բարբառով):

Այս հինաւուրց վանքի տաճարի կողքին մի փոքրիկ մատուռ կայ, ուր ամփոփուած է Արցախ աշխարհի հզօր իշխողներից մէկը՝ Վաչագան բարեպաշտ թագաւորը: Այս հզօր թագաւորը բարեպաշտ է կոչուել հայոց Արցախ աշխարհում տարւայ օրերի թուով վանքեր ու եկեղեցիներ կառուցելու, դպրատներ ու դպրոցներ ստեղծելու համար, հայրենանուէր մի արարք, որոնք արցախցուն զինելով Գիր ու Հաւատքով, դարբերի մտնակուլ խաւարում նրա համար դարձան փրկութեան փարոս:

Սկսուել էր հայոց փորձութեան նոր Գողգոթան:

Շահումեանը ընկաւ, բայց չպարտուեց:

Ինքնապաշտպանութեանը զինուորագրուած շահումեանցիները, Շահէն Մեղրեանի ղեկավարութեամբ, կեանքի ու մահուան պայքար սկսեցին թշնամու դէմ, նրան հանգիստ չտալով հայրենի հողում:

Վրիժառուների ամէն մի օրը մի հերոսապատում դարձաւ, թշնամու ոտքի տակ հողը սկսեց այրուել:

Նրանք իրենց կեանքով էին հաստատում այն ամէնի համար, ինչ արել էին արդէն չրջանում:

Առանձնապէս աչքի է ընկնում վերինչէնցիների ջոկատը՝ Նովիկ Գիւլումեանի գլխաւորութեամբ (Շահէնի հօրական տատը վերինչէնցի Գիւլումեանցիներից էր): Հետախոյզները տեղեկութիւն են բերում, որ թշնամին մեծ խմբերով եկել, հանգիստ կերպով վրաններ է խփել Վերին Շէնի գեղատեսիլ վայրերից մէկում՝ «Պիհողում»:

Նովիկի գլխաւորութեամբ 17 հոգիանոց ջոկատը մեկնում է հայրենի գիւղ՝ պատժելու զաւթիչներին: Գիւլերը տեղ հասնելով, նրանք փոքր խմբերի են բաժանուում, ապա լուսադէմին, պայմանաւորուած ժամին յարձակում են եւ մի քանի ըսպէի ընթացքում ոչնչացնում վեց վրանների ելուզակներին: Թուրքերից այլեւս հետք չի մնում՝ բացի ⁸⁰ դիակերպից:

Գիւղերից կատարած անբանակ կողոպուտը չէր յագեցրել թուրքերի ախորժակը եւ նրանք որոշել էին հաւաքել նաեւ հայ գիւղացիների քրտինքով անեցրած բերքը: Դաշտերից բերքը հաւաքելու եւ տանելու համար տասնեակ գինուած աւարառուներ, մեծ թուով գինուորների հետ, բեռնատարներով նրանք շարժուում են Գիւլիստանի կարտոֆիլի դաշտերը: Պարտիզանները, որ աւալյրջօրէն հետեւում էին տարածքաշրջանում թշնամու ամէն մի տեղաշարժի, կուահում են հակառակորդի մտադրութիւնը: Ռազմական շտաբի պետ Սերգէյ Չալիանը մշակում է օպերացիայի պլանը, ծուղակ պատրաստելով թշնամու համար:

Դաշտում սկսում է կարտոֆիլի ցանքերի կողոպուտը: Եւ երբ գողացուած կարտոֆիլի պարկերը լցւում ու տեղափոխւում են բեռնատարների մէջ, հանդիպակաց բարձունքներից սկսում են որոտալ, թշնամու համար անսպասելի, կրակոցներ: Դաշտում մի անասելի վայնասուն է սկսւում: Շատերը չհասցրին անգամ ձեռք մեկնել դէպի սեփական գէնքը: Սկսւում է խուճապահար փախուստ, որը՝ ոտքով, որը՝ մեքենայով: Բայց փախուստի ճանապարհը մէկն էր՝ անտառի միջով դէպի Քարխափութ: Հէնց այստեղ էլ, ձորի մէջ, անտառում թաքնուած վրիժառուների ջոկատը նրանց էր սպասում:

Այդ օրը հատուկներ աւարառուներ միայն կարողացան փրկուել անտառների մէջ անյայտանալով, իսկ դաշտերում ու ճանապարհի վրայ մնում է ԾՁ դիակ:

Այսպէս քանի՛-քանի՛ անգամ թշնամին արժանի դաս առաւ, բայց պատերազմը մնում է պատերազմ: յանուն հայրենի հողի ազատագրութեան, իրենց մատաղ կեանքը զոհեցին վերիչէնցի Արտակ Հախունցը, շահումեանցի Ֆուրման Գրիգորեանը, գիւլիստանցի Շահէն Սէյրանեանը (Շահէնի մօրաքրոջ տղան), թալիշեցի Ալեքսանդր Մեծունցը, Հայկ Վերդեանը (վերիչէնցի), Սարգիս Ղազարեանը (բուզլուխից) եւ շատ շատեր՝ կատարելով իրենց պարտքը հայրենիքի հանդէպ, սեփական արիւնով գրելով Արցախեան հերոսամարտի մեր պատմութեան էջերը:

Ապաւինած հայրենի լեռնաշխարհի անառիկ կիրճերին ու անտառներին, Շահէնի ջոկատը, որ օրըստօրէ ստուարանում էր նոր վրիժառուների գալստեամբ, ձեռք բերելով մարտական փորձ ու հմտութիւն, դարձաւ թշնամու ահն ու սարսափը: Շահէնի գլխաւորութեամբ ջոկատը, յանդուգն ու անպարտելի յարձակումներով, շրջանի տարբեր վայրերում մեծ կորուստներ է պատճառում թշնամուն, այնուհետեւ Գիւլիստանից ու թալիշից: Թուրքերը առաձնապէս չէին ուզում հաշտուել Գիւլիստանի կորստի հետ: Եւ նրանք տանկերով եւ զրահամեքենաներով յարձակուում են գիւղի վրայ: Ազատամարտիկներն ստիպուած են լինում թողնել Գիւլիստանը եւ ապաւինել անանցանելի անտառների պաշտպանութեանը: Թշնամին գիւղ մտնելով, դաժան աւերածութեան է ենթարկում այն, քարը քարի վրայ չթողնելով:

Նրանք իրենց զայրոյթն են թափում այն գիւղի վրայ, որը շրջանում առաջինն էր ազատագրական պայքարի դրօշ պարզել, եղել Շարժման կենտրոն, արտաքին աշխարհի հետ կապի պահպանման միակ վայրը, գիւղ՝ որտեղից պաշտպանները զէնք ու զինամթերք էին ստանում եւ, վերջապէս, Գիւլիստանը անվեհեր հայրուկապետի՝ Շահէնի հայրենի գիւղն էր:

Գիւղում, հրետակոծութիւններից դեռեւս անմնաս էին մնացել մօտ 90 տներ, հոյակապ, հնադարեան եկեղեցին: Գազազած թշնամին հրդեհի է մատնում, թալանուած, բայց բոլոր կանգուն տները, պայթեցնում՝ եկեղեցին: Շահէնը շատ էր սիրում գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին, կառուցուած 1669 թ. եւ առաջին իսկ հնարաւորութեան դէպքում վերանորոգման ենթարկեց այն: Շրջանում ստեղծուել էր «Բերդ» միութիւնը, որի խնդիրներից հիմնականը շրջանի պատմաճարտարապետական նշանակութեան յուշարձանների վերականգնումը եւ պահպանումն էր: Շահէնը, իբրեւ յատուկ եռանդով առաջինը այս եկեղեցին վերանորոգման ենթարկեց: Եկեղեցին, շրջակայ գերեզմանոցով հանդերձ, պարսպապատուեց ու մետաղական ցանկապատի մէջ առնուեց, կառուցուեց կամարակապ դարպաս՝ զանգակատնով: Փոխուեց եկեղեցու ծածկի թիթեղը, ներսի տախտակէ յատակը փոխարինուեց քարէ սալերով: Եկեղեցու արեւմտեան ճակատին կրկին վեր խոյացաւ հայ հոգու ու հաւատքի խորհրդանիշը՝ բրոնզափայլ խաչը: Շահէնը 60 տարի պահեստի վերածուած եկեղեցին դարձրեց շրջանի առաջին գործուն եկեղեցին: Եկեղեցու բացմանը հրաւիրուեց եւ այն կատարեց Արցախեան թեմի առաջնորդ Պարզեւ սրբազան Մարտիրոսեանը: Նոյն օրը սրբազանը բազմաթիւ մեծ ու փոքր գիւլիստանցիների մկրտեց՝ սուրբ հաղորդութիւն բաժանեց:

Եւ ահա անարգ թշնամին, որ միայն աւերել գիտէր, կործանում է այդ գեղեցիկ ճարտարապետական յուշարձանը, մի անգամ եւս հաստատելով մեծ ֆրանսիացու մարգարէական խօսքերի ճշմարտութիւնը՝ «Այստեղով թուրքն են անցել»:

Սակայն ազատամարտիկները անպատիժ չեն թողնում թըշնամու այս բարբարոսութիւնը: Հետախուզութեան միջոցով յայտնի է դառնում, որ թշնամին մտադրուել է ամրանալ Գիւլիստանում եւ անտառները մաքրել պարտիզաններից: Ազատամարտիկները թշնամուն սպասում են Գիւլիստանի ճանապարհին՝ Խարխափութի ձորում:

Դարանակալ ազատամարտիկները դիպուկ կրակով շարքերից հանում են մեքենաները եւ ոչնչացնում 44 սպայ ու զինուոր: Կենդանի մնացածները թողնում են ամէն ինչ եւ խուճապահար ետ փախչում: Շահէնի պարտիզանական ջոկատի մարտիկները այնուհետեւ թշնամուն լաւ ջարդ են տալիս Շահումեանի եւ Մարտակերտի շրջանների սահմանում՝ Թալիշ գիւղի մօտ, թըշ-

նամին այստեղ եւս տասնեակ զոհեր է տալիս եւ խուճապահար փախչում:

Օրերի հոլովոյթը մօտեցնում էր հատուցման ժամը: Շահէնը վստահ էր իր ժողովրդի ազատագրական պայքարի յաղթական աւարտին: Հաւատում էր, քանզի լինելով կամային դեկավար, ունենալով կայուն համոզմունք ու ինքնավստահութիւն, նա կարողանում էր ապագայ յաղթանակի հաւատով տոգորել եւ իր ազատամարտիկ-համախոհներին, իրեն յատուկ ունակութեամբ ոգեւորել նրանց, տանել իր ետեւից: Նրա պարզ, ընկերական ու անմիջական քննադրութեան համար մարտիկները սիրում ու հաւատում էին նրան ու պատրաստ էին նրա հետ յաղթահարել ցանկացած խոչընդոտ ու դժուարութիւն:

Շահէնը մարդկանց գրաւելու, համոզելու եւ իր յետեւից տանելու զարմանալի ունակութեամբ էր օժտուած, միաժամանակ միշտ հանդէս բերելով քննադրութեան նոր, անյայտ, բայց եւ մարդկանց գերող գծեր: Շահէնը կհանքում միշտ էլ սիրել է ընկերական լայն շրջապատը, շփումը տարբեր մակարդակների ու կրթութեան տէր մարդկանց հետ, ցուցաբերելով ինքնատիպ վարուելակերպ ու իւրայատուկ մօտեցում: Նա ուր էլ աշխատում էր՝ հանդէս էր գալիս որպէս նախաձեռնող, գործունեայ, իրատես ու, ամենագլխաւորը՝ ազգային շահերին նուիրուած անձնաւորութիւն: Շահէնի համար ազգային շահը վեր էր ամէն մի այլ շահից, այն իւրայատուկ պաշտամունքի հասած զգացում էր: Նա հայրենի հողի ազատագրութեան սրբազան պայքարի դրօշը պարզեց այն հաստատ համոզմամբ, որ ազատութիւնը ձեռք է բերուած պայքարով, որ սուրբ ազատութեան ճանապարհին կարող է եւ զոհուել, բայց գիտէր եւ հաւատում էր, որ՝

Ամենայն տեղ մտիղ մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնի,
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

Ու զոհուեց: Զոհուեց, ինչպէս արծիւը: Զոհուեց հայրենի երկնքում, մի վերջին անգամ իր արծուային հայեացքով ընդգրկելով հայրենի բնաշխարհին չքնադազեղ համայնապատկերը: Գնաց խառնուելու մայր հողին, գնաց անմահութեան:

Ասում են՝ հերոսի մահը նման է արեւի մայրամուտին: Մայր է մտնում, բայց վերստին յառնում է իր ժողովրդի հերոսական պատմութեան էջերում անմահութեան լուսապսակով, որպէս իր ժողովրդի ոգու եւ հաւատքի խորհրդանիշ, որպէս սուրբ նահատակ, որպէս մեր յարատեւութեան առհաւատչեան:

Մ. ԶԱՐԻՖԵԱՆ**ՀՍՈՒՄ**

Քի՛չ մըն ալ հսկեմ, գիտեմ, կը լուսնայ.
 —Դուրսը լուսնկայ գիշեր է խաղաղ—
 ճրագիս բոցը շուտ-շուտ կը ցածնայ,
 Քի՛չ մըն ալ հսկեմ, գիտեմ, կը լուսնայ...

Ինչո՞ւ այս գիշեր հսկումն այս յամառ.
 —Դուրսը լուսնկայ գիշեր է խաղաղ—
 Աչքերըս կ'այրին, միտքըս չի կենար,
 Ինչո՞ւ այս գիշեր հսկումն այս յամառ...

Բիւր անգամ չըսի՞ թէ ա՛լ չեմ սիրեր.
 —Դուրսը լուսնկայ գիշեր է խաղաղ—
 Հոգիիս վրայ սեւ քող եմ ձգեր,
 Բիւր անգամ չըսի՞ թէ ալ չեմ սիրեր...

Բայց ամէն անգամ որ այսպէս լռին
 Դուրսը լուսնկայ գիշեր է խաղաղ՝
 Միտքըս չի՛ կենար, աչքերըս կ'այրին,
 —Ահ, յիշատա՛կը այն խոշոր ժայռին...

ՄԵՆԸ ԿՈՒ ԳԵՅ...

Հեւքը կուրծքիս տակաւ տակաւ կը շատնայ.
 Մա՛հը կու գայ իր արծաթէ մանգաղով.
 Երկո՛ւր քրնար, դէմ գանք անոր նո՛ր տաղով,
 Նա արքա՛ն է արքաներուն, մե՛ծ է նա...

Տե՛ս, իմ քրնար, ոսկին շուտով կը հալի
 Սա իրիկուան երանգներուն. ահ, արդէն,

digitised by A.R.A.R.@

Տե՛ս, գիշերը կ'առաջանայ յամբողջն՝
Հանդերձանքը հագած իր է՛ն թախծալի...

Եկո՛ւր, նստինք սա ծառին տակ քեզի հետ.
Աս այն ճամբան է ուրկէ Սէ՛րը կ'անցնի՝
Երբ արշալոյսը նո՛ր է որ կը ծընի,
Ու Մա՛հը՝ երբ կ'ըլլայ երազը անհետ...

Ու երգէ՛ երգ մը բառերով սառույցէ.
Ցուրտ ու խորո՛ւնկ, ինչպէս երկինք մը ձմրան՝
Ուր լոկ քանի մը սեւ թռչուն կը սուրան.
Կ'ըսեն թէ Մահը չ'ախորժիր շատ ցոյցէ...

Ա՛հ, լոկ երգէ Արհամարհա՛նքը շքեղ,
Զոր ունեցանք ցաւին համար այս կեանքին,
Եւ թէ ինչպէ՛ս չհաւտացինք երկընքին՝
Ուր կարդացինք Սո՛ւտը ոսկի եւ սհեղ...

ՈՐՈՇՈՒՄ

Ոչ իսկ հառա՛չ մը հանել
Ճամբուն վրայ այս անել.

Հրամայել որ ցամքի՛
Վերջին կաթիլն արցունքի.

Ո՛չ ոքի ձեռք երկարել
Որ գայ հրդեհն այս մարել.

Գիշերին մէջ, լուռ, անտես,
Դիտել հեռո՛ւն, կուռքի պէս.

Դիտել ծովափն ուր այնքա՛ն
Աստղեր սրտէս դուրս ինկան.

Ու ժա՛յուն այն ծեր՝ ուր հոգիս
Վարդի մ'համար լքեց զիս...

Յետոյ ժպտիլ ու քալել
Ճամբուն վրայ այս անել:

ՅՈԳՆՈՒԹԻՒՆ

Թախիծ մ'անհուն
Մըտածումիս մէջ կը սուսի այս գիշեր...
Այս իրիկուն,
Վարդերուն վրայ, արտասուքս ի՛նչ անոյշ էր...

Կը քընանան
Սէրերս, յոգնած, Պատրանքի մե՛ծ լըճին վրայ...
Մութ, անսահման
Հըպարտութիւն մ'անոնց վերել կ'աղեղնայ...

Ժըպտով մը լայն
Կը մըտածեմ երազներուն ու կեանքին...
Հո՛վը աշնան.
Դուրսը, մութին, ծառերն հարկաւ կը կքին...

Անո՛ւրջ, անո՛ւրջ.
Աստղե՛րն էին որ մտածումս կ'օրրէին...
Լամբարիս ջուրջ
Յայգաթիթե՛՛ո մ'ունիմ հիմա լոկ մըթին...

ԵՂԵԻՆՆԵՐԸ

Անտառին մէջ: Որքա՞ն ատեն է հոս եմ...
Եղելիներն ահա ամէնքը կ'երգեն.
Երա՞վ մ'արդեօք: Իրաւ, ինչո՞ւ կ'արտասուեմ:
Բայց այս կատարը հեռու չէ՛ երկընթէն...
Եղելիները կ'երգեն...

Եղեւիններն ահա ամէնքը մութ են:
Ասո՞նց ալ սիրտն, իմինիս պէս, կը նայի
Որ յայտնուի՝ Ան՝ որ կեանքի անդունդէն
Կ'անցնի մէ՛կ հեղ: Ահ, այդ ճամբա՛ն ամայի...
Եղեւինները մութ են...

Եղեւիններն ամէնքը մէկ կ'աղօթեն:
Ահ, բապուկներն այդ երկարած անհունին...
Կ'իջնեմ խորունկն իմ հոգիիս՝ որ արդէն
Տաճա՛ր մ'է հին: Տատրակներ հոն կը մեռնին,
Ի՛նչ խոր գիշեր: Սիրտըս կ'այրի՛ կարօտէն...

Եղեւիններն ամէնքը մէկ կ'աղօթեն...:

ԵՐՏՈՒԵՐՏԵՆՔ

Ցաւիս խորերէն, տե՛ս, ճակատագիր,
Անսահման ծիծաղ մ'ունիմ քեզի դէմ:
Գիտցի՛ր որ նորէն քեզ կ'արհամարհեմ,
Չկարծես թէ ա՛լ զիս կործանեցիր...

Ի զո՛ւր կը թափես մոխիր սըրտիս վրայ:
Ճառագա՛յթ կայ հոն՝ իջած անհունէն...
Զոհերն հարուածիդ լոկ ոսկորներս են,
Անոնց պէտք չունի՛ միտքս ոտ սուրայ...

Պայծա՛ռ է ճակատս՝ արշալոյսի պէս:
Հոգիս՝ միշտ աղուոր, միշտ հպարտ, ժպտուն՝
Դեռ կը սաւառնի՛ անհունէ անհուն...

Ի զո՛ւր սըրտիս վրայ մոխիր կը թափես:
Աստուածներ՛ր կան հոն՝ իջած երկընքէն:
Ցաւիս խորերէն, տե՛ս, անոնք կ'երգե՛ն...

ԼԵՌՆԵՐՆ ԻՄ ԵՐԱԿԻՍ

Հոգիս գրկած թեւերու մէջ, ձեզի՛ կու գամ,
 Ձեզի՛ լեռներն իմ երապիս, նո՛ր երապիս-
 Հոգիս պճնած գեղեցկութեան շքեղանքով՝
 Ձեզի՛, լեռներն իմ երապիս, ձեզի՛ կու գամ...

Տեսէ՛ք ինչպէս բեռնաւորուած եմ գանձերով.
 –Աստղերու խոր անդորրութիւնն աչքերուս մէջ,
 Դէմքիս վրայ ապնուական թախիծը լուռ վիշտերուն,
 Հպարտ ու ցուրտ ճակտիս մթին ծալքերն ի վար՝
 Մահուան խորհուրդը հեշտանքի մը պէս փոռած,
 Տիեզերքը հեգնել գիտցող պզտիկ ժպիտ մ՛ալ շրթունքիս,
 Ահա, ա՛յսպէս կու գամ ձեզի՛...


Լո՛ւռ վիշտերէն ծիրած տժգոյն այտերով,
 Հին երապիս գիշերի գոյն աւերակներն հոգիիս մէջ,
 Բայց աստղերուն անդորրութիւնը աչքերուս՝
 Ահա ա՛յսպէս կու գամ ձեզի,
 Ձեզի՛ լեռներն իմ երապիս, նո՛ր երապիս,
 Թեւերուս մէջ գրկած հոգիս...

Ի՛նչ հեշտութիւն է այս փոռած՝ ճամբուդ վրայ-
 Կողերդ ի վեր կը մագլցիմ առանց հեւքի,
 Մայրամուտի թէ՛ լոյս, թէ՛ մութ շողերուն մէջ կարծես հալած...

Հոգի՛, հոգի՛ եմ համակ,
 Կամ մեղեդի մը ներդաշնակ՝
 Որ երկրէն վեր, վե՛ր աստղերուն կը ձգտի՛...
 Ինչքա՛ն հեռու են, ինչքա՛ն օտար, ինչքա՛ն վար՝
 Հողն ու դողը աշխարհի...

Շշուկ մը իսկ չի հասնիր հոս, վարի հսկայ ժխորէն,
 Այնքա՛ն վե՛րն եմ...
 Բայց դեռ այնքա՛ն, այնքա՛ն վե՛րն է
 Վարդագոյն ձիւնը կատարիդ, օ՛ բարձունքն իմ երապիս,
 Նո՛ր երապիս...

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ



ՆԱԵԻ ԱՅՍ ՊԱՊԱԿԸ...

Արուեստագէտ ամուսնորդ, մտաւորական պատրաստութիւններու տէր ու բանաստեղծական փորձերու հեղինակ Մարի Ռոզ Ապուսէֆեան շարք մը բանաստեղծութիւններու հետ «Բագին»-ին դրկած է հետագայ էջերուն տրուած գրութիւնը, ուր խտացուած կը գտնէք վաղամեռիկ բանաստեղծ Մատթէոս Զարիֆեանի անձէն ու գործէն բխող անթառամ տպաւորութիւնները:

Ինչպէս սպասելի էր, Զարիֆեանի ծննդեան 100ամեակը աննկատ չանցաւ, մշակութային մեր միութիւններէն ոմանք ու մամուլի կարգ մը անդամներ անդրադարձան անոր կեանքին ու գործին եւ ուրիշներ անպայման պիտի ձեռնարկեն նոյնը, թարմացնելով եղերաբախտ բանաստեղծին յիշատակը ու թարմանալով մեր գրականութեան բերած անոր իւրայատուկ նպաստներով նրբին զգայնութիւններով, սէրերով, ցաւերով, հակումներով, հրաշայրքներով, կասկածներով ու «արհամարհանք»ներով:

Կայ այն վարկածը, ըստ որում Զարիֆեան իր կեանքի վերջին երեք-չորս տարիներուն ու յանկարծական պոռթկումով մը մուտք գործած է գրականութեան մէջ: Չափով մը ճիշդ է ատիկա, բայց նոյնը կարելի չէ ըսել մտաւորական իր կեանքին մասին, մշակոյթ ամբարելու իր բնական հակումին առնչութեամբ: Իր կեանքի ամէնէն դժնդակ տարիներուն անգամ, թուրք բանակին իր պարտադիր ծառայութեան ընթացքին, ինչպէս նաեւ մահուան մահիճին մէջ՝ ան երբեք գիրքը ձեռքէն վար չձգեց, եւ ի՛նչ գիրք ու գիրքեր, օրինակելի նո՛յնիսկ մինչեւ այսօր, գործք մեծաց.— Մեծարեաց ու Վարուժան, Շէքսպիր ու Ուալյոտ, Պալլաք ու Հիւկո՝ իրենց լեզուներով, Տոստոեւսկի ու Թոլսթոյ եւ ուրիշներ:

Մատթէոս Զարիֆեանի բանաստեղծական հրապոյրին հետ՝ սիրելի է ուշադրութեան յանձնել մեծերուն մեծագործութիւններով արբենալու անոր նաեւ այս պապակը, որ չափով մը ուրուագրուած է արդէն Ապուսէֆեանի գրութեան երկայնքին...

Մ. Ռ. ԱՊՈՒՍԷՅԵԱՆ

ՀՈԳՈՒ ԵՒ
ԲՆՈՒԹԵԱՆ
ՆՈՒՐԲ
ԵՐԳԻՉԸ



«ԱՅՍ ԱՆՆԱԽՇՆՔԱՅ ԱՂԵՏԸ ՊԻՏԻ ԸՆԷ
ՄԵՐ ՅԵՂԸ ԱԻԵԼԻ ԿԵՆՍՈՒՆԱԿ,
ԱԻԵԼԻ ԼԱՅՆԱՀՈԳԻ ԵՒ ՄԱՆԱԻԱՆԴ՝
ԱԻԵԼԻ ՄԵՍ ԲԱՆ ԵՐԲԵԲ»

ՄԱՏԹԷՈՍ ԶԱՐԻՖԵԱՆ

Այս տարի լրացաւ արեւմտահայ մեր քնքուշ բանաստեղծներից մէկի՝ Մատթէոս Զարիֆեանի ծննդեան 100 եւ մահուան 70 ամեակները:

Զարմանալի հոգու խառնուածքով, անկեղծ ու խորը գունատրու- մով այս գրողորիկ բանաստեղծին քչերը գիտէին, բայց նրանք՝ ովքեր ծանօթ են իր նորր սողերին, անկարող են չկապուել սիրով ու ցաւով իր շինջ աշխարհը վերարտադրած այս բանաստեղծին:

Թոքախտով տառապած, իր ճակատագրի դէմ կռիւ տուած, շՆՐ- ջապատի հանդէպ զգայուն, ազգի հանդէպ պատասխանատուութեամբ լեցուն այս երիտասարդը ակնթարթի կարճութեամբ եկաւ ու անցաւ մեր գրականութեան դարեր ձգտող ժամանակահատուածում, իր ուրոյն անուան ու ոճը դրոշմելով այնտեղ:

Մի առիթով մեր գրագէտներից՝ Ա. Ծառուկեանը ասել է.— «Հայ բանաստեղծը երկու թշնամի է ունեցել՝ թուրքը եւ թոք- քախտը»:

digitised by A.R.A.R.@

Այս երկուսն էլ իրապես վերաբերում են Զարիֆեանին, որովհետև թուրքական բանակում ծառայելիս նա վարակում է թոքախտով և որը դառնում է իր այդքան երիտասարդ մահուան պատճառը:

— «Եթէ մեռնիմ, օտար աստղերու տակ, հեռուն, այն ատեն՝ քանի մը արցունք բաւ է ինձի: ... Բայց եթէ հողակոյտս մօտ ըլլայ քեզի, կ'ուզեմ, որ ամէն գարունի, գոգ-գոգ լելակ բերես ինձի. շատ կը սիրեմ ես այդ ծաղիկը... լելակի գոյն ունէին աչքերը այն երկու աղջիկներուն, որ սիրեցին զիս ու տառապեցան, եւ որոնց սիրոյն արժէքը շա՛տ ուշ գնահատեցի ես, գնահատեցի միայն այն ատեն, երբ մէկ ոտքս գերեզման էր արդէն:

«Արցունք կամ լելակ, շնորհաս:

• Այս բանաստեղծական վերջին ցանկութիւնը կտակն էր 30 տարին դեռ նոր բոլորած երիտասարդ ու նուրբ մի ստեղծագործողի, որի մուտքով արեւմտահայ բանաստեղծութիւնը հարստացաւ մի նոր երանգով ու շնչով և որը մինչեւ օրս էլ յայտնի է զարիֆեանական անվանումով: Գրականութեան մէջ այս եզակի կտակը ինքնին պերճախօս վկան է այդ տողերը շարադրող անձի հարուստ էութեան: Կտակը սովորաբար առարկայական, շօշափելի իրերի բաժանման մասին է լինում, որը ո՛չ միայն չի յիշատակում, այլև ամբողջովին բացակայում է բանաստեղծութեամբ շարադրուած այս տողերում, իր տեղը զիջելով սիրառատ, փխրուն հոգու ամենապարզ ցանկութեան:

Առհասարակ քչերին է վերապահուած ծնունել բանաստեղծ, տառապել բնութեան պարզեւած յորդ զգացողութիւններին, այրուել հոգու հրդեհով, ձգտել անհունին, անչափ նեղ զգալով շրջապատող միջավայրը: Զարիֆեանի ասորած կարճ կեանքի իւրաքանչիւր վայրկեանը խտացած ասորում, տառապանք ու պայքար է ճակատագրական հիւանդութեան ճիրանում կամաց-կամաց հանգչող բանաստեղծի համար, որը յանձնել է թղթին որպէս բանաստեղծութիւն, գրառում, նամականի, ուր ամբողջովին բացայայտում է իր փոթորկոտ անձն ու հոգին:



Մ. Զարիֆեան՝ Պերպլեան զարծարանէն նոր շքանաւարս (1913):

Մ. Զարիֆեանը ծնունդ էր Պոլսում՝ 1894 թուականին, նիթական սիջակ կարողությունների տեր ընտանիքում: Իր գիտակցական ողջ կեանքը նա անցկացնում է Սկիտարում: Ուշադրութեան է արժանի այն փաստը, որ 17 տարեկանին, Ամերիկեան վարժարանի աւարտականին, նա փայլուն ուսանող էր ո՛չ միայն գիտութեան, լեզուների, գրականութեան ասպարեզում, այլև փայլուն մարզիկ՝ օլիմպիական հանդէսների մրցանակակիր: Սակայն պատերազմը, ինչպէս միշտ, այս անգամ էլ իր ատերն է գործում այս առողջ ու տաղանդաւոր հայ պատանու կեանքում:

Շուտով սկսում է Առաջին աշխարհամարտը եւ գունդ երազներով, ստեղծագործական մեծ ձգտումներով լեցուած այս պատանին յանկարծ զօրակոչում է թուրքական բանակ, որը դառնում է ճակատագրական թե՛ իր ֆիզիքական եւ թե՛ հոգեկան կառոյցի համար: Ինչպէս ասացի, թրքական բանակում ծառայելիս է, որ նա վարակւում է թռչախտով եւ ինքն էլ, գուցէ տարիքի բերումով, չգիտակցելով այդ հիւանդութեան մահացու լինելը, իր երիտասարդ ու անհանգիստ փոթորկումներով տարած կարծես ատելի է արագացնում իր մահը: «Պատերազմը կործանեց զիս», այսպէս է յայտարարում նա:

Զինադադարից յետոյ աշխատում է անգլիական բանակում որպէս թարգմանիչ: 1919-1921 թուականներին Պերպլիեան վարժարանում դասաւանդում է մարմնամարզութիւն ու անգլերէն: 1924 թուականին, դեռ նոր երեսուն տարին բոլորած՝ նա մահանում է:

Իր անձի չափ համեստ է Զարիֆեանի թողած գրական ժառանգութիւնը: Ընդամենը երկու տաղարան՝ «Տրտմութեան եւ խաղաղութեան երգեր» եւ «Կեանքի ու մահուան երգեր» վերնագրերով, որոնք հետագայում, իր մահից 32 տարի անց, տպագրուեցին որպէս մի ամբողջական գիրք՝ իր օրագրի եւ նամակների պահպանուած էջերով:

«Ես ունեմ ծայրայեղօրէն վերացական, երազկոտ, քիչ մը խենթով եւ շատ, շատ արկածախնդիր պոհեմ հոգի մը: Մէկ խօսքով՝ ես անորմալ տղայ մըն եմ»: Իր բնորոշմամբ այս «արկածախնդիր ու անորմալ» տղան ուշ է սկսում բանաստեղծութիւններ գրել, 20 տարեկանին, երբ մահացու հիւանդութիւնը արդէն հաստատուն տեղն է գրաւում մարզիկի իր մարմնում, երբ կենսուրախ ու շենշող իր հոգուց միայն ստուերն է մնում:

Հիւանդութեան դէմ պայքարի միակ միջոցն ու սիտիանքը դառնում է գրելը: Իր պարզ կաճառորուած սենեակում, մի ուտքը կոտորուած գրասեղանի առջեւ նա իր ապրումներն ու մտածումները դարձնում է բանաստեղծութիւն, օրագրի գրառում ու նամականի, ուր ամբողջովին բացայայտում է իր փոթորկոտ անձն ու հոգին:

Ծնողները հնարատրութիւն չեն ունենում լուրջ բուժման ուղարկելու իրեն եւ ինքն էլ իր քայքայուող առողջութեան պատճառով չի կարողանում յարմար աշխատանք գտնել, ճիշտպէս միշտ կախման մէջ

է լինում իր շրջապատից: Իր զգայուն հոգին մեծ ցաւ է զգում, երբ յատկապէս փոքր բոյրը աշխատում է, որ իր բժշկական ծախսերը հոգայ: «Երբ փոքրիկ քոյրիկս՝ Լիւսին, առտունները կանուխ պայուսակը անութիւն տակ գործի կը մեկնի, դաշոյնի պէս սիրտս կը խոցուի: Ես օգտակար չեմ կրնար ըլլալ ծնողքիս, ընդհակառակը, ծանր բեռ մըն եմ իրենց վրայ»: Կիրթ ու պատասխանատու անձ լինելով՝ նրան տանջում է իր «բեռ լինելու» պարագան, տանջում է հասարակութեան համար իր անօգտակարութիւնը եւ միակ էլքը գտնում է ինքնասպանութեան մէջ: Ինքնասպանութեան մի քանի անյաջող փորձերից յետոյ նա ինքն իրեն յանձնում է ճակատագրի քմահաճոյքին եւ փորձում ծայրապէղ միջոցներով՝ անքնութիւն, գիշերներով ծովի վրայ ուժասպառ թիավարել մինչեւ լուս, ծիւել, սիրել, տառապել այս ձեռով արագացնել իր մահը, որն ի վերջոյ յաջողում է:

«Ինչո՞ւ այսպէս եղաւ...,- յանախակի այս հարցումն է, որ լսում ենք իրենցից,- ինչո՞ւ աստղ մը չծագեցաւ, որ ինձի համար ըլլար, իմ աստղս, որուն լուսը իմ բիբերուս մէջ միայն պատկեր ու խորհուրդ ըլլար...»:

Անհատատալի նորը հոգու տէր այս բանաստեղծը զարմանալի խորհրդով կապուած լինելով իր շրջապատին, յատկապէս իր մօրը, որն արդէն մի մեծ ու կենդանի վիշտ ունէր իր կրօնի տակ, իրենց երիտասարդ եղբօր մահը, զարմանալի զգուշութեամբ փորձում է դրանց չվնասել, իր մահով նոր վիշտ չպատճառել իր սիրելիներին: Իր օրագրում նա պատկեր է գրում՝ «Ահաւոր չարչարանք է այս, հոգիներու հետ ունեցած կապերս քակել ջանալը: Մայրս ...էն սուրբ պատկերն է այս, զոր հոգիս կը պահէ դեռ ապրելու համար»...

Տաս տարուայ ստեղծագործական հատուած է ընդգրկում Ջարիֆեանի կենսագրութիւնը, որը կարծես այնքան էլ մեծ տարածք չէ որպէս ստեղծագործող ինքն իրեն հաստատելու համար, բայց շնորհաշատները միշտ էլ բացատրութիւն են կազմում: Ջարիֆեանը այդ բացատրութիւններից է: Նախքան հիւանդութիւնը՝ շքեղ անունով են որակաւորել իրեն, իր արտաքին եւ ներքին շէնշող յատկութիւնների համար: Իր բանաստեղծութիւններն էլ շքեղ ու խորն են, ինքնատիպ ու անկեղծ:

*Գիտէ՞ք որքան թախիծ կայ
Հոգիին խորն այն տղուն.
Մի դպիք, թող քրքջայ,
Խենթին քրքիչն է բեղուն...*

Դուրեան լիջեցնող իր այս տողերի մէջ սակայն մի իւրապատուկ շունչ կայ, մի մեծ ցանկութիւն խօսելու, իր սիրտը անկեղծօրէն պարպելու:



Մ. Զարիձեան՝
պատերազմի նախօրեակին:

Աերն է իր բանաստեղծութիւն-
ների առանցքը՝ բնութեան, մարդ-
կային հոգու տարբեր երեւոյթների՝
յատկապէս թախծի ու վշտի, սիրոյ
դաժանութիւնը դեռ շվայելած դեռա-
հաս հոգիների անարատութիւնը պահ-
պանելն է իր մտատանջութիւնը:

*Եթէ լսէր, թէ ո՛չ մէկ սէր,
Այդ անդունդին մէջ կը շնչէր՝
Հէք պզտիկը չէ՞ր հառաչեր...*

*Ուստի եղբօր մը պէս ըսի,
Թէ լուսնին տակ մարդ կը մտի-
«Գնա՛, գնա՛, ննջէ՛» ըսի*

Յետոյ գացի հեռուն լացի...

Նա ապրում էր մի ժամանակաշրջանում, երբ մեր բանաստեղծու-
թեան հսկաներն էին մթնոլորտը հարստացնում՝ Դուրեան, Վարուժան,
Սեւակ, Սիամանթօ, Մեծարեանց եւ ինքն էլ տպատրուղ հոգի լինելով
չէր կարող անմասն մնալ ազդեցութիւններից:

Նա չի թաքցնում Մեծարեանցի ազդեցութիւնը, չի թաքցնում իր
խոր սէրն ու հիացումը նրա հանդէպ— «Ինչ հոգի՛ սա Մեծարեանցը»,
հիացումով գրում է նա «Միաժան»-ում՝ Մեծարեանցի ամբողջական
բանաստեղծութիւնները կարդալուց լստոյ եւ այդ ազդեցութեան տակ
փորձում է հասնել նրա երաժշտական պատկերադրութեանը, նրա
խօսքի եթերայնութեանը: «Այդ յոյսին տակ, սուրբի պէս, ծունկի կու
գաս, կ'աղօթես»— ահա նրա ակնածանքը Մեծարեանցի հանդէպ: Առա-
ջին տպատրուիւնն այն է, որ տառապանքն է անվերջ իշխում իր տո-
ղերում, բայց այնքան բնական ու այնքան սահուն, առանց անելորդ
ճիգի ու քառերի, որ չի ճնշում ու յոգնեցնում ընթերցողին: Ընդհակա-
ռակը՝ իր իրաքանչիւր տողը կարծես օգնում է քո ցաւի բացուելուն,
թեթեւացնում է քեզ ու հոգով անմիջապէս կապում ես հիւանդութեան
դէմ կռիւ տուող այս ամուր հոգու տէր բանաստեղծին: Նա կուում է
Աստծոյ հետ, կուում իր ճակատագրի ու իրեն խորտակող բոլոր այն
վիճակների դէմ, որ պատճառ դարձան իր կործանման: Ինքը համոզ-
ւած է իր յաղթանակի մէջ, նա հասել է հոգու բացարձակ տիրապետ-
ման ու որքան մարմինը հիւծում է, այնքան հոգին է ամրանում:

*Ի զո՛ւր կը թափես մտելիք սըրտիս վրայ,
ճարտասա՛ր, իմ հաս Առ. Ահիլ, Օրէն իմած...*

*Ձոհերն հարուածիդ լոկ ոսկորներս են,
Անոնց պէաք չունի միտքս որ սուրայ...*

Այսպէս է զայրացած նա դիմում Աստծուն:

Ջարիֆեանի իրայատկութիւնը իր բանաստեղծութիւնների երկ-
խօսութեան ազատ ձեւի մէջ է: Դժուար ու բանաստեղծութեան երա-
ժըշտութիւնը կտրող այս ձեւը շատ քշերին է յաջողում, բայց Ջարիֆե-
եանի մօտ այն հասնում է կատարելութեան, յատկապէս իր «Խենթը»
պոեմում: Ցաւօք, ոչ մեծ ճանաչում գտած այս գործը բանաստեղծա-
կան մի հրաշալի գոհար է՝ քնքշութեան ու խորութեան բոլոր ծալքերով
լեցուն:

Ինքնակենսագրութեան ու ինքնաբացայայտման պոեմ է այն, ուր
բանաստեղծը իրեն յատուկ պատկերաւոր թրթիռով պատմում է իր ա-
ռաշին սիրոյ խորտակուած խաթկանքների մասին, սիրոց տառապող
իր զգայուն հոգու ապրումների մասին: Անհոգ թափառումներով ու իր
անմեղ երազանքներով ապրող պոետը սիրահարում է խելակորոյս
սիրով, բայց իր նիւթական անապահովութիւնը նրան ստիպում է
ես կանգնել իր ամուսնութեան մտադրութիւնից՝

—Բայց ես ուրիշ ոչինչ ունիմ,
Ես գիւղին մէջ աղքատ քերթող մ'եմ,— ըսի:

Եւ այս աղքատ քերթողը գերադասում է տառապանքը ուրիշին
իր անկարողութեամբ դժբախտացնելուց եւ, ինչպէս հետագայում վկան
ենք լինում, նա մինչեւ իր մահը անկարող է լինում մոռանալ իր սիրոյ
առաջին կրակը խլած այս էակին, որին նուիրում է մի շարք բանաս-
տեղծութիւններ:

Եթէ այսօր Ջարիֆեանի շքեղ բանաստեղծութիւնները շատերին
են ծանօթ, դժբախտաբար նրա օրագրային գրառումներն ու նամակնե-
րը մնացել են ստուերում, որոնք իրապէս կատարեալ ու յղկուած ըս-
տեղծագործութիւններ են, իրենց եզակիութեան մէջ՝ անմրցելի: Ցատ-
կապէս ուշադրութեան է արժանի իր զինուորական ծառայութեան
տարիների օրագրութիւնը, որը միաժամանակ փաստագրական պատկեր
է մի ամբողջ ժամանակաշրջանի, մի ամբողջ պետութեան՝ ի դէմս
թուրքականի: Անկարելի է առանց յուզումի կարդալ 24ամեայ երիտա-
սարդի ապրումներն ու մտածումները: Ջարգացած, համաշխարհային
գրականութեանն ու արուեստին քաջատեղեակ, Օռպենական երաժըշ-
տութեամբ ապրող ու շնչող այս խառնուածքը խեղդում է թուրքական
բիրտ ու կուպիտ, անմարդկային միջավայրից: Եւ ստիպուած յաճախակի
զինուորական ծառայութեան օրագրերը կախտելով՝ նա փախչում է

դէպի մենակութիւն, բնութիւն, ազատութիւն, դէպի ներքին խորհրդի ունկնդրում, որին հետեւում են թուրքական բանտային դաժան պատիժները ցուրտ, սառնամանիքային առաօտներին, մարդկային ստորացման աննկարագրելի միջոցներով: Եւ ի բողոք այս ամէնին իր ինքնական սովամահութիւնը: Օրերով ոչինչ է ուտում, բացի երբեմնի գրպանում թաքցրած իր շատ սիրած սերգելիքը: Այստեղ՝ բանակում, սակայն նա ձեռք է բերում հոգու ամրութիւն, եւ որքան թուլանում է ֆիզիքապէս, այնքան ամրանում է հոգիով:

«Ե՛ծեցցին, անարգեցին, չարչարեցին — օդէ, ջուրէ, սընունդէ զուրկ մնացի, ցուրտ տախտակներուն վրայ անցուցի գիշերներս, շատ անգամ անքուն: Դէմքս տխմարի արտայայտութիւն մը առաւ, եւ սակայն, երբե՛ք չկորսնցուցի անհատականութիւնս: Զիս ծեծող չաւուշներուն երեսը կը նայէի հանդարտ, հրճուելով անոնցմէ ունեցած բարձրութեանս վրայ»:

Այսպէս է գրում նա իր օրագրութեան մէջ:

Մեր գրականութեան մէջ ընդհանրապէս շատ թոյլ տեղ է գրանում նամակների կամ օրագրութիւնը: Զարիֆեանը իր օրագրութեամբ ու նամակներով մի նոր էջ բացեց մեր գրականութեան այդ թոյլ թելի մէջ, անմիջապէս հարստացնելով այն իր բարձրարժէք գործերով:

Իր օրագրութիւնը ու նամակներին կատարեալ, յղուած ստեղծագործութիւններ են, խորը ասելիքով ու բանաստեղծական շնչով համեմունած:

Ճակատագրօրէն երկու դաժան բախտ էր իրեն վիճակուած՝ իր հիւանդութիւնը եւ իր ժողովրդի կոտորածի ժամանակ նոյն թշնամու բանակում ծառայելը: Աւելի ահաւորը՝ իրրեւ թարգմանիչ անգլիական բանակի սպաների հետ կոտորում, ամայացած գաւառների մէջ շրջելն ու այդ ահաւոր ողբերգութեան պատկերը իրրեւ սուկ թարգմանիչ ընդունելու պարտագրանքի ծանրութիւնն էր: Անգլիացի իր սպայի հրամանով նա թաքցնում է իր հայ լինելը, ուստի չի կարողանում ազատօրէն արտայայտել իր զգացումները: Անգլիացիների հանդէպ թուրքերի սիրալիրութիւն խաղալը եւ այդ խաղում իր «որպէս անգլիացի» պարագան իրեն միշտ մղում է հետեւեալ մտածումներին. «Կը խորհիմ, թէ դիւային ինչ քրքիչով մը արդեօք, նոյն մարդիկը, վզին վրայ պիտի պատկեցնէին ահաւոր եաթաղանի մը ծանրութիւնը, եթէ, հին օրերու մէջ, աքսորի ճամբուն վրայ հանդիպէին նոյն անձին»: Թէպէտ Զարիֆեանը Սիամանթօ չէր, չունէր նրա հուժկու թափը, բայց եւ չէր կարող լուրջութեամբ անցնել այդ մեծ ողբերգութեան մօտով, որի հետքն ամէնուրեք էր: Ըրջապատի ուրախ ու անհոգ հայութեան այլափոխումը չէր կարող չտեսնել այս նուրբ գրողը, չէր կարող լռել, բայց միեւնոյն ժամանակ չէր կարող բացայայտօրէն խօսել: Իր օրագրութիւնում հանգիստում ենք զգոյշ տողերի ու բազմաշերտ պատկերների: «Հայերը գրեթէ կը սուկան հետս տեսակցելէ, թուրք չէ՛նէրու արհաւիրքովը լեցուած»:

Իր տանջուած մարմնի վրայ արդէն զգացած լինելով թրջական վայրագութիւնը, առաւելաբար իրաւունք էր տալիս նրան զգուշանալու եւ իր մի քանի բանաստեղծութիւններում՝ «Որբուհին՝ որբին», «Ապրիլի գիշեր», «Դէպի խորունկը», նա նկարագրում է ազգի ապրած մեծ ողբերգութիւնը: Իր գիշերային հերթապահութիւններում ահա նա հանդիպում է մի խենթ հայի ու մեր առաջ թէպէտ ոչ ամբողջովին, բացում է մարդկային ողբերգութեան մի ծանր էջ. «Սեւ տախտակին վրայ անունը փնտոցի - Գառնիկ օղ-լու Արամ, ստաբազարցի: Հա՛յ մը...»



Մ. Ջարիֆեանը՝
գինուորական ծառայութեան մէջ:

«Անջուշտ վէպ մը կայ՝ այդ կոպերուն տակ պահուրտիլ ուզող թիթերուն խորը Աքսորէ՞ն դարձած է արդեօք: Ո՞վ են իր չարչարուած ուղեղին մղձաւանջը եղող այդ բացակայ մարդիկը»:

Մակերեսային ընթերցողը գուցէ իր բանաստեղծութիւններից այն կարծիքն ստանայ, որ Ջարիֆեանը իր հիւանդութեամբ, ինքն իրենով, իր եսով տարուած անձ է: Բայց ահա իր օրագրութեան էջերը, ուր մեր ազգի թրջայնացման, իր միճակի համակերպման ու դիմագծի աղաւաղման մասին է խօսում, յատկում է իր ազգի բարձրացման համար լուրջ մտածողը:

«Հոս հայերը ընդհանրապէս հայերէն չեն գիտեր եւ կամ՝ շատ կոտրած-թափած բան մը: ...: Լեզուի կորուստը կ'ենթադրէ նաեւ, որոշ չափով, ազգային բարքերու եւ ազգային կենցաղի կորուստ»: Այս է, որ տանջում է նրան, տոհմային ազնուակաւութեան, անաղարտութեան պահպանումն է նրա մտահոգութիւնը: «Պէտք է ծամ առաջ մաքրուիլ թրջական ախտէն՝ չեղձանելու համար հին Հայրենիքին հնամենի սրբութիւնները: Պէտք է նոր թափով ու նոր ոգիով վերադառնալ հայկական, հին, անարատ, առոյգ կենցաղին»: Յաւախօրէն մինչեւ այսօր իրենց թարմութիւնը չկորցրած պահանջներ են սրանք: Այս բոլորի հետեւութիւնը թէպէտ լաւատեսութիւնն է, այն էլ առողջ ու ծաւալուն մարգարէութիւնը՝ «Այս աննախընթաց աղէտը պիտի ընէ մեր ցեղը աւելի կենսունակ, աւելի լայնահոգի ու մանաւանդ՝ աւելի մեծ քան երբեք»:

Սովորաբար դժուար է բանաստեղծ մնալ առօրեայ մտածելակերպի մէջ եւ սովորական նամակն ու շուտափոյթ օրագրային գրառումը

դարձնել իսկական ստեղծագործություն, սովորական մարդկային յարաբերությունը վեր պահել մանրուքներից: Ջարիֆեանը այս բոլորը անում է բնատուր բանաստեղծի մօտեցումով, իր աննշան տողն անգամ ըստեղծում բանաստեղծական մեծ գրչաճարուածով, կատարեալ ու մաքուր հայերէնով լեզուի իմացութեան մեծ ելեւէջումներով: Նա բանաստեղծ էր կեանքում, ամէն ինչում: Ահա մի աննշան օրինակ իր օրագրային արագ գրառումից՝

«Կեանքը, եթէ նոյնիսկ անզգամ հեզութիւն մը եղած ըլլայ ան, հոյակա՛ւ պ հրաշալիք մըն է: Կարելի չէ շտեմնել ասիկա: Ախ, կեանքը, կեանքը...: Ինչպէ՛ս կ'ուզեմ կմախսացած բազուկներուս ամբողջ յուսահատութիւնովը փաթթուիլ անոր ու պաղատիլ, որ չլքէ՛ զիս»:

Ջարիֆեան նամակագիրը Ջարիֆեան բանաստեղծի չափ սիրող է, այն էլ յորդ, իր զգացողութիւնը ամէն ինչից վեր դասող, իր երագածին ձգտող, տառապող թէ՛ իր սիրոյ, թէ՛ իր մերժումի եւ թէ իր լքումութեան համար: Նա յաճախակի է գրում, որ դեռ «ոչ մէկը կը ճանչնար զիս, ոչ մէկ նայուածք իմ աչքերուս գաղտնիքը գիտէ»:

Կեանքի ամենադաժան խաղը սակայն իր հիւանդութեան ծանր պահերին սիրոյ նոր բռնկումներն էին:

«Նորէն արին...»

«Ն...ն ճանչնալէս ի վեր չորրորդ արինահոսութիւնն է ասիկա: Ինչո՞ւ այսքան շուտ-շուտ: Իմ խեղճ սիրեկանս, քու հրեշտակի անմեղութիւնովդ դո՛ւն ալ մեղակից ես, գիտե՛ս, ճակատագրին հրէշային դաւերուն: Քեզ սիրելէս ի վեր, հիւծումս սաստիկ արագացած է: Իւրաքանչիւր անգամ, որ շըրթունքներս կը հպին շրթունքներուդ...»

«Ի՞նչ սեւ ողբերգութիւն է կեանքը, զոր ստեղծեր ես, Տէ՛ր»

«Մէկ կողմէ կը պարզուի, կը բացատրուի ան - կեանքը - հետզհետէ աւելի գեղեցիկ, աւելի ցանկալի, ու միւս կողմէ տակաւ կը հատնի՛մ ես»:

«Մէր ու թոքախտ նոյն կտրծքին տակ: Աղուո՛ր հրդեհ, չէ՛»:

Իր մտածումների շրջանակը անդադար իր նախկին անհոգ էութեան ու առողջ մտածումի բաղդասման հետ է, իր այդ վիճակի չզընահատել կարողանալու յատկութիւնը եւ իր հիւանդագին էութեան սուր դատապարտումը: Ահա թէ ինչ խորութեամբ է նա տալիս այդ պատկերը. «Ահաւոր խենթ մըն եմ եղած ես, անցեալին մէջ: Մորճի հարուածներ տեղացուցեր եմ գիշեր-ցերեկ՝ շէնքի մը, որուն տաճար մը ըլլալը նո՛ր կը տեսնեմ: Ինչո՞ւ: Ինչո՞ւ: Ու փլէք է ահա ան: Ու հիմա, անոր աւերակներուն մէջ ինկած, կ'աշխատիմ բան մը փրկել անկէ: Բայց, ոչի՛նչ: Ձեռքս ամէն կողմ մոխրի մէջ կը խորասուզուի...»:

digitised by A.R.A.R.®

Որքան խոր ու արտայայտիչ պատկեր է այս՝ զգալու համար իր մեծ ողբերգութիւնը: Թեպէտ իր խոստումը ապրել ու յաղթականօրէն կանգնելն էր այդ աներակների մէջ, բայց նա չկարողացաւ յարգել իր այդ որոշումը, ինչպէս նաեւ այն, որ մօրն անշափ սիրելով չէր ուզում նրան տառապեցնել իր մահուան վշտով, իր օրագրում գրում էր՝ «Եթէ նոյնիսկ խելագարիմ՝ գերագոյն գալարումով պիտի յիշեմ այս որոշումս՝ իմ աչքերս պիտի գոցեմ, երբ ծնողքինս փակուած ըլլայ»: Բայց զարնանային մի հիասքանչ երեկոյ, մօր թեւերի մէջ, «մի վախճար, մայրիկ» շշնջալով մահացաւ բնութեան մեծ սիրահարն ու մարդկային հոգու նուրբ երգիչը: Նա մահացաւ ինչպէս ինքն էր կամենում՝ վերջալոյսի շողերի բոնկումով.

*Բռնկեցան վերջապէս
Մեռնող գոյները երկնքին,
Կ'ուզէի որ ճիշդ այդպէս
Մեռնէր հիւանդ իմ հողին:*

Այսօր, հարիրամեայ իր տարեդարձի օրը մեզ մնում է վայելել իր գեղեցիկ գրական ժառանգութիւնը, թափանցել սիրով ու տառապանքով գրուած իր տողերի խորքը, զգալու ու տեսնելու համար բնութեան ու մարդկային հոգու նուրբ այս երգչի եզակիութիւնը:

Յ.Գ.

Տարիներ առաջ, Երեւանում, Մատթէոս Զարիֆեանին նուիրուած հետուստատեսային հաղորդումից յետոյ մի նամակ ստացայ Հոկտեմբերեանից, ուր նամակագիրը՝ մի երիտասարդ, անբուժելի հիւանդութեամբ տառապող, շնորհակալութիւն էր յայտնում, որ ճանաչելով Զարիֆեանին՝ թեթեւութիւն էր զգացել իր վիճակի համար, նրա տողերում պարփակուած տառապանքի նմանութիւնը ստիպել էր իրեն անելի ջերմօրէն կապուել կեանքին ու բարութեամբ ընդունել շրջապատի անհասկացողութիւնը:

Որքան երջանիկ պիտի զգար Զարիֆեանը եթէ իմանար, թէ քանի՞ այսպիսի հոգիների է կեանք ու յոյս ներշնչել իր տառապանքով ու իր մոխրացող հոգով, որքան հիացում է փայլեցրել իր ընթերցողների աչքերում միայն իր անունը: Իր հարիրամեակի թանկագին նուէրը թող դառնան իր երկրպագուների ջերմ շունչը, եւ իր տառապանքով ամրացած ու թեթեւացած հոգիների հիացումը:

1 Մայիս, 1994
Սան Ֆրանսիսքօ

ՄԱՐԻ ԴՈՋ ԱՐՈՒՍԷՏԵԱՆ

Ս. ԿՐԻԱԿՈՍԵԱՆ

ԿԵՆՍՈՒՆԱԿ ԼՄՍԱԳԻՐ ՄԸ՛

Հակառակ թրջական շրջափակման հետեւանքով Հայաստանի պարտադրուած ահաւոր երբորդ ձմեռին, Հակառակ ելեկտրական հոսանքի երկարատեւ ընդհատումներուն եւ վառելանիւթի, թուղթի եւ կենսական այլ նիւթերու լուրջ տաղնապին ու դիներու աներեւակայելի մաղցումին, խաւարին ու ցուրտին դէմ իր լինելութեան գոյամարտը մղող հայրենի գրական մամուլը անգամ մը եւս հաստատեց, որ կը շարունակէ մնալ պատնէշի վրայ, յար եւ նման հայաստանեան մամուլի այլաբնոյթ հրատարակութիւններուն՝ իբրեւ հայ ըստեղծագործ մտքի եւ հաւատարմութեան անպարտելի խորհրդանիշ:

Հայրենի մամուլի պարբերաբար Լիբանան հասնող հատուկենա թիւերուն մէջ լոյս տեսած գրութիւններէն եւ տեղեկատու գրասենեակներու հաղորդումներէն իմացանք, որ եթէ գրական թերթերէն ոմանք լոյս տեսած են պարտադիր ընդհատումներով, ուրիշներ՝ ինչպէս «Ազատամարտ» շաբաթաթերթի «Վարուծան» անուն գրական յաւելումն ու «Գարուն»ը, յաջողած են յաղթահարել ամէն դժուարութիւն եւ իրենց ընթերցողներուն ներկայացած են հերթական կանոնաւորութեամբ: Վերջերս ստացանք «Վարուծան»ի եւ «Գարուն»ի այս տարուան առաջին չորս թիւերը, որոնք կը վկայեն գրական-մտաւորական ուշադրաւ որակի մը մասին:

*
* *

«Վարուծան»ի առաջին չորս թիւերը կը յատկանշուին եւ ստեղծագործական, եւ իմացական, եւ արուեստաբանական ուշադրաւ գրութիւններով, որոնք յատուկ նկարագիր եւ դիմագիծ կու տան հայրենի գրական մամուլի նորագոյն անդամներէն մէկը հանդիսացող այս ամսաթերթին:

Վերոնշեալ չորս համարներն ալ կը բացուին Հայաստանի այժմու իրավիճակէն բխած տնտեսական, ընկերային, բարոյա-

թ. 77

50%

ՎԱՐՈՒԾԱՆ

կան, գրական, մէկ խօսքով՝ քաղաքակրթական վերջերը հարցադրող առաջնորդող գրութիւններով: 1994ի առաջին թիւի առաջին գրութիւնը հանդիսացող «Փրոդի ձայնը» խորագրեալ առաջնորդող յօդուածը, հայ գիւղի այժմու անմխիթար վիճակին ի տես հայ գրողէն սպասուած գեղարուեստական անդրադարձին կարեւորութիւնը ընդգծելէ ետք, կը կատարէ հետեւեալ հաստատումը. «Հայ գրականութեան առջեւ այսօր ծառայած է մի այլ մեծ խնդիր եւս. իր ժողովրդի այսօրուայ ծանր տառապալից վիճակի, նրա քաղաքական ու ազգային ջլատման գեղարուեստական հետազօտման ու բնութագրութեան խնդիրը, հայ ժողովրդի ոգեկան ներքին միասնութիւնը ջատագովելու հոգաւ»:

Հայաստանի մերօրեայ ընկերային, տնտեսական, բարոյական, քաղաքական եւ այլ յոռի բարքերուն եւ հարցերուն դէմ հայ գրողին առհասարակ լուռ համակերպումը եւ անտարբերութիւնը քննադատելով՝ «Վարուծան» կոչ կ'ուղղէ հայ մտաւորականութեան՝ պահանջելով դառնալ Հայաստանի եւ հայ ժողովուրդի խղճմտանքի արդար ձայնը, որովհետեւ «գրականութիւնը ո՛չ միայն ի զօրու է, այլեւ պարտաւոր է իր ժողովրդի կեանքի սոցիալական, քաղաքական, հանրային ու բարոյական բոլոր հոգներն ու խնդիրները արծարծելու եւ իր խօսքը ասելու»:

«Նսահանջ՝ էժանագին ցնծութեամբ...» խորագրեալ երկրորդ համարի առաջնորդող յօդուածը ձեւով մը կը հանդիսանայ անուղղակի շարունակութիւնը «Փրոդի ձայնը» խիզախ էջին: Հոս արծարծուող հարցը հայերէնի ահաւոր նահանջն է, բոլորին աչքերուն դիմաց, «ամէ՛նուրեք, բոլոր ասպարէզներում՝ խորհրդարանից սկսած մինչեւ մեր չեղեալ դպրոցները, հայկական պետական հետուստատեսութիւնից ու պաշտօնական մամուլից սկսած մինչեւ բուլվարային էժանագին թերթերը...»:

Ապա, պաշտօնական մամուլին՝ «Հայաստանի հանրապետութիւն» օրաթերթի էջերուն կատարուող հայ լեզուի ամէնօրեայ խաչելութիւնը օրինակներով փաստարկելէ ետք, «Վարուծան» «էժանագին ցնծութեամբ ներբողող» պաշտօնական մամուլի «խեցրեկագոյն լեզու»էն կ'անցնի աւելի մեծ թիւով

ունկնդիրներու հասնող պետական պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի հաղորդավարներուն ուսմիկ հայերէնին, որ սրճարաններէն ու փողոցէն պաշտօններու վրայ յայտնուած պաշտօնեաները բերին իրենց հետ՝ «փողոցի ժարգոնը գումարած իրենց իմացական գրական լեզուի չափի հետ» իրրեւ հայ լեզուի նոր «չափանիշ»:

Մշակութային այս աղէտին՝ լեզուական եւ գեղարուեստական թափթփածութեան ահաւոր վտանգները դատապարտելով, «Վարուժան» կը հաստատէ, որ այս քար անտարբերութեան զոհ կ'երթայ ո'չ միայն մեր ոսկեղինիկ մայրենին, այլեւ՝ մեր ազգային մտայնութիւնն ու հայեցի դիմագիծը: Փաստօրէն, «Մշմարտութիւնն այն է, որ մեր լեզուի այսօրուայ վիճակը մեր պետական իշխանութեան իրական դէմքի ու Եկարգի հայելային ճիշտ արտացոլումն է», հայէս լուրջ եւ մեր ազգային-մշակութային էութեան ու լինելութեան սպառնացող համաճարակ մը, որուն յաղթահարումն ու արմատական լուծումը մեր նորահաստատ պետութեան առաջնահերթ խնդիրներէն մէկը պէտք է ըլլայ, եթէ ոչ առաջնագոյն հարցը, ինչպէս կը հաստատէ «Վարուժան»:

«Վարուժան»ի Մարտ-Ապրիլ միացեալ թիւը կը բացուի ամսաթերթի վարիչ խմբագիր Եուրի խաչատրեանի «ԵՆՃԻՈՆ»-ը քաղաքի դէմքին» խորագրեալ յօդուածով, որ կ'արծարծէ Երեւանի քաղաքակրթական դիմագիծի եւ նկարագրի այլանդակման լուրջ հարցը: Սիրոյ, ցասումի եւ պահանջատէր մըտաւորականի ազնիւ խօսք հանդիսացող այս յօդուածը ո'չ միայն բնորոշ օրինակներով կը պարզէ երեք տարիէ ի վեր Երեւանի վրայ խուժած նիւթապաշտ բարբարոսներուն գործած ահաւոր աղէտը, այլեւ պատասխանատուութեան կը կանչէ անտարբեր պատասխանատուները, որոնց աչքերուն դիմաց մայթեր կը խճողուին սունկի պէս բուսնող դուրբաններով, լրման պուրակներ կը կացինահարուին կարճ ժամանակի մը ընթացքին, ցայտադրիւրներ կ'անհետանան կարծէք ծրագրուած ձեռով, շէնքերու բակերը տառացիօրէն կը փակուին անճոռնի կառուցումներով՝ «զարած» կոչուած հսկայածաւալ մետաղեայ դամբաններով, շինութեանց մնացորդներով, եւ այլն:

Թաղամաս առ թաղամաս կատարուած քաղաքակրթական սպանդը խօսուն օրինակներով ներկայացնելէ ետք, յօդուածագիրը հարցադրողական ոճով պատասխանատուութեան կը կանչէ այս կացութեան «պատասխանատուներ»ը, երբ կը գրէ՝

«Եւ սա քաղաքի՝ դէմք է, մայրաքաղաքի՛:

«Եւ հարց եմ տալիս. ի՞նչ կապ ունի այս ամէնը պատերազմի եւ շրջափակման հետ: Ներքին կարգ ու կանոնը, որ

պէտք է լինի անօրինայ կեանքի համար, ո՞վ պէտք է հաստատուի:

«Բայց չէ՞ որ երեք տարի առաջ այս ամէնը այսպէս չէր: «Պատասխան չեմ էլ ուզում լսել...»:

որովհետեւ, ինչպէս կը հաստատէ ան քիչ անդին, թաթար-մոնղոլական հորդաններու նման եւ թրքական վաչկատուն ցեղերու կործանարար բնազդներով Երեւանի վրայ խուժած հայանուն բարբարոսներ ամէն բան կ'աւերեն օր-ցերեկով եւ, իբրեւ անտեսանելի ուրուականներ՝ «անյայտ անձինք» Նոր տարուան օրերուն եղեւնիները կը գլխատեն ուղիղ կէսէն, տօնածառի չափ եւ... կը մնան «անյայտ»: «Բայց, ինչպէս կ'ընդգծէ Եւուրի Պաշտօրեան, մարդու հաւատալը չի գալիս, ուղղակի անկարելի է հաւատալ, որ իշխանութեան շէնքի պատուհանների տակ, շէնք, որ միշտ լուսաւորուած է, եւ ուր միշտ հսկող-նայող մարդիկ կան, «անյայտ անձինք» նման բան են արել...

«Անկարելի է հաւատալ... Ի վերջոյ, սա նոյն երկիրն է, ուր եթէ մէկը միւսի ականջին մի բան շշուշար, ուր որ հարկն է՝ արդէն գիտէին, այն նոյն երկիրն է, ուր չարտասանած մտքերդ գիտէին... Եւ այդ ինչպէ՞ս է լինում, որ երբ Օպերայի հրապարակում մի քանի մարդ է հաւաքում, նախագահական ապարանքի դէմ, հին հոռմէական լեզուականների պէս՝ ուն ընդ ուսի եւ վահանն ընդ վահանի, շարում են հայ ոստիկանները, իսկ օրը-ցերեկով ինչ ասես կատարում է այս քաղաքում, ու ոչ ոք էլ չգիտի:

«Թէ՞ շատ լաւ էլ գիտի...

«Ով իմանայ...»:

Բայց իմանալու կարիք կա՞յ, երբ ամենահամեստ երեւանցին անգամ «շատ լաւ էլ գիտի», թէ... «ինչէ՞ր ասես չեն կատարի այս ձեռքերը», բոլորին ծանօթ անխիղճ ու բուժ նոյն ձեռքերը...

Յասման ու պահանջատիրութեան այս նոյն ոգին նաեւ կը հնչէ չորրորդ համարի առաջին էջէն, երբ Գառզուի «Հայաստան» խորհրդակարէն ետք, 77 տարիներու խորերէն կը թընդայ եւրոպական հանրային կարծիքն ու քաղաքական եւ մտաւորական շրջանակները պատասխանատուութեան կանչած Կ Ջարեանի «Կեցցէ՛ անկախ Հայաստանը» կոչը Առաջին աշխարհահամարտի տարիներուն, փոքր ժողովուրդներու հանդէպ Եւրոպական մեծ տէրութիւններուն եւ Ռուսաստանի կիրարկած հաշտախնդիր քաղաքականութիւնը դատապարտող զարեանական այս յանդուգն բանախօսութիւնը (որուն սկիզբն ու աւարտը «Վարու-

ժան» ներկայացուցած է իր ընթերցողներուն, օրին, 10 Յունիս 1917ին, Ֆրորանսի (Իտալիա) Պայացցո Վիկտորի հին Հանդիսասրահին՝ Չինկվիչենտոյի մէջ, Կոստան Չարեան արտասանած է Ֆրորանսերէն լեզուով, ի ներկայութեան Հանրային եւ քաղաքական նշանաւոր գործիչներու: Արշակ Չօպանեանի կողմէ Հայացուած է Կ. Չարեանի այս չոգեչունչ ճառը, որ ժամանակին լոյս տեսած է Փարիզի «Les Nations Latines» ամսաթերթին մէջ, ունեցած է մեծ ազդեցութիւն, ժամանակակից մամուլին իսկ վկայութեամբ:

«Էներոս ու մարտիրոս հայ ժողովուրդը կատարեց ու դեռ կը կատարէ իր պարտքը: Ան կ'ուզէ որ Եւրոպան ալ կատարէ իր պարտքը» արդար պահանջով արեւմտեան աշխարհին ու Ռուսաստանի ներկայացած է Կ. Չարեանի այս ելույթը այսօր նաեւ կը հնչէ նոյն ուժգնութեամբ եւ միեւնոյն իրաւացիութեամբ: Անժամանցիկ արդար դատի մը բարձրախօսը Հանդիսացող այս կոչը, փաստօրէն, այսօր նաեւ պատասխանատուութեան կը հրաւիրէ քաղաքակիրթ Արեւմուտքն ու Ռուսաստանը՝ գործնապէս ամրապնդելու Հայաստանի անկախութիւնը, որովհետեւ աշխարհ պարտի ըլլալ քաղաքակիրթ մարդկութեան մեծագոյն յաղթանակներէն մէկը, «Վակարոյժներու եւ հրէշներու ժողովուրդ մը եղող թուրքերու կողմէ ոսոկակոյս եղած այդ Արեւելքին մէջ» դարերէ ի վեր երազուած արդարութեան մը նուիրականացումը ըլլալու փաստէն առաջ եւ նտք:

*

* *

«Վարուժան»ի այս տարուան վերոնշեալ թիւերուն առաջնորդող յօդուածները եթէ լուսարձակը կը կեդրոնացնեն Հայաստանի Հանրապետութեան մշակութային անփառունակ կացութեան եւ մտահոգիչ հարցերուն վրայ, անոնց յաջորդած մնացեալ զրութիւնները կու գան անգամ մը եւս հաստատելու, որ հայ գրականութեան եւ մշակութիւն ամբողջական բեմը Հանդիսանալու առաջադրանքով երկու տարի առաջ հրատարակուի սկըսած այս ամսաթերթը կը մնայ հաւատարիմ իր հանգանակին: Փաստօրէն, «Վարուժան»ի ցարդ լոյս տեսած երկու տարուան հաւաքածոն կ'ապացուցէ, որ ան նեղ հասկացողութեամբ թերթ մը չէ, իր ժամանակին հետ քայլ պահելու պարտաւորութիւնը եւ այժմէական մտահոգութիւնները երբեք պատճառ չեն, որ ինքզինք կաշկանդէ որոշ ժամանակաշրջանի մը մէջ՝ դառնալու

Համար նեղ աշխարհաՀայեացքով եւ տարտամ դիմադիրով թերթ մը: Ընդհակառակն, Հայ գրականութիւնը իբրեւ մէկ ամբողջութիւն դաւանող այս ամսագիրը, առաջին իսկ օրէն, իր էջերը լայն բացաւ մեր հեռուոր թէ՛ մօտաւոր անցեալի լուսաճաճանչ բոլոր դէմքերուն եւ ժամանակակից գրականութեան կենսունակութեան ի նպաստ գործնապէս քուէարկած եւ քուէարկող գրագէտներու եւ արուեստագէտներու ստեղծումներուն դիմաց, հրատարակելով մեր դասական գրականութեան հսկաներուն, արեւելահայ թէ՛ արեւմտահայ դէմքերուն եւ հանդէսներուն, երեւոյթներուն եւ հարցերուն նուիրուած ուսումնասիրութիւններ ու յօդուածներ, ինչպէս նաեւ՝ Հայաստանի թէ՛ Արտերկրի ապրող գրագէտներու արձակ ու շափածոյ ստեղծումներ, Հայ մանրանրկարիչներու եւ ժամանակակից գեղանկարիչներու նուաճումները արժեւորող աշխատասիրութիւններ եւ Հայ մշակոյթի այլ բնագաւառներու հետ առնչուող գրութիւններ:

Այսպէս, «Վարուժան»ի Յունուարի համարին մէջ կը կարդանք Արամ Ալեքսանեանի «Ազգ եւ հասարակարգ» յօդուածին երկրորդ բաժինը, ուր յօդուածագիրը կը շարունակէ կատարել առարկայական գնահատումը 1880ական թուականներուն «Արձագանք» հանդէսի ունեցած բազմակողմանի դերակատարութեան եւ դրապաշտական Հայեացքին՝ իբրեւ մեր ազգային անհատականութեան եւ ինքնուրոյնութեան բիւրեղացման գործին մէջ կարեւոր մասնակցութիւն բերած բեմ մը:

Նոյն նպատակին՝ անցեալի մեր նուաճումներուն առարկայական գնահատականը կատարելու աշխատանքին կը ձգտի նաեւ Միսակ Գաբրիէլեանի «Ի վարժանս ընդհանուր ազգին» ուսումնասիրութիւնը, որ գիտական մօտեցումով բարձր կը գնահատէ Հայ տպագրութեան հսկաներէն հանդիսացող Գրիգոր Մարգուսնացիի 1706ին կոստանդնուպոլսոյ մէջ լոյս ընծայած «Յայսմաւուրք»ի եւ Ագաթանգեղոսի «Գիրք վիպասանութեան» մէջ հրատարակուած հրաշալի նկարագրողումները, որոնք Հայ գլանաձեւ փորագրութեան նրբաճաշակ առաջին նմոյշները կը հանդիսանան:

Հայ կերպարուեստը, ճարտարապետութիւնը եւ երաժշտութիւնը նոյնպէս, մօտիկ անցեալի եւ ներկայի նուաճումներով, ներկայ են «Վարուժան»ի էջերուն:

Մերօրեայ լուսանկարչութեան վաւերական արժէքներէն նրկատուող Պօղոս Պօղոսեանի արուեստին նուիրուած Յուրի Խաչատրեանի «Ակնթարթային պահի գեղեցկութիւնը» վերլուծական յօդուածէն եւ Մհեր Մկրտչեանի «Թատերական դէմքն ու կշիռը արժեւորող «Մարդ, որ ինքը թատրոնն էր» ակնարկէն ետք, ամսագիրին այս տարուան առաջին համարին մէջ կը կարդանք նոյնքան շահեկան այլ ուսումնասիրութիւն մը՝ Վիլհելմ Մաթե-

տանների «Կոջոյեանի բնակարանը», ապա՝ Արմէն Զարեանի «Ամենայն իմացութեանց հիփրիսը» անուն արուեստարանական յոգուածը:

Երկրորդ, երրորդ եւ չորրորդ համարները նոյնպէս հարուստ են այս առումով: Հայ երաժշտութեան դասականներէն՝ Մակար Եկմալեանի վաստակին նուիրուած Խորէն Պալեանի «Մակար Եկմալեան», Զուլփո Կարլա Արզանի «Արշիլ Գորկի», Արմէն Զարեանի «Ապակառոյց ճարտարապետութիւն», Շահէն Խաչատրեանի «Ընդհեյլ միասնութեան ընդհատուած երգացանցը» (նուիրուած՝ Բուզանդ Կոջամանեանի արուեստին), Պօղոս Հայթայեանի «Յարութիւն Կալենց. դիմանկարի էսքիզ» եւ Լեւոն Խեչոյեանի «ԸՍՕՍՔ» (վաղամեռիկ գեղանկարիչ ժորա Աւագեանի մասին) խորաթափանց ուսումնասիրութիւններն ու մեծարանքի զուտ պակնարկները անգամ մը եւս կ'ապացուցեն, որ «Վարուժան» կը հանդիսանայ հայ արուեստարանութեան լուրջ բեմերէն մէկը:

«Վարուժան»ի իւրաքանչիւր թիւ համապատկեր մըն է, որ կը կամրջէ անցեալն ու ներկան՝ պայծառ ապագայի լաւատես հաւատքով: Գեղարուեստական գրականութեան եւ իմացական մակարդակի վրայ նոյնպէս, ամսագիրը կը մնայ հաւատարիմ իր հանգանակին՝ հայրենի ընթերցողին հրամցելով մեր դասական գրագէտներուն ստեղծագործութիւնները եւ հայրենի թէ սփիւռքահայ գրողներուն ու մտաւորականներուն մտքի եւ հոգիի արգասիքները:

Շահան Շահնուրի «Աւագ Ռոքաթ», Աւետիս Ահարոնեանի «Վամաւորը», Եղիշէ Զարեանի կեանքի վերջին տարիներու անտիպ եւ քիչ ծանօթ բանաստեղծութեանց փունջը, Կոստան Զարեանի «Բանկօօպը եւ մամութի ոսկորները» վէպէն քաղուած հատուածները եթէ հայրենի ընթերցողին կը հրամցեն գրական վայելքի հաճելի պահեր, գրական վայելքի նուազ լուրջ առիթներ չեն Ստեփան Թոփչեանի «Աւետիս Ահարոնեան», Վարդան Մատթէոսեանի «Կոստան Զարեան եւ Եղիշէ Զարեան», Վահէ Օշականի «Գրական հոշակագիր», Մէլրան Գրիգորեանի «Պատեհապաշտ մահարիապաշտութիւն» եւ «Պարոյր Սեւակը անուններ է տալիս» խորագրեալ ուսումնասիրութիւնները, Գառնիկ Անանեանի դարձեալ «Այրուող այգեստաններ»ի մասին անդրադարձը, ինչպէս նաեւ՝ վերոնշեալ համարներուն մէջ լոյս տեսած հայրենի գրագէտներու բանաստեղծական թէ արձակ գրութիւնները: Այսպէս,

Բանաստեղծ Յովհաննէս Գրիգորեանի «Հաղէս — միակ թէ՛ այս, թէ՛ այն աշխարհում» սեւ երգիծանքով համեմուած արձակ գրութիւնը եթէ մասնաշատուկ երպէս իր կու տայ «Վարուժան»-ը

ծանօրին, եթէ բանաստեղծներ Ծուրի Սահակեանի, Վառլէն Ալեքսանեանի, Վահրամ Ռոստոմեանի, Արմէն Շէկոյեանի հրատարակուած շարքերը կը վկային քերթողական հասուն որակի մը մասին, երիտասարդ արձակագիրներ Վահան Սաղաթէչեանի «Գրօշ», Սեդա Բեքարեանի «Համբոյրը» եւ «Ժաննեկազարդ գեղնցկուհին», Վահան Թամարեանի «Ուղեղի բորբոքում» եւ Զուխրա Երուանդեանի «Եր բաժին հայրենիքի պաշտպանը» աւելի պատմուածքները կը զօրացնեն հայրենի նորագոյն արձակագիրներու սերունդին կապուած յոյսերը:

Հայ ընթերցողին համար նոր անուն մը հանդիսացող Վահրամ Ռոստոմեանի «Ծաղիկը գոցուած անձնուրացութեան» շարքը (թիւ 3) եթէ նոր բացուող «ծաղիկ»ի մը առաջին թարմ բոյրերը կը հրամցնէ ընթերցողին, իր բանաստեղծական եզակիութիւնը բազմիցս ապացուցած Ռազմիկ Դաւոյեանի «Ռեքվիեմ» խորազրեալ երկրորդ հատորէն քաղուած հատուածները, բայց ի մասնաւորի «Պաշտպանի հայոց հանճարը կորչող» խորազրեալ բանաստեղծութիւնը կու գան ապացուցելու, որ անուանի բանաստեղծը ընթերցողին կը վերապահէ հանելի անակնկալներ: Վարակիչ ջերմութեամբ, անմիջական ոճով եւ տաք շունչով զարգացող այս նմոյշները նախանշաններն են այն շիկացեալ հանգրուանին, որ, անկասկած, Դաւոյեանի վերացական հոգեվիճակները պիտի օժտէ Հայ ժողովուրդի տառապանքներուն եւ իղձերուն, ողբերգութիւններուն եւ երազներուն ազնիւ եւ ինքնուրոյն երանգներով:

Հայ ժողովուրդի պատմական նշանակութիւն ունեցող ներկային, մաքառումներուն ու հաւաքական ծառայումներուն ուղղակի եւ անուղղակի անդրադարձները, նոյնպէս, նոր շունչով եւ առանձնայատկութեամբ հարստացուցած են նաեւ Խոթանասունական թուականներուն հանդէս եկած բանաստեղծներէն Ծուրի Սահակեանի «Գոյութեան ափեր» շարքը, ինչպէս նաեւ՝ յաջորդ տասնամեակի նոր անուններէն հանդիսացող Արմէն Շէկոյեանի «Օրհնեալ է մահն իմացեալ» քերթողաշարը: Եթէ Ծ. Սահակեանի վերոնշեալ բանաստեղծութիւններէն ոմանք կը յատկանշուին առօրեայ կեանքի «անբանաստեղծական իրականութիւններէն մեկնած խօսակցական լեզուի պարզութեամբ եւ անմիջականութեամբ, իսկ ուրիշներ՝ դասական քնարերգութեան ակունքներէն ըխած երգայնութեամբ ու վարակիչ շունչով, «Արցախեան հերոսամարտում նահատակուած հայ մարտիկներին» ձօնուած Արմէն Շէկոյեանի «Օրհնեալ է մահն իմացեալ» քերթողաշարը աւելի շեշտուած կերպով կը հանդիսարդէ պատմութիւն-բանաստեղծութիւն կենդանի եւ ստեղծագործական անդրադարձներու մշտանոյով փաստը, որ, իբրեւ բանաստեղծա-

կան պահուճանքէն ձերբազատուած պարզ եւ խիտ խօսք՝ իր վերջնական մարմինը կը ստանայ դասական ծանօթ կաղապարներու մէջ:

«Վարուժան»ի երկրորդ համարին մէջ, «յարգելով ազատ մամուլի սկզբունքը», խմբագրութիւնը իր էջերը լայն կը բանայ յաւելուածի նախկին թիւերէն մէկուն մէջ հրատարակուած Ալբերտ Կոստանեան-Պօղոս Մնայեան գրոյցի ընթացքին Աւետիք Իսահակեանի քերթողութեան մասին արտայայտուած տեսակէտները չբաժնող «անզիջում նախկին կուօբարտուղար» Աւիկ Իսահակեանին: Խմբագրական նոթով մը, խմբագրութիւնը վերոնշեալ թիւի 12րդ եւ 13րդ էջերը կը տրամադրէ Աւիկ Իսահակեանի «Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» գրութեան, ընթերցողներուն ուշադրութեան յանձնելով այն իրողութիւնը, որ առաջին անգամ իր շարադրական թափթփածութեան եւ լեզուական թերութիւններուն համար մերժուած այդ յօդուածին երկրորդ տարբերակը կը հրատարակէ նոյնութեամբ, անխաթար պահելով ո՛չ միայն «բանասիրական դոկտորի լեզուական գրագիտութիւնն ու շարադրանքը», այլեւ՝ անհիմն յերիւանքները, որոնք «ուղղակի անհեթեթութիւն են նախ Աւիկ Իսահակեանին դարձնում են պարզապէս ծիծաղելի»...

*

* *

Փրական-մշակութային հրատարակութեան մը հանգանակը կը յաջողի դուրս գալ տեսարանական ոլորտներու մէջ տեղաբաշխելով կրաւորական խօսքի ոչ-նախանձելի կացութենէն եւ կը դառնայ, իրաւամբ, կենդանի եւ ներգործող հոլովոյթ, երբ անոր էջերուն հրամցուած ստեղծագործական յաւելումները գործնապէս կը հաստատագրեն բանաձեւուած սկզբունքներուն իրաւութիւնը: Փրական-մշակութային ճշգրտած սկզբունքներուն հիմամբ ընտրուած ստեղծումները որքան ալ նպաստեն խնդրոյ առարկայ հրատարակութեան դիմագիծի բիւրեղացման գործընթացի բնականոն զարգացման, այնուամենայնիւ, անոր հեզասահ ընթացքն ու կատարելագործումը երաշխաւորող հիմնական դերակատարութիւնը, միշտ ալ, կը վստահուի այն իմացական բազմակարծիք ճիգին, որուն շնորհիւ «Վարուժան» կը դառնայ իր գոյութիւնը իմաստաւորած ինքնուրոյն ներկայութիւն:

Հանգրուան առ հանգրուան նոր հորիզոններ նուաճող մտաւորական այս որակն ու կենսունակութիւնն են միայն, որոնք խնդրոյ առարկայ հրատարակութեան դիմագիծի բիւրեղացումն ու իրացումը կը վերածին իմացական նպատակասլաց հո-

լովոյթի Անդազար նոր հորիզոններու բացուող ստեղծագործ մտքի, պատմական փորձառութեան վէմին վրայ խաբսխուած հաւատքի ու նուիրումի ներքին կրակով շիկացած իմացական ուժերու համերաշխ միահիւսումն է, որ այս կամ այն գրական-մշակութային հրատարակութիւնը կը բարձրացնէ քաղաքակրթական երեւոյթ դառնալու մակարդակներուն: Հայ եւ միջազգային գրականութեան մէջ բազմիցս հաստատուած այս ճշմարտութիւնը, փաստօրէն, անգամ մը եւս կը հնչէ իր համոզկեր ճշմարտացիութեամբ, երբ թէկուզ հպանցիկ ակնարկ մը կը նետենք գրական-մշակութային շարժում մը դառնալու արդար փառասիրութեամբ հրապարակ իջած «Վարուժան»ի երկու տարւան համարներուն վրայ:

«Ազգը մշակոյթով է ազգ» իր հանգանակ-խմբագրականով (թիւ 1, Յուլիս 1992) ընթերցողին դատաստանին ներկայացած «Վարուժան», կարճ ժամանակի մը ընթացքին, ո՛չ միայն գոյապնդեց իր ներկայութիւնը, այլեւ իր դրապաշտ համոզումներն ու տեսակէտները վերածեց կենդանի գործի:

«...Մենք պիտի շուտափոյթ ունենանք մեր բաճակն ու մեր զէնքը, քայց եւ մեր գոշի զօրութեամբ պիտի շարունակենք պաշտպանել ու վեհացնել մեզ, մեր վրձինը շարունակի պիտի պատկերել մեր տաք ու հզօր ոգին, եւ մեր բարդ հոգու արգասիք մեր անզուգական երգը պիտի վերստին եւ փառահեղ թելածի՝ ի հաւատատում մեր ոգու վեհութեան անկրկնելիութեան» խոր հաւատքով եւ ուխտով ճամբայ ելած «Վարուժան»ի գրաւը չէր հիմնուած վերացական զեղումներու վրայ: Հայոց Պատմութեան աւելի քան չորս հազարամեայ ուղիի ամենամուսի ու ճակատագրական պահերուն բազմիցս հաստատուած, նուիրականացած, աւելի ճիշդ՝ ցեղային մտածողութիւն եւ նկարագիր ու հաւատամք դարձած այս ոգեղէն հրաշք-իրականութեան անհերքելի ճշմարտութիւնն էր, որ «Վարուժան»ի կը ներշնչէր հայկական այս հաւատքն ու տրամախոհութիւնը, որոնց շնորհիւ մեր մշակոյթը խիզախաբար գոյատեւեց եւ նուաճումներ արձանագրեց նոյնիսկ համայնավարութեան պարտադրած ամէնէն անհեռանկար ակնթարթներուն, որովհետեւ՝ «Փառք Աստուծոյ, որ մշակոյթի ասպարէզում մեզանում գտնուեցին մարդիկ, ովքեր ոչ մի զնով չկամեցան դառնալ կամակատար ստրուկներ»:

Այո՛, իրաւունք ունէր «մէկ ժողովուրդ, մէկ գրականութիւն» տեսլականով իր առաքելութիւնը բանաձեւող «Վարուժան», երբ նոյն դրապաշտ մօտեցումով կ'ընդգծէր:

«Ինչեւէ, որոշ բան արուած է, եւ ահագին բան դեռ կայ անելու: Մեր մշակոյթի շատ ու շատ արժէքներ դեռ նոր պիտի

բացունեն սեզ համար եւ, համոզուած ենք, Նորանոր փայլուն էջեր պիտի ծօնունեն ազատագրական պայքարի մեր Նոր օրերին: Պիտի ջանանք Նորէն վերախմաստաւորել միւշեւ այժմ զանազան պատճառներով սխալ իմաստաւորումը, եւ նմանապէս պիտի ջանանք սպառիչ ու ճշմարիտ զնահատական տալ հին ու Նոր մեր արժէքներին»:

Եւ «Վարուժան» ո՛չ միայն ջանաց, այլեւ յարգեց իր խոստումը, աւելի ճիշդ՝ մնաց հաւատարիմ իր գրական դաւանանքին:

*
* *

Համայնազար մենասիրութեան կողմէ կալանքի տակ առնուած մեր մշակութային կենարար արժէքները լոյսին բերելու, հայ մշակութի տիեզերքին վրայ գումարուելու կոչուած լուսաբաշխ նորանուն աստղերը յայտնադործելու, անարգարութեան զոհ դացած մեր մշակութային գանձերը վերախմաստաւորելու եւ մեզ մեզացնող մեր հին ու նոր տիտաններու վարքին ու վաստակին ռազառիչ եւ ճշմարիտ գնահատական տալու ճշմարիտ վերաբերումն էր, որ «Վարուժան»ի խմբագրութիւնը առաջին իսկ օրէն առաջնորդեց ներկան անցեալի կենսաբաշխ աւանդներով ու արժէքներով իմաստաւորելու դիրքորոշումին, որպէսզի հայ մշակութի ապագան ըլլայ աւելի պայծառ, աւելի հարուստ եւ, մանաւանդ՝ առաւել ամբողջական: Այս տեսլականէն առաջնորդուած՝ իր առաջին իսկ թիւէն, «Վարուժան» իր էջերը կենդանացուց ո՛չ միայն Ռաֆայէլ Պատկանեանի եւ Ռուբէն Զարգարեանի, Աւետիս Ահարոնեանի եւ Յակոբ Օշականի, Քրիմեան Հայրիկի եւ Կոստան Զարեանի, Եղիշէ Զարեանցի եւ Գեղամ Բարսեղեանի, Յովհաննէս Թումանեանի եւ Նշան Պէշիկ-թաշիեանի, Լեւոն Շանթի եւ Լեւոն Կամսարի եւ բազում այլ մեծանուն գրագէտներու յաւերժ կենդանի էջերով, այլեւ՝ հայ մամուլի, գրականութեան, երաժշտութեան, ճարտարապետութեան, կերպարուեստի բազմատասնեակ դէմքերուն եւ երեւոյթներուն, արժէքներուն ու շարժումներուն ռազառիչ ու ճշմարիտ գնահատականը կատարող ուսումնասիրութիւններով, յողուածներով, ակնարկներով:

«Վարուժան»ի 1994ի առաջին չորս համարներուն մէջ լոյս տեսած բոլոր յողուածներն ու ուսումնասիրութիւններն այլ, ինչպէս նախորդ թիւերուն հրատարակուած նոյնաբնոյթ գրութիւնները, կը յատկանշուին իրենց ճշգրտութեամբ, վաւերականու-


թեամբ, առարկայական արժեւորումներով, բայց մանաւանդ՝ նոր խօսք ըսող իրաւ մտաւորականի պայծառ դատողութեամբ:

*

* *

Յարգ 16 թիւերով հայրենի ընթերցողին քննութեան արժանացած «Վարուժան»ը, իրաւամբ, լուրջ, որոնող եւ միշտ աշխոյժ ամսաթերթ մըն է, որուն նոր լոյս տեսած իւրաքանչիւր թիւը ընթերցողին դատաստանին կը ներկայանայ վերանորոգ թարմութեամբ, արութեամբ եւ զեղարուեստական պայծառ ու հասուն որակով:

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



Ա. ԲԱՍՅՈՒՆԵԱՆ

Հենրիկ Բախչինեանի թարգմանչական կարողութիւններուն մասին ասկէ առաջ «Բագին»ի ընթերցողին տրուած է նախաճաշակ մը՝ արտագրելով Փօլ Վալերիի աշխարհահռչակ «Մովային գերեզմանոց» բանաստեղծութեան իր կատարած հայացումը:

Փօլ Վալերիէն ու Ֆրանսացի միւս յայտնի բանաստեղծներէն ուշագրաւ բազմաթիւ թարգմանութիւններ կատարած է Բախչինեան, բայց թարգմանչական իր պատկը հանդիսացաւ անիծեալ բանաստեղծներուն ամէնէն անիծեալին՝ Շ. Պօալէրի ամբողջական գործը:

Ճարտքը աշխատակիցներու, բայց յատկապէս Նուպար Զարեռուտեանի լընորհիւ մեր ընթերցողներուն համար Պօալէրը անունէ մը անիլին է, այնուամենայնիւ, յատուկ «Բագին»ի համար պատրաստուած հետագայ ուսումնասիրութիւնը յաւելում մըն է պօալէրեան մարդին մէջ, յատկապէս անոր համար, որ անիկա Ֆրանսացի բանաստեղծ ինքն իր մէջ դիտելէ անիլի՝ զայն դիտած է հայ գրականութեան պրիմալին ընդմէջէն, գրեթէ դարու մը երկայնքին:

Ինչպէս իր գրութեան խորագիրը կը մատնէ՝ Բախչինեան մեծաւ մասամբ հաշուի առած է Պօալէրով տարուած մտաւորականները ու գրեթէ չէ անդրադարձած անոնց, որոնց ներկայացուցիչներն է՛կը կ'ըսէ:

«...Մի օր չեղաւ, որ ոգետորուի Շարլ Բողլերի պոեզիայով, որ իրօք ինձ համար «չարութեան ծաղիկներ» էին»:

Սարսփելի պիտի ըլլար գրականութեան մը բախտը, եթէ հաշուի առնուած լրջային աւագներուն փորձառութիւնները, բայց անիլի սարսփելի պիտի ըլլար, եթէ, Աստուած մի արասցէ, հետագայ սերունդները ընդունէին անոնց բոլոր կարծիքները:

Բախտ է՝ որ Բախչինեանի թարգմանութեամբ այսօր ունինք «Չարի ծաղիկներ»ուն ամբողջութիւնը:

Բանասէր, թարգմանիչ եւ գրականագէտ Հենրիկ Բախչինեան ծնած է 1948ին, Թիֆլիս: Միջնակարգ եւ երկրորդական կրթութիւնը կը ստանայ իր ծննդավայրին մէջ, ապա կը յաճախէ Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը, զոր աւարտելէ ետք կը պաշտօնավարէ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Գրականութեան ինստիտուտին մէջ: 1974ին թեկնածուական կոչումի արժանանալէ ետք, 1989ին կը պաշտօնանէ իր դոկտորական աւարտաճառը:

Հիմնականին մէջ միջնադարեան գրականութեան խնդիրներով զբաղող Հենրիկ Բախչինեան հրատարակած է ծառայուն ուսումնասիրութիւն մը՝ Սայաթ-Նովայի կեանքին եւ գործին մասին, ինչպէս նաեւ՝ մեծանուն աշուղին տաղերը ամփոփող երեք ժողովածուներ:

Հայաստանի եւ Սփիւռքի մասուկին մէջ տասնեակ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ ստորագրած Հենրիկ Բախչինեան նաեւ կատարած է թարգմանչական աշխատանքներ, գլխաւորաբար հայացնելով ֆրանսացի հեղինակներու բնորոշ գործերը, որոնցմէ ոմանք նաեւ լոյս տեսած են առանձին հատորներով: 1990ին, Հենրիկ Բախչինեանի թարգմանութեամբ լոյս կը տեսնէ իր նախասիրած բանաստեղծին՝ Պօալէրին գրեթէ ամբողջ բանաստեղծական ժառանգութիւնը ամփոփող հատորը:

Հ. ԲԱՆՉԻՆԵԱՆ**ԲՈՂԵՐԸ ԻՆՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ**

Հայ իրականության մէջ Բողերի ստեղծագործութիւնը վաղուց լայն արձագանգ է գտել: Անցեալ դարի վերջերին արդէն «Տարագ», «Մասիս», «Աղբիւր» եւ այլ թերթերում ու հանդէսներում տպագրուած են Բողերի թէ՛ Չափածոյ եւ թէ՛ արձակ գեղարուեստական ժառանգութիւնից նմոյշներ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն թարգմանու-



թեամբ: Բողլերի առաջին հայ թարգմանիչներից է Գ. Բարուրեանը, որը թիֆլիսում լոյս տեսնող «Տարազ» շաբաթաթերթում 1897 թուականին տպագրել է փոքրիկ արձակ պոեմներից երկուսը: Այնուհետև Բողլերի մի շարք արձակ պոեմներ լոյս տեսան թիֆլիսեան երկու այլ նշանատր պարբերականներում՝ «Մշակ»ում և «Հորիզոն»ում 1910ական թուականներին՝ Ալ. Մատուրեանի, Արշ. Տեր-Յովնանեանի, Մ. Վանեկեանի, Մ. Քրաչեանի թարգմանությամբ: Դրանք, մեր կարծիքով, խթան հանդիսացան ևս հող նախապատրաստեցին Վահան Տերեանի բողլերեան թարգմանությունների համար, որոնց հանգամանորեն կ'անդրադառնանք առանձնակի:

1898 թուականին Կ. Պոլսի «Լոյս» շաբաթաթերթում լոյս է տեսնում Բողլերի «Լուսնի տխրություն» սոնետը. թարգմանիչը ստորագրել է Կ.: Մեր կարծիքով դա շաբաթաթերթի տնօրեն և խմբագիր Բ. Կիլեւերեանն է: Ահա այդ թարգմանությունը.

*Այս իրիկուն Լուսընկան աւելի ծոյլ կ'երազէ
Ինչպէս կին մը գեղանի գրկած դէզը բարձերուն,
Որ կը գգուէ մտացիր մատիկներով կեռասէ
Քընակալէ առաջ, գիրգ՝ չըջագիծն իր ծիծերուն:*

*Կունակն ինկած սընդուսէ ամպիկներուն թոյլ ու յոյր,
Ու մահամերձ, անճնատուր մարտկներու ընդ երկար,
Ո՞ր նայուածքներ կը դրկէ տեսիլքներուն միւնաթոյր,
Որ կապոյտին մէջ կ'ելլեն իբրեւ ծաղկանց թոյլ մի պար:*

*Երբ մերթ ընդ մերթ իր անպործ թուլութեան մէջ մեր երկրին
Վրայ գաղտնի թոյլ կու տայ հոսի արցունք մը նրբին,
Բանաստեղծ մը ջերմեռանդ եւ ջընազուրկ սիրահար*

*Կը ժողվէ իր ափին մէջ հիւանդ արցունքն այն աժգոյն,
Արեւակնի պէս ցոլակ, ծիածանեալ, բազմազոյն,
Ու կը պահէ Արեւէն՝ խորն իր սրտին ցաւագար:*

Նոյն՝ 1898 թուականին «Մասիս»ում լոյս է տեսնում նաև Բողլերի քանաստեղծություններից մեկ ուրիշը՝ Սիպիլի թարգմանությամբ՝ «Թրիկուան դաշնակուսներ» վերնագրով: Կարդանք նաև այդ թարգմանությունը.

*Ահա՛ ժամն ուր ծիլին վըրայ թըրթըուն
Ամէն ծաղիկ խունկ կը բուրէ գերթ բուրվառ.
Ձայներ, բոյրեր չըջան կ'ընեն օդապար.
Թախտոս շուրջպար եւ հելտազի՛ն թալկութիւն:*

digitised by A.R.A.R.©

Ամէն ծաղիկ խունկ կը բուրէ զերթ բուրվառ-
 Յաւած սըրտի պէս ջութակն է սարսըռուն.
 Թախտո՛ւտ շուրջպար եւ հեշտագին թալկութիւն:
 Երկինք շիրմի պէս չըքնաղ է եւ խաւար:

Յաւած սըրտի պէս ջութակն է սարսըռուն.
 Բընքուշ սիրտ մ'որ կ'ատէ մռայլ մահն անծայր,
 Երկինք շիրմի պէս չըքնաղ է եւ խաւար.
 Սառն արեան մէջ սուզուած է գունդն արեւուն...

Բընքուշ սիրտ մ'որ կ'ատէ մռայլ մահն անծայր,
 Կը հաւաքէ յոյս անցալին հետքն համբուն.
 Սառն արեան մէջ սուզուած է գունդն արեւուն...
 Սուրբ ճանաչէ մէջ քու յիշատակդ ինձ համար:

Գարսակզրին Բողլերի որոշ բանաստեղծութիւնների թարգմանոթեանը հանդէս է գալիս արեւմտահայ մէկ այլ բանաստեղծ եւ թարգմանիչ՝ Ալեքսանդր Փանոսեանը (Ալիսայան), որի թարգմանութիւնները լոյս են տեսնում «Ծաղիկ»ում եւ «Քազմապէպում»: Ահա «Ուրախ մեռելը» սոցետի նրա թարգմանութիւնը, տպագրուած «Ծաղիկ»ի 1905 թուականի 10րդ համարում.

Նխունջներով լեցուն պարարտ հողի մը մէջ,
 Կ'ուզեմ. նա իսկ փորել խոր փոս մ'որուն յատակ
 Ուզածիս պէս կարեմ փրոկել ոսկերքն իմ գէջ
 Ու մոռացման մէջ ննջել զերդ կէտ մ'ալեաց տակ:

Կըտակներն ու շիրիմներն ես կ'ատեմ բոլոր
 Աշխարհէն շիթ մ'արցունք հայցելէ աւելի
 Պիտ' ուզէի, ո՛ղջ, որ ազուա՛ք գային մուրր,
 Փարատէի՛ն կո՛ւշտ, կուշտ դիակն իմ զազրելի:

—Որդեր, անաչք եւ անականջ սեւ պար դժխեմ,
 Տեսէք, մեռել մ'որ ձեզ կու գայ դուարթագէմ.
 Դուք հեշտախոյզ իմաստասէ՛րք, փտութեան որդի՛ք.

Աւերակիս մէջ մտէ՛ք անփոյթ եւ ինձ ըսէ՛ք,
 Թէ տակաւին նոր տանջանք մը պահած ունի՞ք
 Հին, անհողի, մեռած մեռել մարմինիս հէզ:

Յատկանշական է, որ նոյն այդ թուականին նոյն «Ծաղիկ» պարբերականի էջերում Բողլերի մի բանաստեղծութեան («Քարձրա-
 digitised by A.R.A.R.©

ցում») թարգմանութեամբ հանդէս է եկել արեւմտահայ մէկ ուրիշ բանաստեղծ՝ Արտաշէս Յարութիւնեանը: Վերջիցիս բողեւրեան թարգմանութիւնները, սակայն, անլի շատ տեղ եւն գտել «Արեւելեան մասնուր»ի էջերում՝ 1905-1907 թուականներին: Ահա «Համապատասխանութիւններ» սոցնետի նրա կատարած թարգմանութիւնը.

*Անհուն տաճար մ'է ընութիւնն, ուրտեղ սիւներ կենդանի
կը թողուն մերթ խուսափիլ խօսքեր սարտամ ու շրփոթ.
Կ'անցնի մարդը ընդմէջէն սեմպոլներու անտառին,
Որ կը դիտեն զայն յուշիկ, ակնարկներով ընտանի:*

*Հեռուներէն շրփոթուող իբրեւ երկայն արձագանգ,
Աղջամղին, մթաստուեր միութեան մը մէջ խորին,
Անծիր՝ նման գիշերուան, իբրեւ լոյսը լայնածիր,
Բոլորեր, գիծեր ու ձայներ տան իրարու պատասխան:*

*Բուրմունքներ կան թարմ իբրեւ մատաղ միսը մի մանկան,
Քաղցրիկ, իբրեւ ջինջ հովուերգ, կանանչ իբրեւ մրգաստան,
-Ուրիշներ ալ՝ ազաւաղ. պերճ, հարուստ եւ յաղթական,*

*Սփիւռ ցրուուն են նոքա նման անհուն իբրեւուն,
Իբրեւ յամպար, իբրեւ մուշկ, իբրեւ կնդրուկ, իբրեւ խունկ,
Որ կը տազեն յոյզքն ու խանդ մեր մտքին ու ջիղերուն:*

Յիշատակելի է մի թարգմանութիւն, որ նույնպէս լոյս է տեսել 1905 թուականին, այս անգամ նորից «Մասիս»ում: Դա «Փիւնու հոգի» բանաստեղծութիւնն է, որը Տիգրան Ելքեանեանը ինչ-ինչ նկատառումներով թարգմանել է գրաբար: Բերենք միայն առաջին տունը.

*Արկեալ ի շիշ՝ յերեկոյի միում այսպէս
Ձայնէր հոգի գինույ: «Ան քեզ երգեմ, է՛ մարդ,
Յապակեղէն ի կարմրախից արգելանէս.
Ան քեզ, այ՛ հէջդ, երգեմ ի սէր եւ ի լոյս գուարթ...»*

Նոյն՝ 1905 թուականին «Անահիտ»ի էջերում Բողլերի մի քանի բանաստեղծութիւնների թարգմանութեամբ հանդէս է գալիս Արշակ Զօպանեանը, որը հաստատիւմ իր որդեգրած սկզբունքին, ներկայացնում է ճշգրիտ տողացի թարգմանութիւններ: Ահա «Աղքատների մահը» («Խեղճերուն մահը») նրա թարգմանութեամբ.

*Մահն է, որ կը սփոփէ, աւա՛ղ, ու կ'ապրեցնէ.
Նըպատակն է կեանքին, ու միայն լոյսն է, որ*

*Մեզ իքսիրի մը պէս կը ցնցէ, կ'ապրեցնէ,
Ու մինչեւ իրիկուն քալելու սիրտ կու տայ:*

*Փոթորիկին, ձիւնին ու եղեամին մէջէն՝
Լոյսն է, որ կը շողայ հորիզոնին վրայ սեւ.
Ուղեգրքին յիշած պանդոկն է անուանի,
Ուր պիտի կշտանանք, հանգչինք ու քնանանք:*

*Հըրեշտակ մըն է, որ մատներուն մէջ մաշնիս՝
Ունի քունն ու շընորհն անճառ երազներուն
Եւ կը շտկէ մահիճն աղքատ ու մերկ մարդոց:*

*Փառքն է Աստուածներուն, շտեմարանը միտիկ,
Քրտակն է աղքատին ու հայրենիքը հին,
Մեծ դուռն է՝ անծանօթ Երկնքին վրայ բացուող:*

Բողոքի բանաստեղծութիւններից մեկի թարգմանությամբ Բանդէւ Է եկել նաև Դանիել Վարուժանը: Նա թարգմանել է «Գեղեցիկը» («Գեղեցկություններ») սոնետը, որտեղ արտայայտուած բողոքեան գեղագիտական ընկալումները հոգեհարազատ են եղել Բայ Մեծ բանաստեղծին: Ի դեպ, 1908 թուականին գրած իր նամակներից մեկում նա ասել է. «Լաւ թափանցած եմ գէթ Օեքսփորը, Հիւկոն, Ռուսոն, Պօտլերն ու Աստուածաշունչը»: Իսկ դրանից մեկ տարի յետոյ գրուած մի նամակում նշել է. «Ո՛չ մեկ ժամանակ Պօտլերի տողերը ըմբռնած էի՝ քան Ռիմս»: Բերեմք նաև Վարուժանի թարգմանութիւնը.

*Գեղեցիկ եմ, ո՛վ մարդիկ, իբրև երազ մը կըճեայ,
Եւ ծոցըս՝ (ուր մէն մի ոք կը սպաննուի ըստ կարգին)
Ըստեղծուած է, որ շընչէ բանաստեղծին համար սէր,
Սէր մը նիւթին պէս անխօս, յաւերժական Անոր պէս:*

*Ես կապոյտին մէջ կ'իշխեմ իբրև ըսփինքս մ'անհասու,
Կարապներու ճերմակին կը գուգեմ սիրտ մը ձիւնէ,
Կ'ատեմ շարժումն՝ որ կ'ընէ ճերմակեղէն ըզգեստէն
Իրանը մերկ. ու երբեք չեմ լար, երբեք չեմ խնդար:*

*Կնցուածքիս գէմ հոյակապ, որ ինձ տրրուած կը թըռկ
Անդրիներէն վեհադէտ, բանաստեղծները բոլոր
Օրերն իրենց պիտ' վատնեն ուսումներու մէջ դաժան.*

*Ձի դիւթելու համար այդ սիրահարները հընազանդ՝
Ունիմ ամէն բան չըփնաղ պատկերող ջինջ հայրենեք.
Որ աչքերս են, լայն աչքերս յաւերժորէն լուսաւոր:*

Արեւմտասիւս իրականութեան մէջ Բողիկերը գտաւ իր ամենամեծ թարգմանչին ի դէմս Վաճան Թէքէեանի, որը «Չարի ծաղիկներ»-ից կատարել է տասնեակ թարգմանութիւններ (Քրատարակուած են նրա Ամբողջական երկերի ճրդ հատորում, Կահիրէ, 1950): Բերեանք այդ թարգմանութիւններից մէկը.

*Ես երկրի մը անձրեւոտ թագաւորին եմ նման,
Հարուստ սակայն անկարող, երիտասարդ բայց շատ փեր,
Որ իր խոնարհ ուսուցչաց կ'արհամարհէ քրօնքներն
Ու կը մեռնի ձանձրոյթէն՝ իր կենդանեաց յանդիման:
Ձեն բանար սիրտն իր զարկած երէն եւ ո՛չ իր բազէն,
Ո՛չ ժողովուրդն իր՝ մեռնող պատշգամին իր դիմաց:
Մաղբ-խայտառակ գեղօնն իսկ իր հոպիտին նախընտրած՝
Այլ այս դաժան հիւանդին չի վաներ սեւը գլխէն:
Շուշանադրօջ իր ծաւիճն է կարեւո փոս մը խաւար,
Եւ բամբիւնները՝ գտնող ամէն իշխան գեղանի,
Ձեն գիտեր ինչ հնարել իբր արդուզարգ անպատկառ՝
Որ գէթ ժպիտ մը խըլնն այս կմախքէն դեռատի:
Գիտունը այն, որ իրեն համար ոսկի կը չինէ,
Ձէ կըրցած իր հողիէն զատել այդ տարրը պըղտոր,
Ոչ ալ արեան լողանաց մէջ, աւանդուած Հոռովմէն,
Զոր կը յիշեն զառամած հզօրք ինկող օրէ օր,
Ան տաքցնել յաջողած է այս դիակն յոգնատանջ՝
Ուր արեան տեղ կը հոսի Լեթէի ջուրը կանաչ:*

Արշակ Չօպանեանի թարգմանութիւններից երեք տասնամեակ յետոյ «Անահիտ»ը իր էջերը տրամադրում է բողիկերեան նոր թարգմանութիւնների, որ կատարել էր Հր. Քաջարեանը: Դրանց մէջ են «Յաբաւացութիւն սատանայի», «Փարոսներ», «Դատապարտուած կիներ», «Ներքող իմ Տրանստազին» բանաստեղծութիւնները: Վերջինը, Բողիկերը գրել է լատիներէն, ուստի եւ իսկ թարգմանիչը յարմար է գտել այն թարգմանել գրաբար: Կարդանք այդ ներքողի առաջին ներք տունը.

*Քընարաւ նորով երգեցից ըզքեզ,
Որ օ՛րջ արձակես
Ի միայնութեան օրտի, ո՛ պարտէզ:*

*Ի նաղկանց պսակօ՛ք լի՛լիր զարդարուն,
Ո՛ կին փափկատուն,
Որով գտանես մեղաց թողութիւն:*

digitised by A.R.A.R.®

*Ջերդ ի Լեթէէ, յարարչէ բարեաց,
Համբոյրս բազումս ի քէն ընկալայց,
Ո՛ր մազնիսական ուժով տոգորած...*

Նոյն այս ժամանակ Բողիերի մի շարք բանաստեղծություններ է թարգմանում վաղամեռիկ բանաստեղծ Սեման, որի թարգմանությունները լոյս են տեսնում շատ անելի ուշ՝ 1984 թուականին, Ուսթերթաունի «Պայքար» հանդէսում: Ահա «Կափարիչը» բանաստեղծութեան նրա կատարած թարգմանությունը.

*Հողին վրայ թէ ծովուն, ո՛ւր ալ երթաս, ամէնուր,
Ներքեւ ճերմակ արեւին, կամ կլիմայի մը տակ հուր,
Ըսպասարկող Յիսուսի կամ տարփածու կիթերեան,
Միբանափալ կըրեսոս կամ դալիահար մուրացկան,*

*Քողքննի կամ գիւղացի, վաշկատուն թէ նստակեաց,
Պզտիկ ուղեղն ալ անոր ըլլայ արթուն կամ քրնած՝
Կը կըրէ մարդն ամէնուր անդունանքը խորհուրդին
Ու միշտ վախկոտ ակնարկով աչքերն ի վեր կը յառին:*

*Վերը, երկինքը պատն է դամբարանին՝ դինք խեղդող-
Լուսաւորուած պատուանդանն՝ երգիծական արարին՝
Ուր հսպիտներ կը չրչին վրան արնաներկ յատակին:*

*Յոփակեացին՝ դարհուրանքն է յոյն՝ յիմա՛ր ճգնողին,
Երկինք, ո՛վ սեւ կափարիչ այն ահագին կաթնային՝
Ուր կ'եռեփի մարդկութիւնն անվերջորէ՛ն, ցաւազի՛ն...*

1960ական թուականներին քողիերեան նորանոր թարգմանություններ են տպագրում նաև սփիւոքսիայ այլ պարբերականներում՝ «Բագին»ում, «Ծիրակ»ում (թարգմանիչներ Արսէն Երկաթ, Մ. Կիրճեան):

1970ական թուականների սկզբներից Բողիերի ստեղծագործութեան թարգմանութեամբ զբաղում է նաև տողերիս հեղինակը, առանձին գրքերով հրատարակ հանելով նախ փոքրիկ արձակ պոեմներ (Տէրեանի թարգմանությունների հետ միասին, Երեւան, 1975) ապա՝ «Չարի ծաղիկները» (1990): Բողիերի որոշ գործեր թարգմանել են նաև մերօրեայ թարգմանիչներ Ա. Ալիքեանը, Ն. Վարդանեանը, Պ. Թիրաքեանը եւ ուրիշներ:

Բողիերը որոշ չափով արժանացել է նաև հայ գրական-քննադատական մտքի գնահատմանը: Դեռևս 1902 թուականին Պոլսի «Արեւելք» պարբերականը տպագրել է «Բողիերի գրական դիմանկարը»՝ Մ. Պարսամեանի հեղինակությամբ: Յիշարժան է նաև Բողիերի մասին

Ծախան նախալիի ընդարձակ յօդուածը, որ լոյս է տեսել 1918-1919 թուականներին՝ «Փիւնիկ» ամսաթերթում: Ճրանսիացի բանաստեղծի պոեզիան ներկայացնող ու լուսաբանող յօդուածներ են լոյս տեսել 1980ական թուականներին՝ «Քաղմալէպ»ի, «Քազին»ի, «Աշխարհ»ի եւ այլ սփիւռքահայ պարբերականների էջերում:

Թափանցելով հայ իրականութեան մէջ, Բողիերի խոր ու նորատիպ պոեզիան որոշակի ազդեցութիւն է ունեցել հայ բանաստեղծութեան վրայ: Բացի Տէրեանից, որին կ'անդրադառնանք ստորեւ, Բողիերի որոշակի ներգործութիւնն են կրել Ե. Տէմիրճիպաշեան, Դ. Վարուժանը, Ա. Յարութիւնեանը եւ անգամ Դ. Դեմիրեանը: Ինչպէս նկատուած է, վերջինս 1904 թուականին գրել է մի բանաստեղծութիւն, որը Բողիերի «Օտարականը» փոքրիկ արձակ պոեմի անմիջական արձագանգն է: Ահա այդ բանաստեղծութիւնը.

—Ասա, ի՞նչ ես պաշտում դու.
«Մոռացել եմ, չգիտեմ»:
—Ունե՞ս ընկեր, բարեկամ.
«էլ չեմ պտրում, չգիտեմ»:
Բայց ես արդէն ձանձրացած
Ամպ եմ օտար, անհանդարտ,
Բա՛րճր, մենակ, հեռացած՝
Գնում եմ լուռ, անընդհատ:
Ու կապոյտն եմ սիրում ես,
Կապոյտը շինջ ու ժպտուն,
Ու ձգտում եմ ամպի պէս
Դէպի հեռուն ու հեռո՛ւն:

Համեմատելու համար բերենք նաեւ Բողիերի փոքրիկ արձակ պոեմը՝ Վ. Տէրեանի թարգմանութեամբ.

«Ամէնից շատ ո՛ւմ ես սիրում դու, ասա՛, հանելուկ-մարդ,
հօ՛րդ, մօ՛րդ, քրո՛ղի, թէ՞ եղբորդ:
—Ես չունեմ ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ քոյր, ո՛չ եղբայր:
—Բարեկամների՞դ:
—Դուք ասի՛ք մի խօսք, որի իմաստն ինձ անյայտ է մինչեւ
օրս:

—Հայրենի՞քդ:
—Ես չգիտեմ ո՛ր լայնութեան տակ է գտնւում նա:
—Գեղեցի՞կը:
—Հանութեամբ կը սիրէի, եթէ աստուածային ու անմահ լինէր:
—Ոսկի՞ն:

—Ատում եմ, ինչպէս ցօղք Ա.Ք.Ք.Ք.Ք.Ք.
digitized by Google

*—Հապա ի՞նչն ես սիրում զու, արտասովոր օտարական!
—Ամպե՛րն եմ սիրում... ամպե՛րը, որ սահում են... այնտե՛ղ,
բարձրո՛ւմ... այն սքանչելի ամպե՛րը...»:*

*
* *

Իր ստեղծագործության ուղին նոր սկսող Տերեանն արդեն բաական տարուած է եղել Բողիերի պոեզիայով: Ճրաներէնի ուսումնասիրութեանը զուգընթաց նա կատարել է իր առաջին թարգմանութիւնները արձակ պոեմներից: 1907 թուականին արդէն պատրաստ են եղել որոշ թարգմանութիւններ, բայց հոգեկան ու նիւթական ծանր վիճակը խանգարել է նրա թէ՛ ինքնուրոյն եւ թէ թարգմանչական աշխատանքին: 1907 թուականի Ապրիլի 20ին Օ. Օհանջանեանին գրած նամակում նա «աներեակայելի յոգնած» եւ ընկճուած տրամադրութեամբ ասել է. «Ձեռքս զարկի ֆրանսերէնին՝ չեմ կարող: Բողիերին գրողի ծոցը նետեցի» («Երկերի ժողովածու», հտ. 3, Ե., 1975, էջ 222): Նոյն այս նամակից իմանում ենք, որ նա Բողիերի թարգմանութիւնները տըպագրելու առաջարկով դիմել է «Մուրճ»ի խմբագիր Լ. Սարգսեանին, որ պատասխանել է, թէ «Հոնորար չի կարող վճարել»: Այնուհետեւ Տերեանն իր թարգմանութիւնները յանձնում է Թիֆլիսում լոյս տեսնող «Գեղարուեստ» հանդէսին (խմբագիր Գ. Լեւոնեան), որի մասին վրկայում է 1908 թուականի Ապրիլի 22ին Թիֆլիսից Յոլակ Խանգաղեանին ուղարկուած նամակը. «Բողիերը յանձնեցի «Գեղարուեստ»ին, որ խոստացաւ վարձատրել, նոյնիսկ գուցէ *աւան* տայ մի քանի ոտքի» («Երկերի ժողովածու», հտ. 2, Ե., 1973, էջ 386): Սակայն Տերեանի այդ թարգմանութիւնները լոյս չտեսան «Գեղարուեստ»ում: Յիշեալ նամակից ուղիղ երկու շաբաթ անց (1908 թուականի Մայիսի 3ին) Տերեանը Խանգաղեանին յղած նամակում գրել է. «Բողիերս տուի «Գեղարուեստ»ին, որ խոստացաւ տպագրել եւ վարձատրել — տեսնենք: Դա էլ նիսիս է, որովհետեւ այդ թերթը ըստ երեւոյթին արդէն կաղում է, որովհետեւ Լեւոնեանը զնացել է Բաքու՝ փող որսալու» («Երկերի ժողովածու», հտ. 3, էջ 254): Ահա թէ ինչու նորաբաց «Գեղարուեստ»ը չի կարողացել վճարել բանաստեղծին ու տպագրել նրա թարգմանութիւնները:

Այնուհետեւ Տերեանն իր թարգմանութիւնները իր երկու բանաստեղծութեան հետ ուղարկում է Յ. Թումանեանին՝ «խոնարհաբար խնդրելով» ուղարկել 25 ոտքի եւ իր ուղարկած նիւթերը տպագրել «Հորիզոն»ում: Այս նամակն անթուակիր է. գրուած պէտք է լինի մինչեւ 1911 թուականը, քանի որ այդ թուականի «Հորիզոն»ի Սեպտեմբերի 1ի համարում, ըստ երեւոյթին Թումանեանի ընտրութեամբ, digitised by A.R.A.R.®

լոյս է տեսնում Տէրեանի թարգմանութիւններից մէկը՝ «Ծուցն ու սրուակը»: Մի քանի տարի անց, Բաքում լոյս տեսնող «Գործ» ամսագրի խմբագրութիւնը առաջարկում է Տէրեանին տպագրութեան պատրաստել Բողիերի արձակ պոեմների թարգմանութիւնները: 1916 թուականի ամրան կէսերին բանաստեղծը Պետրոգրադից նամակ է գրում Յ. Խանգաղեանին, որն այդ ժամանակ «Գործ»ի խմբագիրներից էր, և տեղեկացնում է. «Զեր ամսագրի համար Բողիերը պատրաստում եմ, բայց բանն այն է, որ ես նրա այդ պոեմները բոլորը չեմ թարգմանել, այլ միայն կէսը: Գուցէ բոլորը թարգմանեմ — թէ՞ պարզանք (մօտ 30 հատ) բա կը լինի: Արտագրում եմ և տեսնում, որ շատ ուղղումների կարիք է լինում — բնական է, 10 տարի առաջ եմ սկսել թարգմանութիւնը» («Երկերի ժողովածու», հտ. Ե., 1979, էջ 284):

1916 թուականի Հոկտեմբերի 7ին Վ. Տէրեանն իր կատարած թարգմանութիւններից 25ը Պետրոգրադից ուղարկում է Խանգաղեանին, հետեւեալ կարեւոր տեղեկութիւններով, որ հարկ ենք համարում մէջբերել.

«Ուղարկում եմ անա... Բողիերի «արձակ» պոեմներից 25ը, թէև «թարգմանած» ունէի էլի մի քանի հատ (իսկ ընդամենը 50 հատ է), որովհետև ժամանակ չկար իսկի: Բանն այն է, որ, ինչպէս գիտես, ես վաղուց «թարգմանել էի» այդ պոեմները և ենթադրում էի, թէ պիտի միայն արտագրեմ ու թեթև կերպով սրբագրեմ, բայց երբ վերջրի ու սկսեցի արտագրել, տեսայ, որ այդ թիւն թարգմանութիւններս պէտք է թիմնոյին վերամշակել — դրա համար էլ մի քանի օր ուշացաւ այս նիւթերի առաքումը: Չեմ կարող ասել, որ գոհ եմ թարգմանութիւններովս և այս դրութեան մէջ՝ թէև աշխատեցի բաւական եռանդուն, ճիշտ է, մի քանի օր միայն և այն լոգնած դրութեան մէջ... Չկարծես նաև, որ այդ պոեմներն ընտիրներն են — ո՛չ, դա պատահական մի բան է: Զթարգմանածների մէջ կան սքանչելի բաներ, բայց ես գրեթէ բոլոր պոեմներն եմ սքանչելի համարում, ուստի այդ պոեմների թարգմանութիւնը լոկ պատահական բան է — ախր ես ամբողջն էի ուզում թարգմանել մի ժամանակ (10 տարի առաջ), թարգմանել և հրատարակել: Եթէ տանելի գտաք թարգմանութիւններս և ուզեցաք մնացեալն էլ մի օր սպել — մի ուրիշ անգամ կը թարգմանեմ: Թէ՛ն պէտք է խոստովանեմ, որ դա բաւական դժուար գործ է և ոչ միայն իմ շատ համեստ ֆրանսագիտութեան (շատ մեղմ եմ արտայայտուում), այլև այն պատճառով, որ Բողիերը շատ նուրբ, գրեթէ աննկատելի ոճական գծեր ունի, որ հայերէն արտայայտելու կարողութիւն չէի գտնում յաճախ, թէև հասկանում էի նրա ասածի էութիւնը... Ինչ հնար էր այս կարճ ժամանակի ընթացքում արի և եռանդ չխնայեցի: Յամենայնդէպս թարգմանութիւններս միանգամայն բարեխիղճ եմ կատարել և ամէն ճիգ թափել եմ բնագրին մօտ լինել: Եթէ սխալներ ու սայթաքումներ նկատես՝ բարի եղիր ուղղելու, եթէ միայն, ի հարկէ, հեշտ

ուղղելի են, քայց զգուշացնեն, որ թիրիմացութեան մէջ չընկնես ու չլինի թէ յանկարծ իմ գրածը (նրա անկատարեալ լինելու պատճառով) սխալ ըմբռնես ու մի նոր սխալ առաջ գայ, երբ ուղղես: Ինչեւէ, աչքի անցկացրու եւ գրիր քո տպատրութիւնը, որովհետեւ եւ այնքան շտապ եմ կատարել, եւ զլուխս այնքան յոգնած էր, որ անկարող եմ դատել՝ որքան բաւարար են թարգմանութիւններս» («Երկերի ժողովածու», հտ. 4., էջ 283-284):

Մենք յատուկ դիտարութեամբ բերեցինք այս ամբողջ հատուածը, որտեղ արտայայտուած է Տէրեանի կարծիքը Բողիերի, նրա արձակ պոեմների եւ իր թարգմանութիւնների մասին: Այս վկայութեան շնորհիւ կարող ենք նաեւ պատկերացնել, թէ ինչ բծախնդրութեամբ ու պատասխանատուութեամբ զգացումով է Տէրեանը կատարել բողիերեան եւ առհասարակ իր թարգմանութիւնները: Նամակը հաղորդում է նաեւ մի քանի այլ կարեւոր տեղեկութիւններ, որոնց վրայ ուշադրութիւն է դարձրել Վ. Պարտիզուցին. «Առաջին՝ Տէրեանը Բողիերից անցած տարիների իր թարգմանութիւններից խիստ դժգոհ է եղել... եւ դրանք «Քիմնովին վերամշակել է»: Երկրորդ՝ տպագրուած 25ից բացի թարգմանած ունեցել է «էլի մի քանի հատ»: Հաւանօրէն հինգ հատ... Թէ ի՞նչ է պատահել այդ մի քանի, թերեւս դեռ «Քիմնովին» չվերամշակուած պոեմների հետ, դժուար է ասել: Երրորդ՝ Տէրեանը մտադիր է եղել, անէլին՝ խոստացել է մնացեալներն էլ «մի ուրիշ անգամ թարգմանել» («Երկերի ժողովածու», հտ. 2, էջ 387):

Տէրեանի թարգմանութիւններից 11ը լոյս են տեսնում «Գործ» ամսագրի 1917 թուականի ինն համարում: Խմբագրութեան կողմից տրուած ծանուցման մէջ նշուած է, որ «Տէրեանը խոստացել է ապագայում Բողիերի փոքրիկ պոեմների ամբողջական թարգմանութիւնը, որ մի գեղեցիկ նուէր կը լինի հայոց գրականութեան»: «Գործ»ի երկրորդ համարում լոյս են տեսնում մնացած 14 արձակ պոեմները: Տէրեանի կատարած թարգմանութիւնները հիմնականում բարձր գնահատականի են արժանանում հայ մամուլի էջերում:

Տէրեանն, ըստ երեւոյթի, չի կատարել Բողիերի միւս արձակ պոեմների թարգմանութիւնը, ինչպէս ցանկացել ու խոստացել էր: Պ. Մակիճեանի բացատրութեամբ, դրանից յետոյ նա ապրել է ընդամենը երեք տարի, զբաղուած է եղել քաղաքական անդու գործունէութեամբ, եղել է ծանր հիւանդ, «ուստի ինքնին հասկանալի է, թէ ինչու Տէրեանի խոստումը մնաց անկատար» («Երկերի ժողովածու», հտ. 2, էջ 387):

Տէրեանն, անտարակոյս, ծանօթ է եղել նաեւ «2արի ծաղիկներ»ին, որից, սակայն, թարգմանութիւններ չի արել: Պահպանուել է միայն «Փարոսներ» բանաստեղծութեան մի քառատողի նրա թարգմանութիւնը, որ կատարուած է 1915ի վերջին կամ յաջորդ տարուայ սկզբին՝ Ա. Կարինեանի խնդրանքով: Վերջինս վկայութեամբ, Տէր-

եանին չեն բաւարարել այդ քառասորի ոռուերէն երկու թարգմանութիւնները: «Նա նորից կարդաց Ֆրանսերէն բնագիրը եւ ապա սկսեց թարգմանել՝ ջանալով հարազատօրէն բացայայտել պոետի մտորումների իսկական իմաստը»: («Վահան Տէրեանը ժամանակակիցների յուշերում», Ե., 1964, էջ 363): Այդ քառասորը ներկայացնում է իսպանացի մեծ նկարիչ Ֆրանցիսկո Գոյային: Ահա այն.

*Գոյա՛, մըթին մըղձաւանջ՝ լի անծանօթ իրերով.
Ահա սաղմեր մարդկային եփ են տալիս շաբաշում,
Հայելու դէմ պառոււներ, մանուկներ մերկ ոտքերով՝
Հրապուր գարշ զեւերի բաղձանքներին վաւաշուն:*

*
* *

Բողիքը եւ Տէրեանը բաւական մերձ ու հոգեհարազատ են իրենց մարդկային ու բանաստեղծական ճակատագրով, ստեղծագործութեան ոգով եւ այն գրապատմական դերով, որ ունեցել են իրենց ազգային մշակոյթի մէջ: Երկու բանաստեղծներն էլ, կէս հարիւրամեակի տարբերութեամբ, ապրել են յեղափոխական մթնոլորտում եւ ենթարկուել անողոք հարուածների:

Ինչպէս ասել է Գէօթէն, «Աշխարհը մնում է միշտ նոյնը, հանգամանքներն են կրկնում. մի ժողովուրդ ապրում, սիրում եւ զգում է, ինչպէս միւսը, ուրեմն ինչո՞ւ մի բանաստեղծ չի կարող գրել այն, ինչ գրում է մէկ ուրիշը»: Յիրաւի, պատմական համապատասխան իրավիճակները ծնում են համանման տրամադրութիւններ, զեղարուեստօրէն համահունչ երկեր: Ֆրանսիացի եւ հայ բանաստեղծին համակել են մեկութեան ու թախծի, լատենութեան ու վիատութեան, կենսապրօթի տագնապների ու մելամաղձի համանման զգացումները՝ երբեմն անողոք ու կենսահաստատ, յաճախ՝ դառն ու հիւանդագին:

1907 թուականին գրուած մի նամակում Տէրեանն ասել է. «...Յոգնել եմ, աներեւելայելի յոգնել: Եւ ահա ուզում եմ մեկնել մի որեւէ տեղ, մի քիչ հանգստանալ՝ «ուր ուզում է լինի, միայն թէ հեռու այս աշխարհից», ինչպէս ասում է Բողիքը» («Երկերի ժողովածու», հտ. 3, էջ 221): Նման վիճակներից են ծնուել Բողիքի եւ Տէրեանի «տխուր եւ թախտական» հոգու «ճամբորդութիւնները»՝ վերածուելով մարդու ներաշխարհի չարն ու բարին բացայայտող, ինքնավերլուծական շքեղ բանաստեղծութիւնների:

Թե՛ Բողիքի եւ թե՛ Տէրեանի քնարերգութեան գլխաւոր հերոսը միայնակ, արտաբնական է, Բողիքի մտքով օտարական է աշ-

խարհում, որ ասում է ոսկին, կորցրել է հաւատը գեղեցիկի հանդէպ եւ սիրում է սքանչելի ամպերը՝ վերերկրային ուրուացնորքները, ձգտելով դէպի անյայտ հեռուն, տեղերի ու երազների ոսկէ աշխարհը: Չար ու դաժան իրականութեան, բիր ու պաղ մարդոց մէջ այդ օտարականը փարում է գիշերին, մեղութեանն ու լուրջեանը, որտեղ մաքրագործում է նա եւ գտնում իր հոգեւոր երանութիւնը:

Արձակ պոեմներից մէկի մէջ, որ թարգմանել է Տէրեանը, բողջերեան հերոսն ուղղակիօրէն ասում է. «Դժգոհ ամէնից եւ ինքս ինձնից՝ ինչպէ՞ս կ'ուզէի ես մի փոքր մաքրուել, հոգով վերանայ գիշերի այս մեղաւոր խաղաղութեան ու լուրջեան մէջ»: Բացարձակապէս նոյն իղձերով է համակուած նաեւ Տէրեանի քնարական հերոսը, որ վերանում է գիշերի՞ ու աշնան մշուշի մէջ, ուր «կայ սիրոց անուշ մի հիացում», «մոռացութեան մի ակնթարթ»: Անհրաժեշտ է նշել, որ թէ՛ հայ, թէ՛ ֆրանսիացի բանաստեղծի մօտ այս մեղաւոր ու գիշերատենչ հերոսը ոչ թէ սեւամաղձ մի յոռետես է (թէեւ դառը մեղամաղձը յաճախ է պատում նրան), այլ պայծառ երազներով իր հոգին օրօրող մի մեղակեաց, որի տիրութիւնը լուսաւոր է, եւ տառապանքը՝ վայելքի նման:

Բանաստեղծական մեծ վարպետութեամբ արտայայտելով ժամանակի մտաւոր անհատի տրամադրութիւններն ու բարդ հոգեվիճակները, թէ՛ Բողջերը եւ թէ Տէրեանը դարձան մեծագոյն նորարարներ. առաջինը՝ ֆրանսիական եւ համաեւրոպական, միւսը՝ հայ քնարերգութեան մէջ: Որպէս աղպիսին, նրանց երկուսի ստեղծագործութիւնն էլ թշնամաբար ընդունուեց յետադէմ ուժերի կողմից: Բողջերի «Չարի ծաղիկներ» ժողովածուն ենթարկուեց դաժան դատաքննութեան: Տէրեանի «Մթնշաղի անուրջները» եւս պակաս հարուածներ չստացաւ հնամուտների բանակից: Սակայն երկու բանաստեղծներին էլ ողջունեցին իրենց մեծ ժամանակակիցները. մի դէպքում՝ Հիւզոն, Ֆլոբերը, Վիկյին, միւս դէպքում՝ Թումանեանը, Իսահակեանը:

Բողջերի քնարերգութիւնը շացեց մի նոր աշխարհ եւ պայմանաւորուեց հետագայ գրեթէ բոլոր գրական ուղղութիւնները: Դրանցից մէկն էր սիմվոլիզմը, որին ամէնից անկի յարեց Տէրեանը: «Սիմվոլիստների աշակերտ Տէրեանը փորձեց հայ պոեզիային հարազատացնել այն ամէնը, ինչ ձեռք է բերել եւրոպական (մասնատրապէս ռուսական ու ֆրանսիական) պոեզիան ամենավերջին տասնամեակներում»,— գրել է Վ. Բրիւսովը: Տէրեանը գրեթէ նոյն դերը կատարեց հայ գրականութեան մէջ, ինչ Բողջերը՝ ֆրանսիական: Նրա ստեղծագործութեամբ էլ աւարտում է պայմանակաճօրէն ասած՝ հայ դասական բանաստեղծութիւնը եւ սկսում է բոլորովին նոր մի փուլ: Ծշմարիտ էր Իսահակեանը, որ ասել է Տէրեանին. «Հիմա քո հազարն է»՝ քո իշխանութեան ժամանակը: Միանգամայն ճշմարիտ էր եւ ինքը՝ Տէրեանը, երբ ասել է, թէ Թումանեանից ու Իսահակեանից յետոյ «կա՛մ նոր, բոլորովին

նոր երգ պէտք է ասել, կա՛մ պիտի լինի»: Դա դարաշրջանի պահանջն էր, որ քաջ գիտակցել է Տէրեանը, ուստի եւ ամենայն խորութեամբ նախապատրաստուել՝ ասելու իր «բոլորովին նոր երգը»: Այդ երգը ինչն է իսկապէս նորովի եւ իրենով լցրեց ամբողջ մթնոլորտը...

Բողիերի բանաստեղծական նորօրինակ ոճի ամենադիպուկ քննադրումներից մէկը տուել է Թեոֆիլ Գոթիէն մեծ բանաստեղծին նըւիրուած իր ակնարկում.

«Չարի ծաղիկներ»ի բանաստեղծը սիրել է այն ոճը, ինչը անճշտօրէն անուանում են անկումային, որն իրականում զառամող քաղաքակրթութիւնների մայրամուտի պահն է. այն ոճը, որ խորն է, բարո, ճարտար, նրբերանգներով ու որոնումներով լի, որ դուրս է գալիս սովորական լեզուի սահմաններից, իր արտայայտութիւնները փոխառում տեխնիկական բոլոր բառաթերքներից, օգտւում բոլոր ներկայականներից, բոլոր ստեղծաշարերից, ձգտում է որսալ գաղափարը՝ նրա ամենամահողորդելի նրբութիւններով, իսկ ձելը՝ նրա ամենամշուշոտ ու անորսալի գծագրերով...: Այդ ոճը նոր ձեւի մէջ արտայայտած նոր գաղափարները հաղորդում է նոր, մինչ այդ չլսուած բառերով: Ի հակակշիռ դասական ոճի, նա տեղի է տալիս մթամածութեան, որի մէջ տարտամօրէն վիտում են սնահաստութեան դիմակները, անքնութեան ահաբեկող տեսիլները, գիշերուայ սարսափները, խղճի խայթերը, որոնք ցնցում ու արթնանում են ամենաչնչին շրշիւնից, հրէշաոր անուրջները, մարմնաւորուել չկարողացող, խաւարածին ուրուացնորքները, որոնք զարմանք կը պատճառէին ցերեկուայ լոյսին, այն ամէն մշուշապատը, անձեւն ու անհասկանալի ահաւորը, որ թաքցնում է հոգին իր ամենագաղտնի խորքերում»:

Այս ամէնը, որ մեզ օգնում է հասկանալ Բողիերի «միգամածութիւնները», կարող է նպաստել նաեւ անելի լա հասկանալու Տէրեանի ոճը, անելի լա ըմբռնելու նրա լեզուի երաժշտութիւնը, անելի ճիշտ մեկնաբանելու նրա մշուշներն ու մթնշաղները, նրա անուրջներն ու թախծոտ երազները:

Բողիերի ստեղծագործութիւնը եւ նրանից սերուած երոպական քնարերգութիւնը Վ. Տէրեանի ստեղծագործութեան կարեւորագոյն ակունքներից են: Տեսանք, որ բանաստեղծը դեռեւս իր գրական գործունէութեան սկզբում սքանչացել է Բողիերի արձակ պոեմներով եւ թարգմանել դրանց զգալի մասը: Ի դէպ, նա թարգմանել է նաեւ որոշ նմոյշներ Վերհառնի, Հայնէի, Վելլենի բանաստեղծութիւններից: Յատկանշական է, որ Իսահակեանը դեռեւս 1905 թուականին Տէրեանի հետ ունեցած իր մի հանդիպումը յիշելով, գրել է. «Վահանը ականջիս տակ, սրտի ձայնով, շնչում էր չքնաղ հատուածներ համաշխարհային եւ հայկական քնարից — Գէօթէ, Հայնէ, Բողիեր, Վելլեն, Լերմոնտով, Սոլոգոբ, Բրիւսով, Դյուրան, Յովհաննէսը»»: Բայց այն հանգա-

մանքը, որ Տէրեանը թարգմանութիւններ կատարելիս առանկապէս անդրադարձել է Բողիւրին, թերեւս, վկայում է վերջինիս նկատմամբ նրա առանձնայատուկ հակման ու հոգեհարազատութեան մասին: Բողիւրի ու Տէրեանի բազմաթիւ բանաստեղծութիւնների վերնագրերն իսկ ցոյց են տալիս նրանց արծարծած թեմաների, մոտիւների ու տրամադրութիւնների մերձութիւնը: Ֆրանսիացի բանաստեղծի առաւել բնորոշ բանաստեղծութիւններից յիշատակելի են՝ «Երեկոյի դաշնութիւն», «Աշնան երգ», «Այգաբացի մթնշաղ», «Երիկնային մթնշաղ», «Վիհրը», «Մշուշներ եւ անձրեւներ», «Ռոմանտիկ արեւի մայրամուտը», եւայլն: Կարծում ենք կարիք չկայ յիշատակելու նաեւ Տէրեանի բանաստեղծութիւնների համանման վերնագրերը:

Բողիւրի եւ Տէրեանի ստեղծագործութեան աղերսները պայմանաւորուած են նաեւ որոշակի գրական ազդեցութեամբ: Ցատկապէս Տէրեանի վաղ շրջանի ստեղծագործութեան մէջ կարելի է գտնել Բողիւրի ազդեցութեան ակնայայտ հետքեր: Այսպէս, սփիւռքահայ գրականագետներից մէկը՝ Կ. Վ. ստորագրութեամբ, «Բազմավէպում յոյս տեսած իր յօդուածում (1969, 11-12, 1970, 4-8) անդրադառնալով Բողիւրի, Վեռլենի եւ ֆրանսիացի սիմվոլիստների հետ Տէրեանի ստեղծագործութեան աղերսներին, ցոյց է տուել Բողիւրի որոշ հետքեր Տէրեանի բանաստեղծութիւններում: Նրա կարծիքով, ամէնից շատ Բողիւրի «Երեկոյի դաշնութիւն» բանաստեղծութիւնն է ներգործել Տէրեանի վրայ: Այդ բանաստեղծութեան «Ամէն ծաղիկ բուրում է ինչպէս անուշ մի բուրվառ» տողի անմիջական ծնունդն է Տէրեանի «Մթնշաղի անուրջներ»ի 22րդ բանաստեղծութեան «Մաղիկներն անուշ բոյր են բուրվառում» տողը: Բողիւրի յիշեալ բանաստեղծութեան ուրոշ ազդեցութիւն է տեսել յօդուածագիրը նաեւ «Մթնշաղի անուրջներ»ի 6րդ բանաստեղծութեան վրայ, նշելով, սակայն, հայ եւ ֆրանսիացի բանաստեղծների յոյզերի ու խոհերի թէ՛ նմանութիւնները եւ թէ տարբերութիւնները: Իսկ ՅԼրդ բանաստեղծութեան վրայ նա տեսել է Բողիւրի «Semper eadem» տոնետի եւ «Կէս աշխարհ՝ վարսերի մէջ» («Աշխարհի կէսը քո վարսերում») արձակ պոեմի ազդեցութիւնը: Այդ արձակ պոեմը, որ թարգմանել է նաեւ ինքը՝ Տէրեանը, այսպէս է սկսում. «Թոյլ տուր ծծեմ, երկա՛ր ծծեմ մազերիդ բոյրը: Երեսըս նրանց մէջ ընկղմեմ, որպէս ծարաւն է սուգում իր դէմքն աղբիւրի ջրի մէջ...»: Իսկ նշուած բանաստեղծութեան մէջ 20ամեայ Տէրեանն այսպիսի տողեր է գրել.

*Քո մազերի ցնորական փայլը պայծառ,
 Ժայռից իջնող ջրվէժի պէս առատահոս...
 Թոյլ տուր սուզուեմ քո աչքերի անդունդը մուժ,
 Թոյլ տուր ծծեմ քո մազերի բուրմունքն անուշ...*

Ահա եւ Բողիերի սոցնտի վերջին նոստողը (մեր թարգմանութեամբ).

*Եւ թողէք, որ պատրանքով արբի իմ սիրտը անվերջ,
Մուգուի ձեր ջիւնը աչքերում, ինչպէս քաղցը քնի մէջ
Եւ անրջի ձեր երկար թարթիչների ստուերում:*

Միանգամայն իրաւացի է «Բազմավէպ»ի յօդուածագիրը, նշելով, որ թէ՛ Բողիերի եւ թէ Վեռլենի ու միւսների պարագայում Տէրեանը մնում է «իմքնատիպ ու անձնական» եւ ձգտում է «ոչ թէ կրկնելու, այլ մանաւանդ առաջ տանելու եւ արմատացնելու վեռլէնեան եւ պօտլէրեան բանաստեղծութեան յատուկ ինչ-ինչ տրամադրութիւններ»:

Ժոյց տալու Ռամսար նրկու բանաստեղծների հոգեհարազատութիւնը, բերենք Բողիերի բանաստեղծութիւններից մէկը՝ «Աշնան երգը» մեր թարգմանութեամբ.

*Միրում եմ շեղ աչքերիդ կանաչաւուն լոյսը ջիւնը,
Բայց սիրելի՛ս, ամէն բան այսօր դառն է ինձ համար,
Ո՛չ քո սէրը, ո՛չ տաքուկ զարդասենեակըդ, ոչի՛նչ
Ձեմ փոխի ես ծովասուղ արեւի հետ լուսավառ:*

*Այսուհանդերձ, սիրի՛ր ինձ, օ՛, քնքուշ սիրտ, եղի՛ր մայր,
Անշնորհակալ եմ թէկուզ եւ չարասիրտ եմ թէեւ,
Եղի՛ր քոյր կամ սիրուհի, մայրամուտի ոսկեման
Եւ կամ աշնան փառաշուք մի քաղցրութիւն կարճատեւ:*

*Վաղանցուկ խա՛ղ: Սպասում է գերեզմանը ընչաքաղց,
Ա՛խ, թո՛ւ սուր ինձ՝ գլուխըս դնեմ քո ջերմ ծնկներին,
Եւ տիրութեամբ լիւծիով պաթառ ամառը անցած,
Լ՛սւռ ճաշակեմ ուշ աշնան շողը քնքուշ ու դեղին:*

Մելամաղձի եւ աշնանային անամոք տխրութիւնից մաշուող Ռայ բանաստեղծի Ռիւանդ հոգին էլ տենչում է այն կանացի սիրտը, որ կարող է սիրել մօր կամ քրոջ բարի, մեղմ ու անդաւաճան սիրով.

*Այսօր եղի՛ր քրո՞ջ պէս—
Անշար, մաքուր եւ գթօտ,—
Գրկենք իրար ու նստենք,
Նստենք միեւն առաւօտ...*

*Այսօր եղի՛ր որպէս մայր—
Բարի, քնքուշ, հրապքաք,—*

*Նստիր խաղաղ մահճիս մօտ,
Մութ գիշերին հետըս լա՛ց...*

*Ամռանը դու իմ ցաւած
Սիրտը սիրով քո անբիծ,—
Այն մոռացուած, մոռացուած
Հեքիաթները պատմիր ինձ:*

Բողիկի ու Տէրեանի ստեղծագործութեան բնագրային մանրամասն համեմատութեամբ կարելի է գտնել այլ նմանություններ՝ թե՛ յոյզերի ու զգացմունքների եւ թե՛ բանարուեստի մակարդակներում: Դըրանք մասամբ արգասիք են ուղղակի ազդեցութեան, մասամբ՝ այն համանման ճոզելիճակների, որ ունեցել են երկու մեծատաղանդ բանաստեղծները:

Յանձին Վահան Տէրեանի հայ քնարերգությունը ձեռք է բերել եւրոպական տիպի մի խոշոր, նորարար բանաստեղծի: Բողիկի ու Վեռլենի այդ «Հոգեհարազատ եղբայրը», սակայն, իր ողջ էութեամբ հայ բանաստեղծ է, նայիրցի, որ իր խորքում կրում է ազգային բազմադարեան մշակոյթի հարուստ աւանդությունները, հայրենի բնաշխարհի անկրկնելի գեղեցկությունը, իրեն ծնող ժողովրդի ոգին ու բնությունը: Տէրեան բանաստեղծական երեսոյթը փայլուն ապացոյցն է այն ճշմարտութեան, որ իսկական ու մեծ բանաստեղծ լինելու համար, բնատուր տաղանդ ունենալուց զատ պէտք է իրացնել նաեւ թե՛ ազգային եւ թե՛ համաշխարհային գրականութեան առաջաոր գեղարուեստական փորձը:

Երեւան

ՀԵՆՐԻԿ ԲԱՆՉԻՆԵԱՆ

Պ. ԱՆԱՊԵԱՆ

...ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՀԵՌՈՒ ՊԱՀԻ

...Եւ Աստուած հետու պահի
Աւետիք Իսահակեանին նման մեծութեանը
այսօրինակ պաշտպաններին
ու այս մակարդակի պաշտպանութիւնին...

«ՎԱՐՈՒԺԱՆ»

Հայրենի «Գրական թերթ»ի խմբագրութեան առաջարկով, երիտասարդ քննադատներէն Պետրոս Դեմիրճեան 1992ի Յունիսին մեզի հետ ունեցաւ հարցազրոյց մը, ուր ի միջի այլոց խնդրոյ առարկայ դարձաւ նաև Աւետիք Իսահակեանի անունը եւ մենք յայտնեցինք այն կարծիքը, որ մեզի համար Աւետիք Իսահակեան ունէր եւ ունի՝ յարաբերական արժէք մը:

Այս միտքը առիթ տուաւ հայրենի տարբեր թերթերէն շղթայագերծուած շարք մը գրողներու, որոնցմէ մէկուն, փրոֆեսէօր Ռաֆայէլ Իշխանեանի ստորագրած «Գրական ասուլիս»ին առիթով գրուեցաւ պատասխան մը, որ ակամայ երկարեցաւ, այն պատճառով, որ փրոֆեսէօրը «Գրական թերթ»ին մէջ յայտնուած կարծիքներուն ծիրէն հեռացած էր ու վերարծարծած երեսուն ու աւելի տարիներ առաջ Իսահակեանի գրականութեան մէջ մեր ստուգած խորթ տարրերուն մատնանշումն ու յարակից մեկնաբանութիւնները:

Նոր պատմութիւն:

Աւելի հիշո՞ւ պիտի ըլլար ըսել՝ նոյն պատմութեան կրկնութիւնը:
Պարզե՞նք:

Անկէ Իսահակեան Երեսնի «Վարուժան» գրական ամսագիրին մէջ ստորագրած է «Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» խորագրով գրութիւն մը, որուն մէկ մասը «Գրական թերթ»ին մէջ

լոյս տեսած գրոյցին յիշեալ կէտն է, իննսուն տոկոսը կը դառնայ «Վարուժան»ի եւ «Քազին»ի անցեալ տարուան թիւերուն մէջ երեւցած Ռաֆայէլ Իշխանեանի «ասուլիսին» տրուած պատասխանին շուրջ, իսկ վերջին մէկուկէս սինակին վրայ փորձ կ'ըլլայ պաշտպանելու «Սասմայ Մհեր»ը՝ անոր Քարազատութիւնը կասկածի տակ դրած կարծիքներուն դէմ:

«Վարուժան» ամսագիրի խմբագրութիւնը առանձին նոթով մը ըստ բաւականին ներկայացուցած ըլլալով Քանդեթձ «Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» գրութեան գրականագիտական եւ լեզուական փխրուն նկարագիրը, մենք անհրաժեշտ համարեցինք անդրադառնալ անոր որոշ կէտերուն, զուգահեռաբար թարմացնելու համար շարք մը վկայութիւններ, որոնք չեն կրնար շահեկանութենէ զուրկ ըլլալ գրականութեան նորահաս սերունդներուն համար:

«Վարուժան»ի խմբագրութիւնը կը յայտնէ նոյն ատեն, որ խնդրոյ առարկայ գրութիւնը «տպագրում ենք նոյնութեամբ, յարգելով ազատ մամուլի սկզբունքը»: Ազատ մամուլի նոյն սկզբունքով, կը յուսանք, տեղ կը տրուի նաեւ սոյն գրութեան...

*

* *

Պարզուած յայտնութիւններուն մասին խօսք բաճալէ առաջ սակայն, թող ներուի յիշել Աւիկ Իսահակեանի ձեռ մեր ունեցած հանդիպումները, որոնք, յամենայնդէպս, տեղի ունեցած էին գրական անդաստաններու մէջ եւ բոլորովին գերծ էին իր կողմէ թոյլ տրուած այս նոր ու ռիսկալ նկարագիրէն:

Հետաքրքրական է ամփոփումը:

1990ին, իր՝ Աւիկ Իսահակեանի խմբագրութեամբ լոյս տեսած Աւետիք Իսահակեանի «Հայդուկի երգեր»ը անձնապէս ան կը ձօնէր մեզի, այն «Բարի յոյսերով, որ «Քազին» իր առաքելութիւնը կը շարունակի մայր հայրենիքում»:

Երկրորդ անգամ բախտը ուղղակի մեզ դէմ դիմաց հանեց, Երեւանի մէջ, ակադեմիկոս Էդուարդ Զրբաշեանի ղեկավարած գրական ինստիտուտին մէջ, ինստիտուտի անլի քան քսանեակ մը գիտաշխատողներուն ձեռ տեղի ունեցած բարեկամական հանդիպումի մը ընթացքին, զուարթ մթնոլորտի մը մէջ, ուր ժպիտը անպակաս էր իր դէմքին:

«Հայդուկի երգեր»ը ձօնած եւ ինստիտուտի մէջ բուխ ժպիտներով երեւցած օրերուն, մենք կ'աշխատէինք Հ.Յ.Ռաշնակցութեան 100ամեակին նուիրուած «Քազին»ի բացառիկին վրայ եւ հայրենի մտաւորականներէն Մարգարիտա Աթաբեկեանի մէկ սրտառու գրութեան մէջ յիշատակուած իր մօտիկ-մերձաւորներուն լուսանկարները

խնդրեցինք իրմէ, եւ ինք ազնիւ եղաւ ու դրկեց խմբանկար մը, ուր քով քովի կ'երեւէին Աւետիք Իսահակեան, Տիկին Մարտիրոս Ասրեան, Տիկին Աւետիք Իսահակեան եւ Մարտիրոս Ասրեան, առաւել՝ առանձին լուսանկար մը՝ Բելլա Իսահակեան, որոնք երեւցան յիշեալ քացանիկին (1901, թիւ 11-12) մէջ:

Նոյն քացանիկին մէջ մենք քանի մը անգամ հատուածային արտատպումներ կատարեցինք Աւետիք Իսահակեանէն, Աւիկ Իսահակեանի ծանօթագրութիւններով:

Դաշնակցութեան 100ամեակին նուիրուած քացանիկէն կարճ ժամանակ մը ետք, «Հայրենի գրականութիւն» անունին տակ լոյս տեսած «Բագին»ի յատուկ համարին մէջ, իր՝ Աւիկ Իսահակեանի լուսանկարին ու կենսագրականին կողքին տեղ տրուեցաւ ուղղակի մեզի տրամադրուած «Անտիպներ Վարպետից» անուն գրութեան, իսկ աւելի ուշ՝ ստացանք իրմէ տպագրեալ երկու գրութիւններու պատճեններ, մէկը՝ իր ստորագրութեամբ, ու միւսը՝ մօրը՝ Բելլա Իսահակեանի, 27 Դեկտեմբեր 1991 թուակիր նամակի մը հետ, ուր՝

«Ժատ երջանիկ կը լինէի, եթէ «Բագին»ում տպագրէիր նաեւ իմ հարցազրոյցը Վեներտիկի Ս. Ղազարի մասին: Առիթից օգտուելով ուղարկում եմ նաեւ մօրս՝ Իզաբելլա Իսահակեանի մէկ յուշը Իսահակեանի Սեւանի մասին, նոյնպէս խընդրանքով տպագրելու ձեր ամսագրում»:

Հոս վերջ կը գտնէ մեր հանդիպումներուն պատմութիւնը:

Փակագիծի մէջ ըսենք, որ մեզի տրամադրուած տպագրեալ գրութիւնները, երկուքն ալ, արժանի են ուշադրութեան, ու պիտի լայնձնրին ուշադրութեան:

Բելլա Իսահակեանի յուշը՝ Սեւանի թղթածրարին հետ:

Իսկ «Իսահակեանի հետքերով»ը՝ պատեմ առիթով մը:

*

* *

Այս անցուդարձերուն ընթացքին՝ մենք անկախ մտաւորական մը կը կարծէինք Աւիկ Իսահակեանը:

Կարծեցինք՝ մինչեւ մեզի հետ քննադատ Պետրոս Դեմիրճեանի ունեցած հարցազրոյցին լոյս տեսած օրը, երբ անուղղակի ճամբաներէ իմացանք, որ Աւիկ Իսահակեան խուճապահար բախած է «Գրական թերթ»ի խմբագրութեան դուռը եւ հոն ու գրական տարբեր շրջանակներու մէջ հաւար փրցուցած այն մասին, որ մենք համարձակած ենք մեր համարումին մէջ Աւետիք Իսահակեանին ընծայուածէն աւելի լայն տեղ յատկացնել Վարուժանին, Մեծարեցինք ու Հարեցին:

digitised by A.R.A.R.@

Աւելի ուշ, Ռաֆայէլ Իշխանեանի ստորագրած ասուլիսին մէջ կարդացի՞նք, որ՝

«Գրական թերթ» ներկայանալով, գրականագէտ Աւիկ Իսահակեանը ցանկութիւն է յայտնել պատասխան գրելու, խմբագիրը հրատարակել է նման քան տպագրել»:

Այս մասին մենք անգամ մը արտայայտուած ենք: Ամփոփումը.—

«...Թէ Իսահակեանի հետ համեմատած՝ մեծութեան առաւելութիւնը Վարուժանին, Մեծարեւոյցին ու Չարենցիին տուած մեր կարծիքին առիթով ինչ կրնար ըսել Աւիկ Իսահակեան, կը մնայ ենթադրութեան սահմաններուն մէջ: Պիտի ըսէր հաւանաբար, որ Սնապեանը կը ռիսալի, կամ գրական հասկացողութիւն չունի, կամ արեւելահայ բանաստեղծութիւնը կշռելու հաւաստի արժեշտփերէն զուրկ է:

«Ռէրի՞շ»:

«Գուցէ քանի մը աննպաստ որակումներ:

«Յետո՞ւ»:

«Ռաֆայէլ Իշխանեանէն տարբե՞ր քաներ պիտի ըսէր:

«Ի՞նչ»:

«Աւետիք Իսահակեանի ծանօթ ժառանգութեան վրայ ձեւած մեծութեան որեւէ չափանիշ դժուար թէ կարենայ աննախապաշար մտքերուն մէջ փոխել տալ անոր տեղը եւ բարձրացնել զայն քիչ առաջ յիշուած դէմքերուն պատուանդանին («Բազին», 1993, թիւ 3-4):

Կարդալով այս տողերը, Աւիկ Իսահակեան «Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» խորագրեալ իր գրութիւնը կը սկսի սա բառերով.

«Պրն. Պ. Սնապեան շատ մտահոգուած է, թէ Աւետիք Իսահակեանի դէմ ձեռնարկած իր ամբաստանութիւնների առիթով ինչ կրնար ըսել Աւիկ Իսահակեանը»:

Մտաբերենք ըսուածը ու հարց տանք.

—Վերը երեւոյց մեր հարցումներուն ու հաստատումներուն մէջ «Պրն. Պ. Սնապեանը» իր հաշտոյն անհանգստացնող մտահոգութիւնն մը տարագած էր արդեօք, թէ Աւիկ Իսահակեանի հաշտոյն արձանագրուած էր թերահաւատութիւն մը:

Յաւօք սրտի, «Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» անուն գրութեան լայնքին ու երկայնքին ընթերցողին տեսածը ուրիշ քան չէ, եթէ ոչ՝ յուզուած հարցին կապակցութեամբ յօդուածագրին ընելիքներուն մասին նախօրօք բանաձեւուած թերահաւատութեան ուղղակի արձագանգները, որոնք համարեա՛ւ ամբողջութեամբ կը կրկնեն նախորդ գրողայիններուն ելոյթները, այն տարբերութեամբ միայն, որ

«Տաճարի ճամբին» բառական տարածությունը գրադեցուցած է լուտանքներու քաժինը...: Կը պարզուի, արդարեւ, որ մեր յայտնած վերջին կարծիքին լոյսին կամ... մութին տակ, «Բագին»ը առաքելութենէ զրկուած է այլեւս, հայդուկի երգեր կամ ուրիշ որեւէ երգ պիտի չնուիրուի այսուհետեւ մեզի, մեր դիմաց պիտի չգտնենք «միշտ մնամ ձեր բարեկամը» ըսող մարդ եւ եթէ իսահակեանական որեւէ գրութիւն լոյս ընծայենք մեր ամսագրին մէջ, «շատ երջանիկ» պիտի չըլլան իսահակեանականաշտները:

Որովհետեւ,

Նոր միայն, «Բագին»ի հաւաքածոները աչքէ անցընելէ եւ Աւետիք Իսահակեանի մեծութեան չափին ու որոշ գործերուն մասին հոն յայտնուած կարծիքներուն տեղեկանալէ ետք, Աիկ Իսահակեան յանկարծ տեսած է, որ մենք «մնամ միշտ ձեր բարեկամ»ը չենք, առաքելութիւն ունեցող հանդէսի մը հետ գործ չունինք, չունինք դրական որեւէ գիծ, այլ պարզապէս յիշաչար ենք, փոքրոզի, չարամիտ, ամբարտաւան, սնապարծ եւ մասամբ նորին...

Վերը ուրուագծուած մեր առաջին, երկրորդ թէ երրորդ հանդիպումներուն այն տպաւորութիւնը առաջացած էր մեր մէջ, որ մեր «հանդիպումներէն» առաջ Աիկ Իսահակեան առնուազն աչք մը պըտըտցուցած պէտք է ըլլայ իրեն առաքելական լոյսեր ներշնչած «Բագին»ի հաւաքածոներուն վրայ եւ ծանօթ ըլլալով հանդերձ Աւետիք Իսահակեանի որոշ գործերուն առիթով տարբեր համարներուն մէջ արձանագրուած մեր կարծիքներուն, դուրս եկած է ընտանեկան շրջանակէն եւ, ինչպէս ըսինք անգամ մը, երեսութներուն կը նայի մտաւորական իր անկախութեան տիրացած եւ ուրիշներուն անկախութիւնը յարգող հոգիի մը անվրդով խաղաղութեամբ:

Մինչդեռ ինք կու գայ ըսելու, որ մեր պատկերացուցած տիպարին հետ որեւէ կապ չունի, ստեղծագործական հարցերուն կը մօտենայ ընտանեկան անկիւնէ եւ անկախ մտաւորականէ մը աւելի՝ Աւետիք Իսահակեանի թոռն է:

Թող այդպէ՛ս ըլլայ...

*

* *

«Գրական թերթ»ի էջերուն լոյս տեսած հարցազրոյցին մէջ Աւետիք Իսահակեանի խնդրոյ առարկայ մեծութեան բացարձակութիւնը պարզելէ (ըստ իրեն) ու «Բագին»ի հին ու նոր ու «Վարուժան»ի անցեալ տարուան համարներուն անհարազատ համարուած «Պանդուխտ որդին» եւ «Մօր սիրտը» ոտանաւորներուն քաղաքացիական իրաւունքները հաստատելէ (միշտ ըստ իրեն) ետք, Իսահակեանի թո-

digitised by A.R.A.R.@

նը նոյն դիրութեամբ խունկ կը ծխէ՝ գիտէք որո՞ւ անունին, ու նզովք կը կարդայ՝ շուտով պիտի գիտնաք որոնց հասցէին:

Աւետիք Իսահակեանի անեցուած պսակներուն եւ «Պանդուխտ որդիք» ու «Մօր սիրտը» ոտանաւորներուն հին փաստաթուղթերով եւ նոր մանրամասնութիւններով անդրադառնալը մենք կը նկատենք բոլորովին աւելորդ, շարունակելով հաստատ մնալ մեր եզրակացութեան վրայ, ա՛յն հիմամբ, որ տրուած առարկայական փաստերը Տերտոլ եւ անոնց վրայ բարձրացած տրամաբանութիւնը չէզոքացնող տուեալներու չհանդիպեցանք ո՛չ նախորդ գրոհայիններուն մօտ եւ ոչ ալ նորին նոյնքան «դատարկ կրակոցներուն» մէջ:

Փարիսեցիներ հալածելու համար, կը թոյլ, թէ անցնող մէկուկէս տարիներու ընթացքին յօդուածագիրը տասնամեակներով ետ գացած է ու թերթերու եւ հանդէսներու մէջ բաւական շատ պրպտումներ կատարած, անշուշտ ուզածը տեսնելու եւ չուզածին դիմաց աչքերը փակելու նախատրամադրութեամբ, յանգելու համար զինք նախորդած վերդովեալներուն դարձեալ նախանշանակեալ եզրակացութեան, թէ՛ խընդրոյ առարկայ «Պանդուխտ որդիք» եւ «Մօր սիրտը» ոտանաւորները բանագրողութիւն չեն, այլ թափառիկ նիւթեր օգտագործելու ընդունուած օրէնքներով յօրինուած գործեր:

Ըսած ենք քանի մը անգամ ու ամառասիկ հարկ կ'ըլլայ կրկնելու, որ ո՛չ նուիրապետական աթոռներու բազմած վեհերը, ո՛չ ծիրանագլխատ փրոֆեսէօրները եւ ոչ ալ սովորածությունեան սպասարկող դպիրները ի վիճակի են չքմեղացնել բան մը, որ գրական անմեղութեան ու ասանդոթիւններուն հետ որեւէ կապ չունի: Գրականութեան մէջ մենք հաշտի կ'առնենք մինչեւ անգամ գործի մը կրած ազդեցութեան չափը եւ ըստ այնմ կու տանք մեր գնահատանքը, ո՛ր մնաց նոյն ատողձը գործածող եւ ճարտարապետական նոյն կարգին գերի մնացած ամբարձումները:

Այս մասին մենք նոր ըսելիք չունինք, ինչպէս ուրիշներ նոյն հարցին առընչութեամբ մեր հասցէին լուտանքներ թափելու հեշտանքէն գատ ուրիշ ընելիք չունին...

Հարցին միւս երեսին մասին, որ լրացուցիչ մասը կը հանդիսանայ առաջինին, կ'արժէ սակայն յաւելումական քանի մը խօսք ըսել, մեկնելով Իսահակեանի թոռան թոյլ տուած հետեւեալ թիրիմացութեանէն.

«Վստահ եմ, որ հայագոյի ոչ մի խմբագիր իր հանդէսի էջերը չէր յատկացնի նման «մեղադրանքների», բացառութիւնը՝ «Նոր տիպի» կրիտիկոս Սնապեանին հրատարակող «Նոր տիպի» խմբագրապետ Սնապեանն է»:

Յօդուածագիրին այս պնդումը եւս հաստատ խորք մը չունի, վստահ ինչպէս Աւետիք Իսահակեանի շատ մը կողմերուն անծանօթ

է ան (կ'ընդգծենք անծանօթը), անծանօթ է նոյնպէս անոր մասին գրատր արտայայտութեանց ամբողջութեան:

Աւելի պարզ՝ միայն «նոր տիպի» կրիտիկոս Սնապեանը յօսք բացած չէ ուրիշներուն յղացումներն ու անոնց պատահած դրուագները իրեն վերագրող Աւետիք Իսահակեանի աղանական այդ տկարութեանց մասին, եւ միայն «Միջնաբերդ» տարեգիրքին ու «Բագին» ամսագիրի էջերուն չեն մատնանշուած անոր իրացներու Քակումներն ու իրացումները, այլ տարբեր դէմքերու կողմէ ակնարկութիւն եղած են իրացումներու երեսօթին, երբեմն ուղղակի եւ երբեմն անուղղակի կերպով եւ, ի հարկէ, տարբեր ինքնուրու մէջ, որոնց խմբագիրը «նոր տիպի» կրիտիկոս Սնապեանը չէր, ուրիշներն էին, յայսկոյս յաճախ Իսահակեանին էջ բացած մարդիկ ու յայնկոյս Աւետիք Իսահակեանին շարունակ խունկ ծխած ուրիշներ:

Թուենք ծանօթներէն երկու հատը, եւ նախ՝ ուղղակին, որ գրի առնուած է անուանի երգիծարան Նշան Պէշկիթաշեանի կողմէ ու լոյս տեսած «Հայրենիք» ամսագիրին (1963, Ապրիլ) մէջ:

Հանդիպումի մը ընթացքին, երբ Աւետիք Իսահակեան կ'աւարտէ Վահան Տէրեանը, Դանիէլ Վարուժանը եւ Վահան Թէքէեանը բանագողութեամբ ամբաստանող իր յայտնութիւնները, ձայն կ'առնէ Նշան Պէշկիթաշեան ու՝

«Երբ Իսահակեան լռեց, ես՝ ներքին վրդովումս զսպած՝
շատ բարեկամաբար ժպտելով եւ մեղմ ձայնով՝ ըսի.

«-Բայց սիրելի պարոն Իսահակեան, դուք ալ բաւական
բանագողութիւն կատարած էք դէսից-դէնից:

«Յուզուեցաւ եւ սաստիկ կակազելով արտայայտուեցաւ.

«-Ե՛ս... ո՞վ է ասում... ե՞րբ... սատանայ, հապա ցոյց
տուր մէկը... շուտ, սպասում եմ... միայն մէկը...»

«-Զմիւռնիացի թուրք բանաստեղծ մը, որուն անունը չեմ
յիշեր, վերիվերոյ սանկ քերթուած մը գրած է.

*Մահէս յետոյ ո՛չ աղօթք կ'ուզեմ, ոչ ալ
գերեզմանիս այցելու,
Որովհետեւ կը վախնամ, որ տապանաքարս
հանեն անուրդի...*

«Եւ թրքերէնով շատ ձայնաւոր է վերջին տողը.

Քորքարըմ քի մեզար չըբար մեզաթա...

«Այս տողը բանագողած էք նոյնութեամբ: Թողունք ձեր
միւս բանագողութիւնները, բայց զիջելու չէիք թուրքէ մը գող-
նալու»:

Նշան Պէշկիթաշեանի ակնարկութիւնը հաւանաբար կը վերաբերի
Աւետիք Իսահակեանի «Կտակ» ոտանատրին եզրափակիչ տողերուն.

**Լսի՛ր, տղա՛ս, ինձ կը թաղես անյայտ մի տեղ, աննշան,
Որ չիմանան, մարդիկ չգան՝ շիրմիս քարը գողանան:**

«Ձեր միւս բանագրողութիւններ»ուն ըրած Նշան Պէշիկթաշլեանի ակնարկին շօշափելի տուեալները անծանօթ են մեզի, անհրաժեշտ ալ չէ ստուգել «միւսներուն» անուններն ու աղբիւրները, պերճախօս է սակայն թուրքէն բերուած նմոյշը, զոր մատնանշած ենք Քեղ մը («Բագին», 1977, թիւ 7), հետեւաբար ուշադրութեան յանձնենք նոյն մոլութեան վրայ լոյս նետող անուղղակի մէկ ալլ արձանագրութիւն, որ երեսու «Սոփեսական գրականութիւն» ամսագիրի (1976, Հոկտեմբեր, էջ 45) էջերուն, Նայիրի Զարեանի գրիչին տակ, «Վարպետին հետ» խորագրով.

«Իսաահակեանն ինձ պատմում էր այնպիսի անեկոտներ, որոնք լսել էր ինձանից եւ ժամանակին խոստովանել էր, որ առաջին անգամ է լսում: Յետոյ նա իրեն պատահած միջադէպերը պատմում էր նոր տարբերակով: Աւելի՛ն. միջադէպեր, որ ժամանակին պատմել էր իբրեւ ուրիշներին պատահած, այժմ իրեն էր վերագրում: Մի խօսքով, Վարպետը ստեղծագործում էր, եւ ես ծիծաղից թուլանում էի, չնայած գիտէի, որ այդ միջադէպը պատահել է ոչ թէ իրեն, այլ Թումանեանին»:

Զմիւռնիացի թուրքին «մեզար շըքար մեզաթա»ն իր էջերուն սառնասրտօրէն փոխադրած եւ ուրիշներէն յսածը բանի բերանոյ իւրացնելու պարագաները եզակի երևոյթներ չեն եղած Իսահակեանի գրականութեան ու կեանքին մէջ, եւ այս մասին խօսք բացած ըլլալու տխուր մեծաշնորհը «նոր տիպի» կրիտիկոս Սնապեանին վերագրելով եւ լուսանքներ թափելով «նոր տիպի» կրիտիկոսի հասցէին, ո՛չ «նոր տիպի»ն կատարած ախտաճանաչումները կը չքանան, ոչ ալ «հին տիպի» կրիտիկոսներուն յուշագրական էջերէն կը ջնջուին «դէսից-դէնից» յափշտակուած յղացումներուն հետքերը: Ուզենք-չուզենք պիտի ընդունինք, որ եղած են անոնք, կա՛ն՝ իբրեւ բնատրութեան գիծ, վաւրնգի պատահած են դէպքեր, երբ ոչ-ստիպողական պայմաններու մէջ անգամ «Վարպետը ստեղծագործում էր...»:

*
* *

Գրականութեան պատմութենէն ծանօթ է, որ Յովհաննէս Թումանեանի կեանքին մէջ յայտնուած է Ռ. Դրամբեան անունով յօդուածագիր մը, որ մեծանուն լոռեցիին մասին անհետեւ յօդուած մը ստորագրած ըլլալուն առիթով, ենթարկուած է անոր հակահարուածին, ու

նոյն հարուածին տակ վերածուած է իր չհասկցած քաներուն մասին քարքառող անշահ տիպարի մը:

Մենք պատեհութիւն չենք ունեցած կարդալու Ռ. Դրամբեանի շուրջ հիւսած Թումանեանի մտայլ նշմարը: Տեսած ենք անկէ մէջքերուած պարբերութիւններ միայն, թէ՛

«Ես ճանաչում եմ ձեզ: Դուք մի որեւէ Ռ. Դրամբեան չէք: Դուք շատ էք: Դուք տիպ էք: Դուք էն պատիկ, մաղձոտ ու մութ հոգին էք, էն լաւտեճական անկոչ պրոկուրորը, որ ամէն տեղ, ուր կ'երեւայ, միայն «դիպուածով» լսած լինելով մի բան, դատում ու դատապարտում է ամէն գործ ու գործիչ, առանց ճանաչելու, առանց ամաչելու...»:

Ինչպէս պարզ կ'երեւի, Թումանեանի բնութագրածը տիպար մըն է, դրական ամէն երեւոյթի ու ստեղծագործական բոլոր յայտնութիւններուն դէմ ի լատաջագունէ տրամադրուած բութը եւ ոչ թէ այն միւսը, որ թէկուզ տաղանդաւոր գրողի մը մէկ գործին կամ գործերէն ոմանց ձեւական նուաբումներուն կամ խորքային անհարազատութեան հետ կը մերժէ հաշտուիլ:

Հայրենի մեր մտաւորականներէն ոմանց ապշեցուցիչ յամառութեամբ մը մարդոց կը մերժեն մասնակի դիտողութիւններ ընելու ամէն իրաւունք ու, հոչակուած դէմք մը անհպելի համարելով՝ կ'անցնին գրողի, կարծելով, որ հին յանկերգները ուղիղ զծով ու ուժգնութեամբ կրնան արձագանգ գտնել բոլոր ուղեղներուն մէջ:

Դժուարահաս մէկու մը կամ անհերքելի փաստերու վրայ կոթընած ուրիշի մը դէմ ըսելիքի սովէն տառապող այդ խափն ներկայացուցիչները նման պարագաներու անհուսափելիօրէն ու փրկութեան իբրեւ առիւտատշեպ կը յիշեն Թումանեանի կողմէ վերը բնութագրուած Դրամբեանը: Նոյն դժբախտը քանիցս յիշուեցաւ նաեւ Աւետիք Իսահակեանին տրուած բացարձակ արժէքին հանդէպ մեր վերապահութեան եւ անոր որոշ գործերուն նկատմամբ արձանագրած դիտողութիւններուն առիթով, անձնատուր, անշուշտ, այն միամիտ պատրանքին, որ Դրամբեանի ոսկերտիքէն կազմուած թումանեանական սուրեր ճօճելով, իրենց թիրախ դարձուցած «նոր տիպի» կրիտիկոսը յանկարծ դիտապատ կ'ըլլայ եւ պաշտպանեալին նախկին լուսապսակը նոյն արագութեամբ կը վերստանայ իր նախկին փայլը:

Դառնանք ու ըսենք տակաւին, որ կայ թումանեանական մեծութիւն մը ու եղած է անոր դէմ անհեթեթութիւններ դուրս տուած Ռ. Դրամբեան անուճով անհեթեթ մը:

Լա՛ւ:

Այդ կը նշանակէ՞ սակայն, որ պատահական ամէն դպիր կրնայ հրաշիք իմն բարձրանալ թումանեանական դիրքերուն կամ նոյն դիրքերուն բարձրացնել իր հերոսը եւ այդ բարձունքներէն խօսիլ դիմացի-

նին հետ, ինքն իրեն թուամենական հով մը տալով ու միւսը համարելով ոչ աւելի, ոչ պակաս Դրամբեան մը:

Թումանեան-Դրամբեան փոխարարեութեան դիմող շարքայիներէն ետ մնալ չէ ուզած նաեւ Աւետիք Խառակեանի թողը, որ Խառակեանը Թումանեանի քարծուքներուն դրած ու ինքն ալ թումանեանական ծիրանի հագած՝ դրամբեանական փշապսակ մը փորձած է զետեղել մեր գլխուն:

«Այն, ինչի մէջ փորձում է մեղադրել Խառակեանին նորայայտ Դրամբեանը, ինքնըստինքեան արսուրդ է, աւելի շուտ՝ սեփական փոքրագութեան վկայութիւն»:

Առանձին գործի մը կամ գործերու մասին դիտողութիւններ ընելու ամէն իրաւունք մերժող այս տրամաբանութիւնը հաշուի առնելով, ի՞նչ ընենք հիմա, դառնանք ու մեր կարգին դրամբեանական փշապսակ մը զետեղենք Ծառնուրի գլխուն, որ Ռուբէն Զարդարեանի մէկ մասնակի գործին հանդէպ բացասական կարծիքներ յայտնեց, ուրիշ փշապսակ մը՝ Վազգէն Ծուշանեանի՞ գլխուն, որ Կոստան Զարեանի «Տատրագոմի հարսը» յորջորջեց «մտքի ընդարձակ գիջութիւն», երրորդ մը՝ Վահան Տէրեանի՞ գլխուն, որ Վարուժանի հեթանոսութիւնը մատի փաթոց դարձուց:

Եթէ շարունակենք՝ դեռ բառական փշապսակներու կրնանք պէտք ունենալ, ուստի՝ անցնինք:

Գրականութիւնը, կը կարծենք, խաղաղ համակեցութեան պարտէզ չէ եւ դժուարաբանները նուազ ներդրումներ չեն ըրած երբեմն հոն, քան դասախօսներու քարացուցած դրոյթներուն առջեւ բերանաբաց կանգ առնող հլու-հնազանդ հետեւակները:

Հարց մը միայն մէկ կողմէն դիտելու եւ այդ կողմին հետ խաղաղ համակեցութեամբ շարունակելու խաղաղութիւնը ուրիշներուն ձգելով՝ ըսենք, որ ո՛չ միայն այս առիթով, այլ յաճախ մենք աւելի շատ մտահոգուած ենք դրամբեանականութեան ներհակ երեսով:

Ըսել կ'ուզենք, վտանգաւորը ո՛չ այնքան դրամբեանականներուն ասուպային երեսումն է գրականութեան մէջ, որքան պայծառ կարծուած դէմքերուն շոպլանքը, որ միսին պէս ի դէպս եւ յանդէպս յեղեղուած չէ, բայց որ գոյ է եւ պէտք է ունենայ յատուկ անուններէ կազմուող իր հասարակ յայտարարը:

Արդարեւ, ի՞նչ անուն պէտք է տալ այն պսակադիրներուն, որոնք բազում-բազմաթիւ ոչնչութիւններ մեծարեցին եւ յոռի օրինակ դարձան յաջորդ սերունդներուն:

Անոնց մէջ պզտիկ տեղ մը չեն գրաւեր նոյնպէս ձեզի ծանօթ, եւ շա՛տ ծանօթ անձեր, որոնք, ի չափու հասնալ տարիքի մը, տա՛ղանդաւոր հոշակեցին չեղած ու չըլլալիք դպիրներ:

Մթնոլորտին մէջ մնալու եւ կարճ ըլլալու Քամար բաւարարուինք միակ պարագայի մը յիշատակութեամբ, օրինակը առնելով Աւետիք Իսահակեանէն, որ Հայաստանի գրողներու Երկրորդ Քամարումարի (1946) բացման հանդիսութեան, ի շարս այլ խնկարկումներու, պաշտօնապէս կը յայտարարէր.

«Արտասահմանում մեր զինակիցներն էին տաղանդաւոր գրողներ Կ. Սիտալ, Ա. Չարըզ, Ծահան Ծահնուր, Լեւոն Մեսրոպ, Որբունի, Հայկ Գարագաշ, Աղբաշեան, Վահէ Հայկ, Անդրէասեան, Արամ Երեմեան, Վահէ Վահեան, Յովհ. Ղուկասեան եւ այլն» («Սովետական գրականութիւն եւ արուեստ», 1946, թիւ 9-10, էջ 120):

Ծահնուրը մէկ կողմ ձգենք:

Որբունին ալ շարքէն հեռու պահենք:

Այդ երկուքին մօտեցնենք նաեւ Վահէ Վահեանը:

Առանց տաղանդի հարցեր յուզելու՝ քիչ մը զիջում ընենք նաեւ Վահէ Հայկին: Աւելի քիչ՝ Յովհ. Ղուկասեանին եւ Անդրէասեանին:

Հասպա միւսնե՞րը: Ի՞նչ ընենք Աւետիք Իսահակեանի տաղանդաւոր պսակած Սիտալն ու միւսները, ինչպէ՞ս դիմաւորենք մա՛նաւանդ գրականօրէն անժառանգ այդ մարդերը տաղանդաւոր հոշակող պսակադիրը:

Մենք չենք գիտեր: Գուցէ ուրիշներ կրնան կնքել այս շրջումած դրամբանականութիւնը:

*
* *

«Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» յօդուածին մէջ առարկութիւն չվերցնող ինքնախտաճութեամբ մը արձանագրուած է նաեւ սա պարբերութիւնը.

«Անարգոյ ձեռով հոլովելով Իսահակեանի անունը, ինքնըստինքեան հոլովում է եւ Սնապեանի անունը: Կրիտիկոսը սկզբում է յայտնի դառնալ, եւ իբօք, ո՞վ էր մինչեւ վերջերս հայրենիքում ճանաչում Սնապեանին, իսկ հիմա գիտեն, հոգ չէ, որ հիմնականում, որպէս ճորայայտ գրական Հերոստրատիս Գլխաւորը, որ անունը հոլովուի. հաւատացած եմ, որ իմ այս յօդուածն էլ կը նպաստի այդ պրոցեսին»:

Կատարուածը, կը կարծենք, ճիշդ ախտաճանաչում մը չէ: Ընդդէմ ճի՛շդ հակառակն է: Ամենայն խոնարհութեամբ ըսենք, որ մենք ձեռք առած ենք գրիչը երբ ըսելիք մը ունեցած ենք, ու ձեռք կ'առնենք այդ գործիքը, երբ ըսելիք մը կը նեղէ մեզ, առանց աջ կամ աճեակ նայելու, այսինքն՝ առանց փառապսակներ հալածելու եւ առանց փշապսակ-

ներէն երկնչելու: Համոզումով: Ապրումով: Ծայրագոյն չափով մը հաշտ մեր խղճմտանքին հետ:

Եթէ մեր անունը հոլովել տալու մեղաւոր մարմաջ մը ըլլար մեզ առաջնորդ ուժը, Աւետիք Իսահակեանի պարագային չենք գիտեր ինչո՞ւ պիտի ընտրէինք տատակոտ արահետները եւ անխոհեմաբար մերժէինք մտնել իսահակեանագէտներու շքախումբին որդեգրած հարթ պողոտաները: Այս մէկը, դիրի՛նը, անպայման անուն հոլովել տալու պրոցեսին առընչութեամբ անելի նպատակալարմար պիտի ըլլար, կրնար ըլլալ մա՛նուանդ երէկ, երբ սովորականէն հազիւ մատ մը վեր բարձրացող յօրինումներուն դիմաց, «անհակակշիռ հիացումներու» ասպետներուն պէս ու հետ՝ կարելի էր շոպլել մակդիրներուն ամէնէն փնտրուածները,— մեծը, տաղանդաւորը, բազմակողմանին, եւայլն, եւայլն, առանց մոռնալ անկրկնելի՛ն, հանճարե՛րը, վարպետաց վարպե՛տը:

Եթէ անուն հոլովել տալու միտք մը ըլլար հետապնդուածը, կրկնենք, ինչո՞ւ պիտի ըսէինք մեր մտածումը եւ յաճախ ըմպէինք մի՛նակութեան դառն բաժակը, երբ կարելի էր հոլովուիլ՝ հոլովելով ուրիշներուն յետեղած վերի փոխասացութիւնը, «քանզի դա ե՛ր հեշտ էր, ե՛ր պարզ, ե՛ր անվնաս, ե՛ր շահաւետ»:

Եթէ այդ ըլլար սեւեռակէտը, «մինչեւ վերջերս»էն առաջ հոլովելու համար կը դիմէինք ճաեւ նպատակասլաց միւս միջոցներուն, կ'որդեգրէինք Իսահակեանի եւ այլոց կիրարկած արձակ ու ոտանաւոր եղանակները: Ոտանաւոր մը կը սարքէինք Հոկտեմբերին (դժուար չէր, կարելի՛ էր, վիստացող հոկտեմբերեաններուն սարքածներուն պէս անհրճար չէր ոտանաւոր սարքել):

Ուրիշ մը՝ Նոյեմբերին:

Հատ մըն ալ կարմիր դրօշին («Կ'երգեմ դրօշդ կարմիր»):

Յորդաճոս զեղումներով կը փառաբանէինք լեցինեան դարը:

Հայաստանի մէջ հայութեան գի՛տը կ'ընէինք, Աստուած չեն պաշտեր՝ հայ են, կ'ըսէինք, Լեցինը կը պաշտեն՝ հայ են, կը կրկնէինք յայտնութեանակա՛ն չափշտակութեամբ:

Եթէ մեր մտածումներուն հետ հաշտ մնալու արժանատութիւնը կշիռ չունենար մեզի համար՝ այդպէս բաներ կ'ըսէինք, քնարական թըրիչքներով կը քնարերգէինք տակաին շարք մը ուրիշ հաճոյախօսութիւններ, անկրկնելի դէմք կը համարէինք քաղաքական ներքինիները կամ ուղերձային շոշորդութիւններով անցաւոր ստուերներ կը բարձրացընէինք փառքի բարձրագոյն պատուանդաններուն ու արդէն «մինչեւ վերջերս»էն առաջ ստացած կ'ըլլայինք յիշատակութեան բարի վարուց վկայականը...

Եւ յետոյ, եւ յետո՛ւ...

Ըսենք եւ «յետոյ»ն, ու ըսենք կոպիտ անկեղծութեամբ, որ եթէ առանց հիմնաւոր ու պատճառաբանուած հրամայականներու, պարզապէս ծանօթ անունի մը հետ հոլովուելու միտք մը ըլլար փայփայտածը,

յամենայնդէպս, Աւետիք Իսահակեանին կարգ չէր գար, այդ պարագային կ'ընտրէինք մե'ր դաւանած անկրկնելիներէն մէկը կամ միւսը եւ անգոյ մեղքեր վերագրելով անոր՝ արդէն նուաճուած կ'ըլլար Հերոստրատի տխրահոշակ փառքը: Պարագան նոյնը չէ հոս: Հոս անգոյ մեղքեր չկան, կան գործուած մեղքեր ու կոռուած տկարութիւններ, ուրիշ էջերու վրայ աւելորդ անգամ մը եւս նշուած արատներ, որոնք չեն կրնար ջնջուիլ, որքան ալ վրիպած դատերու պաշտպանները կարծեն, որ չնչին ու լկուած փաստերով կրնան ընդունելի դարձնել երգուած հին օրօրները:

Ու արդէն ճի'շդ հող կը գտնուի եռացող կատաղութեան քուն լծակը: Ըսել կ'ուզենք՝ մեր անունին հողովումը այնքան մտատանջութիւն չի պատճառեր Աւետիք Իսահակեանի թոռան եւ զինք կանխած գրոհայիներուն, որքան շատ հողովուած անուններուն անհողվելի արարքները մատնանշելու մեր անհիծեալ ճակատագիրը...

«Գլխաւորը, — կ'ըսուի, — որ անունը հողովուի, հաւատացած եմ, որ իմ այս յօդուածն էլ կը նպաստի այդ պրոցեսին»:

Փութանք յիշեցնել յօդուածագիրին, որ «իմ այս յօդուած»ին ազդեցութեան հանդէպ ունեցած «լատտես» համարումը կամ անոր հետեւող սոսկ մտատանջութիւնները բոլորովին աւելորդ են, որովհետեւ այս ոգիով ու կիրարկուած այս ոճով այդ գործը արդէն տասնամեակներ առաջ ու շա՛տ աւելի ձեռնհասօրէն կատարած են ուրիշներ, որոնցմէ յիշենք զոնէ երկուքը, մէկը՝ Գուրգէն Մահարի (լոյսերո՛ւ մէջ պատկի), միւսը՝ Վազգէն Մնացականեան (երկա՛ր ապրի):

Գուրգէն Մահարի «Մապատաւորին գերեզմանն անգամ չի ուղղի» առածով խորագրած էր իր պարսաւը, իսկ Վազգէն Մնացականեան «Ծուռ մարդու ստուերը ուղիղ չի լինի» թեւաւոր խօսքին տակ խմբագրած էր իր լուսանքները:

Յիշեալ հատընտիր գրութեանց վայրերուն ու ժամանակային տրուելներուն մասին լրացուցիչ զաղափար մը տալու համար անտեղեակներուն՝ յայտնենք, որ Գուրգէն Մահարի «Սովետական գրականութիւն» ամսագիրի էջերուն ցոյց տուած էր մեր սապատը, իսկ Վազգէն Մնացականեան «Գրական թերթ»ի սիւնակներուն փոած էր ծուռ մարդու մեր ստուերը, առաջինը՝ աւելի քան երեսուն, իսկ երկրորդը՝ շուրջ երեսուն տարի առաջ:

Ինչպէս պարզ կ'երեւի, Աւետիք Իսահակեանի թոռան մէկ գրութեան տեղ, նոյն ոգիով գրուած են երկու գրութիւններ, որոնք ոչ թէ վերջերս, այլ վերջերսէն երեսուն ու աւելի տարիներ առաջ զարկ տրուած են մեր անուան հողովման պրոցեսին, հետեւաբար մեր չարայուշ անունին հողովման համար բնաւ եւ երբեք պատճառ չի մնար իրեն... երախտապարտ ըլլալու:

Դառնանք սակայն եւ քիչ մը աւելի խօսինք «մինչեւ վերջերս հայրենիքում» ճանաչում գտած գրողներուն, ճանաչումը շնորհած իշ-

խանութիւններուն եւ այդ փոխարարութեան ինտենսնքը ճաշակած հայրենի ժողովուրդին մասին:

Հարցում.— Ծնորդուած ու ստացուած այդ ճանաչումներուն արդիւնքներուն դիմաց հայրենի ընթերցողները իրենք զիրենք հարստացած զգացին արեւմտահայ մնացորդացին ու Սփիւքի գրականութեան հաշուոյն, թէ յաճախ աղքատութեան ահարկու ապրումներով խոցուցաւ իրենց «հագարախոց» հոգին:

Պատկերացուցէք հեղ մը «մինչեւ վերջերս» էն առաջ Հայաստանի մէջ ճանաչում գտածներուն ընդունած պայմանները եւ նախանձեցէք իրենց, եթէ կրնաք:

Խօսքը հաւասարապէս կը վերաբերի հիրաբա՛ր վարձատրուածներուն թէ մետասաներորդ ժամուն թակարդը ինկած հարստահարուածներուն:

Ինչպէս յայտնի է, «մինչեւ վերջերս» Հայաստանի իշխանութիւնները առանց կեղեքող տուրքեր գանձելու՝ իրենց սահմաններուն մէջ երբեք ճանաչում չեն շնորհած մարդոց եւ այդ աննախանձեղի քաւարանէն անցուցած են ծառայութեան «նոր ճամբաներուն» մէջ մտած վարձահատոյցները թէ ամբողջական անձնատուութեան յօժարածները, որոնց առաջին շարքին մէջ, ցաւօք, գտնուեցաւ նաեւ մեր նախկին ընկերը, Անդրանիկ Ծառուկեան, ու երկրորդ շարքին՝ գրագէտներէն մէկ նախկին սիրելին, Կոստան Զարեան:

Ու ասոնցմէ առաջ, ոճիրի ու բռնութեան վրայ կառուցուած կարգերուն յաւերժութեան հաւատալու թուլութեան համար վարձատրուած ու մեծարուած Շիրվանզադէն, Զապէլ Եսայեանն ու Աւետիք Իսահակեանը, յիշելու համար ամէնէն հանգամանաւորները:

Եթէ առաջինները եւ առաջիններէն շատ առաջ կարմիր յանձնառութիւններով գլուխ խոնարհած Իսահակեան, Շիրվանզադէ ու Զապէլ Եսայեան քաջութիւնը ունենային միտն հաշիւներէ առաջացած վարձատրութիւններով չծանրաբեռնելու իրենց անունները, չքաւորութեան մէջ տապալակելու տաժանքը կը շարունակուէր հարկաւ, արագ ճանաչումը կը զլացուէր իրենց, վաստակաւոր իրենց միւս եղբայրներուն պէս իրենք եւս ժամանակէն առաջ տուն-թանգարաններ ու արձաններ չէին ունենար, քաց արժանեաց տոմարներուն մէջ պահած կ'ըլլային աւելի թանկ բան մը, բանե՛ր, գրագէտի համբուրելի հպարտութիւն մը, մարդկային արժանաւորութեան յատկանշական ցոլք մը, առնուազն սրբագին կենսագրական մը:

Շիրվանզադէն ի դէմս Ստալինի «աշխարհի մեծագոյն մարդը» տեսած ըլլալու ահարկու արատը կապած չէր ըլլար իր անունին:

Զապէլ Եսայեան գրպարտութեամբ բանտարկուած գրագէտները մահացու մեղքերով դատապարտելու ամպեր չէր դիզեր իր կենսագրութեան մէջ:

Իսկ Իսահակեան ազգի-ազգի «տուժեր» չէր կուտակեր իր խղճ-
մըտանքին վրայ:

Զրպարտութիւն չթուի յիշատակուած հնչուն վարձատրութեան
պարագան: Զապէլ Եսայեանի «Նամակահի»ին ծանօթագրութեան
բաժնին մէջ, Արփիկ Աւետիսեան կը գրէ.

«1926 թ., Զ. Եսայեանը առաջին անգամ եղաւ Սովետա-
կան Հայաստանում, կառավարութիւնը նրան 300 ռուբլի թոշակ
նշանակեց: Թոշակ էին ստանում Ա. Իսահակեանը, Ա. Թիր-
վանգադէն եւ ուրիշներ» (Երևան, 1977, էջ 384):

Իրենց բացարձակ արժէքին ու արժանիքներուն համար չէր, որ
«մինչեւ վերջերս հայրենիքում» ճանաչում կը գտնէին մարդիկ, հայրե-
նիքին դուրսէն պարտադրուած դրածոները ճանաչում կը շնորհեն
ստուգուած թղթերուն ու թուլութիւններուն միայն, ի հարկէ զեղջելէ յե-
տոյ անոնց յաւագոյն արժանիքներէն մէկը, մէկ էջը, մէկ գիծը, աշ-
խարհահայեացքին էատարը, սրբազան սկզբունք մը, սրբազնաստրը
որօշակ մը...

Մտրճ ու մանգաղի բռնակալութենէն ազատագրուած հայրենի
մեր ժողովուրդին մէկ խաւը երեւի «մինչեւ վերջերս» այդ պայմաննե-
րուն մէջ ու պայմաններով ճանաչում գտածներուն կարօտէ՞ն կը տո-
չորի ու «մինչեւ վերջերս» Երկաթէ վարագոյրին այս կողմը մնալու
դատապարտուած նախկին անբաղձալիները որեւէ հետաքրքրութիւն
չեն ներկայացներ իրեն:

Երեւի:

Թող ներուի մեզի շատ անձնական փորձառութեան մը յիշատա-
կութիւնը հոս:

1991ին, երբ Հայաստանի ժողովուրդը հանրաքուէով արդէն վե-
րատիրացած էր իր անկախութեան, ու կը կարծուէր, թէ այսուհետեւ
ամէն մարդու առջեւ բաց պիտի ըլլան հայրենիքի դուռները, Հայաս-
տանի գրողներու տան դառնի՞նք մէջ, բանաստեղծ Մ. Իշխանին
նուիրուած յարգանքի երեկոյի մը մասնակցելու գծով, Գրողներու միու-
թեան եւ նորակազմ «Համազգային»ի վարչութեանց կողմէ հրաւեր մը
եկաւ մեզի:

Այդ օրերուն մուտքի վիզաները կը տրուէին նախկին Խորհրդային
Միութեան Դամասկոսի դեսպանատունէն: Առ այդ ձեւակերպուեցաւ
դիմումը, բայց Դամասկոսի դեսպանատունը մերժեց ընդառաջել հայ-
րենական մեր բաղձանքին՝ ա՛յն պատճառաբանութեամբ, որ մեր անու-
նը կը գտնուի սեւ ցուցակին մէջ եւ արգիլուած է մեզի մուտք գոր-
ծել նախկին Խորհրդային երկիրներէն ներս:

Խորհրդային սակաւապետութեան փլուզումէն ու Հայաստանի
տիրացած անկախութենէն ետք, քիչ մը դժուար էր հաշտուիլ ան-
շուշտ երկարաձգուող այս պատիժին հետ, բայց փաստը կը մնայ
փաստ:

Հոս թէ հայրենի երկինքին տակ մեր բարեկամները ամբողջ ամիս մը աշխատանք տարին, մինչեւ որ չենք գիտեր որ մայրաքաղաքին ո՛ր օրգանը ներում շնորհեց մեզի ու կրցանք ուր դնել մեր երազած հողին:

Այս ողբերգական կամ զանազան միջադէպը անփութեցինք, աւելցնելու համար, որ եթէ գիտնայինք նախասիրութեան կարգով մեր համարումին մէջ Իսահակեանէն աւելի Վարուժանին, Մեծարենցին ու Չարենցին տեղ տրուած ըլլալու յայտարարութիւնը այդքան վրդովում պիտի առաջացնէ մտաւորական թէ ընտանեկան շրջանակներէ ներս, հին օրգաններու ներկայացուցիչներէն կամ ժառանգորդներէն ջերմօրէն կը խնդրէինք, որ յանուն յիշեալ շրջանակներու խաղաղութեան՝ շարունակեն անխախտ պահել սեւ ցուցակը եւ տեղի չտան ներում շնորհելու առաջարկներուն:

Եթէ գիտնայի՞նք...

Անցնինք:

Ու խաղաղութիւն պարգեւելու համար հանգուցեալ գրոհայիններու հոգիներուն, ու հաճոյք՝ նորագոյն քաջարիներուն, մէկ կողմ դնենք Սնապեանը ու հարց տանք-

— «Մինչեւ վերջերս հայրենիքում» ճանաչում գտածները արժէքներու հրամայականո՞վ նման պատիւներու կ'արժանանային, թէ գրականէն կամ անհատական արժանիքներէն թուրովին տարբեր շարժառիթներով:

Կամ՝

— «Մինչեւ վերջերս հայրենիքում» ճանաչման փառքէն զուրկ մնացածները անարժանութեան պատճառո՞վ կը պատժուէին, թէ հայրենիքի մէջ տիրող հատուածական նեղմտութեան հետեւանքով:

Աւետիք Իսահակեանի թողան դրած հարցին ձեւէն այն տպաւորութիւնը կը ստացուի, որ «մինչեւ վերջերս հայրենիքում» լսուած անունները, նովին բանի, կշիռ ունեցողներն էին, իսկ միւսները՝ «հէ՛շ»:

Մենք չենք կարծեր, որ նման մօտեցումները արդար հիմքեր ունին:

Որովհետեւ,

Համաստեղի անունին տեղ՝ Ամերիկայէն՝ Սիտալի մը անունը լսեցին յաճախ մարդիկ մեր հայրենիքին մէջ:

Նիկողոս Սարաֆեանի տեղ՝ Փարիզէն՝ Մկրտիչ Երիցանցի մը անունը:

Եղուարդ Պօյաճեանի տեղ՝ Պէյրութէն՝ Յակոբ Նորունիի մը անունը:

Եւ այլն:

Նստե՛ինք ու նախանձէինք «հայրենիքում» ճանաչում գտած, այլ գրականօրէն ողբալի ա՛յս մարդոց, թէ ողբայինք հայրենիքի մէջ կիրարկուած ողբերգական չափանիշները, որոնք հայրենի ժողովուրդին

ճանցուցին Ափիոքի խոտանը յաճախ ու խոտանցումներուն կոտորակները...

*
* *

Նստորդ էջերուն հարեանցիօրէն շօշափուած հարցերուն ակնարկելով՝ «Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» յօդուածին հեղինակը կը գրէ.

«Սոյն յօդուածն արդէն աւարտել էի, երբ եկաւ «Վարուժան»ի նոր համարը (թիւ 12)՝ նոր լուտանքներ թափելով Իսահակեանի հասցէին: Այս անգամ պրն. Սնապեանը սինակ չէ, կողքին նրա երեսանեան երկրպագու, գրական հանդէսներից մէկի աշխատակից Ալբերտ Կոստանեանն է»:

Այս ծանօթագրութենէն ետք, գրութեան վերջին մէկուկէս սինակը գրատղ լայնքի մը վրայ, յօդուածագիրը կ'անդրադառնայ վերը յիշուած երկու գրողներուն միջեւ տեղի ունեցած ու «Վարուժան»ի հիւրընկալած հարցազրոյցին մէջ շօշափուած Ալեւոյի Իսահակեանի «Մասնայ Մհեր» պեմին պատմութեան, արձանագրելով իր քիչ մը քիչ զիտցածը եւ քիչ մը շատ չզիտցածը:

Քննութեան առարկայ դառնալու անարժան կարգ մը ակնարկութիւններէ ետք, Իսահակեանի թողը նախ՝ ուշադրութեան կը յանձնէ Ալբերտ Կոստանեանի հետեւեալ տեղեկագրութիւնը.

«Մեզանում գաղտնիք չէ, որ ժամանակին ամենաբարձր հիմնարկի ներկայացուցիչը առաջարկել է Իսահակեանին դուրս բերել Մհերին քարայրից: Իսահակեանը կատարել է այդ պատուէրը, իսկ նրա սերնդակից կամ կրտսեր սերնդակից Օշականն ազդարարել է այդ առթիւ, թէ էպոսը պղծուեց»:

Եւ ապա՝ կ'անդրադառնայ «Մհեր»ը չնաշխարհիկ գործ մը համարել մերժող մեր տպարարութեան եւ անմիջապէս կ'անցնի իր հարցումներուն եւ հաստատումներուն..

«Ի՞նչ ասես Փորձես հերքել սրանց նմաններին, ըստ իս, անպատուաբեր կը լինի Իսահակեանի յիշատակի համար, սրանք ո՞վ են, որ Իսահակեանի դէմ...»:

Ընդհատենք մէջբերումը ու առաւելագոյն չափով մը պարզացնելով հարցը՝ ըսենք, որ «սրանք»էն մէկը մենք են (մենք ո՞վ ենք որ), իսկ միւսը՝ ասելի քան քսան տարիներ առաջ խստապահանջ ընթերցողին ուշադրութիւնը գրաւած քննադատ Ալբերտ Կոստանեանը, որուն

դուն ո՞վ ես ըսելու համարձակութիւնը իրապէս... համարձակութիւն կ'ուզէ:

Գրականութիւնը տարբեր մարզ է սակայն ու տոհմական դիրքերու սոսկական առկայութիւնը բնաւ ապահով երաշխիք չէ կարծելու, որ կարելի է անճիշդ ու անճշմարիտ բաներ պարտադրել մարդոց, որոնք, յամենայնդէպս, համբաւներու ակօսով կամ պաշտօնական խօսակներու կողմէ արտասանուած ամէն խօսք մեքենական արագութեամբ կու տուող նախկին Խորհրդային Հայաստանի գլխաւակ քաղաքացիները չեն այլեւս...

Ալբերտ Կոստանեան ասպարէզին մէջ մուտք գործած առաջին օրէն ընթացաւ իր նախասիրութեան ճամբով, եղաւ իր գեղարուեստական ճաշակին սնունդ տուող ու հասկացողութիւնը թեւատրող դէմքերու ստեղծումներուն հետ, — Եղիա Տէմիրճիպաշեանի, Տիրան Չրաքեանի, Յակոբ Օշականի, Կոստան Զարեանի, Եղիշէ Չարեանցի, Յովհ. Թումանեանի ու Ռիլերմ Սարոյեանի մտերմութեան մէջ:

Վերը զգացուած վրդովումին պատճառներէն մէկն ալ կը թուի ըլլալ ա՛յն, յօդուածագիրէ՛ն կ'իմանանք, որ Ալբերտ Կոստանեան «յիւրախ իր կեանքում առաջին անգամ է տալիս մեծ Գիւմրեցու անունը»:

Այս հանգամանքը, սակայն, կարելի չէ մահացու մտքերու շարքին դասել: Մնաց որ, եթէ Ալբերտ Կոստանեան Իսահակեանի անունը բնաւ չէ տուած «կեանքում», եղած է եւ ուրիշ մը, որ Իսահակեանի անունէն զատ ուրիշ ոեւէ անուն չէ տուած «կեանքում»:

Յանցանքի ու պատիժի հարցեր կարելի չէ յուզել նման առիթներու: Հասկացողութեան ու ճաշակի խնդիրներուն մէջ «չի խանգարներ» քիչ մը ազատութիւն շնորհել մարդոց:

Աւելի վարը խօսք կ'ըլլայ «Սասմայ Մհեր»ի մէջ Իսահակեանի օգտագործած պատմական ատաղձին ու հոգեբանական վերիվայրումներուն մասին, ուր ամէն ինչ օրինական համարելով՝ «Տաճարի ճամբին» կը կատարուի սա հարցադրումը.

«Կոչել սա պատուէր, դէռ աւելին, Օշականի կարծիքն էլ վկայակոչել իրենց սուտը հաստատելու համար, այս ամէնը պարոնների բարոյական նկարագրին շատ հարազատ պահուածք է: Անշուշտ, Օշականն էլ կը զարմանար նման կեղծիքի շուրջ: Քանզի նա իր գրախօսականը գրել է 1922 թուին («Քարձրավանք», 1922, Կ. Պոլիս, Դ. թիւ), պոեմի առաջին տարբերակի մասին, որն, ինչպէս յայտնի է, աւարտոււմ է Մհերի Ազուաու Քարը քաշուելով: Եւ միայն 15 տարի անց՝ 1937 թուին, պոեմի երկրորդ տարբերակը մշակելիս, Իսահակեանը Մհերին դուրս է բերում Ազուաու Քարից: Եւ սակայն այդ տարբերակը

Իսահակեանը չհամարեց վերջնական եւ աշխատանքները շարունակեց ընդհուպ մինչ 1956 թ.: Ինչպէս վկայում են պոեմի վերջնական մշակման բանաստեղծի բնագրերը եւ ծրագրային գրառումները (1956, Յուլիս 6), նա եկել է այն եզրակացութեան, որ պէտք է վերջերգը ընդհանրապէս հանել պոեմի տեքստից»:

Հեքիաթ մտիկ ընելու կամ կարդալու հակում ունեցողներուն համար հետաքրքրական են անշուշտ այս... հեքիաթները, բայց ընթերցողը տրուածը կը կարդայ միայն ու քննադատը կարդացածին վրայ կը հիմնադրէ իր գնահատանքները եւ ոչ թէ աւելի քան կէս դարու ընթացքին միայն մէկ անձի մատչելի «ծրագրային գրառումներուն»: Աւելի պարզ, ոեւէ մէկէն, պարզ ընթերցող ըլլայ ան թէ բանիքուն քննադատ, կարելի չէ սպասել մարգարէ ըլլալ, ինչպէս լռելեայն կը պահանջուի վերը:

Երանի՜ թէ Իսահակեանի թողը այս բաները պատմելու համար այսքան ուշ մնացած չըլլար եւ միայն այս առիթով չանդրադատնար անոնց, այլ նշուած մանրամասնութիւնները պարզելու ձանձրոյթը կրած ըլլար շատ առաջ ու շատերուն, Իսահակեանը ընդմիջտ մեծ հայր համարող միւս թողներուն ու ծողներուն, որոնք նոյն տուեալներուն հիմամբ թերեւս կարենային հեռու մնացած ըլլալ «Մհեր»ին վրայ բեռցրած վերջերգային բեռը գերազնահատելու ծառայական մրցավազքերէն, որոնց մասին խօսք կ'ըլլայ քիչ անդին:

Դատնանք վերջին մէջբերումին առաջին տողերուն, ուր մհերեան պատուէրի փաստը չեղեալ կը համարուի ու կը հիւսուի նոր հեքիաթ մը այն մասին, որ Ալբերտ Կոստանեանի բացայայտած գաղտնիքը ունի կեղծիքի հէնք մը: Հայրենի ժողովուրդին արիւնոտ վերիվայրումներուն ամէնէն ողբերգական փուլերուն ծանօթ եւ Օշականի գրականութեան մտերմութեան մէջ ապրած քննադատ Ալբերտ Կոստանեանի հաղորդած տեղեկութիւնը պարկեշտ մօտեցումով մը չէ դիմադրուած ու թոփշը տրուած է ոլորապտոյտ սաւառնումներուն, տարբեր ժամանակներու մէջ ետ ու առաջ երթալու խաղարկութեամբ կարծելով, թէ մէկուն հաշուենկատ կարկտաններէն իմաստութեան ճառագայթներ կ'արձակուին ու յարմարողական այդ յարդարանքները յիշելու միսին համարձակութիւնը կեղծիքով կը կնքուի:

Բացառաբար շնորհակալ ըլլանք ճշմարտութեան չաստուծոյն, որ չի հերքուի այն փաստը, թէ 1937ին «Սասմայ Մհեր»ին մէջ Աւետիք Իսահակեան կատարած է Մհերը Ագուաու Ջարէն դուրս բերելու յաւելում մը, արդէն ծանօթ վերջերգը, որուն համար, սակայն, մթնոլորտային ճնշումի հետեւանք չէր կ'ըսէ թողը, «Դա Իսահակեան հեղինակի կամքն էր եւ խորհրդածութիւնը, դեռեւս մինչեւ պոեմի գրելը», աւելցնելով, որ Օշական չէր կրնար տասնհինգ տարի առաջ գրուած գրախօսականի մը մէջ հաշուի առած ըլլալ այդ պարա-

գան ու պղծուած համարել ազգային վիպերգը, հետեաքար գրուցի նստած Կոստանեանի ու Սնապեանի մօտ կայ կեղծիք մը եւ

«Օջականն էլ կը զարմանար նման կեղծիքի շուրջ»:

Եթէ կեղծիք մը թող տրուած ըլլար, Օջականը անշո՛ւշտ կը զարմանար, բայց կեղծիքի յետին նշոյլ անգամ չկայ հոս, փոխարէնը կայ գիտութեան քողով շղարշուած չգիտութիւն մը, որ իսկապէս ըստացած է ապշեցուցիչ ծաւալ:

Այդ մէկուն անդրադառնալէ առաջ՝ աւարտենք սակայն «Տաճարի ճամբին» կատարուած նոյն հարցին առընչուող միւս խոր-խոր խորհրդածութեանց մատնանշումը.

«Մեր խօսքը առաջին տարբերակի մասին էր, որը վերջանում էր Մհերի Ազուաու Քարում մեկուսանալով: Այնպէս որ Օջականի 1922 թուին գրած գրախօսականում խօսք չէր կարող լինել Մհերին քարայրից դուրս բերելու վերաբերեալ, պատուէր կատարելու կամ չկատարելու, էպոսը պղծելու վերաբերեալ:

«Ամօթ է... գրական գիտութիւնը նոյնպէս փաստերի եւ ճշմարտութեան գիտութիւն է»:

Երանի՜ թէ Աւետիք Իսահակեանի թողը գրական գիտութիւնը իրապէս փաստերու գիտութիւն համարած ըլլար:

Ու քիչ մը փաստերուն յարգ ընծայած ըլլար:

Ու քիչ մը նախանձախնդիր ըլլար ճշմարտութեան հանդէպ:

Ու քիչ մը հեռու մնացած ըլլար ինքզինք անյարմար կացութիւններու մէջ դնող ջղային ալեկոծումներէ:

Ու ամօթ է ըսելու տիրացուական աճապարանքէն առաջ՝ կարմըրելու զգալութիւն ունեցած ըլլար:

Երանի՜ թէ...

Բայց նախ՝ ինչո՞ւ կը կարծուի, թէ «Սասմայ Մհեր»ի առաջին հրատարակութեան նուիրուած գրախօսականէն զատ Օջական երբեք չէր արտայայտուած Իսահակեանի այդ վիպերգին մասին:

Երկրորդ՝ ո՞վ հաւաստիք տուած է Իսահակեանի թողան, կարծելու, որ Օջականի աչքէն վրիպած է 1937ի վերամշակուած ու Վերջերգով աճած միներեան այլասերումը:

Երրորդ՝ ո՞ւր խմբագրուած է կամ ո՞վ խմբագրած է գրական այն սահմանադրութիւնը, որ հեղինակ մը կրնայ փոփոխութիւններ մուծել իր գործին նոր հրատարակութեանց մէջ, մինչ քննադատը պարտաւոր է անփոփոխ պահել առաջին հրատարակութեան մասին արձանագրած իր տպաւորութիւնները:

Բայց որքա՞ն լաւ պիտի ըլլար, որ յօդուածագիրը Ալբերտ Կոստանեանի անդրադարձին մէջ կեղծիք մը տեսնելու փոխարէն՝ փաստերու գիտութեան իր չքաւորութիւնը դարմանելու համար աչքէ անցուցած ըլլար Օջականի գրականութիւնը:

Աւետիք Իսահակեանի թողը տեսած կը թուի Օշականի «Բարձրավանք»-եան վերլուծումը միայն, բայց նոյն ատեն ուրիշ բան կը թուի, կը թուի, թէ անհրաժեշտ լրջութեամբ չէ թափանցած իր տեսած այդ մէկ հատիկ գրախօսականին խորքը, կամ՝ վստահելով ընթերցողին հաւանական անտեղեկութեան, Օշականը Տեղացուցած է Օշականէն, որպէսզի հաւաստի դարձնէ Ալլեքոն Կոստանեանն ու Պօղոս Սնապեանը սուտ խօսած ու կեղծիքի դիմած ըլլալու իր զոյգ ամբաստանութիւնը:

Միշտը այն է սակայն, որ Աւետիք Իսահակեան, փշած նո՛ր հովերուն առագաստ պարզած՝ առաջին օրէն ահագին չափով սոցիալական պղտոր ջորեր խառնած էր ազգային վիպերգի անարատ գինիին եւ ձգտումնաւոր այդ պղտորութեան դէմ էր, որ առաջին հերթին ընդվզեցաւ Օշական:

Ահաւասիկ այս մասին ստորագրած Օշականի առաջին դիտողութեան մէկ բնորոշ բաժինը.

«Նոյն անփութութեամբ Պ. Իսահակեան կը կարծէ տրամադրուիլ դիցազնավէպին հանդէպ՝ գրելու համար «Սասմայ Մհեր»ը:

«Անակնկալ է այս մտթափոխութիւնը:

«Ան որ տարիներ առաջ անաթեմա եւ հաշտոյանք պոռաց ընկերութեան երեսին, որ իբրեւ գերագոյն իմաստութիւն կեանքին բնաջնջումը պատգամեց, այսօր կը հաւատայ բառերու, որոնք ընթացիկ հոսանքներու վրայ կը քալեն մեծաղաղակ:

«Իմասկի իրաւունք», «ոսմկութիւն բերողի» քիչ մը շատ պատեհապաշտ այս հաւատաւորութիւնը «սոցիալական» յօդուածի մը համար կրնար գետին ծառայել: Բայց ատիկա զետեղել ազգային անանդութեան ծոցը, հանճարային ձեռնարկ մըն է, ու Պ. Իսահակեանի քնարը շատ ազագուն է դիմանալու համար այդ բեռին:

«Պ. Իսահակեան աւելի առաջ կ'երթայ Պ. Թումանեանէն, որ գոնէ իրականին պատրանքը ունի իր ետին, երբ «ալեւոր ու բանգէտ» ծերուկի մը քերանը «խելօք» խօսքեր կը դնէ: Պ. Իսահակեան հիմնովին կը շարափոխէ հեքիաթը եւ մեր ժողովորդին կը հազցնէ տարազներ, որոնք մտրացուած են դժբախտաբար:

«Ու ի՛նչ թեթեւութեամբ» («Բարձրավանք», 1902, Կ. Պոլիս, թիւ 4, էջ 131):

Քննարկուած հարցին հետ խիստ աղընչութիւն ունեցող բնատրութեան գիծ մը ուրուագծելու համար, ընդգծենք Օշականի կոտորած «քիչ մը շատ պատեհապաշտ այս հաւատաւորութիւնը», որ աննշմար չէ անցած նաեւ ուրիշ դէմքերու կողմէ, որոնք արձանագրած են ի-

րենց դիտողությունը առանձին էջերու վրայ թէ վիպական հիսուածքներու մէջ: Այս ուղղութեամբ հետաքրքրական է Կոստան Զարեանի թանձրացուցած նշմարը, «Բանկօօսպը եւ մամուրի ոսկորները» վէպին մէջ: Գործող անձերէն մէկը, Պերլինի՝ Համամիութենական ներկայացուցչութեան մէջ կարեւոր պաշտօնի տիրացած Սերգօ Ալեմդարեան, Վեներտիկի Սուրբ Մարկոս Հրապարակին վրայ կը հանդիպի վէպին գլխաւոր հերոսներէն Իրեքեանին եւ այս վերջինին կը հաղորդէ.

«—Էստեղ ա «Մուհամեդ բեն Ալի»ի հեղինակը: Ասում է՝ ուզում է վերադառնալ հայրենիք, հինգ հարիւր տուարի պէտք կայ: Ի՞նչ եւ մտածում...»

«—Դէ, եթէ ուզում է՝ թող վերադառնայ... Հա՛, իսկապէ՛ս ուզում է...»

«—Ի՞նչ կայ որ...»

«—Ոչինչ:»

«Ինչ զարմանալի բան, մտածեցի եւ: Փոքրահասակ, հաստիկ, կոացած այդ մարդը դեռ երէկ փրփուրը շրթերին ճառում էր Խորհրդային Հայաստանի դէմ, փառաբանում ցարիզմը, հայհուում բոլշեւիկներին:»

«—Վաղո՞ւց է որ ուզում է...»

«—Մի տարի է նամակներ է գրում: Էլ յոգնեցի: Բանաստեղծ մարդ է, կը գայ, կը տեսնի, մի լաւ բան կը գրի: Թէ չէ՛ ասում է այստեղ սպառել է, մուսան չի ներշնչում...»

«—Անշուշտ, թող գնայ ներշնչուի» (Անթիլիաս, 1987, էջ 441):

«Մուհամեդ բեն Ալի»ի հեղինակը վերադարձաւ հայրենիք եւ ամէն ոք տեսաւ, թէ ինչ ներշնչեց ու ինչ արտաշնչեց, բայց կարելորդ այդ չէ հոս, միւսն է կարեւոր, Օջականի կոսմած «քիչ մը շատ պատեհապաշտ այս հաւատատրոփունը» երկրորդը Զարեանի «ինչ զարմանալի բան»ը, զոր կարելի չէ դուրս ձգել վերիվայրումներով լի Իսահակեանի կենսագրութենէն:

Ծարունակները.

«Իսամկի իրաւունք» ու «ոսմկութիւն բերողի քիչ մը շատ պատեհապաշտ հաւատատրոփունը» եւ, միշտ ըստ Օջականի, հիմնովին չարափոխուած հեքիաթին մէջ հայ ժողովուրդին հագցուած մութացած ծոյ տարագները (իմա՛ կարմրաշառա՞լ) երեւի յիշեցուցած են նաեւ ուրիշներ, եւ ուրիշներու շարքին՝ Վարդգէս Ահարոնեան, որուն գրուած մէկ նամակին մէջ Իսահակեան կը փորձէ ջնջել կարմիր տպատրոփեանց հետքերը.

«Սասմայ Մհեր»ս (որ ի դէպ, շա՛տ եւ մշակել) երբեք բոլշեւիկեան տենդենց չունի, այլ ընդհանուր սոցիալական-դե-

մոկրաստիկ: Բոլշևիզմի հաւատով Մենը դուրս է եկել. իսկ իմ ասածով.— դուրս է գալու. ե՞րբ, ի՞նչ կերպ. Աստուած գիտէ» (Աւետիք Իսահակեան, «Նամակներ», Գաֆիրէ, 1959, էջ 93):

Փութանք անմիջապէս ըսել, որ Աստուծմէ առաջ աստուածամերձ ուժերը գիտցան Մենին դուրս գալու ժամանակը, Հայաստանի մէջ Ռեզիմակին կեցութեան առաջին տարին դեռ չըլլորած, 1937ին, երբ ո՛վ գիտէ (կամ ո՛վ չի գիտեր) ինչ ճնշումներու տակ ան որդեգրեց «բոլշևիզմի հաւատը» եւ մարտի դաշտ նետեց Մենը եւ անոր գլխատրած հազար ու բիւրը, որոնք գրոհելով՝

Աւերեցին աշխարհը չար
Ու ռամկութիւն բերին աշխարհ...

«Մասմայ Մենը»ի առաջին տարբերակին աոիթով՝ Հոկտեմբերեան կարգախօսներուն տակ դիմափոխուած Ռերոսին մասին իր «Անցորդ»ին մէջ ակնարկութիւններ ունի նաեւ Կոստան Չարեան.

«Մենը զինուորի շապիկ է հագնում եւ թշնամի երկրներ արշաւում»:

«Փախած, «Ենթականից պակաս» բանաստեղծները Մենի վրայ կարմիր շապիկ են հագցնում» («Երկեր», Անթիլիաս, 1975, էջ 142, 143):

Արիւնքի մէջ արձանագրուած այս երեք տպաւորութիւններուն դիմաց՝ արտագրեց Հայաստանի մէջ բանաձեւուած երեք տպաւորութիւններ, որոնք համարեա՛կը կրկնեն զիրար.

Առաջին.

«...Հոկտեմբերեան սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիան իր բարերար ազդեցութիւնը ունեցաւ պոետի վրայ եւ որս գրական լուսազոյն արտայայտութիւնը «Մասմայ Մենը» վիպերգն է» (Յովհ. Ղանալանեան, «Աւետիք Իսահակեան», Երևան, 1955, էջ 118):

Երկրորդ.

«Հոկտեմբերեան սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայի պայծառ լույսի տակ բանաստեղծը տեսաւ, որ Մենը հանդիսանում է միջնադարեան Հայաստանի աշխատատրական լայն շերտերի, լատկապէս շինականների խոհերի եւ իղձերի ֆեոդալական ճնշումների դէմ նրանց բողոքի եւ ըմբոստութեան արտայայտիչը հայկական էպոսում» (Արամ Ինճիկեան, «Աւետիք Իսահակեան», Երևան, 1955, էջ 175):

Երրորդ.

«Պատմական մեծ լեղաբեկումների նախօրէին և դրանից յետոյ Իսահակեանի խոհերը նոյնպէս ձգում են դէպի էպոսը: Եւ ահա 1919ից, երբ նոր էր ազդարարուել Հոկտեմբերեան լեղափոխութեան յաղթանակը, ձեռնամուխ է լինում «Սասմայ Մհեր»ի պոեմին» (Գարիկ Յովհաննիսեան, «Աւետիք Իսահակեան», Երեւան, 1975, էջ 230):

Ինչպէս կ'երեւի, նշում վեց անունները՝ Օշական, Ահարոնեան, Զարեան, Ղանալանեան, Ինճիկեան և Յովհաննիսեան «Սասմայ Մհեր» վիպերգի Իսահակեանի մշակումին աղբիւրը կը համարեն փշած նոր հոպերը, այն տարբերութեամբ, որ մինչ առաջին երեքը խորթութիւն մը կը կրահեն անոր հաղորդում թեղիակային բնոյթին մէջ, ընդհակառակն, «Սովետական ազատ աշխարհ Հայաստան»էն ձայն բարձրացուցած միւսները անզուսպ ցնծութեամբ կ'ողջունեն անոր հազցուած «կարմիր շապիկն» ու արշաւը դէպի «թշնամի երկրներ»:

Ո՛ր անկիւնէն ալ դիտենք ինդրոյ առարկայ գործը, անխուսափելիօրէն կը հանդիպինք «օրումն իշխանութիւնները հաճ ձգող» անոր ձգտումնաւոր էութեան, զոր թեղիակին թողը ինչ-որ մտգական գաւազանով կը կարծէ ջնջել ու ջինջ հոգիով ապրած մարդու տիպար մը ներկայացնել մեծ հայրը, առանց կասկածելու, որ մա՛նտանդ ստալինեան համայնավարութեան օրօք իշխանութիւնները դժուար կը հանդուրժէին ջինջ հոգիով մարդեր, չէին հանդուծեր և Իսահակեանը, եթէ ան փորձէր Մհերը Ազոաւու Քարին մէջ քանտուած պահել:

Մթնոլորտային այդ ճնշումին տակ էր հարկաւ, որ Իսահակեան ստիպուեցաւ թէ՛ «բարձրագոյն հիմնարկի ներկայացուցիչն պատուէրը» գործադրել և թէ մեկնաբանել Մհերին տուած իր նոր յարդարանքները, որոնք ապահով աղբիւր հանդիսացան Մհերի կարմիր շապիկով շլացած իսահակեանագէտներուն.

«Երբ բռնկուեց Հոկտեմբերեան սոցիալիստական աշխարհացունց լեղափոխութիւնը, ևս տեսայ, որ Մհերի ժամը հնչեց: «1919 թուին ժընեւում, ևս սկսեցի գրել «Սասմայ Մհեր» պոեմը, որ հրատարակուեց 1922 թուին, և ապա 1937 թուին մշակուած լոյս տեսաւ Երեւանում:

«Մհերը՝ հայ ժողովուրդը, փշրեց իր շղթաները ռուսական պրոլետարիատի հետ, և դուրս եկաւ ստրկութեան խաւարանտից» («Ընտիր երկեր», 1948, Երեւան-Մոսկուա, էջ 464):

Քիչ առաջ, Վարդգէս Ահարոնեանին գրած նամակին մէջ (էջ 128), Աւետիք Իսահակեան կը յայտնէր, թէ Մհերը «բոլշեիկեան տեղեկեց չունի»... ու կ'աւելցնէր՝ «Բոլշեիկոյի հաւատով Մհերը դուրս է եկել. իմ ասածով.— դուրս է գալու», մինչդեռ հազիւ Հայաստանի

հողին ուր դրած, չենք գիտեր ո՞ր հրաշքով ան կը տոգորուի «բուլշե-
ւիզմի հաւատով» ու Մհերը դուրս կը բերէ «ստրկութեան խաւար
քանտից»:

Միայն այս չէ, կայ անկի էականը, ասկէ առա՛ջը կայ, «Սաս-
մայ Մհեր» պոեմին գրառման օրերէն եկած Իսահակեանի խոստովա-
նութիւնը, զոր ընթերցողը կարդաց դեռ վերջերս, «Գարուն» ամսա-
գիրի (1991, թիւ 4) էջերուն՝ ժընելէն 8 Փետրուար 1920ին Սիմոն
Յակոբեանին գրուած մէկ նամակին մէջ, ուր կ'ըսուի.

«Ես շատ զբաղուած եմ, գրում եմ վէպս, քայց վերջերս
ընդհատեցի ու գրում եմ հիմա Սասունցի Դարթի որդու՝ Մհե-
րի պոեման. իմ վարիանտի Մհերը, որը բուլշեիկ է: Վարիանտի
էութիւնն է հարազատ, ժողովրդից վերցրած, մնացածը ես եմ
հնարել»:

Ամէն ինչ ըսուած է հոս ու չըսուածը հասկնալի է ըստ ամենալ-
նի, — ժողովուրդէն վերցուած հարազատ էութենէն դուրս մնացածը
անհարազատ է, ու անհարազատը՝ իմ հնարածն է, «իմ վարիանտի
Մհերը, որը բուլշեիկ է»:

Միշո ու ճիշո ա՛յն՝ զոր ըսին իրեն Օշականն ու «կարմիր գը-
ծից» դուրս ապրած միսները:

Անհատաւայի է սակայն այս խոստովանութիւնը:

Ուրեմն՝ Աւետիք Իսահակեան ընդունակ էր «ժողովրդից վերց-
րած»էն հեռանալով անհարազատ քաներ հնարելու:

Մէկուն այսպէս ըսելու, միւսին այնպէս գրելու:

Դաշնակցական Վարդէս Ահարոնեանին ըսելու, որ Մհերը բու-
լշեիկեան տեղեկաց չունի, իսկ դաշնակցական իր ուխտին դաւաճանած
Սիմոն Յակոբեանին նոյն դիրութեամբ ներկայացնելու «իմ վարիանտի
Մհերը, որը բուլշեիկ է»:

Ընթերցողը կ'ուզէ գիտնալ հարկաւ, թէ Մհերի պարագային ո՛ր
անկեղծ է Իսահակեան, Սիմոն Յակոբեանի հետ խօսա՛ծ ատեն, թէ
Վարդէս Ահարոնեանի ուղղած նամակին մէջ:

Դժուար է ճշդել:

Հետեւաբար դարձնենք էջը:

Ու կրկին մտաբերենք «ԲարձրաՎանք»էն արտագրուած օշա-
կանեան հատուածը, ուր մեծ քննադատը դատապարտելով կը դատա-
պարտէր Մհերը «ռամկութիւն ծախու առնող ու տուն բերող հացկա-
տակի մը» վերածած Իսահակեանի կամայականութիւնը, որմէ պարզ
չէ կամ շա՛տ պարզ է, թէ ինչու 15 տարի ետ գացած է «տաճարի
ճամբին» մոմ բռնելու ելած Իսահակեանի թողը:

Թող տրուած անհեթեթութիւնը իր բովանդակ մերկութեամբ կրկին
անգամ ուշադրութեան յանձնելու համար, դարձեալ արտագրենք քիչ ա-
ռաջ մատնանշուած չգիտութեան ու ինքնախաբէութեան միաձոյլ սարքը.

«Մեր խօսքը առաջին տարբերակի մասին էր, որը վերջացում էր Մհերի Ազոսու Քարում մեկուսանալով: Այնպես որ Օշականի 1922 թուին գրած գրախօսականում խօսք չէր կարող լինել Մհերին քարայրից դուրս բերելու վերաբերեալ, պատուէր կատարելու կամ չկատարելու, էպոսը պղծելու վերաբերեալ»:

Բայց Ալբերտ Կոստանեանի բացած խօսքը բնա՛ւ առաջին տարբերակի մասին չէր, երկրորդ տարբերակի մասին էր, հետեւաբար փորձուած հերքումը կը մնայ օդային հերքում մը:

Օշականի միտեան առաջին գրախօսականը գէշ հասկցած ըլլալու պարագան եւ պատուէրի մը հաւանականութիւնը մերժող Իսահակեանի թոռան ճգնութիւնը միաժամանակ տեսանելի դարձնելու համար՝ տանք «Բարձրականք»էն տարիներ ետք արձանագրած Օշականի տպատրութիւններէն մէկ-երկուքը-

«Քսան տարի առաջ եւ յայտներ եմ իմ գայրոյթը նման խաչագողութեան մը համար, երբ մեր ժողովուրդին աժէնէն հարազատ մարմնառութիւններէն մէկուն՝ «Մհեր»ին Աւետիք Իսահակեան աճուցող ուրիշ անկանգնելի տաղաչափ մը շուկայէն ուսմկութիւն ծախու առնող ու տուն բերող հացկատակի մը տիպարը չամչցաւ հանդերձելու» («Համապատկեր», հ. 9, Անթիլիաս, 1980, էջ 234):

Կայ օշականեան երկրորդ «գայրոյթ մը» եւս, այս անգամ «Համապատկեր»ի յաջորդ հատորին (1982) մէջ-

«1940ին Աւետիք Իսահակեան ուրիշ հսկայ մը, քանի որ շուտիկ իմաստութիւն է ունեցած ազգային սրտառուչ աւանդութիւն մը, *Մհերի* հեքիաթը աժան փրփականտի ապրանքի մը վերածելու, օրուան իշխանութիւնները հաճ ձգող» (հ. 10, Անթիլիաս, 1988, էջ 310):

Իշխանութիւնները «հաճ ձգող» օշականեան դիտողութիւնը ուղիղ գծով կը համապատասխանէ Ալբերտ Կոստանեանի յիշատակած բարձրագոյն հիմնարկի ներկայացուցիչին ու Իսահակեանի միջեւ գոյութիւն ունեցած պատուէրային կապերու հետեւանքներուն: Հոս չէ յիշատակուած միայն «իշխանութիւնները հաճ ձգող» արարքը սրբապղծութիւն համարած ըլլալու Օշականի գնահատանքը: Բայց «սրբապղծութիւնն» ալ կայ եւ կայ ո՛չ թէ Ալբերտ Կոստանեանի երեւակայութենէն ծնունդ առած, այլ՝ յայտարարուած նոյնիճն Օշականի կողմէ, այս անգամ իր «Հայ գրականութիւն» դասագիրքին մէջ (Երուսաղէմ, 1942, էջ 806):

«Իր ՄՀԵՐԸ, ուսմկութիւն բերողի զգուելի խարդախումով մը, նախատինք մըն էր այս ժողովուրդին դարաւոր ըմբռնումներուն: Չենք կրնար ներել մարդուն սա սրբապղծութիւնը»:

Ըստ Օշականի, ուրեմն, «ռամկութիւն բերողի զգուելի խարդախումով» Միեր մը կար առաջին մշակումին մէջ և երկրորդ տարբերակին մէջ կար «օրուան իշխանութիւնները հաճ ձգող» հերոս մը, ու կար, մա՛նաւանդ՝ տուեալ խարդախումը սրբապղծութիւն որակած հաստատումը:

Ո՛ր է «իրենց սուտը» հոս, և ո՞ր է կեղծիքը, որպէսզի ընթերցողը ինք ևս համոզուի, որ «այս ամէնը պարոնների բարոյական նկարագրին շատ հարազատ պահուածք է»:

Հինա այլևս արեւու լոյսին պէս պարզ է ամէն ինչ, թէ ինչու Իսահակեանի թողը հետացած է Ալեքերտ Կոստանեանի յիշատակած խստահայեաց պատուիրատուներու ժամանակէն (1937), ու 15 տարի լետ թաալած:

Յուզուած բուն հարցէն հեռանալու խորամակնութիւնը վերկութեան լաստ չէ եղած սակայն ոչ ոքի համար:

Անարգական ոճին ու ամբոխավարական եղանակներուն դիմելու փութկոտութիւնն ալ վստահելի միջոց չէ:

Պէտք չէ ապաիճիլ նաև ընթերցողին անտեղեակութեան, նոյնիսկ եթէ գործող անձերը Իսահակեան մականունը կրեն:

Մէկը կրնայ օր մը մեծ հօր առընչութեամբ յիշեցնել Վոկլի կամ Ռիշփէնի «սեփականութիւնները»՝ բնագրային աղբիւրներով, և ուրիշ մը կրնայ թողան անգիտացած Օշականեան «սրբապղծութիւնը» ցոյց տալ՝ վայրով ու թուականով:

Մոռցուելիք բան չէ անգիտացուած, այլ գոյ օշականեան վերի մէջբերումը, ուր ո՛չ սուտի մը ստուերը տեսաւ ընթերցողը և ոչ ալ կեղծիքի մը շուքը: Տեսաւ միայն անխախտը՝ ճի՛շդը, անջնջելին՝ իրա՛ւը:

Խնդրոյ առարկայ «Վարուժան»եան հարցազրոյցին մէջ սուտ մը չէր խօսուած ուրեմն, այլ պարզապէս յիշեցուած էր Օշականի ճիշդը, և կեղծիք մը չէր թիւտուած, այլ մատնանշուած էր Օշականի քննադատական անկեղծութիւնը:

Փորձուած բան է: Կան մարդեր, որոնց համար մեղապարտ առարք մը այնքան ծանրակշիռ չի թուիր, որքան անոր բացայայտումը:

Ու արարքին հեղինակը այնքան մեղաւոր չի համարուիր, որքան մեղաւոր կը համարուի զայն յիշեցնելու մեղքը գործած անձը:

Ուրիշ խօսքով՝

Կան մարդեր, որոնց սուտ կը թուին բոլոր այն արձանագրութիւնները, որոնք անհասանելի մնացած են իրենց:

Ու կեղծիք կը թուին այն միւս յիշեցումները, որոնց անկեղծութիւնը չեն կրնար տանիլ:

Անհրաժեշտ չէր, կը կարծենք, աւելորդ անգամ մը ևս նման անճան իրադարձութիւններու առջեւ դնել հայ մարդը:

Ինչ կը վերաբերի առանձնապէս մեզի, ըսենք, որ իսախակեանական մեր համարումին չափը տոհմական կամ սովորամոլութեան մթնոլորտին մէջ կազմուած համարումի չափերուն հետ հաշտ չէ, ոչ ալ տպագրուած արձակ թէ չափածոյ էջերուն հիմամբ կրնայ օր մը հասնիլ յոգնաճողով նոյն... չափազանցութեան:

Մենք կ'առնենք անոր, ըսինք անգամ մը, մատի վրայ համրուող գոհարները եւ ուրիշին, ուրիշներուն կը ձգենք միւս յօրինումներուն վրայ հիանալու հաճոյքը...

*
* *

«Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» յօդուածին մէջ այնպէս դրուած է հարցը, որ Ալքերտ Կոստանեանի կողմէ թոյլ տըրուած է յերիւրանք մը, որովհետեւ կ'ըսուի, որ Աւետիք Իսախակեան ո՛չ «Սասմայ Մհեր»-ին կցուած վերջերգային յարդարանքներուն առիթով եւ ոչ ալ ուրիշ որեւէ աստե՛ն բոլշեփկներուն առջեւ թուլութիւններ թոյլ տուած է:

Իրականութիւնը այդպէս չէ սակայն:

Խնդրոյ առարկայ կապերուն մէջ մեծ հայրը աւելի պարկեշտ կը թուի ըլլալ:

Կարդանք անոր յայտարարութիւններէն մէկ-երկուքը, զորս կ'արտագրենք Գարիկ Յովհաննիսեանի «Աւետիք Իսախակեան» անուն մեճագրութեան էջերէն.

«Ես Սովնտական Հայաստանի եւ նրա կառավարութեան բարեկամ եմ, անձնուէր ու անկեղծ բարեկամը, անդաւաճան կանգնած նրա կողքին» (էջ 245):

Երկրորդ խոստովանութիւն մը նոյն էջէն, նոյնպէս անձնուէր, նոյնպէս անկեղծ, նոյնպէս անդաւաճան.

«...Օրէցօր սիրտս կապում է երկրի եւ խորհրդային կարգերի հետ եւ տեսնում եմ, որ այստեղ, Հայաստանում միայն կարող եմ ինձ բախտաւոր զգալ... մեր երկրի ապագան այս կարգերի մէջ է եւ ապահովուած եւ լաւ»:

Հոս, ինչպէս կ'երեւի, բոլշեփկ ըլլալու առաջարկ չէ եղած Իսախակեանին, բայց ակներեւ է ինքզինք խորհրդային կարգերուն հաւատացեալներէն մէկը համարել տալու հաշուեկատ հակումը «մեր երկրի ապագան այս կարգերի մէջ» տեսնելու իր պնդումին իսկ վկայութեամբ, որուն ի լուր, բնական է, որ Իսախակեանի «անձնուէր ու անկեղծ» բարեկամութեամբ արբշիտ անձերը ամենայն փութկոտութեամբ ու բարձրաձայն պիտի դիմէին նոյնանման տրամադրութեանց շահագործ-

ման, ինչպէս ըրաւ Իսահակեանի անվերապահ համարումը վայելող Արամ Ինճիկեան՝ «Աւետիք Իսահակեան» անուն իր գործին մէջ.

«Հոկտեմբերեան սոցիալիստական մեծ յեղափոխութիւնը եղաւ այն փարոսը, որը կապիտալիստական աշխարհի «անդուն ու անել» վանդակում ելք որոնող բանաստեղծին ցոյց տուեց փրկութեան յուսաւոր ուղին» (էջ 180):

Ահա եւ վերիններուն ազգակից ուրիշ յատկանշական արձանագրութիւն մը, այս անգամ Վազգէն Մնացականեանի գրիչով, որ աւելի առաջ տարած է բոլշեիզմի եւ Իսահակեանի միասնութիւնը:

«Հայրենիքում Իսահակեանը շատ շուտով ու խորապէս համոզուեց, որ բոլշեիկն ու հայրենիքը մի ամբողջութիւն են կազմում եւ ինքն էլ դորս չի այդ ամբողջութիւնից, որ բոլշեիկն ու ժողովուրդը իրար հակասող ուժեր չեն, այլ բախտաւոր մի միասնութիւն, որին եկել է խտոճուելու նաեւ ինքը» («Սովետական գրականութիւն», 1973, թիւ 10, էջ 132):

Մեր իրականութեան ծանօթ մարդոց մէջ անկասկած շատ քիչեր են անոնք, որ կը հաւատան Իսահակեանի մօտ հաստատուն նկարագրի մը առասպելին, բայց շատ աւելի քիչ են անոնք, որ կրնան հաւատալ, թէ Աւետիք Իսահակեան, մա՛նաւանդ համայնավար թակարդին մէջ բռնուել է ետք, կրնար իր կամքին ու խղճմտանքին թելադրանքով ըսել, թէ՛

«Ստալինեան սահմանադրութիւնը քաջալերանք է համաշխարհային մարտչող պրոլետարիատի համար եւ ուժգին հարած բոլոր երկրների բուրժուաներին եւ ֆաշիստներին: Դրանով աւելի խորանում է եւ հաստատում լենինեան-ստալինեան ազգային քաղաքականութիւնը» («Սովետական Հայաստան», 23 Նոյեմբեր 1936):

Աւետիք Իսահակեան այնքան մեծ ու այնքան ծանր քար մը չէր կրնար դրած ըլլար իր սրտին, որ Ղարաբաղը, Նախիջեւանը եւ հայրենի միւս եզերքները ասոր-անոր ձրիօրէն բաշխող սահմանադրութիւնը մեծարէր այսքան շոպլօրէն ու, կէս տարի չանցած՝ բոլորովին գոցէր ականջը Բակունցի, Թոթովեցի եւ «չարչարակից» միւսներուն Ռոբնդիւններուն դիմաց եւ արդարացնէր անոնց ձերբակալութիւնը, յայտարարելով, որ՝

«...Նրանք շեղուել են ուղիղ, տրամաբանական ճանապարհից եւ ընթացել են մի դատապարտելի ճանապարհով, որ միայն վնաս է բերում մեր բազմաշարժար ժողովրդին»:

Աւետիք Իսահակեան, կրկնե՛նք, չէր կրնար իր ազատ կամքով նման բաներ ըսել, խղճմտա՛նք կ'ուզէ պնդելու, որ կրնար նման անհոգի բաներ ըսել ան, գրել, ստորագրել ոճրագործներուն հայրենական ու մարդկային ոճիրները արդարացնող յայտարարութիւններ:

Իսահակեանի դուրսէն ցոյց տուած «անկեղծ» քարեկամութիւնները ու ներսէն զգացած «քախտաւորութիւնները», ինչպէս նաեւ Հոկտեմբերեան փարոսներէն իր ճամբուն նետուած լոյսերն ու բոլշեիկեան «քախտաւոր միասնութեան» մէջ զինք մխրճող սանձակոտոր էլոյթները, կը կարծենք, ընդվզումի աւելի ուժեղ պատճառներ պէտք է եղած ըլլային համայնավարութենէն միայն այսօր խորշող իր սիրեցեալ ճեւտին, բայց հայ մարդուն չտրուեցաւ նման փորձի մը ականատես ըլլալ, առանց որուն Ալբերտ Կոստանեանի պարզ յիշեցումին դէմ բարձրացած քարկութեան իր «փոփրադէզ ալիքները» չեն կրնար որեւէ ուժ ներկայացնել...

*
* *

Նոյն գրութեան մէջ, իր զիտցածն ու չզիտցածը, մա՛նաւանդ չզիտցածները իրար խառնելով՝ Իսահակեանի թողը կը գրէ.

«Ուրեմն այսպէս, մի փարիսեցու յաջողուեց երկու տողի արանքում անէլ այն, ինչ չկարողացան երեսուն տարուայ ընթացքում անէլ հայ համայնավարները՝ Իսահակեանին բոլշեիկ դարձնել»:

«Փարիսեցին» կրնայ շատերուն յարմարող մակդիր մը ըլլալ, բայց չենք կարծեր, որ Հայաստանի թէ արտասահմանի մտաւորականութեան կամ ընթերցողներուն մէջ գտնուի ուրիշ մը, որ կարենայ Ալբերտ Կոստանեանի թնաւորութեան մէջ փարիսեցիական գիծերու գիւտը ընել:

«Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» անուն յօր-ւածին մէջ բառերը, ընդհանրապէս ու ցաւալիօրէ՛ն, իրենց ճշգրիտ առումով չեն գործածուիր, իսկ ճշմարտութեան հանդէպ նախանձախնդրութիւնը «մղուած է ետին պլան», ինչպէս աւելորդ անգամ մը ես կը պարզուի մէջբերուած վերի պարթերութեան մէջ:

Սարսափելի է, իրապէ՛ս, համայնավարութեան օրօք (եւ այն ալ ի՛նչ օր ու տարիներ) տրուած պատուէրներուն դիմաց Աւետիք Իսահակեանին վերագրուած անասանութեան առասպելը:

Ըսել, թէ համայնավարները չկրցան Իսահակեանը բոլշեիկ դարձընել, կրնայ ձեւակաւորէն ճիշդ ըլլալ եւ ինքնութիւն մը անխաթար պահած ըլլալու պատրանքով օրօրել իրադարձութեանց անձաւօթ ընթերցողը, բայց կարելի չէ ընդմիշտ պարտկել պատմութիւնը եւ շարու-

նակել մարդոց հետ վարուիլ այնպէս, որ կարծես Երկաթէ վարագոյրին ետեւ հակազդեցութենէ զուրկ ապրող երէկուան հլու-հնազանդ հողե-դէնները մնացած ըլլային անոնք...

Իրենց կուսակցութեան անդամագրուելու պայմանը երբեք առաջ-նահերթ չեն համարած համայնավարները, քայց անպայման իրենց ծառայութեան լծած են «կարմիր գծից» ներս մտած ամէն անձ, այլա-պէս, աշխարհը գիտէ, շունչ չեն ձգած անոնց վրայ: Օնշահեղձ կ'ը-նէին նաեւ Իսահակեանը, եթէ իրմէ ուզուածին ուզուած խորքով ու ձեռով չարձագանգէր ան: Եւ Իսահակեան բոլշեիկներուն ուզածը, պահանջածն ու պատուիրածը ջրաւ, գրեց, մոյճիսկ քնարերգեց, չը-սենք քնարերգեց, թոթովարեց չափաքերական եղանակներով:

Ահաւասիկ 1959ին լոյս տեսած իր «Երկեր-շորրորդ հատոր»ին մէջ ամփոփուած գրութիւններէն քաղուած համառօտ հնգաբանեայ մը, զոր պիտի չուզէինք թարմացնել, եթէ թողը ստիպման տակ չդնէր սեզ.

1.—Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիան դեկավարուած հանճարեղ Լենինով, փշրեց, փռշիացրեց ցարերի եղեռնագործ գահը, ֆեոդալական անարգ մնացորդները, կապի-տալիզմի զարհուրելի լուծը (էջ 183):

2.—Մեր անպարտելի հայրենիքի վրայ բարձրացել է մարդկութեան ամենամեծ իդէալի՝ կոմունիզմի դրօշակը (էջ 219):

3.—Հայ ժողովուրդը յաւիտեան չի մոռանալու այս փրկա-րար օրը եւ յաւիտեան նա երախտագէտ է եւ շնորհակալ ոռու մեծ ժողովրդին, բոլշեիկեան մեծագործ պարտիային, անմահ մեծ Լենինին (էջ 240):

4.—Ընկերներին հետ միասին վստահեցնում եմ բոլշեիկ-եան պարտիային, որ ներշնչուած նրա իմաստուն ցուցումներով, սովետահայ գրողները կը ստեղծեն գեղարուեստական ու գաղա-փարական մեծարժէք գործեր՝ արժանի մեր մեծ դարաշրջանին (էջ 324):

5.—Հայ ժողովուրդը գիտէ, որ մօտ է յաղթանակը: Կար-միր, մեծագոր Բանակը կը խորտակէ թշնամուն եւ կը վերա-կանգնէ խաղաղութիւնը (էջ 462):

Այս հնգաբանեան բովանդակող «Երկեր-շորրորդ հատոր»ին մէջ մէկտեղուած են Աւետիք Իսահակեանի գրական յուշերը, գրակա-նագիտական գրութիւնները եւ «Ժողովրդի հետ» ենթախորագիրին տակ ինկող երեսունէ աւելի համառօտ կամ քիչ մը աւելի լայն բունը-ւած կտորներ, որոնք, ինչպէս ենթադրելի է, մեծաւ մասամբ գրուած են ու արտասանուած օրուան հրամայականներուն տակ, այսինքն՝ ճառեր եւ ու յարու պատշաճի խօսքեր, կնքքէ եւ անկցի, գովք՝ այս

կարգերուն, փլուզման մարգարէութիւն՝ այն համակարգին, մաղթանք՝ կարմիրին, նզովք՝ միւս գոյներուն:

Աւելորդ չըլլայ թերեւս յիշեցնել, որ այդ բոլորը տեղի ունեցած են ճիւղներու ճիւղ Ստալինի ճիւղային տիրապետութեան ամէնէն չարաշուք տարիներուն (1937-1953), երբ՝

Կարելի չէր հոն կոմունիզմի դրօշակ բարձրացնել՝ առանց տո-
րընդմէջ փառաբանելու Ստալինը,

Կարմիր բանակի շքերթ կազմակերպել՝ առանց անոր կազմա-
կերպական փառքը Ստալինին վերագրելու,

Փրկչական արարքներու մասին բերան բանալ՝ առանց փրկչական
ծիրանին Ստալինի ուսին նետելու,

Բոլշեւիկեան մեծագործ պարտիան բեմ հանել՝ առանց մեծագոր-
ծութեան դասին Ստալինին շնորհելու:

Ո՛չ, կարելի չէր:

Մինչ յիշեալ «Երկեր-չորրորդ հատոր»ի երեսուն կտորներուն
էւ զիրենք նախորդած Ույնաբնոյթ կարգ մը ուրիշներուն մէջ նո՛յնիսկ
մէկ անգամ Ստալինը յիշատակութեան չէ արժանացած Իսահակեանի
բերնին:

Կարդանք սակայն Իսահակեանի ողջուցը, 1951ին լոյս տեսած
«Երկերի ժողովածու»ի չորրորդ հատորին մէջ վերի մէջբերումներուն
համապատասխան էջերը ու արդէն պարզ կը դառնայ ամէն ինչ:

1.—Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ ռեզիլիցիան դե-
կավարուած հանճարեղ Լենինով ու Հզօր Մտալինով, փշրեց,
փոշիացրեց ցարերի եղեռնագործ գահը, ֆեոդալական անարգ
մեծացորդները, կապիտալիզմի զարհուրելի լուծը (էջ 108):

2.—Մեր անպարտելի հայրենիքի վրայ բարձրացել է մարդ-
կութեան ամենամեծ իդէալի՝ կոմունիզմի դրօշակը, որ պողպա-
տէ ձեռքերով բռնել է մեր Հզօր եւ իմաստուն առաջնորդը,
ընկեր Մտալինը (էջ 130):

3.—Հայ ժողովուրդը յաւիտեան չի մոռանալու այս փրկա-
րար օրը եւ յաւիտեան նա երախտագէտ է եւ շնորհակալ ռուս
մեծ ժողովրդին, բոլշեւիկեան մեծագործ պարտիայի ղեկավարնե-
րին՝ իր փրկիչներին՝ անմահ, մեծ Լենինին, մեծ եւ Հզօր
Մտալինին եւ նրանց գործակիցներին (էջ 267):

4.—Ընկերներիս հետ միասին վստահեցնում եմ բոլշեւիկ-
եան պարտիային եւ մեր մեծ առաջնորդ ընկեր Մտալինին,
որ ներշնչուած նրա իմաստուն ցուցումներով, սովետահայ գրող-
ները կը ստեղծեն զեղարուեստական ու գաղափարական մե-
ծարժէք գործեր՝ արժանի ստալինեան մեծ դարաշրջանին (էջ
163):

5.—Հայ ժողովուրդը գիտէ, որ մօտ է յաղթանակը: Կարմիր, մեծագոր Բանակը, որ վարում է մեր հանճարեղ առաջնորդ, մարշալ Ստալինը, կը խորտակէ թշնամուն եւ կը վերականգնէ խաղաղութիւնը (էջ 211):

Բաղդատական արդիւնքին մէջ ընթերցողը առաջին ակնարկով անգամ անպայման կրցաւ Բաստատել, որ յաջողութեամբ՝

Առաջին պարբերութենէն չբացած է «Քզօր Ստալինը»,
Երկրորդ պարբերութենէն անհետացած է կոմունիզմի դրօշակին դրօշակիրը, «մեր Քզօր եւ իմաստուն առաջնորդ, ընկեր Ստալինը»,

Երրորդ պարբերութեան մէջ մերժուած է տեղ տալ «մեծ եւ Քզօր Ստալինին եւ նրանց գործակիցներին»,

Չորրորդին մէջ տեղը պարապ մնացած է «մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինին»,

Իսկ Բինգերորդին մէջ անգլուխ մնացած է Կարմիր, մեծագոր Բանակը, զոր կը վարէր «մեր Բանճարեղ առաջնորդը, մարշալ Ստալինը»:

Ստալինեան մոպլին թէ բրեժնեւեան ճահճային տասնամեակներուն մօտէն հետեւած ընթերցողը այս պատկերին դիմաց անպայման յիշեց, բայց այս անգամ Բակատակ կողմէն, Խաչիկ Դաշտենցի «Իմ ուղին» բանաստեղծութիւնը, որուն վերջին երկու տուները կ'արժէ դարձեալ կարդալ.

Հպարտ անցայ իմ ուղին,	Եթէ որոշ տեղերում
Ձեր շարքերում խորթացած,	Մի քիչ տաք ճարպ է ծորել,
Պաշտամունքի խորանում	Այդ էլ ես չեմ մեղաւոր,
Ոչ մի պատրոյգ չվառած:	Խմբագիրներս եմ արել:

Այս կը ճշանակէ, թէ մինչեւ Բամայնավար լուծին թօթափումը, խմբագիրները շարունակ գործի վրայ եղած են ու շարունակ ճարպերով զբաղած, օր մը ճարպ Բոսեցնելով «տողերում», ուրիշ օր մը տողերէն դուրս մղելով առաջինեան ու «Ստալինի ժառանգորդներուն» ճարպերը:

Անկախ սակայն ճարպային այդ կուտակումներէն ու անճարպ մնացորդացէն, Բարցին առանցքային բաժինը կը շարունակէ նոյնը մնալ, թէ՛ Աւետիք Իսահակեան շուրջ տասնհինգ տարիներու վրայ ու բազում ու բազմաթիւ անգամ ընթացք տուաւ քուլշեփկեան պատւերներու:

Արդ, Աւետիք Իսահակեանի թողը օր մը օրանց ընդվզած է առարկութիւն չվերցնող մեծ իօրը գործադրած վերոյիշեալ պատուէրներուն դէմ, որ պատուէրային մէկ իրադարձութեան անդրադարձող Ալքերտ Կոստանեանի Բարեւանցի ակնարկին առիթով տրամաբանական գտնէինք իր բորբոքումը:

digitised by A.R.A.R.®

Ուրեմն՝ ո՛չ Իսահակեանի կատարած վերոյիշեալ պատուերներուն եւ ոչ ալ, ինչպէս քիչ առաջ ըստեցաւ, Իսահակեանը կարմիր գոյնէրունց հետ միաձուլած «կարմրագգեստ» տիրացուններուն առիթով հայ մարդուն շտրունցաւ ընդվզման փորձերու ականատես ըլլալ, հետեւաբար թողան ցոյց տուած այս ուշացած ուղղափառութիւնը ստիպուած ենք դիտել «Փարիսեցիական խաղեր տաճարի ճամբին» յօդուածին ընդհանուր շրջագիծին մէջ, ուր ճիշդ բաներ ու արդար բաներ ըսելու մտաւորական մարդու վայել նախանձախնդրութեան փոխարէն՝ կը թագաորէ տոհմական վարկ մը յումպէտս վատնող անխորհուրդ կիրք մը:

*
* *

Սնդրոյ առարկայ յօդուածին մէջ ընթերցողին յիշողութիւնը արհամարհելու համարձակութիւնը ծայրագոյն չափի մը կը հասնի, երբ կ'ըսուի անոր.

«...Ստիպուած ենք փաստարկել, որ ոչ ոք, երբեւիցէ, Իսահակեանին Մհերին Ազոաւու քարից դուրս բերելու պատուէր չի տուել (ոչ ոք, սկսած Գրիգոր Յարութիւնեանից սիրտ էլ չէր անի առաջարկ անել բանաստեղծին)»:

Ուրեմն ի՛նչ:

1937էն մինչեւ 1953 ամէն ինչ ի՞ր կամքով ըսաւ, գրեց, յայտարարեց Իսահակեան:

Եւ յետոյ ո՞վ, Գրիգոր Յարութիւնեանը «սիրտ էլ չէր անի առաջարկ անել բանաստեղծին»:

Քիչ մը շատ չեղա՞ւ սակայն անտեղեակութեամբ բառ բառի վրայ դնելու այս յանդգնութիւնը կամ ընթերցողը թուրովին անտեղեակ նկատելու նոյնքան աններելի տոհմապաշտ զեղումը:

Ստալինի օրհնութեամբ իշխանութեան գլուխ եկած եւ Բերիայի վստահութիւնը հարիւր տոկոսով վայելող Գրիգոր Յարութիւնեան, որ մինչեւ առաջին արիւնարբուին մահը եւ մինչեւ երկրորդ մարդակերին գնդակահարութիւնը աներեք մնաց կամ պահուեցաւ առաջին քարտուղարի ամենագօր իր դիրքին վրայ, չենք կարծեր, որ Աւետիք Իսահակեանի առջեւ համարձակութեան պակասէ տառապող գործօն մը եղած ըլլայ, ինչպէս կը կարծէ բանաստեղծին թողը՝ նոյնիսկ ստալինեան համայնավարները պապանձմով մատնող ու մը վերագրելով մեծ հօրը:

Իցի՞ր թէ այդպէս ըլլար:

Այդ պարագային կը խնայուէր իրեն (եւ մեզի) այն թանձր ու թանձրակոտակ ժողովուրդները, որ արձանագրեալ կը թաւայի մեր գրականութեան ու պատմութեան շէնքը: R.A.R. ©

Առանց պատուէր տալու անողոր բարքերուն եւ պատուէր կիրարկելու նոյնքան դաժան ստիպումներուն Աւետիք Իսահակեան չէր կրնար «Կեցցէ մեր սիրելագոյն ղեկավար ՍՏԱԼԻՆԸ» պոռայ (էջ 287):

Առանց արինոտ այդ նախադրեալներուն՝ Աւետիք Իսահակեան դարձեալ փառք չէր տար «Մեր իմաստուն ու սիրելի առաջնորդ ընկերին՝ Ստալինին» (էջ 214):

Այդ պայմաններուն մէջ խղճմտանքը թոյլ չէր տար իրեն շնորհակալ ըլլալու իր բախտին, ա՛յն բախտին, ըստ որում՝ «Ես ապրում եմ հիմա սոցիալիստական Հայաստանում, Մեծ Միութեան մէջ, իմ նրազների, իմ ղեգերումների վերջնական հանգրուանը» (էջ 171):

Որուն համար դարձեալ՝ «Կեցցէ մեր փառապանծ ղեկավար Ստալինը» (էջ 171):

Բնական պայմաններու մէջ Աւետիք Իսահակեան կրնա՞ր միթէ ըսել, թէ հալ ժողովորդը «Միայն Հոկտեմբերեան լեղափոխութեան յաղթանակի մէջ գտաւ իր ազատութեան երազի իրականացումը, ռուս մեծ ժողովրդի օգնութեամբ ջարդեց բռնակալ դաշնակցութեան լուծը եւ փրկուեց վերահաս բնաջնջումից» (էջ 401-402):

Անգամ մը եւս ընդգծենք, որ առանց պատուէր կիրարկելու ստիպումին, Աւետիք Իսահակեան չէր ձեռնարկեր «բռնակալ դաշնակցութեան լուծը» ջարդելու եւ ջարդելու այդ հեշտանքէն ետք դառնար ու բարձր ոգևորութեամբ պանծացնէր Նոյեմբեր 29ը, իբրեւ մեր «Նորագոյն պատմութեան ամենանշանակալից տօնը, համազգային հրճուանքի օրը» (էջ 47):

Պահ մը կանգ առնենք հոս, ու ետ դառնանք, ու մտաբերելէ ետք այդ սիրելագոյնը, այդ իմաստունը, այդ իրականացած երազը, փառապանծը, կեցցէները, բռնակալ դաշնակցութեան լուծին տրուած ջարդն ու միսները եւ հարց տանք կրկին.

—Ուրեմն Աւետիք Իսահակեան առանց վերէն եկած պատուէրներո՞ւ ըսաւ այս բոլորը, գրեց, ստորագրեց: Ուրեմն իր կամքո՞վ խմբագրուեցան այդ օրհներգութիւններն ու ջարդերը, իր մտածումներո՞ւն լոյսին տակ, իր անխառն ապրումներո՞ւն մղումով:

Այդ բոլորը պատուէրի հետեւանք համարելու պնդումով՝ մենք եւ մեզի հետ «մինչեւ վերջերս հայրենիքում» շխտած անունները կը կարծենք աւելի արդար եղած ենք Աւետիք Իսահակեանի հանդէպ, աւելի մարդկային, քան աստիճանատր գրողներն ու անաստիճան դպիրները:

Մէկը (Գրիգոր Ծարութիւնեան) իր շօշափելի ուժէն գրկելով եւ ուրիշ մը (Աւետիք Իսահակեան) չեղեալ զօրութեամբ օժտելով ընթերցողին հետ խօսելու փորձերը հին եղանակներ են եւ, ինչպէս բստեցաւ հեղ մը, ճիշդ չէ կարմիր լուծը թօթափած նոր մարդուն հետ վարուիլ հին ոճով:

Պզտիկ մանրամասնությունն ընդ ակնկալելով՝ պիտի ուզեինք ըսել տակախն, որ եթէ տուեալ ժամանակաշրջանին Հայաստանի համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար Գրիգոր Յարութիւնեան վերէն ստացած քացարձակ ուժ մը չունենար, 1946 թուականը կանխող եօթը-ութ տարիներուն Հայաստանի մէջ զուիս քերուած գործերուն համար ինքը՝ Աւետիք Իսահակեան հարկ կը տեսնէ՞ր արդեօք սա մեծամայն երախտագիտութիւնը շոայելու անոր.

«Այս գեղեցիկ գործերը կատարուեցան մշտական հոգացողութեամբ եւ խրախուսանքով մեր հայրենիքի կոմունիստական պարտիայի եւ նրա ղեկավարի, մեծարգոյ ընկ. Գրիգոր Յարութիւնեանի («Երկերի ժողովածու», հ. 4. 1951, էջ 238):

Յուզուած հարցին վրայ լոյսի յաւելուածական շող մը նետելու համար հարկ է թերեւս կրկին անգամ թարմացնել վիպագիր Ստեփան Զօրեանի յուշագրական վկայութիւնը.

«Առաջարկում էին, որ Իսահակեանը ներքող գրի Ստալինին: 26-ամեայ որ բանաստեղծը յայտնել էր, թերթին էլ ինտերվիու էր տուել, թէ պոեմ է գրում Լենինի մասին, սակայն ցանկալի էին համարում, որ նա առաջին հերթին գովերգի Ստալինին: Եւ բանաստեղծն այլեւս հանգիստ չունէր:

«—Ախպէր, ես սովետական կարգերն ընդունելով, եկել եմ հայրենիքում ապրելու, ինչո՞ւ եմ ուզում, որ ներքող գրեմ մի մարդի, որ այսօր ղեկավար է, էգուց կարող է շլինել...»

«Բայց նրան հանգիստ չթողին. կամենում էին, որ նա անպատճառ մի բան գրի եւ նուիրի «առաջնորդին»:

«Եկաւ «Մատենցի Դպրոց»ի 1000ամեակը: Ցանկացան, որ Իսահակեանն մասնակցի այդ առիթով «առաջնորդին» գրելիք չափածոյ-նամակին: Մասնակցեց: Բայց դա եւս քիչ համարուեց: Առաջարկում էին ակելի անմիջական մի բան... ու այդ առաջարկը քացատրում էին նրանով, թէ դա անհրաժեշտ է Իսահակեանի ապահովութեան համար... Իր՝ բանաստեղծի ասելով, այդպիսի վտանգից զերծ մնալու բարեկամական խորհուրդ էր տուել Սովետ Գրողների Միութեան գլխաւոր քարտուղար Ալ. Ֆադեեւը:

«Եւ Իսահակեան գրեց այդ օղան («Սովետական գրականութիւն», Դեկտեմբեր 1962):

Արդ, Աւետիք Իսահակեանին պատուէր տալու համարձակութիւն ունեցող անձեր եղա՞ն, թէ չեղան իր շուրջն ու հետուն:

—Պերճախօս է Ստեփան Զօրեանի յուշին մէջ արձանագրուած պատասխանը:

Այդ պատուիրատուներուն մէջ վերջի՞ն մարդն էր Գրիգոր Յարութիւնեան, թէ պոպոխէր:

—Վստահաբար առաջինը:

Աւետիք Իսահակեան ընդառաջե՞ց պարտիական դիրքերէ եկած պատուէրներուն, թէ ըստ թոռան՝ «ոչ ոք, սկսած Գրիգոր Յարութիւնեանից սիրտ էլ չէր անի առաջարկ անել բանաստեղծին»:

Պատասխանը դարձեալ կը գտնուի Զօրեանի յուշին մէջ.

—Եւ Իսահակեան գրեց այդ օդան:

Եւ օդան ծանօթ է ամէնուն, «Մեծ Ստալինին» խորագրով չորս տուննոց ոտանաւորն է, որ սարքուեցաւ 1939ին եւ ով գիտէ ինչ ախարկու պայմաններու մէջ կըքուեցաւ Ռետուեալ մաղթանքով.

Քեզ անսպառ կամք ու կորով, երկար կեանք,
Ո՛վ մեծ գործի մեծ առաջնորդ իմաստուն:

Հայաստանի մէջ Աւետիք Իսահակեանի կեանքի վերջին տասնը-հինգամեակին, որ կը զուգահիսի Ստալինի տիրապետութեան ամէնէն արհմտա շրջանին, վերը ու կանխող էջերուն մատնանշուած տուրքերուն պէս բիր-բիրաւոր տուրքեր տրուեցան, ու բիրաւորներու կողմէ տրուեցան, ու եթէ մարդիկ յաճախ լուռ անցան ու կ'անցնին այդ զարհուրելի ժառանգութեան առջեւէն, ասիկա կը բխի հայրենի ժողովուրդին ապրած դառնադատն կեանքին ցաւագին յիշողութիւնը չբորբոքելու տրամադրութենէ մը եւ ոչ թէ ունի չգիտութեան խորք մը, որուն շատ վստահ ըլլալ կը թուի Իսահակեանին թողը, ա՛յնքան՝ որ կը կարծէ, թէ ուրիշներ չեն գիտեր ա՛յն, զոր կ'ուզեն մոռնալ...

Մենք չենք կրնար, ու մեզի Ռետ հաւանաբար աննախապաշար ընթերցողները եւս դժուար կ'ըմբռնեն, թէ ինչպէս կարելի է շրջանցել կանխող էջերուն մատնանշուած անջնջելի վկայութիւնները ու համարձակօրէն ըսել, որ Աւետիք Իսահակեան

—Երգածը չէ երգած,

—Ստորագրածը չէ ստորագրած,

—Մտածը չէ մտած,

—Կտակածը չէ կտակած:

Կամ նոյն վկայութիւններուն քաջածանօթ հայ մարդուն դառնալ ու ըսել անոր, որ դուն

—Լսածդ չես լսած,

—Տեսածդ չես տեսած,

—Կարդացածդ դես կարդացած,

—Միտքդ մնացածը միտքդ չէ մնացած:


Ասիկա, սակայն, ճիշդ վերաբերում մը չէ ու եթէ սորվինք փաստերուն թիչ մը յարգանք ընծայել, ապահովաբար գրականութեան ու գրական մշակներուն վնաս չենք հասցնել, իսկ մտաւորական աշխարհին մէջ անպայման մեծ շահեր կ'ապահովենք, եթէ թիչ մը թիչ արհամարհենք հայ մարդուն յիշողութիւնը...

ՊՕՂՈՍ ԱՆԱՊԵԱՆ



ՇՈՒՇԻԿ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆԻ «ՆՈՐ ԶԵՐԹՈՒԱՍՆԵՐ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ*

Լոյս է տեսել արդի հայ բանաստեղծութեան նորագոյն փաղանգի ուրոյն ներկայացուցիչներից Շուշիկ Տասնապետեանի բանաստեղծութիւնների երկրորդ ժողովածուն: Յար եւ նման առաջինի, գրագիտուհու այս նոր գրքի վերնագրային կազմարանութիւնը, «չէզոք-արձանագրական» շեշտադրութեամբ, մատնանշում է ո՛չ միայն Բէյրութ-Սրբուան, ԸՎՓիւոք-Հայաստան ստեղծարանական փոխանցման ազդեցութեան բացակայութիւնը նրա բնագրերում, այլեւ՝ ստեղծագործական միեւնոյն կերպի գերբերեղացումը Այսօրինակ օրթոտոքս հետեւողականութիւնը մի կողմից եւ չարմարողականութեան դաշտին՝ չգոյութիւնը միւս կողմից փաստարկում են Շուշիկի բանաստեղծելու սկզբունքների եւ քերթութեան ներմբռնողականութեան ներքին կերպի միանշանակ ուղղորդումութիւնը (այս իմաստով՝ «նորագոյն փաղանգի ներկայացուցիչ» արձանագրութիւնը առարկայաբար ձեռք



է բերում ժամանակագրականից առաւել գեղագիտական-գեղարւեստական սահմանանշման հանդերձ, որ միտում է պատկերաստեղծ համակարգի, առհասարակ բանաստեղծութեան ինքնահաստատումի անհատականացում ընթերցումի սեւեռում: Իրողութիւն, որ ժամանակակից հայ բանաստեղծութեան համապատկերում անպայմանօրէն արժէքայնութեան սանդղակում դրական յանելում

է: Եւ այս խորքին գրագիտուհու իրերի եւ առարկաների, վայրերի (Սեն-ժոն Պերսեան համարնագրով) շրջանակի ընդլայնումը կամ ներփակումը (սփիւռքեան գոյաբանութեան անդրադարձներ, հայաստանեան կշռոյթներ, երկրաշարժ, Արցախ) սեւեռում են Տասնապետեանի բանաստեղծական մոտելում իրրեւ քերթուածի ինքնամփոփման դերբիւրեղացում: Այս առումով ընդհանրական է ժողովածուի հետեւեալ ստեղծագործութիւնը.

«Լուսփիւնից վախեմալ
պիտի գրել, թէկուզ
մասնակից լինել խրախիմ
խօսքիդ առատութեամ
գերեվարուել ու ստեղծել
սաստիկ ապրել եւ չապրել
հոգեղէնից արտալ
(անհունարազձ յոգնարեկ)
ամրջայիմ, մի էողցրահունչ մեղեդի
որ լինի
ու երբեմն էլ երգի՝»

(«Ընծայարեցում»)

Պատահական չէ, որ «բերանաբաց ներամփոփ մեղեդի» («Երգ») յղացքը, արդէն ինքնին ենթադրելի բախումը մանրամասնում է «Տաղ» բանաստեղծութեամբ՝ իրրեւ ստեղծագործական յուզավառութեան սրբազնութիւն, որ ըստ ամենայնի կերպաւորւում է «Կարօտախտ» եւ մանաւանդ «Nostalgia» բանաստեղծութիւններում.

«Ատլամտեամէն Միջերկրական
Փարիզ Երեւան
կամզ մեմֆ հիմա, օրէ օր կը
մեծմանք կը ստեղծենք
Ֆերթուածներ հատարներ ու
պսակներ.
Մէկ-մէկ մտածելով մեր պապերը
որ չկամ
կը սիրենք կեանքը ամբողջական
իրական, եւ երբեմն մեմֆ
կ'երգենք ի փառս լալ ցալիքի
մը տեմդոտ»

Ժողովածուի ուշագրաւ ստեղծագործութիւններից են «Դեղօմներ» շարքը, ուր արտաքին արձակունակութիւնը ոչ միայն անդրատեսչութիւնից որոշակուած ճեղքում է, այլ նաեւ մահ-կեանք վիճակից յարատեւութեան խորհուրդն ներմբռնող ապրումի դիմաւորում՝ զանազան այլազոյացումներով՝ «Վիպական» եւ «Խաչիլուփիւն» բանաստեղծութիւններում քաղաքացիական պայթուի ընդգծումով, «Զօն», «Սպիտակ տաղ», «Վերադարձ» ստեղծագործութիւններում՝ գոյարանական եւ մշակութարանական կենսալիցքերի անհատականացրած հաստատագրումներով:

«Նոր ֆերթուածներ»ի առաջին ճեպով ընթերցումը կըռաւելի է դարձնում այն պարագան, որ Շուշիկ Տասնապետեանի յաջորդ գրքերն ու ժողովածուները հանգրուանելու են նոյնական դաշտի բիւրեղացման յարընթացում եւ, ըստ

երեւոյթին, սա այն շահեկան կանութիւնը պատնէշուած է նոյնութիւններէց է, որ գրա- յոգնութեան տեղապատրից:

Երևան, 1992 թ.

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲՅԱՆ

* Շուշիկ, «Նոր Բերրութեան», 1992 թ. 80 էջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐԻՉՆԵՐ՝ ԱՐՅԱԽԷՆ Լեոնիկ Յակոբեանի եւ Յովիկ Մուսայէլեանի բանաստեղծութիւնները

Լեոնային Չարաբաղի հանրապետութեան մէջ ազգային մշակոյթ վերստեղծելու եւ նոր սերունդին բանաստեղծական յոյզերը հունաւորելու նպատակով, վերջին տարիներուն Ստեփանակերտի «Արցախ» հրատարակչատունը սկսաւ լոյս ընծայել ազատամարտիկ եւ բանաստեղծ երիտասարդներուն երախայրիքները՝ առանձին գրքոյկներու ձեւով:

Մեր տրամադրութեան տակ այս պահուն ունինք այդ շարքին միայն երկուքը՝ Լեոնիկ Յակոբեանի «21 տարեկան» եւ Յովիկ Մուսայէլեանի «Վայրկեանների միջև» անուն գրքոյկները: Յակոբեանն ու Մուսայէլեանը տարեկից են իրարու, եւ ծնունդ են ճուրջ մթնոլորտի: Հաւանաբար այդ իսկ պատճառով, ընդհանուր գիծերու մէջ անոնք նման են իրարու՝ իրենց ապրումներով, Արցախի առօրեան պատկերներու մղումով եւ իբրեւ բանաստեղծ իրենց տեղը գտնելու ցանկութեամբ:

Լեոնիկ Յակոբեանի տողերը թաթաւուն են քնարական շունչով եւ իրապաշտ պատկերներով: Հոն կեանքն է, որ կը բաբախէ, շրջապատըն ու առօրեան՝ իրենց դաժան ու հրապուրիչ իրականութեամբ, որոնք բանաստեղ-

ծուխեան կը վերածուին զգացականութեամբ եւ քնարական շունչով:

Յովիկ Մուսայէլեանի մօտ նոյնը չէ պարագան: Թէեւ անոր ստեղծագործութեան հիմքը եւս կեանքն ու շրջապատն են, բայց այդ բոլորը իրապաշտութեամբ չէ, որ կ'արտացոլայ թուղթին վրայ:

Մուսայէլեան արտաքին աշխարհէն կ'ընդունի գրգռուներ միայն եւ զանոնք իր ներաշխարհին եւ բանականութեան կ'ենթարկէ եւ ապա խորհրդանիշներու ճամբով թուղթին կը յանձնէ: Ինքնասուզումի առիթներ են այդ գրգռուները, որոնք, մտածական երանգներով հարստացած, կու գան փռուիլ թուղթին վրայ իբրեւ բանաստեղծութիւն:

Երկու բանաստեղծներն ալ ունին Շուշի քաղաքին նուիրուած մէկական բանաստեղծութիւն՝ «Նուշի» խորագիրով, ինչպէս նաեւ իրենց հօր ու մօր տիպարը ներկայացնող քերթուածներ:

Ղարաբաղի հարսը նկատուող Շուշի քաղաքը պատմութեամբ, անցեալի փառքով եւ ազգային զարկերակով վառած է երիտասարդներուն ջիղերը եւ քերթուածներու վերածուած անոնց հոգիին:

*

* *

Լեռնիկ Յակոբեանի մօտ Շուշին ազգային դիմադիծի

եւ հայկականութեան խորհրդանիշ է՝

Նա է եղել ցայսօր
Մեր երկրորդ Անի՝
Հագարաքանդակ ու հագարախաչ,
Առանց որեւէ թնջութեան:
Այդտեղ ենք մեր մտքին տունը
Ծ'ւ ուծ, ե՛լ խորհուրդ անվերծան:
Մեր գաղափարն է նա միութեան
Եւ մեր կամքը այսօրուայ,
Որ ստիպում է մեզ դարձնալ
Կրակի անվրէպ եւ յաղթի վստահ:

Իսկ Յովիկ Մուսայէլեանի մօտ Շուշին հոգիի հայրենիք է եւ գոյութեան կոտուան.

Օրդ գոյութեան պրկուած երկն է,
Թէ վերծանում է, լոկ արեանք
յուշի:
Հոգիս խրուել է մոռացման ճեղքը,
Որ էո անցեալը ստիք դուրս փաշի:

Լոյսդ քացում է մախնեաց
պատգամով,
Դառնում ազգանուն էս վաղուայ
համար,
Ու եղջիրները ահ ու սարսափի
Ջարդու՛մ են ոգուդ
կարծրութեամբ յամառ:

Իսկ հօր տիպարը անոնց համար իմաստութեան ու բարութեան, աշնուութեան ու հաւատքի խորհրդանիշ է, մա՛րդ ըլլալու արուեստ.

Հօրս խօսքերը
Պատուեամ են լոյսի,
Պատուեամ են յոյսի,


Որից ես Ուայում եմ
Ծառի բարութեամբ:

(«21 տարեկան»)

Ազնուութիւնդ լոյս դարձրի, հա՛յր,
Ու յեմակէտ իմ հաւատին:
Եւ օրս ինձ այնպէս սազեց,
Ինչպէս որ դու՝ մեր հիմ քախտիմ:

(«Վայրկեանների միջեւ»)

*
* *



Լեոնիկ Յակոբեանի «21 տարեկան»ը լոյս տեսած է 1993ին, երբ հեղինակը տակաւին քանի մը ամիս ունէր աւարտելու Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական բաժանմունքը: Չարաբաղ ծնած հրիտասարդ բանաստեղծը 21 տարեկան էր, երբ սկսաւ Արցախեան գոյամարտը Այդ պատճառով ան

իր երախայրիքը կոչած է «21 տարեկան»: Ան միաժամանակ զինուորն է իր հայրենիքին ու հայ մշակոյթին: «21 տարեկան»ը այդ կը վկայէ: Իր իսկ վկայութեամբ՝ 21 տարեկանին շնչած ու զգացած է պատերազմի արհաւիրքը, թէ ինչո՞ւ սեւ են հագեր իր հայրենի լեռները, ինչո՞ւ քաղաքին մէջ մաշը կը թեւածէ սանձարձակ, եկեղեցիներուն սուրբերը ինչո՞ւ յանկարծ լքուեցան մարդոցմէ, որբերը մինչեւ ե՞րբ հաց պիտի երազեն, երկինքէն ինչո՞ւ մահ ու կրակ կը թափի, հրասայլերը մինչեւ ե՞րբ պիտի բռնաբարեն ցորենի դաշտերը, «հսկայ տէրերի քաղաքականութիւնը կոշտ ցախաւելի նման» մինչեւ ե՞րբ պիտի շոյէ ազատագրական պայքար տանող փոքր աշխարհներու Ազատութեան շիղբը, մինչեւ ո՞ւր պիտի երկարի նահատակներու թափօրը...

Տագնապ մը ունի բանաստեղծը. ան աշխարհի, կեանքի, մարդու ճակատագրի եւ յատկապէս իր ժողովուրդին ազատատենչ զաւակներուն ողջակիզման ամբողջ ողբերգութիւնը կ'ապրի իր հոգիին մէջ եւ զգայնութիւններու ճամբով կը պատմէ այսօրուան հերոսական կռիւներուն, արժուեքոյն Արցախի տխուր, մռայլ ու սեւ առօրեային մասին, առանց երբեք կորսնցնելու իր լաւատեսութիւնը: Ան կը հաւատայ գա-

լիք պայծառ օրերուն եւ յաղթանակով մահը արհամարհելու իմաստութեան:

Լեռնիկի համար միայն մէկ ընտրանք կայ. մենք անպայման պիտի յաղթենք: Այս համոզումը երիտասարդ քերթողին մօտ կը ստեղծէ կենսուրախ տրամադրութիւն, նոյնիսկ երբ պահը կը թուի վերջինը:

Վերջին անգամ արեւով
Նայեմք արեւին,
Վերջին անգամ խնդութեամբ
Խմենք տաքարիւմ գիմին:

Վերջին անգամ համբուրենք
Հարսնացումներին մեր,
Զմտուամեք բնիւշ
Աղբիկներին մաւել:

Վերջին անգամ երգեմք
Սիրած երգերը մեր,
Առաւօտուայ թարմ շաղիմ
Վերջին անգամ պարեմք:

Պատերազմը սարի ետեւն է,
Մենք շտապում ենք, վերջ:

Արեամբ ժառանգուած եւ իր ժողովուրդին նկարագրին հարազատ համոզումով ու հաւատքով զինուած է բանաստեղծը, այն գիտակցութեամբ, որով յատկանշուած են մեր բոլոր ֆետայիները, արդարութեան զինուորները: Խինդով ու պարով վտանգը չըջանցելու, մահուան գիրկը կամօրէն նետուելու ներուժ գիտակցութիւնն է այդ:

Այսպէս, երիտասարդ բանաստեղծը յաջողած է

զտնել նիւթը, նիւթերը, շնորհիւ իր ներքին զգացողութեան, արեան բռնկումներուն եւ դիտելու կարողութեան: Անոր ստեղծագործութեան ծանրութեան կեդրոնը հայրենասիրական երգերն են անկասկած, Արցախի նուիրուած տողերը, հողին կանչը, անդադար իր մէջ արձագանգող շրջապատը, հայրենի բնութիւնը, պայքարի ոգին ու ապրելու կամքը, որոնք թաթաւուն են նոր խորքով, ժամանակակից ապրումներով:

Եւ որովհետեւ պատերազմը ինքնին հակասութիւններու աղբիւր է, հակասութիւններ կը ստեղծէ նաեւ բանաստեղծ հողին եւ ազատամարտիկի զգեստը կրող մարդուն մէջ, ուր սակայն բանաստեղծութեամբ կը պարուրուին եւ իրրեւ պատկեր կը ներկայանան եւ նուրբ, եւ բիրտ զգացողութիւնները: Բերնք երկու օրինակ: Առաջինը՝ հատորին մէջ տեղ գրտած «Արցախեան առաւօտ» խորագրեալ բանաստեղծութեան էն, որ կը սկսի հետեւեալ տողերով.

Առաւօտ է.
Լոյսը նման է մաճուր ստինքի,
Որ դողով ծծում են ծառերը:

Ուրիշ քերթուածի մը մէջ, որ ունի «էֆսպրումտ» խորագիրը.

«Անտէր փեղկի պէս
Գնում-գալիս եմ,

Ինձս ինձ եմ խփում,
Իսկ իմ կողի մէջ
Սարսափն է խրուելի
Ինչպէս մերկ դաշոյմ:

Զգոնում, տիրեմ ես քեզ,
Սիրեմ առիծի պէս ծարաւ,
Տրուեմ գգուածճմերիդ այրող,
Ուրիշ ո՞վ...:

Հաշտուել չեմ ուզում
Այլեւս ինձ հետ,
Այս սեւ պատմութեան
Սեւ ստուերի հետ:

Ուրիշ ո՞վ, ուրիշ ո՞վ,
Էլ չկամ սրտեր սիրող,
Լոկ դու ես՝ խոցուած
պատմութիւն,
Լոկ դու՝ ես հրաշքի կարօտ:

*Լեռնիկ Թակոբեանի ըզ-
գայնութիւնները չեն կրցած
չհպատակել նաեւ անոր սրտի
տրոփներուն, սիրուելու ներ-
քին մղումին: Բառին նեղ ի-
մաստով, սիրերգակ է նաեւ
ան, իսկ իր սիրոյ տիպարը
առաւելաբար աւանդական
հարսնցուն է՝ հլու, ենթարկը-
ւող ու խանդակաթ, բացի
մէկ բանաստեղծութենէն, որ
այս շարքին ամէնէն ուժեղն
է եւ արտայայտիչը՝ բանաս-
տեղծին բոցավառ կիրքերուն:
«Մամիրամ» խորագիրը
կրող քերթուածն է անիկա,
յորինուած՝ վաւաչոտ կնոջ
տիպարով գերուած «առիւծի
պէս ծարաւ» ժամանակակից
տղամարդու խիզախութեամբ
եւ տիրելու ցանկութեամբ:*

Սլի՛ր անցեալից քո խաւար,
Անյիշատակ, անյայտ, քա՛հուն,
Տրիր գեղեցկութիւն ու հմայք,
Որ իմ նախածոր համար էիր
պահում:

Ծու հեռու չեմ նրա ժամանակից,
Թող նորից ելնեմ մարտի,
Թող նորից խոցուեմ քեզմից,
Բայց... չգոհուեմ...

*Այս բոլորէն ետք, բա-
նաստեղծը ներքին ու արտա-
քին աշխարհի կշռոյթը վերա-
դռնելու, կորսուած, կեանքէն
հեռացած խաղաղութեան
փնտռուքն ունի, որպէսզի
իրերը գտնեն իրենց ճիշդ
տեղը, մարդը վերստին մար-
դանայ ու կեանքը թաւալի
խաղաղ ընթացքով:*

*Սև ո՞ւր է արդեօք այդ
խաղաղութիւնը, եթէ ոչ նոյ-
նի՛նքն խաղաղութեան մէջ:*

Որտե՞ղ է խաղաղութիւնը:
Թերեւս՝
Կեմսահաստատ երգերում,
Նկարիչների մրսած գծերում,
Փայտահատի տաշեղներում,
Բանաստեղծի կարմիր աշնան մէջ,
Ջէմֆերի անխօսութիւններում,
Մառերի մահախօսակցներում,
Ջկների հեքիաթներում,
Կեմդամիների համբերութիւնում,
Աղջկամագերի ջրվեժներում...
Ամէն տեղ է խաղաղութիւնը-
Ինչի՞ է պէտք էլ
Այս զինափնտռուէր...

*
* *

Յովիկ Մուսայէլեանի մասին մեր ծանօթութիւնները շատ աւելի քիչ են: Գիտենք միայն, որ ան հայ գրականութիւն կը դասաւանդէ Երևանի «Արամ Մանուկեան» վարժարանին մէջ:

Ուշագրաւ է «Վայրկեան» մերի միջեւ գործին բանաստեղծական միջնորդութիւններէն իւրաքանչիւրը կը բովանդակէ երաժշտական մեղեդի մը, բանաստեղծական գեղեցիկ պատկեր կամ պատկերներ, որոնք արձակ կամ տաղաչափեալ քերթուածը կը վերածեն շարունակուող հոգեվիճակի:

25 բանաստեղծութիւնները եւ 15 հատուածէ բաղկացած «Ընթացքի շուրջ» խորագրեալ սոնետներու պատկեր կը պատմեն Մուսայէլեանի ներքին աշխարհին յարաբերութիւնը՝ արտաքինին հետ: Բանաստեղծը ինքն է առանցքը իր

խօսքին, ապրումներուն, խոր-խափումներուն, մակընթացութեան ու տեղատուութեան:

Ամէն վիճակ իր խորհրդրգանիչը ունի: Մովը, ձուկը, աստղը, բնութեան տարերքն ու թռչունին ստուերը, գիշերն ու մշուշը, ձիւնն ու խոնաւութիւնը եւ բազմաթիւ այլ տարրեր դեղարուեստականութեամբ կ'օժտեն բանաստեղծին գաղափարն ու գգայնութիւնները եւ խօսքին կուտան տարածութիւն եւ խորութիւն: Մուսայէլեանի մօտ բանականութիւնը տիրապետող երակն է իր ստեղծագործութեան, իսկ իր խօսքը՝ բնական հոսք: Պատկերները կը հիւսուին նոյն այդ բանականութեան ճիշով, մաքառման տենդով եւ ինքզինք ըլլալու վճռակամութեամբ:

Մովեր կան, որ երազում են Մեռնել իրենց տարերքի մէջ, Իսկ ալիքը փշրում է՝ Նախընտրելով իր ձեւն անվերջ:

Բայց ինքզինք ըլլալէ աւելի ինքզինք պահելն է դժուարը, մա՛նաւանդ երբ աշխարհն ու շրջապատը լեցուած են մահուան ուրուականներով, իսկ զէնքերու եւ հրասայլերու պայթիւնները կը սպաննեն շնչատուութիւնը, շարժումն ու կեանքը:

Յովիկ Մուսայէլեանի մօտ պատերազմն ու Արցախեան պահանջատիրութիւնը առանձին թեմաներու վերածուած չեն եւ հազիւ թէ առանց կը նշմարուին բանաս-



տեղծին խօսքին մէջ, Օրը սեւ է, կեանքը՝ դաժան, իսկ քերթողը մոլորուած՝ մղձաւանջային աւօրեային, «Մու»-րու եւ «Գրադ»ներու աղմուկին մէջ:

Անդադար իր անձին հետ զրոյցի բռնուող բանաստեղծ է Մուսայէլեան: Վիճակներ քննարկող, մեկնաբանող եւ անոնց հետ միաճուլուող, իրերու հետ նոյնացող խոհուն մարդն է ան, «Կինել-չիներչու տագնապով կարծրացած:

Խոնարհութիւն կայ իրերի մէջ, իսկ իմ շուրթերին՝ ծերացող ձիւն:

Անգոր են բոլոր գոյներն արդէն, եթէ չի սառչում գէթ մի արցունք...

Եւ սակայն ի՛մն է ամեն չեղած, Ամեն թոխչի ու ձա՛յն միացող, Բանգի փորելով դէմք ու հոգի, Եւ գտա՛յ չեղածն ի՛մ եղածով...

Կան նաեւ քնարաչունջ ու թախծոտ հողիի երգեր «Վայրկեանների միջու»ին մէջ, ուր մերթ ընդգծուած է զգայնութիւնը չհասկցուելու ցաւին (հո՛ւ ոք, ո՛չ ոք չհասկացաւ ինձ այս տխուր կեանքում»), մերթ ալ վայրկեաններու միջեւ գտնուող տարածութիւնը հաւատացեալի լաւատեսութեամբ նոր խորհուրդով լեցնելու թելադրութիւնը:

-Եւ ո՞ր արձագանգի մէջ եմ բրծում այսպէս

ձակատագիր ու քայտ, Եւ ո՞ւմ լոռութիւնն եմ Շտկում այսպէս անդուլ, Եւ ո՞ր,

Ո՞ր պտայտի տուայտանքն եմ փորձում

Մածկել շնառութեամբ ճախաստեղծ քջի:

-Կեանքը ընդլայնու՛ւմ է վայրկեանների միջու...

«Վայրկեանների միջու»ի վերջաւորութեան դետեղուած եւ մարդկային կեանքին փուլերը խորհրդանշող «Ընթացքի շուրջ» խորագրուած սոնետներու պատկերն մէջ բանաստեղծը այդ յարաբերութեան, մարդու հոգեփոխութեան ու իրերու եղափոխութեան ծալքերը կը վերլուծէ եւ կը յանգի այն եզրակացութեան, թէ դիտակցութեամբ, հարուստ ներաշխարհով ու յատկապէս արարելու կարողութեամբ է, որ մարդը կը յաջողի տիեզերքը ենթարկել իր կամքին, որովհետեւ անգոյութենէն կը գոյանայ մարդը, բայց իր հետքերով է, որ կ'իմաստանայ ու կը գեղեցկանայ, ապա կ'ամրանայ ու կը յաւերժանայ:

Միայն անցած իմ... հետքերով Իմաստնացած ու գեղեցիկ, Եւ իմ ներսն եմ նայում այնպէս, Ինչպէս մի հիմ... եկեղեցու:

Եւ ո՛չ մի ձեռք էլ չի կարող, էլ չի՛ կարող, էլ չի՛ գործ Սրբել փոշին դժուարածալ Ու կեանքի տարածանքիս...

Եւ այս բոլորը կը կատարուին անսահմանութեան ու յաներժութեան հեքիաթային մթնոլորտին մէջ, հարցադրումներու ճամբով ու ինքնադատման եղանակով, որ կու գայ յանգելու բանաստեղծական սա վախճանին.

Զիմացութեան՝ ոլորտներում
Լռութիւնս ցաւում է, հո՛ղ,
Թող կրե՛մ այս ցաւն հեքանոս,
Երկիմբներն այս կոտորակուող:

Անգոյութեան ալիքն ընդմիշտ
Ինձ իր ներքոյ մի օր կ'առնի,
Ու վիտացող ամէն մի հարց
Լոկ սկի՛զր է մի նոր անկման:

Պէլրուք

...Միայն անցած իմ հետքերով,
Ընդերքներէ՛ս ցաւով միայն
Ծս սափորն այս շրջեմ պիտի,

Քանզի ամէն, ամէ՛ն արցունք,
Ընթացքի շուրջ մեր իսկ ծագման,
Իր... ծագո՛ւմն է
հասունացնում...

«Վայրկեանների միջեւ»
պատմութիւնն է մեր մոլորակին
կին եւ այդ մոլորակին վրայ
ապրող բանաւոր էակին՝ իրենց
ելեէջներով, ձգտումներով
ու դարէ՛ դար շարունակուող,
բայց մի՛շտ նորոգւող
յարաբերութեամբ...

ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ



**«ՆՈՐԻԶՈՆ»
15 ՏԱՐԵԿԱՆ**

«Որեւէ թերթի, եռօրեայ կայքերէն թերթի մը համար 15 տարին երկար ժամանակ չէ, առնուազն՝ ոչ այնքան երկար, որ արժանի ըլլայ արտակարգ յիշատակութեան: Սակայն, «Հորիզոն»-ի պարագային, հարցը այնքան պարզ չէ: Այս նախադասութիւններով կը սկսի Գանատայի «Հորիզոն» շաբաթաթերթի լոյս ընծայման 15ամեակին եւ հայ մամուլի 200ամեակին նոյնրոյն թատիկին «Հորիզոն»-ի 15 տարիները» խորագրեալ խմբագրականը, որ, անդրադառնալով շաբաթաթերթին կտրած 15 անտոկոր տարիներու ուղիին, առաջին հերթին կը նշէ, որ իրադարձութիւններով, պատմական փոփոխութիւններով եւ զարգացումներով հարուստ հայ կեանքի վերջին 15 տարիներուն չափ անտոկոր եղած է նաեւ «Հորիզոն»-ի 15ամեայ փորձառութիւնը՝ անցնելով խորտուրորտ ճամբաներէ, քալլ պահելով օրըստօրէ ուռճացող գանատահայ զաղութի պատասխանատուութիւններուն, սփիւռքեան հասարակական հրամայականներուն եւ Հայաստանի վերջին տարիներու ճակատագրական զարգացումներուն հետ:

Ապա, նշելէ ետք, որ իր գաղտնաբերական առաքելութիւնն ու փողովորդա-

ճին զանազան խառնուրտ ակնկալութեանց գոհացում տալու պարտաւորութիւնը համատեղած «Հորիզոն»-ը պիտի շարունակէ դիմագրաւել ամէն տեսակի դժուարութիւն, խմբագրականը կ'ենթադրուի. «Հորիզոն» պիտի շարունակէ իր գաղտնաբերական առաքելութիւնը, հաւատալով որ պիտի աւետէ նաեւ մեր կոտորակած Հայրենիքի վերամիացումը, թէկուզ՝ հանգրուան առ հանգրուան:

Խմբագրականին կը յաջորդէ Ամենայն Հայոց Վազգէն Ա. կաթողիկոսի կրնդակը՝ «Ազգաբարձի հիմնադրութեան 200ամեակին առիթով: Հայ մամուլի ուսիվորայ Տէր Թարութիւն Շմառնեանի դերն ու կշիռը եւ, այս ծիրէն ներս, հայ մամուլի ազգային-մշակութային հայակերտ կոչումը քարձր գնահատելով՝ Վեհափառ Հայրապետը կը հաստատէ, որ «հանապազօրեայ հացի նման խիստ աննըրածեցտ» հայ մամուլը յատուկ նշանակութիւն ունի ո՛չ միայն սերունդներու դաստիարակութեան գործին մէջ, այլեւ «աշխարհասփիւռ հայութեանը միատրելու եւ կապ պահպանելու Մաքր Հայրենիքի հետ: Մեր օրերին առատել եւս անսահման մեծ է հայ մամուլի առաքելութիւնը հայութեան ծոցում»:

«Հորիզոն»-ի 15ամեակին եւ հայ մամուլի 200ամեակին նոյնրոյն 43 աշխատակիցներու յօդուածներն ու A.R.A.R.®



կը ներկայացնեն Գանատայի հայ ազգային կառույցներու եւ կրթական կեանքի անցեալն ու ներկան:

ԻՄ ՈՂԻՍԱԿԱՆՆԵՐ

(Ներդրում)

Անտոնինա Մահարի

1994ին, Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն լոյս տեսաւ Անտոնինա Մահարիի «Իմ ողիսականը» խորագիրը կըրող յուշագրական հատորը, զոր ուսերէնէ արեւելահայերէնի թարգմանած է Վահան-Չերազ Իշխանեան:

Հատորը կը բացուի Ռուզան Խաչատրեանի ստորագրութիւնը կրող «Առաջաբան» խորագրեալ կարճ ներածականով, որ կը յայտնէ, թէ այս հատորը գրուած է շուրջ 20 տարի առաջ եւ, 80ական թուականներու առաջին տարիներուն, անոր ձեռագիրը տարածուած է մտերիմներու շրջանակին մէջ:


Ստալինեան շրջանի գոհեքուն նըւիրուած «Իմ ողիսականը» հատորը յուշագրութիւններու պարզ հատոր մը չէ: 58 կարճ յուշերով, Անտոնինա Մահարի կը փորձէ ներկայացնել ո՛չ միայն իր ինքնակենսագրութիւնը, այլև՝ հաւաքական կենսագրականն ու ողիսական հայ, լեհ, լիտվացի, ռուս եւ ազգային այլ պատկանելիութիւն ունեցող զանազան ազատագրուած կալանատններու եւ գաղափարապաշտ նահատակներու, որոնց «աչքերում ցաւ կար, տագնապ, ազատութեան տենչ»:

«Իմ ողիսականը» ժապաւէնին հիմնական դրուագները ներկայացնելէ առաջ, Անտոնինա Մահարի գրչի արագ հարուածներով կը պարզէ Լիտվանիոյ եւ Մերձ. Պալթեան երկիրնե-

յուշերը յատուր պատշաճի խօսքեր ըլլալով հանդերձ՝ դուրս կու գան իրենց ուղերձային նեղ կաղապարէն, երբ քննական մօտեցումով կ'անդրադառնան հայ մամուլի 200ամեայ հարուստ պատմութեան, ներկայ հագրուանի հիմնահարցերուն, ազգային հեռանկարներուն եւ այն մարտահրաւերներուն, որոնց դէմ յանդիման կը գտնուի հայ մամուլը այսօր:

Գանատայի, Արտերկրի եւ Հայաստանի իր աշխատակիցներուն կողմէ հիմնական հարցազրուումներ, թերութեանց մատնանշումներ, առաջարկներ եւ հայ մամուլի ներկային ու ապագային հետ առնչուող խոհեր ներկայացնող վերոնշեալ յօդուածներն ու յուշագրութիւնները ի մի խմբելով՝ «Հորիզոն»ի այս բացատիկը իրաւամբ կը հանդիսանայ հայ մամուլի ներկայի եւ ապագայի հարցերուն նուիրուած թղթածրար մը, շարաթաթերթին 15ամեակը մեծարող հրատարակութիւն մը ըլլալէ առաջ եւ ետք:

Գեղատիպ 128 էջերէ բաղկացած այս բացատիկը կը փակուի գիտական բժախնորութեամբ պատրաստուած երկու զեկույցներով, որոնք ընթերցողին



րուն 1940ի համապատկերը, երբ ռուսական Կարմիր բանակները գրաւեցին վերոնշեալ երկիրները՝ դաժան փոփոխութիւններու ենթարկելու այս խաղաղ ափերը: Ասէն կողմէ բարձրացող «Փրկուեցէ՛ք կարմիր վարակից, ով ինչպէս կարող է» բացազանչութիւններուն կը յաջորդեն Լիտվայի բնակչութեան կէսէն անէլիին դէպի Սիպիր աքսորի դժոխային օրերն ու ճամբարային չարչարանքները՝ իր այլազան անմեղ զոհերով: 27 Յունուար 1945ին, հարիւր հազարատը լիտվացի ազնիւ, քնքուշ, անմեղ կիներու նման աքսորի ճամբան բռնած Անտոնինա Մահարի, «Մնաս բարով, Ազատութիւն» խորագրեալ գրութեամբ՝ կը սկսի ներկայացնել իր, բայց սիւստանակ իր սերնդակիցներուն անհեթեթ ճակատագիրը, ապա՝ իր հաւնդիպումը Սիպերիոյ տափաստաններուն մէջ խոզ պահող աքսորական բանաստեղծ Գուրգէն Մահարիի հետ, հանդիպում մը՝ որուն կը յաջորդեն «սէր, երազներ, պոեզիա»...

Այսպէս, 77րդ էջի «Սէր, երազներ, պոեզիա» գրութենէն միւսէն իր - նաեւ՝ Գուրգէն Մահարիի - ո-

ղիսակաճով հպարտ այս լիտվոնիին յուշագրական վերջին էջը՝ «Նանրագումար» (151-152), հետաքրքրական է անոր համար, որ անկիւս ո՛չ միայն ընթերցողին կը հրամցնէ ազատագրկուած կիներու տառապալի կեանքը, այլեւ՝ սիրոյ ազնուագոյն ապրումներու վաւերականութիւնը վկայող նամակներ, բանաստեղծութիւններ եւ փաստագրական այլ մանրամասնութիւններ, որոնք սերտօրէն կ'առջնչվին Գուրգէն Մահարիի ողբերգական կեանքին եւ գրականութեան հետ:

Անտոնինա Մահարիի «Իմ ողիսակաճը» հատորը կը փակուի «Այրըտղ այգետաններ»ի ողիսակաճը» գրութեամբ եւ անոր յաջորդած բառարանով:

«ԱԶԳԱՅԻՆ-ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԳԱՐԱՆ»

Յունիս 1994ին, Պէրուֆի «Նամագգալին»ի Վահէ Սթեան տպարանէն լոյս տեսաւ «Ազգային-Յեղափոխական նոր երգերու երգարան»ը՝ 2000 տպաքանակով:

Սոյն երգարանը 79 էջերու սահմաններուն մէջ կ'ընդգրկէ 54 ազգային եւ յեղափոխական երգեր:

Երգարանին հրատարակութիւնը նախաձեռնութիւնն է Հ.Յ.Դ. Լիբանանի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմինին:

«Մեր խօսքը»ով Ընդհանուր Վարիչ Մարմինը բացատրական մը կու տայ իր նախաձեռնութեան մասին, A.R.A.R.@

digitised by

թէ՛ «Վերջին տարիներուն, եւ ի մասնաւորի Արցախեան պահանջատիրութեան պրոթիւստէն ետք, յեղափոխական երգերով արդէն իսկ հարուստ մեր օրօնըդ առանկ եւս հարստացաւ այսպէս կոչուած Ղարաբաղեան պայքարին նուիրուած նոր երգերով:

«...Սակայն, այս երգերը ընդգրկող յատուկ երգարանի մը չգոյութիւնը պատճառ դարձաւ, որ անոնք երգովին ըստ լսողութեան եւ շատ յաճախ բնագիրէն տարբեր բառերով, հետեւաբար, աղաւաղուած իմաստով»:

Կը պարզուի, որ այս գործը յանձն առնելու Վարիչ Մարմինին առաջնահերթ նպատակներէն մէկը եղած է երգերուն հարազատութիւնը պահելու նախանձախնդրութիւնը:


Երգարանին կողքը ամփոփ կերպով կը ներկայացնէ անոր բովանդակութիւնը:

«Մեր խօսքը»-ին կը յաջորդէ երգերու ցանկը, որ կը մատնանշուի իւրաքանչիւր երգի էջը, ապա բացօթեան կը կատարուի «Մեր հայրենիք», «Հիմն Արցախի» եւ «Ջալերգ Հ.

ԱԶԳԱՑԻՆ-ՑԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ
ՆՈՐ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԳԱՐԱՆ



Յ.Դաշնակցութեան» օրհներգներով: Հոն կը գտնենք Արցախի տարածքին թէ՛ Սփիւքի ամերուն իրենց արինը յնաչած հերոսներուն մասին հիասլաց երգերու գեղեցիկ փունջ մը, «Միացէ՛ք հայեր»-ու պատգամներ, «Առաքինի ընկերոջ» տիպարը փոխանցող երգեր, եւ մեր յեղափոխական սուրբերը դրուատող պրոթիւստներ...



ՅՎԵՏԼԱՆԱ ՓԱՍԳԱԼԵԻԱՅԻ «ԱՐՅԱԽԻ ՎԷՐՔԵՐԸ»

Հայ Դատի Մոկորեալի եւ Լաւայի զոյգ յանձնախումբերուն կազմակերպութեամբ, Չորեքշաբթի, 18 Մայիս 1994ի երեկոյեան, Ս. Յակոբ վարժարանի Բազորմաճեան սրահին մէջ, աւելի քան 400 հանդիսատեսներու ներկայութեան տեղի ունեցած է պուկար ֆիլմարտադրիչ Յվետլանա Փասգալեայի «Արցախի վերքերը» վաւերագրական ժապաւնի ցուցադրութիւնը (իր երեք նոր նկարահանուած բաժիններով), որ մեծ հետաքրքրութեամբ ընկալուած է ներկաներուն կողմէ: 1992-1994 ժամանակաշրջանին Արցախի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն զանազան հանգրուանները պատկերացունող շարժապատկերային այս շարքին ցուցադրութենէն ետք, պուկար ֆիլմարտադրիչ-բեմադրիչը անհուն հպարտութեամբ

խօսած է Արցախի վիրատը, բայց հերոս եւ անվառ ժողովուրդի կասկի տոկոսութեան եւ անդարձ վճռականութեան մասին: Արցախի ազատագրական պայքարը բոլոր արդարատեններուն դատը նկատող այս պուկար «արցախոճիին» եզրակացուցած է, որ Արցախի հայ ժողովուրդը, անպայման, յաղթական դուրս պիտի գայ իր սղած գոյածարտէն:

ԳԻՐՔԸ՝ ...ԶՆԱՅ ՄԵՐ ՀԱՆԱՂԱԶՈՐԴ

Մեծագումար պարտքերու տակ խեղճած խաղաղի երիտասարդ հրատարակիչ մը՝ Մարչելլո Փարակիսի, յաջողած է ո՛չ միայն վերջ դնել սնանկացած հրատարակիչի իր արագընթաց զանավիժումին, այլեւ՝ անուարտափի մատնել Իտալիոյ մեծագոյն հրատարակչատունները՝ շնորհիւ իր գործնալաւաջ հնարամտութեան: Մէկ օրէն միւսը խաղաղական հրատարակչական եւ մշակութային շրջանակներուն համար աւելնէ հրատաւ եւ «ժամուն հիմնահարցը» դարձած Փարակիսի արժանացած է հարիւր հազարաւոր ընթերցողներու համակրական զգացումներուն, երբ յեղաշրջումի ենթարկած է «գիրքի ասպարէզ»ին չուկայական ծանօթ յարաբերութիւնները:

Այսպէս, երկարատե ծրագրուէ ետք, Մարչելլո Փարակիսի գտած է լուծումը, երբ որոշած է հրատարակ իջեցնել զրպանի գիրքերուն շատ անցի աժան եւ որա-



կատր բովանդակութիւն ունեցող փետուրած գիրքեր: Ճիշդ է, որ այս արկածային դիրքերը հրատարակիչն ցարդ չէ յաջողած միանալ միլիտարատեր հրատարակիչներու ակումբին, սակայն շահած է գրառք՝ արձանագրելով միլիոն տպաքանակի մրցանիշը: 41 շաբաթ ամենէն շատ վաճառուած գիրքերու (պետք սելըրոզ) առաջնութիւնը գրանել էուք, Փարակիսի վաճառուած է Էպիկուրի «Նամակ» երջանկութեան մէջ» գրքոյկին միլիոներորդ օրինակը: Պատճառը այս յաջողութեան: Անշուշտ, զայն պէտք չէ փնտռել Էպիկուրի հանճարեղ երկին արժեքին մէջ, ոչ ալ զայն պէտք է վերագրել ծանուցողական հնարամտութիւններու կամ մետաստերորդ ժամուն ընթերցողներու գիտակցութիւնն ու հետաքրքրութիւնը արթնցնող նորահնար գիտերու: Փարակիսի իր այս յաղթանակը կը պարտի շուկայական իր սուր հոտառութեան:

Իր արտակարգ սղոյթեամբ ծանօթ Իտալիոյ նման երկրի մը մէջ, Փարակիսի յաջողած է գիրքը ընթերցողին ներկայացնել նոյնիսկ ամենէն ժողովրդական սրճարանի մատուցած գաւաթ մը սուրճի սակագինէն... շատ անի աճան: Պարզապէս՝ 1000 խաւալկան լիթի (չորջ 1000 ինքանանեան թղթոսկի):

Ժողովրդային ամենէն համեստ առձեռն գիրքերուն (փաթեթ պուք) ՄՕրդ գինով ծախսող Փարակիսիի հրատարակչութիւնները յաջորդած են իրարու՝ հարիւր հազարատր տպաքանակով: Այս արկածային դիրքերը հրատարակիչն գրացուցակին վրայ, կարճ ժամանակի մը ընթացքին, տեղ գրառած են յիտունէ անելի մեծանուն գրագէտներու գործերու անուններ:

Պատկերասփիւռէն սխռած մշակութային յայտագիրի մը ընթացքին, Սթանտայի, Ջոլայի, Մօփասանի եւ մեծանուն այլ հեղինակներու այս նոր հրատարակիչը, որ հրատարակչական կայսրութեանց տէրերուն կողմէ անուանուած է «Գիրքերու գերեզման», տասնացիորէն յայտնած է, թէ ինք վճարած է... «սրբապիծել իմացական շուկան», 300000 լիթի վաճառող գիրքերուն փոխարէն հրապարակ իջեցնելով առաւելագոյնը հարիւր էջ հաջողու եւ միայն 1000 լիթի ծախսող գրականօրէն բարձրարժէք լուրջ հատորներ:

**ՎԱՐԳՎԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ԶՈՒ՝
ԱՆԱՐԳ ՈՃԻՐԻ ՄԸ**



Ռոբաթ, 15 Ապրիլին, Երեւանի Մարքսի անուան փողոցին վրայ գտնուող շէնքերէն մէկուն երրորդ թարկի սանդղախարթակին վրայ, գտնուած է հրագէտի փանփուշտով սպաննուած հայրենի արձակագիր Վարդգէս Պետրոսեանի անշնչացած մարմինը:

Նախնական ջննութիւնները ցոյց տըած են, որ սպանութիւնը կատարուած է նոյն օրը, յետմիջօրէի ժամը 5ին: Սպանութեան դրոյապատճառները ցարդ մութ կը մնան:

Ընդամաքելով հանգուցեալ գրագէտին ընտանեկան պարագաներու ցանկութեան, մարմինը ամփոփուած է Աջտարակի քաղաքային գերեզմանատան մէջ:

Գերեզմանատան մէջ, թաղումէն առաջ, կայացած է սգոյ հաւաք մը, որուն ընթացքին ելոյթ ունեցած են Հայաստանի Գրողներու Միութեան քարտուղար Վահագն Գրիգորեան, գրագէտ Սերո Խանզադեան, ՀՌԱԿի հանրապետական վարչութեան առեւտրային Ռուբէն Միրզախանեան, Գերագոյն Խորհուրդի նախագահի առաջին տեղակալ Արա Սահակեան, Արցախի Գրողներու Միութեան պատուիրակութեան ներկայացուցիչը, ինչպէս նաեւ՝ Արցախի մշակոյթի նախարար Նեյի Ռսկանեան:

«ՅՈՒԲԻ ՅՈՒՇԱԳՐՈՒ- ԹԻՒՆՆԵՐԸ» ՆԱԵՒ ՓԱՐԻԶԻ ԲԵՄԻՆ ՎՐԱՅ

Լիբանանի անկախութեան 50ամեակին առիթով, անցեալ տարուան վերջերուն «Ղերութի թատրոն» թատերասրահի բնահարթակին վրայ ներկայացուել է թատերական, սշակութային ու մանկոյ շրջանակներուն բարձր գնահատանքին արժանանալէ ետք, լիբանանցի անուանի փառաբար Իլիաս Խոպիի «Յոբի յուշագրութիւնները» թատերախաղին ֆրանսերէն տարբերակը փոխադրուեցաւ Ֆրանսա եւ Փարիզի «Ռոն փուան» թատրոնի բեմէն, 18 Մարտէն մինչև 10 Ապրիլ, եմալ յոյսի քաղաքի բնայնոյի թատերասերներն ու մանկոյ շրջանակները:

Լիբանանեան յառաջագահ թատրոնի կարկառուն հիմնադիրներէն հանդիսացող բեմադրիչ Ռոժէ Ասաֆ-Իլիաս Խոբի այս գործակցութիւնը հիմնուեցաւ հանրաձայնօք վիպագիրին համանուն վէպին վրայ: Անգլերէնի, ֆրանսերէնի եւ այլ լեզուներու թարգմանուած Իլիաս Խոբիի վերուշեալ թատերախաղին ղեկները սեղի կ'ունենան 1982ին, իսրայիլեան պաշարման շրջանին, Ղերութի մէջ: Զաղաքի մը, անլի ճիշդ՝ թշնամիներու կողմէ պաշարուած ժողովուրդի մը ապրած երկարաձգուող մղձաւանջները, ահուարսափը, տառապանքներն ու վճռականութիւնը մարմնատրոյղ այս թատերախաղը կը սկսի Լիբանանի անկախութեան

50ամեակի տօնահանդէսով, 1993ին: Տօնակատարութեան կիսուն, լանկարծ բեմահարթակ կը խուժեն խուժք մը սեւազգեստ կիներ, որոնք իրարանցում մը կ'առաջացնեն, երբ իրենց առեանգուած գաւակներուն, անուսիներուն եւ եղբայրներուն նկարները բարձրացուցած՝ կը պահանջեն յառակ պատասխան մը լսել 1982-85 տարիներուն առեանգուած իրենց հարազատներուն անորոշ ճակատագիրին մասին: Ողբերգականօրէն զարգացող դէպքերը, անգիտակցօրէն, լանկարծ կը կենդանանան Յոբ անունով ծերունիի մը վրայ, որ իր մորթին վրայ ապրած է 1914-18 Առաջին աշխարհամարտի ամբողջ արհաւիրքը եւ գոց գիտէ այն բոլոր հասանքային տագնապներն ու արիւնալի դէպքերը, որոնք անցեալէն վայրագութեան եւ արեան փոթորիկներով արկնուած են երկիրը: Այսպիսով, լիբանանեան տագնապի ամենէն թէժ օրերուն Ղերութի արեւմտեան քաղաքներու բնակիչներուն հետաքրքրութիւնը սրած Յոբ անուն անձանօք անձը, որ քաղաքի պատերուն եւ շէնքերու մուտքերուն գիշերով կ'արձանագրէր իմաստալից եւ յուսատրոյ նշանախօսքեր, ո՛չ միայն կը դառնայ արհուրած մարմնատրոյղ մէկ կենդանի խորհրդակիշը, այլեւ՝ տառապող Լիբանանի փերա ինչո՞րութիւնը:

«Լի Ֆիկարօ» օրաթերթին մէջ, «Լիբանան.- ինչո՞րութեան եւ մտացութեան միջեւ» խորագրեալ յօդուածով մը, թատերական քննադատ Գարոլին Եորկընսըն կ'անդրադառնայ Ռոժէ Ասաֆի հիմնադրած «Ասացողներու խումբը» թատերա-



digitised by

A.R.A.R.®

խումբի այս նորագոյն բեմադրութեան բարձրորակ մակարդակին եւ յատուկ կարեւորութեան, երբ ինքզինք բանաստեղծ եւ գինուոր ներկայացնող այս անձանցք պէտքով ժողովրդային անձանցք մտածողութեան մը հարազատ խորհրդակալիչ դասելէ ետք. կը գրէ.-

«Եթէ շրջագայինք քաղաքին մէջ, հաւանաբար մենք գտնենք անոր նամակները. կրիւր պանիրի նմանող պատերու փամփուշտի ծակերուն մէջ: Կարծես թէ աներեւոյթ եւ կործանարար մուկեր լափած են պատերը: Բաղաքը երբեք չի խօսիր, սակայն, մեզի շնորհած իր տեսարանին բնորոշէն, մենք կը լսենք շատ անգին, քան որեւէ խօսք կրնայ ըսել: Վերջապէս, պէտքօրիններուն համար, տուներու բոլոր խումբերը, իւրաքանչիւր փողոց կը յուշէ ինչ-որ ցառ, ինչ-որ դէպք, որ անհետացաւ»:

Ապա, թատերախումբի գլխաւոր դերակատարներէն՝ երգահան Փօլ Մաթարի խօսքերը մէջբերելով, ֆրանսացի քննադատուիին կ'անցնեն, որ երկարատեւ քննարկումներու արդիւնք հանդիսացող այս հաւաքական ստեղծագործութիւնը անցեալի պատմական փորձառութեանց լուսարձակներով կը փորձէ լուսաւորել ապագան եւ յայտնագործել ճիշդ ուղին, որովհետեւ, անցեալի, այսինքն՝ ճշդութեան վրայ հիմնուելով հանդերձ՝ «Յորի յուշագրութիւնները» ազգային ձգտող, բայց միաժամանակ մոռացութեան դէմ պատերազմելու գիտակցութիւնն է, «մեր ինքնուրոյն յիմարութիւնը, որ մեզ մղեց մեր ինքնութիւնը գողնալու արարքին»:

«Լ'Էվենման տը Ժ՛օտի» շարքաթերթին մէջ, իր կարգին, Պրիժիթ Ասիին ստորագրած է «Իլիաս Խուրիի Պէլուր» խորագրեալ յօդոսած մը, որ վերոնշեալ թատերախաղէն առաջնորդուելով կը ներկայացնէ «Նահար» օրաթերթի մշակութային-գրական խմբումի խմբագրապետ Իլիաս Խուրիի լրագրական, կրթական եւ գրական վաստակը: «Տասնեօթամեայ պատերազմի տարիները Իլիաս Խուրիի ստրկեցուցին, թէ «չկան բացարձակ քաջեր կամ վախկոտներ», որովհետեւ բոլոր մարդիկ միաժամանակ քաջեր եւ վախկոտներ են,- ընդգծելէ ետք, քննադատուիին, դարձեալ հիմնուելով հեղինակին խօսքերուն վրայ՝ կ'ա-

նցնէ: -Պատերազմը իրեն ստրկեցուց յատուկ իմացում մը. «Չկայ մէկ պատմութիւն՝ այդպէս մեկնաբանութիւններով, այլ կան պատմութիւններ»: Այս տարադիմաւէն առաջնորդուելով՝ ան սքանչելի վերլուծում մը կը կատարէ ֆրանսերէնի թարգմանուած իր երկրորդ վէպին՝ «Բոյր մը դրախտէն»ի էջերուն», որ կը յաջորդէ նախապէս թարգմանուած «Փոքր լեռը» անուն վէպին:

Տգեղութեան, մոռացութեան եւ անմարդկայնութեան դէմ պայքարի որոշ ծածանելու նպատակով երկնուած այս գեղեցիկ վէպն ալ գրուած է նոյն մտադրացունով, որպէսզի պէտքով յաջողին ազատագրուիլ պատերազմի ապարէն ի վեր գիրենք կաշկանդող հոգեւէկումներն եւ ճնշումներէն, ինչպէս կը հաստատէ Պրիժիթ Ասիին:

ԳԻՆԵՉՕՆ՝ Ի ՊԱՏԻԻ ՍՈՆԻԱ ՆԻԿՈՒԵԱՆԻ

Մեծի Տանն Կիլիկոյ կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն լոյս տեսած Սոնիա Նիկոլեանի «J'ai jeté L'encree en Terre Sacrée» ֆրանսերէն բանաստեղծութիւններու հատորին նուիրուած գինեձօնի հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Ռոքաթ, 3 Յունիս 1994ի երեկոյեան, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի «Արարատեան» սրահին մէջ, ի ներկայութեան պետական, կրօնական, մշակութային ներկայացուցիչներու եւ շուրջ 300 գրասէներու:

Հ.Կ.Ս.ի Մշակութային Կեդրոնի կազմակերպած մեծաբանքի այս հանդիսութիւնը կը հովանաւորէր Յովհաննէս-Պետրոս ԺԸ Պատրիարքը:

Հանդիսութեան ընթացքին ելոյթ ունեցած հայ թէ տեղացի գեկուցաբերները եւ իրենց սրտի խօսքը արտասանողները բարձր գնահատեցին Սոնիա Նիկոլեանի քանամեայ լրագրական վաստակն ու գեղարուեստական գրականութիւնը: Վերջին խօսք առնողը եղաւ մեծարուած բանաստեղծուիին, որ իր ելոյթը աւարտելով ըսաւ. «Հայրենիք, քու մասիդ գրելով պիտի գոյատեւես»:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

«ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԵՐԱԿԱՆԱԳՈՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ Ե-ՓՋ ԴԱՐԵՐՈՒՆ» – ուսումնասիրություն –
Լ. Գ. Խաչերեան, Լիզպոն, 1992, 619 էջ,
Հրատարակչություն՝ «Թապալքեան փրես»:

«ԲԱՐՅԻ, ՀԱՅՐԻԿ» – պատմուածքներ –
Թորոս Թորանեան, Երևան, 1993, 142 էջ,
Հրատարակչություն՝ «Ապոլոն»:

«ԿԻՍԱԲԱՑ ԴՈՒՌ» – քանաստեղծություններ –
Ռուբէն Անգալադեան, Երևան, 1992, 69 էջ,
Հրատարակչություն՝ «Նայիրի»:

«ԿՐԱԿ՝ ՄՈՒԻՐԻ ՏԱԿ» – քանաստեղծություններ –
Զաւէն Դոլապեան, Երևան, 1992, 63 էջ,
Հրատարակչություն՝ «Կիլիկիա»:

«1700 ԱՄԵԱԿԸ՝ ՆՈՐ ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏ» – խորհրդածություններ –
Գարեգին Բ. Կաթողիկոս, Անթիլիաս, 1994, 64 էջ,
Հրատարակչություն՝ «Կաթողիկոսութիւն Ռայոց», Անթիլիաս:

«ԿԵՂՏՈՏ ՍԵՆԵԱԿ» – քանաստեղծություններ –
Վարուժան Վարդանեան, Երևան, 1994, 208 էջ,
Հրատարակչություն՝ «Արեգ»:

«ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐԻ ՄԻՋԵԻ» – քանաստեղծություններ –
Յովիկ Մուսալէլեան, Ստեփանակերտ, 1994, 29 էջ,
Հրատարակչություն՝ «Արցախ»:

«ՈՒՍԱՒՈՐՉԻ ԿԱՆԹԵՂ» – արձակ –
Մանուկ Մնացականեան, Երևան, 1994, 184 էջ,
Հրատարակչություն՝ «Արագաստ»:

«21 ՏԱՐԵԿԱՆ» – քանաստեղծություններ –
Լեոնիկ Յակոբեան, Ստեփանակերտ, 1993, 47 էջ,
Հրատարակչություն՝ «Արցախ»:

ԼԻՔԱՆԱՆ

Հատավաճառ (գոյգ թիւ) 5.000 Լ.Ռ
Տարեկան բաժնեգին 30.000 Լ.Ռ

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ (գոյգ թիւ) 100 Ս.Ռ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

باكين
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriété de
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝
Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban